Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ch. U.
1764

U. L. V
1350

1999

Ա. Ե
1350

Հրատարակութիւն «Կովկասեան Գրավաճառանոցի» Զ. Գրիգորեանցի։

ՇԱՐԱՆԱՆՔ

ԹՈՐՈՄ ԼԵՒՈՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՓԽԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
1881

Дозволено Цензурою. Тифлисъ, 9-го Марта 1881 г.

Типографія И. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ д. № 5.

25-1358

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ում ՀՍՀ
им. А. Мясникяна
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍԱՆԴԱՐԱՆ

1350-81

ԹՈՐՈՍ ԼԵՌՈՑԻ

ԳԼՈՒԽ Ա.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 1145 Ի Ն

Բոլորովին տարբեր քաղաք մ՚էր 1142 Քրիստոսի Թուականին Կոստանդնուպօլիս քաղաքը, որ այսօր Ստամպօլ կ՚անուանի. ամեն պատմիչք և ճանապարհորդք սքանչանալով կը պատմեն անոր հրաշալիքը՝ որ թէ Եւրոպիոյ ժողովրդոց և թէ Սահոյ Արաբացւոց զարմանքը կը շարժէր։ Հիմիկու Նուրի Օսմանիէին տեղը՝ համբաւաւոր Հռովմէական Ֆօրո՞մ ըսուած կրկէսն էր, ընդարձակ ձուաձեւ տաբածուքեամբ, փառաւոր կամարակապ դահլիճներէ և արձաններէ շրջապատեալ, և մէկ համար երկու յաղթական կամարք կը յաջորդէին, 120 ոտք վերամբարձ սօրիկեան սիւն մը Փիդիասի ձեռագործ պղինձէ Ապոլոնի արձան մը կը կրէր, որու գլուխը արևու ճառագայթներ կը ցոլային՝ գաւազան և գունդ ի ձեռին։ Պուքօլէօնեան պրքունիքը որ հազար տարի կայսերաց բնակարանն եղաւ, իր փառաւորութեամբ՝ ընդարձակութեամբ և ամրակառոյց հաստատութեամբ՝ դեր ի վերոյ էր քան զԿապիտոլէոն, քան զՊերկամայի պրքունիքը, Ադրիանոսի Կիզիքի տաճարը, Եգիպտական բուրգերը և փարոսը։ Երեք գմբեթք անոր գլուխը կը պսակէին և պղինձէ ոսկեզօծ երդիքը խաչացի մարմար սիւներ կը վերցնէին. իր ահագին պարտէզները աստիճանաբար Պրոպոնտիսի ծովեզերը կ՚իջնէին, հինգ եկեղեցի իր մէջ կը պարփակէր. փոխ զայի կճեայ սիւ-

ներով կամարակապ և ամբաւ սենեակներն ու սրահները մոզայիք-ներով՝ արձաններով՝ պատկերներով որ տեսնողաց զարմանք կը պատճառէին: Արևելեան պերճանք և արևմտեան ձաշակ միացեր էին զարդարելու համար աս քաղաքը, օտարականը ապուշ կը մնար երբ ամեն անկեան գլուխ՝ հոս ոսկեղէն դուռ, հոն մարմարիոնէ մարդ-կանց և կենդանեաց արձաններ, անդին պղնձէ փիղեր կը տեսնէր: Եւ գարնան ժամանակ բնութեան գեղեցկութեան չափ չի կար. այդ գեղեցիկ ծովը ցամաք կը շրջապատէր իր հսկայ ծառերով, իր հա-րուստ բոյսերով, իր համով պտուղներով, իր գեղեցիկ առուակնե-րով, սոխակներու երգերով, և Կոստանդնի քաղաքը կանգուն իր բարձր պարիսպներով, որու ամրութիւնն էին երեք հարիւր ութ-սուն և վեց աշտարակք, վեհ կ'երևար քան զամեն մայրաքաղաք, դիրքով՝ օգով և իշխանութեամբ. և մոռցնել կուտար Հռոմ, Նրու-սաղէմ և Բաբելոն:

Ժողովուրդը՝ ինչպէս բոլոր մեծ քաղաքներու մէջ՝ ամեն վի-ճակի մարդիկներով լեցուն, ամեն տեսակ կերպարանքներու և հա-գուստներու զանազանութիւն կ'ընծայէր աչաց. իսկ այն պալատին և կրկիսոն շրջակայքը, իշխանաւորաց գահաւորակները, ասպետաց ձեւերուն խրոխտութիւնը, զինուորաց արհամարհոտ գոռոզութիւնը, հասարակ ժողովրդեան զբաղման երթեւեկը դիտող աչքերու զբօ-սանք մ'էր: Բայց այս ժողովրդեան բարոյական և նեղքին վիճակը արտաքին տեսքին տարբեր կերպով կը պատասխանէր. մէկ մասը քաղքին աղտոտ, զազիր, մշանջենաւոր մութի դատապարտեալ, վան-զի հարուստները՝ տուներով կը նեղցնէին ճանրայները, և աղքատ-ներուն՝ խաւար և ապեղութիւն կը թողուին: Նեղ ճանրայներուն մէջ գողերն ու մարդասպանք կը վխտային, և ամեն չարագործու-թիւն կը դիւրանար խաւարին մէջ: Արդարութիւն չի կար ամե-նեւին և ոչ ամբիծ, վասն զի անպատմութիւնը օրէնքներէ չ'էր պատ-ժուէր և ոչ ալ հեղինակը կը նշմարուէր:

Այս վիճակին մէջ անշարժ բան մը թէ կար, որ փոփոխու-թիւն չ'ե կրած տարիներէ 'ի վեր, ծովն էր օձապտոյտ շրջաններով որ Վոսբորէ 'ի վար նոյնպէս անփոփոխ կը տարածուէր իր փալփլուն և գեղեցիկ ալիքներով և երկինքը իր անջինջ պայծառութեամբ: Եւ աս ծովուն վրայ, ինչպէս այսօր, նաւերը նաւակները կը վխտ-

տային, նաւաստիներուն աղաղակը՝ խուժանին շարժմունքն ու ժխորը ամեն բան կը կենդանացնէր, ձայները՝ փոխանակ թիւրերէն լինելու՝ յունարէն էր, շարժմունքը աւելի եռանդուն էր և ասիա-կան ծանրութեան տիպն քիչ ունէր:

Վեցտասն նաւակ մը Իշխանի կղզիներէն կ'իջնէր ան միջոցին, ձգելով ջուրը ուժգնութեամբ և կը մերձենար արքունեաց ծով-եզերին որ դէպ 'ի Պրոպոնտոս կը խոնարհէր: Պալատական պաշտօ-նեայ մը՝ նաւուն մէջ գեկին քով նստած էր, քովը երիտասարդ մը որ գրեթէ չ'էր խօսեր, և հազիւ միաւանկներով քովը շարունակ խօսող պաշտօնատարին երբեմն կը պատասխանէր. ճերմակ բեհե-զեայ նիւթ մը գլուխը փաթթած, լայն և բարակ մխրճագոյն վե-բարկու մը վրան, աստէ բանուած բաճկոն մը հազիւ կ'երևէր, որ իր անդրավարտեաց վրայ կ'իջնէր, ոտքերը կօշիկներ և վրան ամե-նեւին զէնք չի կար. կը նայէր՝ կը լսէր՝ կը տեսնէր, բայց իր սուր և խոր ու սև աչքերն իր երկայն արտեւանունքներէն ծածկեալ երբ դիմացինին երեսը կը նայէին այն ժամանակ միայն պարզու-թեան և միամտութեան քողը կ'առնուին. և իր միքը բոլորո-վին հեռու էր:

Կարելի չ'էր սուր աչքի մը իր կորովն ձեւը չի նկատել, թէ-պէտ լինք թոյլ և անհոգ կերպ մը առնուլ կը ձեւանար. և աչ-քերը որ մարած էին ընդհանրապէս յանկարծ 'ի մռռացութեան փայլակներ կ'արձակէին, իր դեռաբոյս ընչացքն և գանգուր մօրուքը մասամբ իր ծնօտը կը ծածկէին, մազերը գլուխը կը պահէին. և այդ զօրաւոր ու ջղուտ կազմուածքը հազիւ քսան քառներկու տա-րու գինք կարծել կուտար տեսողաց. միայն երկու յօնից մէջ խոր-հրդածութեան ուղեղ գիծը կրնար մտանել թէ այս պարզութեան տակ խորին խորհուրդներ կը ծածկուէին:

Նաւակը ծովեզերը գտաւ և պաշտօնատարին գինուորներն ու ծառայները դուրս թափեցան օգնելու իրենց տիրոջը որ իշխանա-կան ծանրութեամբ քայլերն կ'առնուր. իսկ մեր երիտասարդը ա-ռանց բերանը բանալու, տարեց՝ գրեթէ յիսնամեայ՝ մարդու մը ձեռք տուաւ և եկաւ, և իրրու թէ աչքերը գոց՝ կը հետևէր պաշ-տօնատարին, որ երբեմն ետին դառնալով իրեն աչք մը ձգելով պարտէզներու՝ ծաղիկներու՝ արուեստական վտակներու՝ կամարջներու

և արձաններու մէջէն կը շարունակէր իր ճանբան մինչև հասան փառաւոր դրան մը առջև, ուր չքեղազարդ սպասաւորաց և թիկնապահաց խումբ մը կ՚իմացնէր ինքնակալին ներկայութիւնը. հոն պաշտօնատարը առաջ անցնելով՝ նուաստ խոնարհութեամբ ողջունելով գոռոզ երիտասարդ մը, որ անձնապահապետի պաշտօնը ունէր կ՚երևար, անոր ցոյց տուաւ պատանին և կամաց ձայնով մը «Ահա ազատամբ Հայուն որդին զոր ըստ բարձր հրամանի բերի» ըսաւ: Երիտասարդ անձնապահապետը, որ կոմսի տիտղոսն ունէր, ամենայն ամբարհաւաճութեամբ «Սպասեցէք» պատասխանեց և գլուխը անդին դարձուց: Իսկ Ապոպոմբէն որդին բառի մը՝ շարժմունքի մը՝ վատութեան մը՝ ամբարտաւանութեան մը և ոչ փոքրիկ մանրիկը կորսնցուց, իր ծածկեալ աչքերը ամեն բան կը տեսնէին և իր անտարբերութիւնը ամեն բան կը լսէր: Եւ որ զարմանալին է, այդ ամբարհաւաճ արհամարհանաց, այդ երիտասարդին յուսական տիտղոսին ներքեւ Հայ մը նշմարելով նաև՝ անդրդուելի կերպարանքը հաստատ պահեց: Վասն զի սրտին անթափանց խորերուն մէջ իր արհամարհանքը կայսերական պալատին գմբեթներէն ալ աւելի բարձր էին. վասն զի արդէն որոշած էր իր նշանաւէրը՝—Համբերութիւն անխռով—: Ուստի նոյնպէս մարած աչքերու քօղով կը դիտէր այդ թիկնապահաց վենուորական խումբը՝ որ 3500 հոգի էին՝ ի Հայոց մեծաւ մասամբ կազմեալ՝ ոսկի և արծաթ գէնքերով պերճացեալ: Ամեն վայրկեան շարունակ կը հանէին եղե-ելէ, յոլփպոպոֆ, ամենապոյծաւ և ամենալաթրէալ, նաև ամենապնուշիկն՝ անդամք կայսերական ընտանեաց: Իսկ ծերակուտական ծերոց, հիւպատոսներու, նեղբինապետներու, պատրիկներու, սեբաստոսներու, զօրավարներու, կիւրապալատներու, գանձապետներու, մեարապօլիտներու և ուրիշ բարձրաստիճան կղերականաց և իշխանապուն ոխկնանց և օրիորդաց անբաւ շարժմունքը, անոնց ձոխ պերճանքն ուր ոսկեթել կերպասներ՝ ծիրանիներ՝ ակունք և մարգրիտք աչքերը կը շլացնէին՝ անընկարագրելի էր, ինչպէս իւթաքանչիւր իւրաքանչիւր հանդիսած վայրկենին սկզբ՝ բարեկամութեան՝ քաղաքավարութեան ցոյցերը որ Աստուած միայն գիտէր թէ ինչչափ ստութիւն, ինչչափ նախանձ, ինչչափ հեռ կը ծածկէին ըստ մեծի մասին: Եւ Ապոպոմբէն որդին այս ամեն կը դիտէր՝ և կը խորհրդածէր իր միամիտ

կերպարանաց տակ, մինչ մեծ շարժմունք մը բոլոր պալատականք կը դղրդէր լմացնելով թէ կայսերական ներքին անհանգիստը բացուեցան: Նոյն վայրկենին վենետոսական հագուստներու պարզութեամբ մարդ մը կորովի և քաջակառոյց կազմուածքով, դիտող աչք մը յանկարծ նետեց մեր պատանւոյն, և դէպ՝ իրեն ուղղելով քալուածքը՝ հեգնող ամբարտաւանութեամբ վերէն վար զննելով՝ «Կ՚երդնում, ըսաւ, որ ապստամբ Լեւոնին տղան ես դու.» և առանց պատասխանին սպասելու, «Հայրդ նախ երբեմն Կիլիկիա ձանչցայ, երբայրդ հոս ձանչցայ,» և քանի մը ներկայից գառնալով արհամարհանօք մը աւելցուց. «Առիւծներն ալ իրենց վիժածը ունին:» Եւ իր երկայն սուրին շառաչիւնովը հեռացաւ, և ամեն սեթևեթալ պալատականք խորշելով ճանբայ կուտային իրեն մինչև անհետացաւ:

Ծերը որ իր երիտասարդ տիրոջ քով կեցեր յարգանօք և արհամարհանաց այնչափ վայրկեան կենաց նշան ամենևին չ՚էր տուած, ասս վերջն նախատանաց ձայնէն յանկարծ ցնցուելով մը անոր աչքերը դարձուց, որ անշարժ իբր անդգայ՝ հանդարտ ձայնով մը «Ինչ է, Բաբկէն» հարցուց:

—Լսեցիր, տէր, աս մարդուն հայհոյութիւնը:

—Լսեցի:

—Գիտես թէ ո՞վ է այդ անպիտանը:

—Գիտեմ, Անդրանիկան է:

—Ո՜հ, թէ որ ինձի թողուիր . . .

—Գիտեմ ինչ պիտի ըսուցես, գիտեմ թէ ի՜նչ կ՚ընէիր, բայց քեզի ըսուցեր եմ թէ ես և ինձի հետ գանուողները ոչ կիրք, ոչ բարկութիւն, ոչ զօրութիւն, ոչ ցոյց, ոչ խելք և ոչ զգայութիւն պիտի ունենան. ուրեմն պէտք է իմ օրինակիս հետեւիս և դու՝ մինչև որ ժամանակը գայ: Համբերել և լռել այս է մեր օրէնքը:

Եւ այս խօսքերը այնպիսի ցուրտ արեամբ և անհոգութեամբ և կամաց ձայնով ըսուցուեցան, և Բաբկէն վայրկենին այնպիսի անհոգ ձեւ մը առաւ, որ ոչ ոք կրցաւ նշմարել թէ ասս խօսքերը ապագային վրէժխնդրութեան օրէնքը կը պարունակէին:

Եւ ահա արքունի սենեկապետ մը մօտենալով այս մեր խումբին, «Հայ Լեւոնի որդին Թորոս ո՞վ է» հարցուց: Երիտասարդը իբր

մ՛առաջ անցնելով մեր կարճ կը կանգ առաւ, և քաղքենի ձայնով բայց խոնարհաբար «Խնդրեմ, ըսաւ, իր բաղձը վերջը չար առնելով, խնդրեմ քիչ մը սա սենեակը մտնելէք որպէս զի լաւ իմանամ թէ ի՞նչ է ձեր յանձնարարութիւնը.» Երբ սենեակը մտան մեր չորս անձինքը, Թորոսին նստարան մը հրամցնելով, որու մօտ պզտիկ սէս կանգնեցաւ Բաբկէն, իրենք բաւական հեռացան, ան ատեն պաշտօնատարը լաւ շփոթ ձայնով մը։

—Չեմ կրնար հասկնալ թէ իմ պաշտօնս ի՞նչ պիտի լինի ան ատեն։

—Չկայ պաշտօնը պարզ ձև մը պիտի ունենայ և շատ հանգիստ. ի՞նչ ուռճիկ ի՞նչ ծախք որ պիտի ընէք կամ պիտի հաճութիւնք ընելու թէ տան վարձու թէ սնունդնին թէ ղեկտամ թէ ծառայի և վերջապէս ամեն բանի համար պարզապէս ծոցերնիդ դնելու ներողութիւնը պիտի քաշէք։ Ահա այնչափ և այնչափ կարծեմ շատ ծանր և անտանելի բեռ մը չի կրնար համարուիլ ո՛և իցէ մարդու համար։

—Իսկ իմ պաշտօնս ի՞նչ պիտի ըլլայ։

—Կերևայ որ չի կրցայ իմացնել թէպէտ շատ որոշ գրուցել կարծեցի։ Փոխանակ այս ամենուսական երիտասարդին խնամից հոգը կարծեցի։ Փոխանակ այս ամենուսական երիտասարդին խնամից հոգը ունենալու՝ ծախքերն ընելու՝ վերջապէս իր մատակարարը լինելու, ամենևին բան մը պիտի չընէք. երբ կայսերական թոշակներն կ՛ընդունին, կ՛առնէք ծոցերնիդ կը դնէք, ոդոմտութիւն կ՛ընէք, եկեղեցւոյ կուտաք, ի՞նչ կ՛ուզէք կ՛ընէք։

—Ա՛յդ իմացայ, բայց ես ի՞նչ պիտի լինիմ։

—Տէր ձեզ լինել ի՞նչ որ կամիք լինել, ինչուան որ կ՛ուզէք զբաղիլ։

—Ի՞նչ գրուցեմ թէ որ հարցնեն այս երիտասարդին համար։

—Ես ձեզ կ՛ապահովեմ որ մէկը բան մը պիտի չի հարցնէ, և դուք ալ ազատ կ՛ըլլաք չպատասխանելու։

—Բայց թէ որ ենքը խնդիր ըլլայ...

—Իմ, այսինքն ինձի յանձնուածց կոլմանէ, և սա Հայ երիտասարդին կոլմանէ ամենևին խնդիր մը չի կրնար ծագիլ, միայն քեզի կը մնայ խոհեմութեամբ վարուիլ քու հաշիւներուդ մէջ և չափաւորութեամբ բան ամենևին չընել, որպէս զի վերջը խոյս

քունէ արթնցած «Ես ևս» պատասխանեց «Սկուլիմ, կայսրը քիչ կ՛ուզէ» ըսաւ։ Երբ գահոյքից սենեկին առջևն հասան, պահապանք ըստ սովորութեան Թորոսի վրայ ինտռեցին որ դէնք չի գտնուի, արտաղաւեսը իրեն իմացուց թէ ինչ էր ելեկտրականութեան և շարժման ձևը, և իբրև թէ կասկածելով լսողին իմացականութեան վրայ կրկնեց ու ներս մտուց։

Սրճամէկ պատուանդաններով ոսկեզէն գահոյից վրայ նստած էր Մանուէլ Կոմնենոս կայսրը, զոր մեր պատմիչք կ՛ուզէ Մանուէլ կ՛անուանեն, Կոստանդին Պէրպէրուժենն որդին էր՝ որ զԼևոն գերի տարեր էր։ Ծաղրածուներ և կորովի երիտասարդ մ՛էր, պսակն ի գլուխ, գաւազան ի ձեռին՝ շրջապատեալ ինչ որ բնութիւնը և մարդկային արհեստներն սքանչելիք կրցեն ևն սարքել, չորս կողմը պար առեալ, մեծամեծաց և տիկնանց. «Վեր կաց, որդիդ Լևոն, ըսաւ կայսրը, արև և ազատութիւն կը շնորհեմ քեզ, տուն և ռոճիկ և ամեն պիտոյքդ գանձէն պիտի հոգացուին, Ջանա արժանի լինիլ բարութեանցս և երևելատիպութիւնն լինի քու առաքինութիւնդ։» Եւ դառնալով կղերականաց բանմաթիւ խումբին ուր բարձր աստիճանի Պատրիարքք, Միտրապօլիտք և Եպիսկոպոսք ծանր և պատկառելի շարուած էին, «Իմ կրօնական դիտաւորութիւնքս ալ, սուրբ հարք, տեղը ձեզի կ՛իմացնեմ և կը վստահիմ որ այս աշխարհական երիտասարդին հոգևկան դաստիարակութեանն ալ խնամք չի մոռնաք։» Խորին խոնարհութեամբ սուրբ հարք պատասխանեցին, իրենց սայրատուր աչքերը Հայ երիտասարդին վրայ դնելով։

Կայսերական ընդունելութիւնը վերջացաւ և Թորոս դուրս ելան դահոյից՝ սենեկէն և հազիւ թէ քանի մը քայլ հեռացաւ, վրդովահատակ մարդ մը, որ անձին վեհութիւն, տալու համար կը ըլլար ցածին չափ կանգնուն վեղը կ՛երկնցներ, զոր սրթի երեսով մը ինկեր մօտենալով «Կայսրը ինձի հրամայեց ձեր անձին պիտոյքը խնամօք հոգալ, ուստի հրամայէ որ երթանք միասին ձեզի բնակարանը ձեզի ցոյց տալու։» Թորոս անմիսօս սկսաւ հետևիլ մարդուն։

Հազիւ թէ քանի մը քայլ ճնացեր էր պալատին մեծ դրան, և ահա պարզ հագուստ մարդ մը մօտենալ մեր կարձահասակ կոկոզավիզ պաշտօնատարին և կամաց ձայնով մը սկսաւ խօսիլ և քիչ

խնդիր լինելով թէ դու քու վաստակդ չի կորնչնես և թէ՝ . . . վերջապէս դու չի վնասուիս։

—Հիմա հասկցայ, ըսաւ մեր բարեկամը խորին յարգանօք և զուարթութեամբ, շատ շնորհակալ եմ որ ինձի այսպէս ուրուագիծ մը կ'ընէք և իմ շահերուս այսպէս կը պատասխանէք, ասձեր բարեկամութեան չեմ գիտեր թէ ի՞նչ տեսակ շնորհակալութիւն ընեմ։

—Մի միայն մէկ կերպով, այսինքն լուռ և անշշունչ մնալով, ամենևին եղածին վրայ ուրիշներու հետ չի խօսելով և թէ որ կը ներէք ըսել՝ չի շաղակրատելով. վասն զի ան ատեն կ'իմացուի և դանձը ձեզի բան մը չի վճարեր։

—Իրաւունք ունիք. ուրեմն ես երթամ քանի որ իմ պաշտօնս յայտնի եղաւ։

—Այո, բայց միայն սա դռնէն դռնէ մէկտեղ դուրս ելլենք։

—Շատ լաւ, սիրով, ըսաւ մարդը, և քանի մը քայլ առաջ դէպ 'ի դուռը, յանկարծ իբրև ի քունէ արթննալով և խելքերնով դարձաւ ի բարի խրատատուին «Բայց դուք ինչ շահ ունիք, ըսաւ, այս գործիս այսպէս լինելուն որ ինձ այսչափ բարութիւն կ'ուզէք ընել, այդ կ'ուզեմ իմանալ։

—Թէ որ դուք այսչափ շատ հետաքրքրութիւն ընել կ'ուզէք, և ինձի այնպէս բաներ կը հարցնէք որոց պատասխանը չեմ գիտեր, ինձի ուրիշ բան չի մնար այլ միայն քալել երթալ, վասն զի ինչպէս դուք բարձր հրամանաց հնազանդելու պարտաւոր էք, նոյնպէս և ես և թերևս աւելի։

Ուստի քիչ մը ատեն կանգ առաւ, և դարձեալ մտածելէն վերջը արթուն պաշտօնատարը հաշիւ մ'ընելով որ այն մարդուն խօսքին մտիկ ընելն էր իրեն համար շահաւոր, «Գոնէ, ըսաւ, ինձ իմացուցէք որ ո՞ր պիտի նային ասանկ անձինքը, որ երբ ինձ տեղեկութիւն մը հարցնեն կարենամ պատասխանել։

—Շատ լաւ, ըսաւ խօսակիցը, երթանք մէկտեղ։

ԳԼՈՒԽ Բ.

ԲՆԱԿԱՐԱ՞Ն ԹԷ ԴԱՐԱՆ

Այսպէս երկու ձոյն առջևէն և Թորոս ու իր ծառան եռնունն անցան արքունի դռնէն որ ի կրկէս կը հաներ, նոյնպէս կրկին յաղթական կամարներէն, և վերջապէս մռան բուն քաղաքը, ուր բարձր երկայն պատեր, մեծամեծ դռներով պալատներ, և երևելեաց տուներ կը նշանակէին, որոց երբեմն կը յաջորդէին փոքր և ցած փայտաշէն տներ, և ուր տեղ տեղ ժողովուրդը կը խռներ, ինչպէս ամեն մեծ քաղաքներու սովորական է, և գարձեալ ամայի փողոցներ, մինչև հասան պարզ դրան մը առջև որ բարձր քառակուսի պատի մէջտեղ բացուած էր, և երբ դուռը զարնուեցաւ շուտ մը բացուեցաւ, սովորական պարտէզ մը տեսնուեցաւ քանի մը մեծամեծ ծառերով և խիտ առ խիտ վարդենիներով զարդարուած, պարտէզին վերջին ծայրը բնակութեան տունն էր. կրկնայարկ տուն՝ բոլոր պատուհաններն պարտիզի վրայ կը հայէին երկաթ կոզմին. իսկ ինչ որ ծառայութեան կը վերաբերէր՝ միայարկ պարսպին դրան քովի պատերուն տակ շինուած էր։

Դուռը բացողը իր հագուստներէն յայտնի՝ սովորական մաքուր տունի մը ծառայ էր, և երբ այս մեր չորս անձինքը ներս կը մտնէին, տարեց կին մը խոհանոցին դռնէն գլուխը դուրս երկնցնելով կը նայէր բնական հետաքրքրութեամբ մը։ Դռնէն ներս ոտնբնին դրածնուն պէս առաջնորդը գարձաւ ըսաւ կարճուկին։

—Բարեկամ, ահա տունը ձանչցիք կարծեմ, ունիք ուրիշ փափաք մ'ալ։

—Ոչ այլ . . .

—Ուրեմն մեր կողմնակի պաշնադրութիւնը կատարեալ է, ըսելով այնպիսի ձև մ'առաւ որ կ'իմացնէր դիմացինին թէ երկայն խօսելու ժամանակ չի կայ. ուստի նա ալ հակնալով, բարև մը տուաւ և դուրս ելաւ, թողլով իր երեք ընկերները այդ տան առանձնութեան չորս պատերուն մէջ, որ տակի կանանոցի կամ կուսանաց վանքի մը կը նմանէր եթէ իր փոքրութիւնը չ'լինէր։

Երբ դուռը գոցուեցաւ, ան առեն անճանօթը պարզ և խորին յարգանօք դարձաւ Թորոսին և ձեռօք տանը ներքին դուռը ցցնե-լով՝ «Կ'ուզէք, իշխան, ձեր բնակարանը տեսնել, ըսաւ և ինչ որ պակաս կայ հրամայել ձեր ծառային։» Իսկ նա որ տարիներէ ի վեր բաց՝ իր Բաբկենէն ուրիշէ մը այսպիսի վարմունք չ'էր տեսած, դարձեալ ամենևին զարմանք ցոյց չի տալով իր անտարբեր կերպովն առաջ անցաւ. գաւառ փոքրիկ սրահ մը, երկու սենեակ երկու կողմը, որոնց մէկը սեզանատուն էր միւսը հիւր ընդունելու սենեակ, իրենց ամեն կարօտիքով. սրահին ծայրը սանդուխ մը որ վերի յարկը կը տանէր, ուր նոյնպէս երկու սենեակ կար մին անկողնոյ՝ միւսը աշ-խատութեան, ուր բայ ի կարևոր բաղմոցներէ և կարօտիքներէ, կային մաքուր ղենքեր պատերէն կախուած. անկողնոյ սենեակը աղ-նուական երիտասարդի մը պէտք եղած ամեն ղրեսաեղենք կային, նոյնպէս անկողնոյն պարզ և ազնիւ հանդերձանքը կ'իմացնէին թէ արթուն կնոջ մը աչք կամ ձեռք անցեր էին հոնկից. փոքրիկ բա-զանեաց խուց մը՝ անկողնի սենեկէն դուռ մը կը զատուէր։ Երբ այս ամենքը տեսան, առաջնորդը դարձեալ «Դեռ ինչ բանի որ պէտք ունիք, իշխան, խնդրեմ հրամայեք» ըսաւ։ Իսկ Թորոս առաջին ան-գամ իր սուր աչքերը ցցնելով դիմացինին, ըսաւ. «Վայրկեան մ'ալ, սա սենեակը գտանք։» Եւ երկրորդ անգամ դիմացի սենեակը մըտ-նելով՝ շեմակ ձեռքը երկնցուց կոտաձև ահագին սուսերին որ պա-տէն վար կախուած էր, վար առաւ՝ կէս մը քաշեց պատենէն՝ զըն-նեց, և ճանչնալով իր հօր Լեւոնին սուրը, և դարձեալ իր տեղը զե-տեղելով՝ «Բարեկամ, զըուցեց հատիկ հատիկ բառերուն վրայ կե-նալով, կը զգուցես անոր որ սա տունը պատրաստեց, եթէ հրեշ-տակ է՝ իմ սրտիս կէսն ալ իրն է այս վայրկենէս,» և կեցաւ։ Մարդը՝ «Երբ հրաման ընէք հոստեղի սպասաւորին՝ պատրաստ եմ միշտ ձեր ծառայութեան» ըսաւ, և խոնարհ ձևով ողջունեց ու գնաց։

Ան առեն Թորոս դառնալով ծառային, «Բաբկէն հայրիկ, ը-սաւ, սա տանը դիրքը տեսաք, ել քանի որ մուրքը չէ կոխած, շուրջ պատյտ մը ըրէ, դիտէ առանց դիտելու, տես առանց նայելու, նայէ սա տանը կոնակը ի՞նչ տեղէ կը պատրաստանէ, սա պատը ինչի՞ հեցնալ է, տուն է՞ թէ պարտէզ, տեղեկութիւն մը. մ'ուշանար որ կերթակուր ուտենք։»

Երբ Բաբկէն գնաց, ելաւ Թորոս անշշունչ քննելու տախտա-կամած պատերուն շէնքերը, ամենէն փոքրիկ ձեղքը մեռը գըննու-թեան նիւթ եղաւ իր արծուի աչքերուն, և վերջապէս անկողնոյ սենեկին մէջ կանգնեցաւ հատուածոյ տախտակի մը առջև և հեգ-նական ժպիտ մը ծնաւ իր շրթանց վրայ։ «Ահա իմ փնտռածս, կ'ըսէր, դաւաճան տախտակ, դուն բիւզանդացի դուռ մ'ես, բայց իր՞նչ կը ծածկես քու կտնակդ, իրաւ սա անկողինը՝ սա բեհեզեայ վարագոյրները՝ սա գպեստներուն ծալքերը նաև կը զըուցեն թէ հրեշտակի մը թևերը անցեր են անոնց վրայէն, բայց հազար տարի առաջ վկայուած է թէ խաւարի հրեշտակներ կային որ լուսոյ հր-եշտակաց կերպարանք կ'առնուին, և սա քաղքիս մէջ՝ սա անի-ծեալ Բաբիլոնին մէջ լուսոյ հրեշտակ, իր՞նչ անկարելի հրաշք է. լաւ, այս ամեն բան աղէկ, բայց հօրս սուրը ներսի սենեակը կախուած, իր՞նչ կը նշանակէ, ո՞վ կը նշանակէ. կի՞ն մը. բայց այդ սուրը յաղ-թանակի յիշատակաց գանձատունէն հանուած է, իր՞նչ տեսակ կին կրնայ լինիլ։ Բայց այսօր ինչքա՜ն նոր պատահարք իրարու կը յա-ջորդեն. բանէ ազատիլ՝ հղբօրս գաւաճանը տեսնել որ գիս կ'որ-համարհէ՝ Կայսրը ու իր ամբարտաւան պատգամը, որ մինչև իմ հոգիս հայութենէ հանել կ'ուզէ, ինչպէս իր բոլոր ժողովրդեան հոգին քաղեր իր քահանաներուն հետ բաժներ և Աստուծոյ բան մը չ'էէ ձգեր։ Ո՜հ, թէ որ այդ Մարդը իր թագին և իր ժողո-վըրդոց օգուտը ձանչնար, կամ թէ ես իր տեղը լինէի։ Ես իմ բան-տիս մէջ ինչ որ իմ ազգիս՝ իմ տոհմիս անցեալին վրայ սովրեցայ իմ հօրմէս, ինչ որ աս հին Յունաց և արդի Հռոմոց վրայ ուսայ իրենց գրքերէն՝ որ իրենց վանքերուն գրքատանց մէջ փոշոտած և որդնոտած էին՝ թէ որ այդ մեծ թագով պսակեալ գլուխը ուսած լինէր՝ անշուշտ այդ չիմար ձեռնասանքը չինձի չ'էր ըներ. և փոխա-նակ գիս նկունս արհամարհելու՝ իմ ազգս հալածելու՝ արևելեան Քրիստոնէութեան փաղանգ մը կը կազմեր կեդրոնացնելու համար իր ազդը և զմեզ, որպէս զի արևելքի և արևմուտքի յարձակմանց կա-րենար դիմանալ, որոնց կամ մէկուն և կամ միւսին առջև օր մը գիտեաւալ պիտի կրծանի, և այս մայրաքաղաքը պիտի դառնայ Անի մը հափշտակել և առևանգել։ Բայց ո՞վ գիս մոռացաւալ, ծո-վուն անապատի բանտատաւ՝ չիշել տուաւ այդ ոսկեայ կայսեր որ

ինձ պէս ա պատրաստ ըլլայ. ո՜հ, իմ սեաւ լերան պայծառ ա-
բև, երբ քու սև ժայռերուդ վրայ պիտի կանգնիմ, և պիտի տես ան
առեն պիտի տեսնեն իմ ազգս և օտարները, չէ թէ տղայ մը որ
վերէն վար կը կշռեն, այլ հսկայ մը որու հետ խօսելու համար
պէտք է վարէն վեր խօսին. և պէտք է այդ Անդրոնիկոս համոզուի
թէ կորիւնը առիւծ է. ո՜հ դաւաճաններ, խեղճ երիտասարդ մը
իրօք առիւծ էր կորիւն առիւծու, իմ եղբայրս, իմ Ռուբէնս, ձիշդ
այսօրուան տարիքս ունէր, առիւծի ուժ՝ առիւծի սիրտ ունէր.
աչքին լոյսն առիք՝ արևը խաւարեցուցիք. երեք մռնիք բաստ, ա-
նոնց օրինակէն և անոնց սխալներէն: Ո՜վ Աստուած իմ, տուր ինձ
մտաց կարողութիւն չի մտանելու գլուխ մինչև որ Ռուբինեան խաչին
դրօշակը անկեմ Տորոսի բարձանց վրայ: Բայց ահա առջի քայլերս
ինձի կը ցցնեն սա խաւարին մէջ, այս անոք անօգնական թշնամի
երկրին մէջ բարեկամ ձեռք մը առ իս կարկառեալ. բայց բարեկամ
հազար ձեռքեր միթէ իմ հարազատիս չէին՞ կարկառեալ. գեղեցիկ՝
անձնեայ՝ կորովի՝ անվեհեր՝ սիրելու համար՝ բարեկամութեան հա-
մար միայն ստեղծուած, ո՜վ կրնար ըսել թէ մարդ մը կրնար գըտ-
նուիլ որ գլխէն ատեր, կանայք բոլոր իրեն սիրահար էին, և-
րիտասարդք բոլոր իր ձեռքը կը փնտռէին, ո՜հ բիւզանդեան սէր,
ո՜հ բիւզանդեան բարեկամութիւն. սա քաղքին պարիսպները ինչ-
չափ անիծեալ կիրք կը պատապարեն. այդ պալատին ոսկեզօծ շող-
շողուն գմբեթները քանի՛ գազիր ապականութեանց շերիմներ են:
Իրաւ հօրս սուրը իմ սիրտս շարժեց, բայց միթէ Անդրոնիկոս ինք
չի կրնաք լինիլ այդ սուրը հոս՝ սա պատէն վար կախել տուողը,
որպէս գի գիս ալ եղբօրս ձամբան գլուխ և ազատի ան վըհէժխընդ-
լութենէն թէ որ Ռուբէնի նման եղբայր մը կայ . . . բայց Սատ-
փանէ. բայց Մի՛ հ լ՞նչ եղան, ձայներնին չի կայ. թէ որ անոնք
շարժէին, կեանքի նշան տային, գիս բանտէն հանող մը անշուշտ
չ՝էր գտնուեր . . . . Կիլիկիա լ՞նչ վիճակի մէջ է, ո՞վ լինձի տեղե-
կութիւն մը պիտի կարենայ տալ . . . . ես, . . . այո՛ ես. պէտք է
անձամբ երթամ, բայց մինչև այն օրը ես պէտք է լինիմ ան Հռով-
մայեցին պէս որ իր հայրենիքը ազատելու համար սուտ խենթ
մը եղաւ, ես ապուշ մը կ՝ըլլամ, և թէ որ նա գիս այնպէս կարծէ՝

հաւանական է թէ բոլոր պալատականք այնպէս պիտի կարծեն:
Բայց ապուշ մը կրնայ սիրել . . . այդ դուռը գնող, այդ սուրը
կախող ձեռքը իմ դիմակս հաւանական թէ կ՝ուզէ սկզբել . . .
տեսնենք ո՞վ պիտի յաջողի այս խաղին մէջ, և յաղթութիւնը որո՞ւ
պիտի լինի: Անշուշտ իմս, այո՛ իմս պէտք է լինի. վասն զի ես ցա-
մաքի և ծովու պիտի տիրեմ: այս է գուշակութիւնը . . . . այո՛
գուշակութիւն երազի. բայց ի՞նչ է երազը, ո՞վ կրցեր է մեկնել
անոր ուսկից գալը, ի՞նչ է անոր նշանակութիւնը . . . ես ուզեցի
իմանալ երազը՝ Մովսէսի Խնդոց գրքէն մինչև Գորգիաս Լեոնդացի,
Դանիէլի Բաղտասարէն մինչև Թռօթակոր Ապտերացի, և համոզուած
եմ թէ երազները նշանակութիւն ունին, երբ որոշ են՝ պարզ՝ հոգ-
ւոյ յստակութեան քունի մէջ՝ և ծնունդ հանդարտութեան մտաց.
և իմ փառաւոր ծերս յիրաւի աստուածային կերպարանք ունէր իր
վսեմ և լուսալիր դէմքով, իր փառահեղ մօրուքով, իր նշուլագեղ
աչօք որու ակնթարթը գիս տղայութենէ ի մարդ փոխարկած էր
երբ արթնցայ: «Ի՞նչ, ըսաւ հայրս Լևոն, հացը՝ հայրենի հող,
ձուկը՝ ծով կը նշանակէ, դուռ ծովու և ցամաքի պիտի տիրես, ու
ես չ՝պիտի տեսնեմ:» Եւ իրօք քանի մը օր անցաւ ու լինք մեռաւ,
և ես մնացի մինակ աս աշխարհիս վրայ օտար՝ բանտարկեալ՝ պա-
շարեալ բոլոր իր թշնամիներէն . . . իր թշնամիները թէ որ մինակ
լինէի՞ն, բոլոր հայութեան թշնամիներէն. վասն զի ես թէ որ բան-
տէն կ՝ազատիմ այսօր, անշուշտ հայ մը չկայ աշխարհքիս վրայ որ
հայուն անկախութիւնը և ազատութիւնը մտածէ: Միթէ իմ պա-
պերս Ռուբէն, Կոստանդին, հօրեղբայրս Թորոս և հայրս Լևոն թէ
որ ուզէին՝ թէ որ խնդրէին յունական արծուոյն սօթատած թևերուն
տակ մռնել Լամբրոնական Օշիններու՝ Հեթումներու պէս ուրանալով
հայութեան իրաւունքը, հայրենեաց և ազգութեան սէրը, միթէ
այս թուլամորթ և քնէած կայսերք՝ որոնք անգործ ամբարտաւա-
նութեան, վատաշուութեան և աստուածապանական վարդապետու-
թեանց սառերներու տակ կը թաւալին, կը մերժէի՞ն զանոնք. քա՛
լեցի: Բայց անոնք արքայական արիւն ունէին երակներուն մէջ, և
այն նշանաւոր օրը կը յիշէին՝ ուր հայ ժողովուրդը՝ սինքորը՝
առիւծը՝ շինականը որ ազնուական չ՝էր՝ որ ազատ չ՝էր՝ որ ակնգե-
ացական չ՝էր՝ ոչ Վեստ Սարգսի պէս՝ ոչ հրաշագործ Գեւորգարձ կա-

Թողնիկոսին պէս՝ ոչ Կիրակոս Երէցի պէս, կ՚երթար կը դիմէր առ Վահրամ, և անոր քաջութեան ընկերացած ջարդ ու բուրդ փախստական ընելէն վերջ յունական բանակը, որ Անիի բանտիքները՝ մատնութեան նշան՝ ձեռքը կուգար քաղաքը պահանջելու, և եաքը Թողած զէնքերը՝ յուսահատ և լքեալ Աշտաներու՝ Սմբատներու՝ Գագիկներու գերեզմանաց վրայ վերջն և անյուսութեան արցունքը կը թափէր. ահա այդ ժողովրդեան սէրն էր որ կ՚ոգևորէր իմ պապերս և յունական տևելութեամբ և արդար վրէժխնդրութեամբ կ՚երնէին Տօրոսի բարձանց վրայ կանգնելու ազատութեան դրօշակը, և ես այդ սիրտը ունիմ և կ՚զգամ, ես որ չէ թէ միայն իմ նախահարցս զաւակն եմ, այլ այս օտարախորթ յունաց գրականութեան, որ չէն գիտեր և չէն ճանչեր իրենց Լիպարիտները՝ իրենց Աբիսգիաները, այլ կը նսեմին ժամերով և օրերով կը վիճեն՝ կը կռուին և կը հալածեն իրենց գաւանակից եղբարքը կաթիլ մը ջուրի՝ հացի մը խմորի՝ անխմանալի քաոսի մը մեկնութեան համար: Խելագարներ, թէ որ Աստուած տայ ինձ կատարել իմ փափաքներս, ո՜հ, գիտեմ թէ ի՞նչ կ՚ընեմ. բայց յոյսերս մեծ, և վիճակս գժուարին. տեսնե՞նք:»

Այս խորհրդածութեանց վրայ էր երբ Բարկէն ներս մտաւ: Իսկ Թորոս զէնքը առանց խօսեցնելու միւս սենեակ տանելով հարցուց թէ ի՞նչ տեսաւ. և ինչպէս կերևակայէր՝ բարձր պատերէ զատ բան մը չէր կրցած նշմարել: Ուստի առանց ժամանակ անցնելու իջան ընթրելու. վասն զի արդէն ձաշու ժամանակը անցեր էր, և իրենք առաւօտուընէ մինչև երեկոյ դեռ բան չէին կրցեր ուտել: Բայց անօթութենէն աւելի հետաքրքիր էր Թորոս իմանալու թէ ի՞նչ էր կերակրոյ պատրաստութիւնը այս անտոմոր տան մէջ՝ ուր դարանակալ ձեռք մը կը նշմարուէր կամ սրտի կամ կենաց. ուստի իջաւ սեղանատուն և երբ ակնարկեց Բարկէնի նսեմիլ սեղան իրեն հետ, երբ նա կը քաշուէր, «Բարկէն հայրիկ, թէ որ պարագաները պահանջեն, ես քեզի կ՚իմացնեմ թէ երբ ինձի սեղանակից պիտի չ՚լինիս, իսկ ուրիշ ժամանակ մեր բանտի սովորութիւնը չ՚ինք փոխեր. և որոշ գիտցիր թէ ինձ աւելի ախորժելի է հօրս հաւատարմին և իմ ազգութեանս խնամածուին հետ անուշ հացն ու պատիճն ուտել՝ քան Թագաւորաց ընտրհեալ խորտիկներն օտարներու

հետ վայելելը» և նստան: Կերակուրներն ընտիր և համեղ էին առանց շռայլութեան, գինին ազնիւ էր և պատուղներն պատուական, Թորոս առանց բան մը զրուցելու ելաւ սեղանէն, տան սպասաւորը որ կը ծառայէր, հարցուց ան ատեն թէ «Ի՞նչ հրաման ունէր երկրորդ օրուան կերակրին համար.» իսկ Թորոս պարզութեամբ պատասխանեց. «Այսօրուան կերակուրը ոչ քեզի պատրաստել հրամայեց՝ անոր կը հարցնես:»

Եւ ինք քաշուեցաւ վերնայարկը. նախ Բարկէնի ապսպրելով վարի հիւրի սենեակը անկողին մը տարածել և պահակ և միշտ արթուն քնանալ. «Թէպէտ, յաւել ժպտելով, այդպիսի պատուէր մը աւելորդ էր այնպիսի մարդու մը համար որ 12 տարեկան սկսած էր հօրեղբօրը և հօրը ամեն պատերազմաց գտնուիլ և խելամուտ էր թէ թշնամեաց բանակէ մը շրջապատեալ՝ միշտ զգոյշ պէտք էր լինել:» Եւ առանց երկար խորհրդածութեան մտաւ անկողին և պառկեցաւ, իբրև թէ իր Հայրենի Վահկայ բերդին տղայութեան ապահով սենեակը լինէր, և քունն թեպէտ քանի մը ժամ ուշացաւ վրայ հասնելու, բայց վերջապէս այնպիսի տարիքի մը մէջ՝ օրուան զանազան դիպուածներու պատճառած սրտայուզութիւնը յաղթեցին կամքին զօրութեան և քնացաւ. երբ անթնչաւ, ինչպէս տղայութեան սովորութիւնն էր մեկէն յանկերգ անկողնէն և բնականաբար աչքը դարձուց խաբուսիկ դրան որ անշարժ պատի մը կերպարանք կը պահէր. պատուհանը բացաւ և տեսաւ որ Բարկէն պարտիզին մէջ անխռով կը շրջագայէր. երիտասարդին ակնարկին վրայ վեր եաւ, և առջի նայուածքը՝ յար և նման Թորոսի՝ խաբուսիկ դրանը եղաւ:

—Բարկէն հայրիկ, ըսաւ Իշխանազունն, ի՞նչ հետաքննին աչք կը նետես այդ պատին վրայ, ի՞նչ տեսար:

—Հիմայ չէ՛ որ տեսայ, պատասխանեց Բարկէն, երէկ տեսայ ես այդ դաւը, բայց վտանգը իմ կարծածիս պէս չ՚եաւ:

—Ի՞նչ ըսել կ՚ուզես:

—Ան կ՚ուզեմ ըսել թէ ես կարծէի որ այդ դռնէն սուսերաւոր թշնամի մը պիտի ելնէ, իրօք թշնամի մը եաւ, բայց իմ կարծած տեսակէս չ՚է:

—Ի՞նչ կ՚ըսես, Բարկէն, բան մը չէի հասկնար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Ամփ. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1350-81

—Դու լինձի ըսիր թէ «Արթուն քնայիր,» և ես արդէն միաքս գրած էի. բայց ի՛նչ օգուտ արթուն քնանալ վարի սենեակը անկողնի մը վրայ տարածեալ, ուստի պէտք էր այնպէս դիրք մ՚առնէի որ տան մէջի շարժմունքը տեսնէի և Հայոց միակ յուսոյն վրայ հսկէի. ուստի երբ ամեն ձայն դադրեցաւ քաղքին մէջ՝ քիչ մ՚ալ անկողնին փոխեցի ըսի, ելայ կամաց մը իջայ պարտէզ ու սօսի ծառէն յարմար անկողնին մը չի գտնելով անոր վրայ զետեղեցայ. և իրօք մինչև կէս գիշեր ամեն տեղ լուռ էր և խաւար, բայց յանկարծ քու պատ տեսայ որ ճեղքեցաւ և ակար լուսոյ գիծ մը նկարուեցաւ. ձեռքս սա պահած թուրիս տարի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ըսի, լինձի համբերութիւն տայ . . . . .

—Ի՛նչ. պիտի պոռայիր։

—Աստուած չ՚ընէ. ճիւղէն ներս պիտի ցատկէի, մինչ մեր Սեաւ լեռը լաւ կը ցատկենք, բայց միջոցը շատ էր, պատուհանը նեղ, անշշունչ ցատկելն անհնար, եկողը կրնար փախչիլ մանաւանդ որ լոյսը տակաւ էր, ուրեմն՝ եկողը վախկոտ, ուրեմն՝ պէտք էր սպասել և վայրկեանը տարի մը եղաւ, լուսոյ երկայն՝ վերէն վար գիծը սկսաւ շարժիլ բայց անզգալի կերպով, և ահա գլուխ մը տեսայ. փառք քեզ Լուսաւորիչ ըսի, սուրը տեղը դրի. սատանի դլուխը կնիկան մ՚էր. բայց ի՛նչ կուզէր. մարիկ կ՚ընէր, կ՚ուզէր իմանալ թէ դու իրօք քուն ես. երբ ապահով եղաւ դուռը կատարեալ բացուեցաւ, քօլարկած լուսով մը ի ձեռին մտաւ սենեակը, նախ ըզդուշութեամբ սենեակը զննեց, վերջը կամաց կամաց մօտեցաւ դէպ ի քեզ և երբ իր երեսը տեսայ գլուխ առաւ . . . .

—Ինչո՞ւ, ի՛նչ կար երեսին վրայ, ի՛նչ էր։

—Լուսոյ պէս աղուոր էր. սատանան երբ աղուոր է՝ ես շատ կը վախնամ, մանաւանդ հիմա, քեզ կը գիտէր, քու վրադ կ՚ազօթէր, ես ալ կ՚ազօթէի որ այդ գեղեցիկ սատանային ձանկէն Լուսաւորիչ քեզ ազատէ. քանի մը վայրկեան կեցաւ, և վերջը գիտես թէ մեկը գինք ցնցեց, առաւ իր լոյսը և ինչպէս անշշունչ մտաւ՝ նոյնպէս հալածեցաւ գնաց։ Տեսիլն անհետացաւ եղաւ։

ԱՀա եր բոլոր քու տեսիլդ ու վախդ, Բարկէն հայրիկ, ըսաւ ծիծաղելով Թորոս։

—Այդ կինը թէ որ շատ աղուոր չ՚ըլլար չէի վախեր։

—Կ՚իմանամ, կը վախես որ խելքս անոր կ՚երթայ և մեր լեռները կը մոռնամ, այնպէս չէ՞։

—Այո՛, ատոր չէ որ թէ որ այդ կինը աս քաղաքը ձգէ քեզի հետ գայ, իր նեղով հատատքը Թորոս, Լուսաւորչի հատատ, մենք անիկա մեր լեռներուն Թագուհի կ՚ընենք. բայց Հոռոմ կինը անխ֊ած է. դու ալ մեր իշխանը՝ լաւ ես, խելօք ես, գիտուն ես, շատ կարգացող ես, վարդապետի չափ բան գիտես, բայց կնիկ տեսած չ՚ունիս. վախեմ որ ինչպէս մեր Հայոց գլուխները մոռցար ու վանքին բանտը Հոռոմի գլուխը կը կարդայիր, մեր կնիկներն ալ չ՚մոռնաս այդ Հոռոմին կնկան համար։ Ես լուսահոգի հօրդ կ՚ըսէի. «Տէր, մեր Թորոս իշխանը լաւ է, բայց այդ նեղված ազգին գլուխը կը կարդայ, վախեմ Լուսաւորչի հատատն մոռնայ։» Նա ինձ կ՚ըսէր. «Բարկէն, Թորոսէն մի վախեր, նա ինձմէ խելօք՝ հօրեղբօրը պէս է, օր մը մեզ պիտի մոռնէ, մեզմէ քա՛ջ՝ մեզմէ լաւ պիտի լինի. դու հոգ մ՚ընէր, կը տեսնես։» Ես ալ անհոգ կը լինէի, բայց երբ կը տեսնէի Նարեկ բարձի Թոզլե, ու որկնատած փոշոտած Հոռոմի գլուխը գաղտուկ կը բերէիր ու գիշերն ի լուռ կը կարդայիր, «Աստուած պահէ մեր իշխանիկը» կ՚ըսէի։ Հիմա տեսայ այդ կինը, իր գեղձան մազերը ոսկեկապ ձգած կռնկէն, որ ականջդ ի վար քեզ գիւթել կը ջանար, վախն առաւ գլուս, Աստուած քեզ պահէ, Լուսաւորիչ քեզ լոյս տայ։

—Հոգ մ՚ընէր, Բարկէն հայրիկ, Աստուած կը պահէ. իմ սիրտս քիչ մ՚ապահովցաւ. ինչպէս Հոռոմոց գլուխները գլուս ապահով ըրին իրենց կրօնքին վանդէն, իրենց կանայք ալ զմեզ կ՚ապահովեն իրենց արանց վանդէն։ Դու շատ լաւ ըրեր ես, այս գիշեր անկողնիդ Թռչուններէն փոխ առեր ես, ալ ապահով կրնաս գիշերները քնանալ վասն զի Թշնամին քու կարծածիդ չափ զօրաւոր չէ. ո՛ր գիտէ Թէ նիզակակից մ՚ալ չէ մեզի։

—Աստուած պահէ Հոռոմի մը նիզակակցութենէն, ըսաւ ծերուկն, երեսը խաչակնքելով, հարցո՛ւ այդ Փռանկներուն Թէ ի՛նչ վաստակ ըրին աստոնց օգնութենէն, Հոռոմը կը խոստանայ անուշ անուշ բարեկամութիւն, պաշար, առատութիւն, միւս կողմէ ձեռքի տակէ խոտերն ու արտերը կ՚այրէր, ցորենն ու գարին ջուրը կը Թափէր, գեղն ու քաղաք անապատ կ՚ընէր երբ մեր Կիլիկիա հա֊

սան քու պապուդ օրը, հայրս կը պատմէր, Աստուած լուսաւորէ անոնց հոգին, ձի չ'էր մնացեր տակերնին, ձանբան ամենն ալ սատկած էին, մարդիկ ըսես հալ ու մալ եղած անօթութենէ, հիւանդութենէ, գիտես թէ բարակ ցաւի էին հանդիպեր, մենք կ'ըսէինք որ ամենն կը մեռնին, ան քաջ պարոններ ու փեսերներն թէ որ մեր Հայու հացն չ'ուտէին՝ Երուսաղէմ չ'էին մտներ, բայց նա որ շատ խելօք մարդ էր, Աստուծոյ սիրուն համար ալ իր սիրուն համար ալ, անոնց թագաւորին գնաց պէտքերնին լրուց. կերան խմեցին, ութ օր չ'անցաւ ամեն մկկը մէյմէկ ցուլ դարձան, ուժովցան, գընացին ամեն տեղ առին, Ս. գերեզմանն ալ ազատեցին. ինչ օգուտ, սա Փռանկները ուժով են, քաջ են, լաւ բաղուկ ունին, բայց գլուխնին գատարկ է, խելք չ'ունին, սա Հոռոմք հակառակն են, ուժ չ'ունին բայց շատ գիտեն, խորը կը տեսնեն, նայէ ատոնց տէրտէրնեբուն աչքին, գժոխքի ձրագ կը նմանի, գիտես թէ սատանան մէջը կը պլպլայ։ Ես ասոնց դիշերուընէ՝ ի վեր Հոռոմ մարդկանցմէ աւելի կնիկներէն կը վախնամ։

— Փուճ տեղ կը հոգնիս, Բաբկէն, ըսաւ Թորոս լուրջ կերպով, մենք հիմա քարէ փայտէ բարեկամ մը չունինք, պէտք է որ պատրաստուինք ասոնց անիծեալ քաղաքէն փախչելու, ծոցերնիս ատակ մը չ'ունինք որ նաւու մը վարձք կարենանք ընել, քու ըսածիդ պէս թէ որ խելօք լինինք և առիթ մը երբ պատահի անկից օգուտ քաղել չ'գիտնանք, մենք ալ քու Փռանկներէդ աւելի գատարկ գլուխ կը լինինք։ Դու նայէ սա քաղաքս, այս օր պոռայ մը ըրէ. տես, նայէ Հայ մը կը տեսնես թերևս, ամեն Հայու ականջ մի՛ դներ, Հայերէն խօսող ուրացեալ Հայ կարելի է շատ գտնես, բայց սրտով Հայ շատ քիչ կայ, մանաւանդ տէրտէրներէն զգուշացիր, անոնց լեզուը սուրբ է, բայց գէշը սատանայէն ալ վատ է։ Երբ իմ վրայ խօսք դառնայ գըուցէ թէ ապուշին մէկն է, գըուցէ թէ միաքը բռնուած տարտամ մարդ մ'է, հօրը հիւանդութենէն վերջը փոխուեցաւ գըբուցէ, ցաւէ՝ ողբա իմ վրաս. իսկ թէ որ մարդ մը հանդիպիս, իւրաքանչիւր մարդ մը, քանի մը տեսութենէ վերջ ինձ իմաց տուր անուշով՝ տեղով՝ անցեալով և յետոյ երբոր ուզեմ ինձի կը բերես։ Ահա քու ընելիքդ։

— Լաւ, ըսաւ Բաբկէն, եղաւ երթալու։

Շատոնց էր՝ Լեռնի մեռնելէն վերջը՝ այսչափ երկար խօսակցութիւն չ'էր ունեցեր իր երիտասարդ տիրոջ հետ, ուստի ուրախ էր սրտով, թէպէտ դէմքը ծիծաղի սովորութիւնը մոռցեր էր։ Ու երբ դադրեց կ'ելնէր, ձայնեց Թորոս.

— Բաբկէն հայրիկ, փող ունիս։

— Մէկ փող չի կայ, բայց Աստուած ողորմած է։

— Ի՞նչպէս։

— Երբ ոտք չ'ունէինք Աստուած ոտք տուաւ, հիմա ալ ատակ չ'ունինք, Աստուած մեծ է կուտայ, դու հոգ մ'ընէր։

ԳԼՈՒԽ Գ.

ԽՆԱՄԱԿԱԼ ՁԵՌԲԸ

«Լաւ, ըսաւ Թորոս ժպտելով, երբ Բաբկէն գնաց, աղէկ գիտէ ծերուկն որ ես ալ փող մը չ'ունիմ. պատուակա՛ն մարդ, Աստուած իրեն յաջողութիւն տայ. տեսնենք ի՞նչպէս կը գառնայ և երբ, վասն զի ան մարդկանց մին էր որ պարապ գառնալ չեն գիտեր։ Ի՞նչ մտածութիւն ծառին վրայէն հսկել իմ վրաս, և ի շնորհս Բաբկէնի խնայեց թէ ո՞վ է անձը որ զիս կը խնամէ, թէ որ այդ խնամքը ծուռակ մը չէ. վանքի մը մէջ բանտարկեալ անձի մը սիրահարուիլ ուսկից գիս տեսեր է, ո՞ւր ձանչեր է. ահա չորս տարի է որ աշխարհքի հետ մեր ամեն յարաբերութիւնք կտրուած էին, սենեակ մը երկթէ վանդակներով մեզի կը ներէր կզըոյն բարձրութենէն տեսնել ծովը ընդարձակ, և խեղճ Հայրս երկու հոգի վրայ աչերը սևեռեալ՝ կը նայէր հոգը որ Ռուբէնի գերեզմանն էր և որու քով ինք պիտի թաղուէր, և ծովէն անդին քիչ մը հեռուն Ասիոյ ծովափունքը որոնց շարունակութիւնը կ'երթայ մինչև Կիլիկիա։ Կիլիկիա, ուր երբեմն Թէպէտա ազայ կը յիշէի առիւծը որ Տօրոսի բարձանց վրայ կանգնած՝ կը դիտէ՝ ահա մեր սահմանը կ'ըսէր, որ Աստուած որուշեր է. ահա սա լեռներուն գիծը և ծովու ալեաց փայլը, թէ որ կարենայի՛նք հայու թեամբ լեցնել այդ երկիրը, կը յիշեմ նաև այն

օրը որ նա գղեակը գարձաւ մեծ պատերազմ մը վերջը, ուր շաբունակ ամիսով հօրեղբօրս հետ մեկտեղ Սկիւթացւոց ահագին բանակի մը արշաւանաց դէմ կը պատրաստուէին, ի՜նչ սոսկալի ամիս էր ան: Ես մօրս և եղբօրս հետ կ՚ելնէինք մեր լերանց վրայ այցելութեան ան խեղճ ժողովրդեան որ փախեր ըլլուեր էին կանանց՝ տղայոց և կենդանեաց բազմութեամբ ապաստանարան գտնելու Տօրոսի ժայռերու վրայ, մարդիկ բոլոր զինեալ հօրեղբօրս և հօրս հետ բարբարոսաց բանակը կը դիտէին որ չ՚բաւականանալով աւարբաւ՝ գերութեամբ ու կործանմամբ՝ կայրէին՝ կը վառէին գիւղեր՝ աւաններ ու քաղաքներ, արհաւիրք և սարսափ պատած էր զամենքը, ամեն անհամբեր հօրեղբօրմէս ակնածողք՝ հօրս աննկուն և յանդուգն քաջութիւնը գիտնալով իրեն կը դիմէին. «Մինչև երբ պիտի սպասենք, կ՚ըսէին, դու ելլ մենք ամենքս քեզի հետ ենք, հատանք, լծեցանք, մինչև երբ սպասենք,»—Իսկ Լևոն, հայրս, «Տըղա՛ք, խնդութեամբ, կ՚ըսէր, ես մեծ եղբօրս այսպիսի վտանգաւոր ժամանակ անհնազանդ լինիմ, Աստուած չ՚լինի, ես լաւ կշռած և խելամուտ եղած եմ որ առաքինի իշխան և հմուտ ու իմաստուն զօրավար է նա, այսպէս ժամանակ խորհուրդ տալն անգամ յանցանք է. երբ ըսէ՝ պատերազմինք, պատերազմինք ու մեռնինք, բայց ան առեն միայն: Եաբը տեսանք որ՝ կը հասնէին Տիգրան՝ Սպասաթ իրենց խումբերով, Գող Վասիլ իր աննկուն վաշտերով, և ահա Լատինացի սպառազինաց փոքրիկ խումբ մ՚ալ վրայ հասաւ, և պատերազմի փողը սկսաւ հնչել Վահկայ բերդին վրայէն, փողհարք լեռները կը հընչեցնէին, և ամենքը գնացին: Ես ան առեն տասը տարու էի, և Ռուբէն որ իմէն երկք տարու մեծ էր, սուր մը ձեռքը եկաւ գիս գտաւ. «Քալէ Թորոս, ըսաւ, մենք ալ երթանք պատերազմի, մենք կնիկ ի՞նք որ հոս գղեակը նստինք». ես տարտամ կը մտածէի վասն զի սուր չ՚ունէի, երբ մայրս վրայ հասաւ, երկուքնիս ալ զինեալ և անզէն բերդին աշտարակին մէջ բռնտարկել տուաւ:

Օր մը հոն կեցանք, մեկ մ՚ալ յաղթութեան ձայներ լսուեցան, մեր բանտին դռները բացուեցան. երաւ, թէպէտ ամեն աչք սպոյ արցունք կուլայինն, բայց գարձեալ յաղթութեանն ուրախութիւնը գամենքը գինովցուցեր էր. իսկ հայրս երբ տեսանք շփոթեցանք, չ՚էինք գիտեր ինչ էր թէ մեռած, վերստ որ կարծեցինք, և իմացանք թէ յոդ-

նած էր և թէ յաղթութիւնը գրեթէ նորա քաջութեան պատճառն էր: Անկողնին մէջ պառկած օրերով՝ բոլոր զօրագլուխները կուգային զինքը փրկիչ կ՚անուանէին, և հօրեղբայրս նախ կը վկայէր անոնց առաջ թէ Աստուծմէ վերջը Լևոն Կիլիկիոյ ազատարարն և առիւծն եղաւ: Սմեն օր կուգար զինք տեսնելու: Ի՜նչ ուրախ օրեր անցան մինչև գերութեան օրերն որ եկան. ո՜հ, մոռնամ այն օրերը և չը յիշեմ: Ներկային վրայ՝ այո՛, պէտք է մտածել բայց ներկայն անծանօթ ապագայ մը ունի. տեսնենք սա կինը անշուշտ ինձի պիտի երևայ և սա քողը պիտի վերնայ. ի՜նչ կը նշանակէ. թէ որ յոյները գիս սպաննել ուզէին՝ ի՜նչ գժուարութիւն կար իրենց համար. սպասենք ուրեմն»:

Սպասաւորը եկաւ ձաշի հրաւիրելու. Իշխանը, որ երբ իջաւ՝ տեսաւ որ յարգանօք կ՚ողջունէր զինքը առջի օրուան մարդը, որ ան առաջնորդեր էր և բնակեցուցեր, գարձեալ իմացնելով թէ պատրաստ էր իր ամեն հրամաններըը կատարել. իսկ Թորոս իր անհոգ և միամիտ ձևը հագնելով, պատասխանեց թէ դոհ է և գանգատի նիւթ ամենևին չ՚ունի: Ուստի ձաշը կատարելէն վերջը առանց երկար խօսակցութեան մնալու այդ մատակարարին հետ, քաշուեցաւ գարձեալ վերի սենեակը իմացնելով թէ քունն ունի:

Թէ որ Ալեքսանդրէ սկսեալ բոլոր երևելի մարդիկ ծանր պատանեռու նախերգանաց մէջ կրցեր են քնանալ պէտք չէ զարմանալ, յաջողութեան ապահովութիւնը միշտ յոգնած մարդի մը քունն կը պարգևէ, այսպէս եղաւ նաև մեր Թորոսին, որ գարձեալ քունի թաղուեցաւ. բայց քուն մը ուր իրեն կերևար թէ գեղեցիկ ոսկեթել մաղերով կին մը թեթև քայլերով իրը առուեր անկողնին շուրջը կը պտտի, ու քանի անգամ որ ձեռքը իրեն կ՚երկնցներ՝ փախուստ կուտար. ան խաղը շատ անգամ հանդիպելով վերջապէս աչքերը բացաւ և մարդ չի կար. աչքը խորունկ գրանը գարձուց և տեսաւ կխաբաց, թէպէտ կորովի, թէպէտ բնութենէն աներկիւղ, սառուկ զարմացաւ տեսնելով որ իր անշարժ սիրտը կը թնդար՝ կը բաբախէր և զօրութիւն մը զինք կը ձգէր՝ կը քաշէր դեպ այդ կին առաց գուռը. Ուստի կանգնեցաւ գինովի մը պէս, դուռը սողաց անհետ եղաւ իր մտանց գալէն և մտաւ նա նոր սենեակ մը ուր լռութիւն և միայնութիւն կը տիրէր. քօղարկեալ վարագուրներով

պատուհաններ, յոյս կը նուաղեցնէին, բազմոց մը՝ և խորանի մը պէս բան մը կար մէկ կողմը, դէպ ի հոն դիմեց և հազիւ թէ քայլ մը առաւ՝ ճնաց . . . եղբօրը Ռուբէնին կենդանի պատկերը պատին վրայ կախուած՝ գոյնզգոյն թարմ ծաղիկներով պսակուած տեսաւ. ան տեսարանը մէկէն զինք փոխեց, սրտին փոթորիկը դադրեցաւ, ալեկոծութիւնը հանդարտեցաւ և յորդնառատ արցունքի հեղեղ մը երեսն ի վար կը վազէր, ձեռքը՝ ձակատն ու մինդացած աչքերը կը գոյներին, արձան մը ախտութեան հոն կեցեր էր, երբ փափուկ պզտիկ ձեռք մը՝ անուշ ձայն մը որ իր անունը կուտար, զինքն ի խորունկ քունէ արթնցուց. և երբ տղու մը պէս իր ձեռքը թոյլ տուաւ այն ձեռքին և աչքերը դարձուց անոր որ զինք կը կոչէր, յիրաւի սքանչելի՝ ազնուական և լուրջ կերպարանք մը տեսաւ, պարզ՝ ըզգեստներուն, պարզ՝ զարդարանաց և պարզ իր գեղեցիկ հասակին համեմատութեան մէջ: Աչքերը իրեն յառեալ՝ «Բաւ է այդչափը, իմ սիրուն Թորոս, ըսաւ, արցունքը մեր՝ կանանց՝ իրաւունքն է, ձեր բաժինը վըհէժն է. ես շատ գիշերներ անցուցեր եմ այդ պատկերին առջև արցունքով»: Իսկ Թորոս այդ ձիւնափայլ ձեռքը իր շրթանց տարաւ, ուզեց խօսիլ չի կրցաւ, վասն զի արցունք և սրտի յուզմունք ձայնը խեղդեր էին. իր քաղցր խրատատուն իբր գորովալի մայր՝ ձեռքին բռնած տարաւ բազմոցին վրայ քովը նստեցուց և բեհեզեայ թաշկինակաւ իր և անոր արցունքները կը սրբէր: Երկայն վայրկեաններ անցան և այս երկու տարբեր զգեցկութեանց սքանչելիքն իրարև հին բարեկամներ ձեռք ձեռքի՝ ծունկ ծունկի՝ աչք աչքի կիսանուաղ կը նայէին, մինչև ու աչքերը կենդանութիւն առին և վերջապէս Թորոս կամաց ձայնով մ՚ըսաւ. «Չ՚եմ գիտեր ինչ ես. բայց հրեշտակ մը չի կրնար ուրիշ կերպարանք մը ունենալ և ոչ ուրիշ ձայն մը և ոչ այդ գորովալից խնամքը. զիս թշուառ պանդուխտս, հեգ բանտարկեալս. գժբաղդ գերիս ո՞ր տեսար, ինչո՞ւ կաթեցար, և ի՞նչպէս սիրեցիր. ան պատկերին առջև չի հասած հանելուկը հանել անկարելի էր, բայց հիմա կարծեմ թէ կը խեղճամիմ:

—Այս էր իմ փափաքս ալ երկայն՝ սովորական և անհամ ապրուփական խաղերը ինձի սիրելի չ՚էին: Ուստի նախ զիս, իմ անցեալս պիտճան չես: Իմ անունս Եւփիմէ է. իմ հայրս, Ալէքսիս, Փոքր Հայոց

կուսակալ երբ Սեբաստիա Հայոց թագաւորաց յանձնուեցաւ, Արծրունի իշխանի մը աղջկան հետ կ՚ամուսնանայ, և Պօլիս դառնալէն տարիներէ վերջը ես կը ծնիմ: ես կաթնկեր տղայ՝ միակ մըխիթարութիւն կը մնամ մօրս, որ իր նոր ազգութեան հետ բոլորովին չ՚էր կրցեր հաշտուիլ մինչև իր մեռած վայրկեանը, ուստի ես հազիւ չափահաս եղած Կոստանդին կայսրը զձեզ կալանաւոր բերաւ Կիլիկիայէ, մայրս առանց ձեզ ձանձրանալու անմխիթար էր ձեր անկման համար. ընկերացեալ հօրս հին բարեկամաց՝ ամեն ջանք ի գործ դրաւ՝ առանց երբէք երևալու, և յաջողեցաւ զձեզ բանտէն ազատել և արքունեաց դուռը նաև բանալ ձեզի. այն օրէն՝ և առջի տեսնուելն զիս Ռուբէնի հետ նշանելու միտք յայտնեց, մանաւանդ որ տակաւին կիներ էինք: Բայց Ռուբէնի սրտաբաց կերպը՝ գեղեցկութիւնը՝ բիւզանդացի կանանց անբարոյական վայելքոցութիւնը՝ նորա ալ զուարճութեանց անյագ սէրը մօրս մտաց հաստատութիւնը խախտեց, և դեռ մէկուն չի բացուած սկսաւ զանազանել որ այդ երիտասարդին անցնիմ քանի որ ապագայ դժբաղդութիւն մը ակներև էր, բայց իմ սիրտս այդ պատճառաբանութեանց չ՚էր կրնար համոզուիլ. նախանձը զիս կուտէր և անտարբեր կը ձևացնէի ինքզինքս. պատերազմ կար ներսս և մէկուն չէի կրնար բանալ. ուստի մօրս հնազանդելու համար ամեն ջանք ըրի, և Ռուբէնի անունն անգամ ալ բերնէս չ՚ելաւ. մայրս կարծեր թէ մոռցեր էի, և ես Ռուբէն կ՚երազէի: Զանազան անձանց հետ ամուսնութեան առաջարկներ ըրաւ, բայց ես միշտ կը հեռացնէի, մինչև որ ծանր հիւանդութեամբ պառկեցայ, և բանդագուշանքս մօրս յայտնած էին զաղտնիքս, ուստի խեղճը բժշկին խորհրդով զիս Ռուբէնի հետ՝ ամուսնացնելու ամեն ջանք ընելու խոստումնք ըրաւ, և հիւանդութիւնը նոյն վայրկենին բարեփոխութիւն ունեցաւ և օր առաջ ես առողջութեան մէջ հաստատեցայ՝ գոյներս եկան. Ռուբէնի հետ մէկ քանի տեսութիւն իր կեանքի ձևը փոխեցին, և Ռուբէն առանց մեզի սպասելու առաջարկութիւն մը ըրաւ մօրս՝ հօրը հաւանութիւնն ընդունելու պայմանաւ: Մեր ուրախութիւնը՝ մանաւանդ մօրս ուրախութիւնը՝ անկարելի է պատմել. բայց ինչքա՜ փ կարճ եղան ուրախութեան օրերը: Յանկարծ գժբաղդ դիպուածին լուրը տարածուեցաւ, մայրս զիս միխթարելու կը ջանար երբ ինք ինձմէ աւելի հիւանդ էր, ես անկողին

ինկայ, սաստիկ ջերմ մը գլուխ կը տանջէր. նոյն միջոցին մայրս ուրիշ անհնակ մը մեռեր էր։ Պառաւ հօրաքոյր մը իմ վրաս կը հսկէր երեկու տարի, և հօրս բարեկամ, ծեր և փորձ բժիշկ մը, որ հազիւ թէ ես քիչ մը շարժելու սկսայ՝ գլուխ հիւծեալ և մաշեալ՝ Իշխանաց կղզին օդափոխութեան տանել հրամայեց, մեր բնակարան տունն ինք որոշելով. հոն հօրաքոյրս և ինք ինձի հետ միայն կ՚գըզրկէին և կ՚առնէին գլուխ մօտակայ վանքը կը տանէին մեծաւորին, և բժիշկը կը նստեցնէր գլուխ պատուհանի մը առջև. բարի և սրամիտ ծերուն դիտաւորութիւնը իմացայ այն օրը՝ երբ գքեզ հօրդ հետ տեսայ, պարտէզին մէջ կը շրջագայէիք. Ռուբէն կենդանացած կարծեցի, և դեռին գլխուի թէ որ արթուն ծերը, որ գլուխ աչքէն չէր կորցներ, գլուխ չ՚բռներ. մարելուն հետևանք սոսկալի ջղային ցնցումներ եկան և այն օրէն կեանքը իմ երակներուս դարձաւ. գքեզ երբեմն տեսնել նոյն պատուհանէն իմ դէզս եղաւ. տեսայ դարձեալ գքեզ հօրդ դադալէն եռանէն երբ բանտէն դերեզմանատունը կը տանէին, երգում ըրի ան տեսն գքեզ ազատելու համար ամեն ջանք ընել. տարի մը անօգուտ աշխատեցայ իմ պատուական բժշկիս հետ, և երբ Մանուէլ հօրը տեղն անցաւ, ալ ազատվելցայ, իսկ քու օգնութիւդ համար ամենևին երկբայութիւն չունէի. և այնպէս համոզուած էի թէ Ռուբէնի այնչափ նման եղբայրը՝ որ գլուխ այնչափ սիրեց՝ անկարելի էր որ անոր սրտին նման սիրտ չ՚ունենար, և թէ նորա յիշատակը մեր սրտերուն համոզյց չ՚լինէր։

— Այսպիսի ազնիւ սրտի, այդ հրաշագեղ կերպարանաց, այդչափ իմ ազատութեանս համար եղած ձգտանց, եղբ՛կ, գասնացեալ սրտէ մը գլուխ ոչինչ չունիմ, և այն կրնայ բաւական փոխարէն համարուիլ։

— Ի՞նչ, ըսաւ աղջիկը, և աչքերն այնպիսի լուսոյ նշոյլ մը փայլատակեցին այս հարցական բառին հետ, որ Թորոս գարմացաւ, դու սիրտ մը միայն ունիս. չէ՛ Թորոս, դու այդ սրտիդ հետաւոր ազգակից մ՚ալ ունիս, դու իշխանութեան ընդարձակ երկիր մ՚ալ ունիս, և անոնք կը մտանաս. ես քու ձեռքիդ երբ փափաքեցայ, քու իշխանութեանդ փառքին ալ մասնակցիլ փափաքեցայ. ահա կը տեսնես որ ես շատ շահասէր եմ և շատ փառասէր, մի՛ կարծեր գլուխ այն կանանցմէ որոնց մտքին ընդարձակութիւնը իրենց սրսկա-

պանէն արդին չի կրնար տարածուիլ. ո՛հ, չէ, ես քեզի՝ ինչպէս Ռուբէնին՝ իշխանական աթոռ մը կը փափաքիմ, ես ձեր այս տոհմական կալմուածքին մէջ Պլուտարքոսի դիւցազուններ կը տեսնեմ, ներէ, ես դեռ մօրս ապրիլն դիւցազունքը չ՚եմ ձանչեր, և կրնաս ապահով լինել որ անխոնջ գործակից մը և ամենայն վտանգաց անվհեր դիմագրաւ մը յիս պիտի գտնես։ Դու ձանչցար հօրդ սուրը՝ զոր քեզի համար պարտաւորեցայ գլխարանէն գողնալու հարիւրապատիկ իր գնոյն վճարելով (նիւթական գնոյն է խօսքս) և դու արժանի մնացիր զայն կրելու։

Թորոս առանց խմնալու բազմոցէն ծունկի վրայ եկեր էր առ հրաշագեղ մարգարէուհւոյն առջև իր բոլոր խոհեմութեան առաջարկութիւնները մկկի դնելով, և երբ գադրեցաւ խօսքէն՝

— Քուկդ եմ, ըսաւ, ըսէ գլուխ ինչ որ կ՚ուզես. դու փառասէր ես կ՚ըսես, կ՚ուզես թագուհի ըլլալ եղեր, միայն Հայ եղեր, և առաջին ապաստարդ և խոնարհ ծառայդ ես կը լինիմ, և բոլոր իմ ազգս քու հպատակդ կը լինի, միայն թէ օտարին գերութենէն ազատի։

Եւ առ խօսքերն ըսելով ձեռքերը կը պագնէր, խակ նա որ հանգարտեր էր, ելաւ վերցուց Թորոսը, և թեւը մտնելով դէպ ի կնճ դուռը գնաց՝ որ կիսաբաց մնացեր էր և երբ կ՚ուզէր մտնել ու Թորոս գլուխ կ՚արգիլեր։

«Մի վախեր, ըսաւ, քու սպասաւորդ իմ միամիտներս են, մօրս ձեռքը մեծցած. դու ալ անշուշտ քու ծառայիդ վրայ ապահով ես, ոճակից կը վախես, մանաւանդ որ իրենց ապստամբ է, առանց քու կոչելդ, սանդուխէն վեր չ՚ելլել։ Կ՚ուզեմ տեսնել անձամբ թէ բանի մը պէտք ունիմ, ի՛նչ կը պակսի քեզի»։ Եւ այս ըսելով դարաններըը կը բանար, դէզոյներըը կը գնէր և տեսնելով որ բանի մը ձեռք դպուած դեռ չի կար, «Պէտք է գըտնել աւելցուց, որ ի՛նչ որ իմս է, քուկդ է, ի՛նչ որ հոս կայ քու գործածութեանդ համար է, անշուշտ դու սակի պէտք ունիս, և ապահով եմ որ գղրոցին բանալն դեռ գարձած չ՚է. հիմա որ մենք ալ իրարու ենք՝ կը յուսամ թէ իմս քուկդ է՝ քուկդ իմս է։

— Քու առ խոստիդ, քու այսչափ երկար . . .

— Մի . . . ըսաւ օրիորդը, իր ձիւնափայլ մատը Թորոսի շըր-

թանց վրայ գնելով ժպիտով մը, մի գուցէ ասկից վերջը չնորհակալութիւն բառը բերնէդ հանես, մեր մէջ առևտուր մը կայ, չէ՞ մի որ դու ինձի ասս փոքրիկ տան փոխարէն արքայական աթոռ մը պիտի տաս, աս շորերուն փոխարէն ծիրանի, աս երկու ապուշ սպասաւորայ փոխարէն ազգ մը հպատակ, թէ որ խաբուղ մը կայ ես չեմ, Թորոս»։

Փոխանակ պատասխանի Թորոս ան սիրուն ձեռքը համբոյրնեռվ ծածկեց, երբ աղջիկը ցնցուելով մը՝ «Մենք չ'իմացանք ժամանակը. պէտք է երթամ ըսաւ, երբ դես տեսնել ուզես սա դարանին խորը սա օղակը քաշէ և ես կուգամ։

—Թէ որ ես չհամաձայնիմ օղակը քաշելու։

—Ամեն համաձայնութիւն ինձմէ՞ կ'սպասես։

—Ես որ կարծէի թէ աշխարհիս վրայ բան մը չի կար որ դես չփոթէը և վախցներ, ինքզինքս փոխուած կը գտնեմ։ Ես որ երեք կայսեր գահոյից առջև սրտի արոփ մը չ'ունեցայ, ինչ եղայ չեմ գետեր։ Հիմա աղու մը պէս կը դողամ քու առջևդ. ի՞նչ է աս։

—Ա,ս կը նշանակէ որ դու դեռ տղայ ես, և պէտք է քու դասախարակութեանդ վրայ հսկեմ ես։ Այս երեկոյ ուրիշ կերակուրէն վերջը կը սեսնուինք, երբ ամենքը պառկին»։

Ե՛ս ասս լսելով ձեռքը տուաւ որ պագնէ, և դարձեր անհետ եղաւ ու գնաց։ Իսկ Թորոս մնաց հոն այն գրան առջև, փոխուած մարդ մը բոլորովին, սիրտը նոր՝ անծանօթ զուարթութեամբ մը զեղուն՝ և խաւար աշխարհք լուսաւոր եղած էր երեն համար. երեկոյեան արեւուն վերջի ճառագայթները վճ'իտ ոսկեզէն էին, ծառերու և ծաղկանց կանաչը շատ աւելի զեղեցիկ էր քան մեկ քանի ժամ առաջ, օդը առողջ և թեթև էր ընչելու և վերջապէս երբ պատուհանէն վար նայելով տեսաւ զիարկէն, այնչափ իրեն զեղեցիկ երևցաւ իր փշոտ և հասս յօնքերով և իր յիսուն բայց կորովի տարիներով՝ որ եթէ չ'ամչնար պիտի ցատկէր՝ իջնէր և համբուրէր։

Բայց ինքզինք զսպելով, ակնարկ ըրաւ որ վեր գայ։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Թէպէտ զուարթութիւնը կը փայլէր Թորոսի բոլոր կերպարանաց վրայ, թէպէտ ամեն պատրաստութիւն ունէր խօսելու՝ քան լսելու, բայց Բաբկէնի լուրջ և ախուր կերպարանքը առժամայն ապշեցուցիչ մը ըրին սրամիտ երիտասարդին վրայ՝ որ իր տարիքէն անհամեմատ վեր էր իր քսան տարիներուն մէջն ալ։ Բաբկէն՝ թէպէտ հազիւ թէ պարզ կարգալ և անունը ստորագրել միայն գիտէր, արտաքոյ կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն և անխոնջ պատերազմի մէջ, անզգուշելի, հաւատարիմ և նախանձաւոր ազգասէր մարդ մ'էր։

Թորոսի և Լևոնի յաջողութեանց անթոյլ գործակից, և առջևնին պաշտող՝ յիշատակին երկրպագու կրօնամոլ, միտքը զրաճ էր որ եթէ Թորոս երկոյն ապրէր անտարակոյս Կիլիկիոյ անկախութիւնը ան ողջոմելի վճռակը չ'էր ընկնէր. ուստի Լևոն իրեն համար անհամ քաջակորով երիտասարդ մ'էր զուրկ ան խորագիտութենէն և նախատեսութենէն որ իշխանի մը և զօրավարի առաջնի յատկութիւնքն են։ Բայց որովհետև հաւատարմութեան մէջ անզգուշելի էր, խնդրեց Լևոնի ծառայութեան մէջ մնալ և նորա գեղեցկութեան անբաժանելի ընկեր եղաւ. բանակին մէջ երկրորդական անձինք էին իրեն համար Լևոն ալ՝ Ռուբէն ալ ամենքը երկու եղբայր նման կը դանէին իրարու, ինք Թորոսի և իր եղբօր մէջ անբաւ հեռաւորութիւն կը դանէր։ «Ռուբէն, կ'ըսէր, հօրը ճ'իշդ գաւակն է, ուժով, թեթևամիտ, քաջ մինչև ի յանդգնութիւն և ի հրաշագործութիւն ծանր վտանգի մէջ, որ կրնան զինք երբեմն ի յուսահատութիւն տանիլ. բայց պզտիկը, ո՜հ իր գլուխը երբէք պիտի չի կորնցնէ, իր հօրեղբօրը պէս պիտի լինի անյոյս վիճակներու մէջ՝ անխռով և հնարագէտ»։ Ուստի Թորոս իր հայրենասէր յոյսերուն գաւակն էր։

Ոչ Ռուբէնի աչագրաւութիւնը և մահը և ոչ Լևոնի վախ-

ձանը՝ որ գլնք ակօրեցուցեր և գառնացուցեր էին, կարելի էր բաղդատել Թորոսի փոքրիկ մկկ հիւանդութեան հետ, ուր Բաբկէն ինքզինք կը մոռնար, ալ պարտաւորութիւնը չէր՝ որ անքուն կը հըսկէր պառաւուհոյն անարին քովը, այլ գորովագութիւն մօր մը աչալըրջութիւնն էր. մինչև իր խոշոր և հաստ ձայնը դայլայլիկ մը առնուլ կը ձեւանար և կը փափկանար, թէ որ կարելի ըլլար իր ահագին ձեռքերը նաև պիտի մանրանային երբ դեղին սկահակը իրեն կը երկնցներ. այնչափ խնամք կը տանէր գլնքը խնամելու և տաճելու ժամանակ։

Ուստի՝ հիմա երբ տխուր ու գառն ներկայացաւ, Թորոս «Ի՞նչ կայ, Բաբկէն հայրիկ, ընդունելութիւնդ շատ խաւար կ՚երևան այս օր, հարցուց, միթէ ամենեւին Հայ սրտով մարդ մը չի կրցար գտնել։

—Երանի՛ թէ չի գտնէի. գէշ, Իշխանիկս, գէշ։

—Ի՞նչ գէշ, ըսուցէ դըւխով երերցնելուդ, ո՞ր է գէշութիւնը։

—Մի՛ա դիր, Իշխանիկս. ես հոսկից ելայ այս անճայր քաղքին մէջ բոլոր շուկաները պտըտեցայ, մէկ Կիլիկեցի Հայ մը տեսնելու համար, որ կարենամ լուր մը առնուլ թէ մեր լեռները՝ մեր տղաքը ի՞նչ եղան. իրիկուն եղաւ, ալ յոյսս կարեր էի, մէյ մ՚ալ մէկը գլխս դրդեց կամաց ձայնով «Բաբկէն եղբայր» ձայնեց. գլուխս վերուցի, նայիմ երկայն հասակով մէկը, բեռնակրի հագուստներով չի ճանչցի. «Մի խօսիր, ըսաւ, միայն եռևէս եկու, ես ալ գործ կ՚ուզէի տեսնել»։ Ոչ էր, չ՚դիտէի, ան քիչ մը առջևէն ես ալ անոր հետևելով շարունակեցինք ճանբան՝ մինչև խեղճուկ իջևան մը հասանք, և սենեակ մը բացաւ։ Երբ դուռը գոցեց «Գլխս չի ճանչցիր» հարցուց. «Չ՚է», ըսի։ «Բարի նշան, թէ որ դու ալ գլխս չի ճանչցիր, ուրեմն ստատան ալ գլխս չի կրնար ճանչնալ։ Վահկեցի Կոստանդինը չ՚ես ճանչեր»։ Իրօք Վահկեցի բերդական էր, և սկսաւ ինձի պատմել թէ ի՞նչպէս բերդին անձնատուր լինելէն վերջը, բոլոր էին գլնք Հոռոմք ու շղթայակապ նաւու մը մէջ դրած Պօլիս կը դրկէին, և թէ ի՞նչպէս շղթաները կտրելով նաւատուներն ու պահապանները սպաններ և նաւը Սելևկիոյ Ծովեզերքը կրցեր էր խրել և անկից ցոլոր Ծովեզերեայ ժայռերուն և մացառներուն մէջէն՝ գիշեր ցերեկ՝ շատ անգամ անօթի ծարաւ՝ քանի մը ձիթուն քանի մը եղջիւր

միայն ուտելով, վերջապէս Սև լեռ գտեր էր, և թէ ինչպէս Հոռոմները ամեն տեղ զիեր Հայերը կը հալածէին կը չարչարէին և թէ ամենքը կը մմռայլին և թէ ան մեր անպիտան ազգուրացի Լամբրոնի իշխանները՝ անհոգ անկարեկիր էին անոնց նեղութեանց, որովհետև իրենք իրենց առ կայսր հաւատարմութեան վարձք առած էին պատիւ և իշխանութիւն։ Իսկ Մամեստեայ Հոռոմ կուսակալը՝ ամեն օր գէշն ու իր հաւատքը կը հայհոյէր, և ամենքը Աստուծմէ Լևոնի տղոց մկկուն հասնելուն կ՚սպասէին որ գլնքի վազեն։ Ուստի Կոստանդին հարցուցեր էր թէ ո՞ւր են Մլեհ և Սաեփանէ. և խմացեր էր թէ Հալէպու Նուրէտտին Ամիրային ծառայութեան մէջ մտած էին. եղեր գնացեր էր պանդոկ դտնելու, և հաղիւ թէ Սաեփանէ համոզուեր էր Կոստանդինի հետ Կիլիկիա դառնալու, Մլեհ վրայ հասնելով, ոչ թէ միայն իր եղբօրը միտքը շըշնդելու՝ այլ և զԿոստանդին մտանելու երդում ըրած էր, եթէ նոյն օրը Տաճկին հողերէն դուրս չ՚ելներ։

Կոստանդին ալ՝ յոյսը կտրած՝ եկեր էր Պօլիս որ թէ կարելի է մեր կղզւոյն բանալը կոխէ, հայրդ ու գլխով ազատէ և տանի Կիլիկիա կամ մեռնի. ուստի գլխով կ՚ուզէ հիմա տեսնել։

Իսկ Թորոս ասպատմութիւնը մոխիկ ընելէն վերջը առանց պատասխան մը տալու եղաւ և մտախոհ՝ աներեակին մէջ վեր վար կը շրջագայէր՝ երբ Բաբկէն արձանի պէս անշարժ կեցեր էր. վերջապէս Թորոս դառն ժպիտով մը՝

—Բաբկէն հայրիկ, ըսաւ, շատ կ՚ուզէի Կոստանդինը տեսնել, վասն զի կ՚երևակայեմ թէ ինչպէս որ շատախօս է, նոյնպէս և ատեն կ՚ունենայ թէ ինչպէս որ շատախօս է, նոյնպէս և ատեն կ՚ունենայ թէ ինչպէս որ շատախօս է, նոյնպէս և ատեն կ՚ունենայ ալ քաջ է, բայց այս անիծեալ կառավարութիւնը՝ որ ատելի

Ի՛նչ տեղեկութիւն որ բերէր է՝ լինէի բաւական է։ Բայց չէ հարցուցիր թէ ինչ միջոց, քանի՞ հոգի ունի եղեր աս մայրաքաղաքին դրան առջև կղզիի մը բանտ մը կոխելու յանդգնութիւնը ունեցեր է։

—Քիչ մը դրամական օգնութիւն գտնելով քանի մը եկեղեցականներէ, Գենուացի նաւ մը վարձեր է, հինգ ալ ընկեր գտեր է իրեն պէս անվեհեր մարդիկ և աս խորհուրդը մտածեր է։

—Բայց դու ի՞նչ ըսիր, Բարկէն, աս մեր Կոստանդնին մտածութեանը։

—Ըսի թէ յիմարութիւն է, և բարեբաղդութիւն մ՛է որ աղէն բանտին դուռը բացուած լինելով իրենց քաջութեան կարօտութիւն չէ ճնացած որ Կիլիկիոյ միմիայն յուսոյն թերևս անօգուտ մահը պիտի պատձառէր։ Ուստի չ՛ես ուղեր իրեն գալը քեզի հետ տեսութեան։

—Չ՛եմ ուզեր որ այսպիսի քաջ մարդիկ յուսահատուր լինին, ուստի դու կրնաս խոհեմաբար պէս տեսնելու անօգուտ և վնասակար հետևանքը իմացնել։

—Աղէն գրեթէ իմացուցի, և ինք շատ տխրեցաւ, վերջին պատասխանի մը կը սպասէ վաղը շուկայի մեծ դրան առջև։

—Ա՜հա, վերջին պատասխանն ալ դարձեալ աս պիտի լինի։ Երթալ և մեր լեռներուն մէջ լինէի սպասել։

—Այո՛, ուրիշ։

—Կ՛երևայ թէ ուրիշ մտածութիւն մ՛ալ դու ունիս, Բարկէն հայրիկ։

—Այո՛ ունիմ։

—Ջրուցէ ուրեմն։

—Կը հրամայե՞ս որ ըսեմ։ Ի՞նչ կ՛արդիւնէ որ մենք ալ Կոստանդնի պատրաստ նաւով գառնանք Կիլիկիա, կարելի չէ՞ որ Կոստանդին հաղիւ հասած՝ դեռ մարդ իր գալուն հոտը չառած մնանենք իրեն հետ նաւը, և շուտով ձանրայ եղնենք։

Ե՛ս այս խօսքերը լսելուն՝ Բարկէն իր երկայն ընկուզիներուն տակէն իր սուր աչքերը Թորոսի բիբերուն վրայ անկած պատասխանի մը կը սպասէր։ Այդ նայուածքը և նորա նշանակութիւնը միայն Թորոս կրնար իմանալ, ուստի անխոտով պատասխանեց, ոչ թէ Բարկէնի մտքին այլ սրտին խօսելով։

—Մենք մեր բանտէն ելնելուն երկրորդ օրը թէ որ այս բնակարանը թողունք և փախչինք, կարելի՞ է որ կարենանք ողջ առողջ կիլիկիա հասնիլ, միթէ բոլոր ցուսայ սրընթաց նաւերը մեր եռևէն է՞ն սրանալ, միթէ ան կառավարութիւնը որ Լևոնի մահուընէն գրեթէ տարի մը վերջը իր տուրջ տալն բանտէն ազատելու համար այնչափ բարեխնամ ալաչանայ խուզ եղաւ, և հատիւ շնորհք մը ընելու ղէջաւ, կը յուսամ թէ գաղտնի մեր վրայ չէ հակեր և մեր առաջին անխոհեմութեան անյուշ բանտի գմեզ չէ դատապարտեր։ Ես ալ կը սիրեմ ազատութիւն, ես ալ կը յիշեմ մեր լեռներուն պայծառ արևը, երեկոյեան զով քամին և անջինջ երկնքին պարզութիւնը, և բան մը չէ կայ, աս լաւ լսէ Բարկէն, բան մը որ կարենայ զիս իմ պարտքէս՝ իմ առաջադրութենէս կասեցնել բայց ուխտ ալ ունիմ որ չխախտուն բան մը չ՛ընեմ։

Աս վերջին խօսքերը՝ որ Բարկէնի ձակատը պարզեցին և յօնքերը իրենց բուն տեղը տեղաւորեցին, դեռ իր վստահութիւնը ամրողջ չէ կրցան գրաւել և Թորոս լուռ կը նշմարէր, ուստի իբրև թէ նորա մտայ խորունկը չէ թափանցած՝ քանի մը պոռոտ ընելէ վերջ, սենեկին մէջ, ըսաւ.

—Ես քեզի ուրիշ գաղտնիք մը պիտի հաղորդէի, սա դրան գաղտնիքը որ պարզեցաւ։ Օրիորդը որ դու նախ տեսար, որու թեւերուս միայն պարտական ենք մեր ազատութիւնը, Հայ է մօր կողմէ և սրտով բոլորովին։

—Փառք Աստուծոյ։

—Այդ կողմէն ալ սիրտդ հանգիստ բռնէ. առ սա քանի մը ոսկին, անցիր դիմացի կողմը Ղալաթիոյ քաղաքը, հոն Հայոց եկեղեցի ալ կայ՝ նայէ, տեսնուէ ազգայնոց հետ, ի՞նչ վիճակի մէջ են իմացիր, թէ որ առանց կասկածի ստուեր տալու կրնաս իմանալ թէ Գենուացի նաւեր կան որ ոչ Միջերկրական միայն՝ այլ նաև Պոնտոսի ծով կ՛երթան, տեղեկութիւն ա՛ռ, ամէն ձանրայ լաւ է Կիլիկիա մտնելու համար։ Ամենէն ապահով տեղ տեսնուելու համար՝ Հայ եկեղեցին կրնայ լինիլ. բայց այդ նաև ինձի համար արգիլուած է թերևս, ինձի համար աս բանալը չ՛եմ գիտեր առջինէն որչափ ընդարձակ է։ Տեսնենք։ . . Դու խոհեմութիւն ունիս, պէտք չ՛է որ ես քեզի կրկնեմ, թէ ինչ վիճակի մէջ ալ լինիս պէտք է ջանաս

իմանալ՝ բայց միշտ առանց հարցնելու: Ժամանակը արդէն ուշ է, դու ալ յոգնած ու անօթի, երթանք կերակուրի:

Թէպէտ Բարկէն իրօք անօթի էր, բայց կար բան մը որ դեռ իրեն համար վարագուրեալ էր մնասմբ, այսինքն աղջիկը որ մօր կողմէ Հայ էր, և որ իրենց ազատութեան համար աշխատեր էր.» և քանի որ մանրամասնաբար պատճառները չէր իմացեր, իր ախորժակը կատարեալ չէր. բայց որպէս զի Թորոսի կամաց դէմ չի մղանչէ, որ անհրելի յանցանք կը համարէր, ամէն կերակուրներէն կշտացնող կերաւ, Կիզիկոնի վճիտ գինին լաւ մը խմեց, և երբ Թորոս ելաւ քաշուեցաւ իր սենեակը, իր լայն յօնքերը վեր առնելով և իր սուր աչքերը դոհութեան ժպիտով մը անոր հետոց վրայ դարձնելով, «Աստուած յաջողութիւն տայ, Իշխանիկս,» կը մրմնար քթին տակէն, «Դու շատ խելօք տղայ ես, որ աղջիկ մը խելքդ չափափէ ու քեզ կնիկ դարձնէ, ալ ես այս գիշեր հանգիստ կընամ քնանալ, դու զուարճացիր ինչչափ կ'ուզես, բաւական է որ տարին չ'անցած ան նեղված քաղքին պարիսպներէն մէկ մը դուրս նետուինք . . . : Մեր լեռները հարցուցի, մեր ազգին ընդհանուր վճռակը հարցուցի . . . իմիններս ամէնայն հարցնելու՝ վախցայ հարցնելու . . . ով գիտէ ի՞նչ եղան. ողջ են, մեռած են, ո՞ւր են . . . իրաւ է որ անոնք հարցնելու ժամանակ ալ չի կար, անշուշտ ան ալ չ'էր գիտեր . . . Լաւ տղայ է Կոստանդին, քաջ է, ի՜նչ օգուտ որ թէեւ է. ո՛ գիտէ Մլէհի՞ն էր յանցանքը թէ իրեն . . . :

Այս մտածութիւններով սկսաւ մրթմրթել Բարկէն հայրիկ իր նստած տեղը, և իրօք ալ իրեն ան մրթմրթը իր տղայութենէն ի վեր ամէնուն քունին սեղ կը բռնէր, և որ իրեն համար բաւական էր քսան չորս ժամ պատերազմելու և քառասուն ութ ժամ քալելու:

ԳԼՈՒԽ Ե.

ԴԻՈՆԻՍ

Այս փոքրիկ տան անմիջապէս կից տուն մը կար, որու մէկ սենեակը միայն տեսանք մենք՝ սենեակ կամ մատուռ աղջկան մը

սիրոյն՝ որ գաղտնիք մ'էր ամենուն համար բայց ի ծեր Դիոնիսէն որ աս որբ աղջկան ոչ միայն բժիշկ այլև խնամակալ՝ խորհրդական՝ սրտակից վարժապետ և հայր եղած էր միանգամայն:

Դիոնիս տակաւ և նիհար մարմնոյ մէջ կորովի սիրտ ունէր, և մեծահանճար գլուխ մը, ի բաց առեալ իր արհեստը որ գինք ուսմանց և գիտութեանց տարեր էր ի տղայ տիոյ, իր զանազան ճանապորդութիւնքը ի Փոքր Ասիա, Այրաբիա, Եգիպտոս և Յաւորեստան իր միտքը ընդարձակեր և հարստացուցեր էին, և գիտող ու հեռատեսքնին բնութենէն ամէն գաղտնեաց պատճառը փնտռելով, մռայեր և թերևս արհամարհեր էր սրտի զգացմունքները: Եւ վերջապէս երբ յոգնած և տկարացած երկար և բազմամեայ պանդխտութիւններէն Բիւզանդիոն դարձեր էր, իբրև թէ յանկարծ աչքերը բացուեր էին տեսնելու և իմանալու թէ ժամանակը անցեր էր. ուստի փիլիսոփայաբար որոշեր էր իր միայնութիւնը ուսմամբ մխիթարել և իր արհեստին պատճառաւ Ալեքսիսի՝ Եւփիմէի հօր՝ հետ վերաբերութիւն ունենալով քիչ քիչ անոր բարեկամաբար և եղբայրաբար կապուեցաւ, անոր ընդարձակ պալատին մէջ իր սենեակները ունեցաւ, և առանց զգալու ան մարդը՝ որ կարծեր թէ ընտանեաց սեր՝ զաւկի սեր իր սիրտը մուտք պիտի չ'ունենայլին, իր սիրտը գորովալից գտաւ անոնց ամենուն համար որ Ալեքսիսի էին. անոր կինը իր քոյրն էր, անոր որդիքը իր ալ հարազատ զաւկներ եղան, և ազատ սիրտ ունեցող կարծեցողն օր մը տեսաւ թէ իր խեղճ սիրան ալ դերի էր տղոց ձչելուն՝ խնդալուն՝ տխրութեանց և ուրախութեանց, և ինքնաբերաբար քարող և գաստիարակ եղած էր անոնց բարոյականին ինչպէս բժիշկ և խնամածու էր անոնց կենսականին: Իր աս պարտաւորութիւնները կրկնապատկեցան երբ Ալեքսիս իր մահուան անկողնին մէջ ծեր բարեկամին յանձնեց իր ընտանիքը: Ալ ան օրէն վերջը Դիոնիս տան հայրը եղաւ, և տեսանք թէ ինչպէս ոչ միայն անոնց պիտոյից այլ նաև անոնց ամէն քմայնեբուն կը ծառայեր, և Եւփիմէ իր աղնիւ բնաւորութեամբն ու կրկնից սրտով բռնաւոր մ'էր խեղճ ծերուն գլխուն, որ նորա կամաց հակառակիլ չ'էր գիտեր, և անձնասէր ծերութիւնը ժամանակ չ'էր գտներ իր բերմանն հետևելու: Ուստի ինչ որ Եւփիմէ կ'ուզէր Դիոնիս կը կատարէր. և որովհետև իր արհեստին և ուսմանց հա-

մար մեծ հարբած ունէր, և ծանր պարագաներու մէջ կը փընտռուէր թէ կայսերական և թէ մեծատոհմ ընտանիքներէ և ամենքը զինք կը յարգէին, ուստի կրցեր էր յաջողիլ իր ազգեցութեամբն ու խնդրանօք զմեր Թորոսն ալ բանտէն ազատել և այդ տան մէջ՝ որ անյայտ մաս մ՚էր Եւփիմէի պալատին՝ տեղաւորել։

Ա.յս ընդարձակ բնակարանին նկարագիրն ընել աւելորդ է։ Ժամանակին շռայլութիւնը ինչ որ սովորութիւն ըրած էր զարդարելու համար մեծամեծաց պալատները, ընդարձակ ոսկեձեղուն սրահներ և սենեակներ պատկերներով՝ արձաններով՝ գորգերով՝ բազմոցներով հոն աւելով կը գտնուէին և բնական է որ տարիներով ընդարձակ գաւառի մը կուսակալ իր կոզոպուտները մայրաքաղաքին մէջ վայելէ։ Ուստի Ալէքսիս Ծերակուտի անդամ անուանեալ և իր քաղցր բնաւորութեան համար կայսեր սիրելի՝ տանը շքեղութիւնն ու պերճանքը մեծ պարտաւորութիւն կը համարէր, մանաւանդ որ իր Հայ թագաւորազն կինը ամեն բանէ աւելի գոհ ընել կուզէր, վասն զի սաստիկ կը սիրէր, և նորա մաղձոտ Լեխուր վայրկեաններէն կ՚ակնածէր, որ առանց գանգատ մը յայտնելու, հայրենի երկրին յիշատակին՝ աչքի փայլ մը կ՚ունենար, և եռանդեամբ՝ իրաւ շատ քիչ անգամ՝ իր ազայութեան ձիարշաւները և խաղերը տարիներկից աղջկանց հետ կը յիշէր։

Եւ սա կինը թէպէտ բուն հայրենիքէն վտարանդի, վասն զի իր պապը Սեւենքերիմ Թողեր էր Վասպուրական աշխարհք և եկեր էր բնակելու Սեբաստիա, բայց դարձեալ հին հայրենեաց յիշատակներով անեալ՝ ինչափ հեռացել էր նոյնչափ ալ անոր վրայ սէր ունէր. ուստի իր էրիկը միշտ տխրութեամբ կուտար իրեն հին Հայաստանի ցանցառ նամակները որ երբեմն երբեմն իրեն տեղեկութիւն կը բերէին նորա թշուառութեանց։

Ուստի իրեն մխիթարութիւն միայն Կիլիկիոյ Ռուբինեանց յաջողութիւնքն էին, և ինչ որ անոնց յառաջադիմութեան համար կը խօսուէր՝ զինքը գաղանի ուրախութեամբ կը լեցնէին և Ալէքսիս Թորոսի և Լէոնի քաջագործութեանց լուրերը ինք կը բերէր կատակով և միշտ կ՚աւելցնէր. «Մեղի համար անհաճոյ և քեզի շատ հաճոյ լուրեր կան գարձեալ» Իսկ երբ Լէոն իր զաւակներով դերի բերուեցաւ մեծ քաղաքը, այս կինը սրտի սուգ առաւ և կրցած

օգնութիւնը ըրաւ եռանդագին ինչպէս վերը յիշեցինք։ Եւ երբ ինքն ալ մեռաւ՝ Եւփիմէ մեծ միմիայն ժառանգ հայրենի ստացուածոց և մայրենի հայասիրութեան։ Թէպէտ իր սէրը աւելի հեռաւանք կրնար համարուիլ ուրիշ գժբաղդ սիրոյ, ինչպէս երբեմն կը յայտներ Դիմնիս փոքրիկ ժպիտով մը առանց վերաւորելու իր սանուհին, որ անտարակոյս ո՞ւ իյէ կատակի կրնար համբերել երբ ան մարդէն կուգար. և աններելի կը համարէր այնպիսի զաւեշտի ստուեր մը նաև թէ ուրիշը համարձակել յանդգնէր։ Վասն զի այդ չքնաղ և արքունի կերպարանքին փափկութեան և մտաւորական սրամտութեան ներքև բուռն և խորխոտ բնաւորութիւն մը կար՝ որ կարելի էր կոտրել և փշրել բայց ոչ երբէք ծռել և հակել. և ծերուն բոլոր խրատները ու հայրական յորդորները անօգուտ կը լինէին երբ իր լուսալեր աչքերը հրալեր կը գառնային շանթահարելու համար իր կամաց ընդդիմահարները։ Բայց ժամանակը՝ և բազդին խիստ հարուածները որ իր երիտասարդ տարիքին վրայ բռնացան, սկսած էին զինք համոզել իր խնամակալին խորհուրդներուն ջանալ զիջանիլ և աւելի խոհեմութիւն ունենալ մեր այս պատմութեան օրերուն։ Ուստի երբ Եւփիմէ անմիա՝ յամառ և անխրատ վէճաբանի մը կը պատահէր և կը դժար հրալեց ամպը որ ճակատին վրայ կը դիպուէր, կը լռէր և իր դաստիարակին ժպիտ մ՚արձակելով կ՚առնէր կը քալէր, և հանդարտութիւնը հասնելէն վերջը՝ դարձեալ կուգար ի կուս, բայց ալ զէնքերը փոխուած էին, իր սուր միտքը փոխանակ շանթերու՝ թունաւոր նետեր կ՚արձկէր, հեգնութիւն և երգիծանք կը սրանային իր շրթունքներէն։ Եւ դարձեալ այս ամեն բնաւորութեան խստութեամբ ալ՝ թէ որ կանայք փախչէին իսկ իր ընկերութենէն, երիկ մարդիկ գիտնալով ալ թէ անխոց պիտի չ՚ելնեն իր պալատէն՝ դարձեալ կը վազէին փափաքով իր տեսութեան։ Ա.յսչափ զօրաւոր են կնկան մը գեղեցկութեան հրապոյրքը։

Ուստի նոյն գարնան երեկոյին, Բիւզանդիոնի վճիտ երկնքին լերաշլիը լուսնով մը, նստած էին Եւփիմեայ մեծ սրահին յարակից կախաղանաւոր կիտրոնեայ պարտիզին մէջ քանի մը հիւրեր օրիորդին բազմոցին շուրջը։ Իսկ նա իրենց սիրաշունչ շաղաքորթութեանց այնպիսի ժպիտներով կը պատասխանէր որ անկարելի էր որոշել թէ

հաճոյից էին արգասիք եթէ արհամարհանաց։ Վերջապէս երիտասարդ մը որու մնապարծութիւնը հագուստներէն կը վազէր, որու պէջանքը հոգւոյն նուաստութեան հայելին էր, սրտնեղութեամբ ոտք ելաւ, և կիսով գլուխը դէպ՝ օրիորդը դարձնելով՝

—Զարմանք է, ըսաւ, որ Կոմինենոսի մը նաև ձեր գեղեցկութիւնը անուշ բառ մը չ՚ունի պատասխանելու, արքայազուն մը լինի պէս, որ կայսերական պատուանդաններուն վրայ է իր ծննդեամբ, թերևս շատ նուաստացաւ հաճոյանալու համար ձեզի։

Եւփիմէի առաջին շարժմունքը նեղի հարուած մը ընդունող առիւծին էր, և հազիւ թէ իր գեղեցիկ ձակատը ցնցեց և աչքերը փայլակեցին, միտքը եկաւ թէ իր բաղդը իրեն կը սպասէր և ինք երջանիկ էր, ուստի եղաւ հանդարտ ձևով՝

—Ներէ, արքայազն իշխան, թէ որ ես անզգայ կը դանուիմ ձեր կատարելութեանց, որոնց բարձրութիւնը մեկը չի կրնար ուրանալ. ուստի ձերն է յանցանքը թէ որ ձեզի հաւասարները չի փնտռեցիք։

Ու այս խօսքերը աղնուական ծանրութեամբ մը զրուցելէն վերջը՝ նոյնպէս զամենքը ողջունելով, գլուխը բարձր՝ թագուհւոյ մը պէս իր սենեակները քաշուեցաւ, ուրկէ՝ որ դիւրութեամբ առաջացաւ ընկերութենէ մը որ զինքը կը ձանձրացնէր՝ ուրկէ՝ գրուելու համար ան ընկերութիւնը որուն համար սիրտը կը արթուէր։

Իսկ նոքա որ ճեպով՝ մեղադրելին Խաք Կոմինենոս որ այնպիսի նախատանօք և կոպտութեամբ վարուեցաւ գեղեցիկ օրիորդին հետ, և զրկեց զերծնք անոր ընկերութենէն։ Իսկ Պիոնիս, որ անշուշտ կը գիտէր աս ամեն եղածները, զերծնք ամենն ալ ձանրայ գնեցէն վերջը, ուղղուեցաւ գանելու իր սանուհին, որ իրեն կը սպասէր և որ զինք տեսածին պէս, մեկեն գիմաւորելով «ի՞նչ է կարևոր զրուցելիքդ» ըսաւ։

—Իմ զրուցելիքս հարցմունք մ՚է, ի՞նչ է քու միտքդ Հայ երիտասարդին համար։

—Ա՛յս հարցմունքդ զիս կը զարմացնէ, դու լաւ գիտես իմ միտքս,

—Ա՛նոր միտքն ի՞նչ է։

—Ա՛նշուշտ իմ միտքս ի՞նչ որ է՝ անոն ալ նոյնը պէտք է ըլլայ։

—Խնդրեմ ուրեմն ես ալ մեկ մը տեսնուիմ իրեն հետ, և իր բերնեն լսեմ և ըստ այնմ շարժիմ։

—Վատնդ մը կայ արդեօք, շուտ մը լինձի զրուցէ։

—Շատ անհամբեր ես, զաւակս, դու իմ ըսածս ըրէ։

Եւփիմէ առանց ժամանակ անցնելու աս վերջի խօսքերուն վրայ մեկեն սրացաւ սենեակէ սենեակ, և գաղտնի դուռը բանալով տեսաւ որ Թորոս ոտքի վրայ իրեն կը սպասէր. առանց ամենևին խօսելու ձեռքէն բռնեց, և շիտակ հոն տարաւ ուր Պիոնիս նստած կը մտածէր, և երբ երկուքն ալ իր առջևը կանգնած տեսաւ, առանց կերպարանքը փոխելու և առանց շարժմունք մը ընելու միայն իր սուր աչքերը Թորոսին վրայ ուղղելով՝

—Եւփիմէ զրուցած է քեզի իմ ով ըլլալս, ինք իմ զաւակս է, ուրեմն պէտք է ինձ միտքդ շուտով յայտնես։

Ա՛յս առանց յառաջաբանի լակոնական հարցմունքին հետեւանքը, թէպէտ երկայն էր, բայց Թորոս մեկէն՝ մեկ նայուածքով դատեց գիմացի մարդը՝ հարցմունքին նշանակութիւնը՝ և մօտակայ վտանգ մը։

Ուստի առանց գանգաղելու պատասխանեց։

—Թէ որ օրիորդը այսչափ գեղեցիկ և սիրելի յատկութիւններ ալ չ՚ունենար, միայն լինձի ըրած բարերարութիւնքն բաւական էին ինչ որ ունիմ՝ իմ անձս իրեն նուիրելու։

—Բաւական է, աղնիւ երիտասարդ, ես ալ քեզմէ սա պատասխանին կը սպասէի։ Հիմա նստէ՛ք և մտիկ ըրէ՛ք որ ըստ այնմ շարժինք։ Վատնդ մը կայ, և վտանգը քու ազգայիններէդ մեկէն կը հասնի, որ երբեմն քու հօրդ բերդակալն է եղեր և շատ ալ վըտանգաւոր մարդ, և հիմա Պօլիս կը գտնուի ծպտեալ ու ոստիկանութեան լրտեսները զինք ձանաչեր են և իրեն հետքը նաև գտեր. ասոնք գիշեր ցորհուրդ ալ կայ զինք ձերբակալելու. բայց այս դիպուածէն վերջ Կայսեր շնորհքին վրայ վստահիլ անկարելի է և մեծ անխոհեմութիւն. ուրեմն դու ի՞նչ կը մտածես, ի՞նչ պիտի ընես։

—Դեռ հիմա աս վայրկենիս կ՚իմանամ մօտալուտ վտանգը, թէ որ կարելի է փախիլ՝ հիմա՛ փախինք կ՚ըսեմ։ Բայց որն է ապահով ճանբան։

—Հիմա ապահով ձանբան սա տունը չի կենալն է, և ամիսի մը չափ ժամանակ ծածկուիլն ու ոստիկանութեան կարծեցնել թէ դու փախած ես:

—Ես բանտէ նոր ելած՝ աս ընդարձակ քաղաքին ոչ լաւ տեղեակն եմ և ոչ ծանօթ մը ունիմ. ինչ որ ըսես կը կատարեմ:

—Լաւ, ուրեմն պատրաստուէ շուտով դու և ծառադ: Ջգեսագ և Յունարչէնի կատարեալ գիտութիւնդ գլեզ չ'են մտաներ. խոհեմութիւն քեզի չ'եմ յիշեցներ. ես գլեզ կը ճանչնամ: Հիմա ուրեմն պէտք է ճանբայ ելնես:

Ելաւ ծերուկը և դրան մօտենալով «Լազար» կանչեց: Մէկէն երեսյաւ արդէն մեզ ծանօթ անասնը:

—Պատրաստ է ամեն բան:

—Ա՛յո՛, ծեար:

—Ուրեմն, ըսաւ Թորոսի, քու ծառադ ալ պէտք է պատրաստուի:

—Ան միշտ պատրաստ է, պատասխանեց Թորոս և շտկուեցաւ դէպի դուռը: Իսկ Եւփիմէ առանց մէկ բառ մը կրսնցնելու, մէկ մը ծերուն մէկ մը Թորոսին կը նայէր և առանց Թորոսի թևը թողլու եկաւ մինչև նորա սենեակը, և փոքրիկ կապոց մը չինելով սակի ու ձերմակեղէնի կը սպասէր՝ երբ Բաբկէն իր սիրոջ հետ վեր ելաւ: Եւփիմէ առանց բան մը ըսուցելու կապոցը Բաբկէնի ձեռքը տուաւ. անկից վազեց Լևոնի կախուած սուրը առաւ Թորոսի երկնցուց որ ան սիրուն ձեռքը իր շրթանց տանելով սուրը առաւ մէջքը կապեց: Եւ ասոնք ամենը արագ բայց անխռով կատարուեցան, իրրև թէ շատոնց որշուած լինէին, և երեքը մէկէն ծերուն քով դարձուեցան:

—Լաւ, ըսաւ ծերը, հիմա Լազար, նայէ ծառայ աղախին չի գտնուի գուրսը:

—Մարդ չի կայ, ծեար. և բոլոր լոյսերը մարած են:

—Աստուած բարի յաջողութիւն տայ ձեզի, ըսաւ ծերը և Թորոսի ձեռք տուաւ որ նոյնպէս ձեռքով պատասխանեց:

Եւ երբ սենեկին դրան քով եկաւ, գարձեալ պագաւ Եւփիմէի ձեռքը, որ մինչև ան վայրկեան բառ մը բերնէն չէր հանած և միայն այն ատեն աչքերը արցունքով «Աստուած հետդ ըլլայ» ըսաւ. իսկ Թորոս մէյ մը երկինք նայեցաւ, մէյ մ'ալ անոր, և դլուխը դարձուց դէպ' իր ճանբան ամենայն արագութեամբ, ծածկելու համար սրտին յուզմունքը. Բաբկէն անշշուկ կ'երթար իրրև իրեն շուքը:

Պալատին մէկ պզտի դռնէն Լազար զերծնք գուրս հանեց և լուռ անձայն փողոցներու մէջէն արագ արագ կ'երթային այս երեք անձինքը, երբ իրենց քովէն կ'անցնէին խաւարի և անզգամութեան արբանեակներ. մինչև որ իրենց սահմանեալ տեղը իջան քանի մը պիշերապահ խմբիկներ ալ եղան որ իրենց հարցմունք ընելու եթէ պատրաստուէին, Լազար անոնց գլխաւորին ականջէն բան մը գուշելով ճանբայ կառնէր, մինչև հասան տան մը դրան առջև. հոն Լազար բանալի մը հանելով դուռը բացաւ և իր ընկերները ներս մտցնելով դուռը կամացուկ մը գոցեց:

—Շնորհէ ձեռքդ, Իշխանդ իմ, ըսաւ, որ աս մութուն ձեզ առաջնորդեմ, և Թորոսի ձեռքն առնելով տարաւ սենեակ մը. Բաբկէնի համար գժուարութիւն չի կար, վասն զի մութուն ալ կը տեսնէր. «Դուք հոս նստէք,» ըսաւ Լազար և անհետացաւ եղաւ: Իսկ մեր երկու Հայերն մնացին մթութեան և խաւարի մէջ, գոնէ Թորոս գիտէր թէ ինչ բանի համար էր այս գիշերային փախուստը. երբ Բաբկէն որ կարծէր գուշակել՝ ինքնիրեն կ'ըսէր. «Իշխանիկս աս գիշեր աչք գոցած չ'է, ես լաւ քնացայ... արդեօք Կոստանդնի գալը իմացած են. երբ այդպէս է, իրաւ աս Հռոմիները սատանայ են. ես չի կրցայ ճանաչել, անոնք ի՞նչպէս ճանաչեցին... հիմա ո՞ւր կ'երթանք, անտարակոյս պիտի տեսնենք... Հռոմ աղջիկը իրաւ դեղեցիկ է... բայց ան սուր աչուի՝ մեծճակատ ծերը ո՞վ էր... Հ՜ն, Բաբկէն ամեն բան կ'իմանանք... Աստուած տար յաջող լինէինք, մէկ մը մեր Սև լեռը գանէինք...»

Այսպէս կը խորհրդածէր Բաբկէն, երբ Լազար երեցաւ, «Երթանք, ծեար իշխան» ըսաւ: Քանի մը քայլ առնելով դուռ մը բացաւ և ինքզինքնին լուսնի լուսոյ մէջ և ծովեզերը գտան: Երեք ջուխտակ նաւ մը կ'սպասէր: Հազիւ թէ տեղաւորեցան՝ նաւը սկսաւ սուրալ պատռելով ծովը՝ թողլով աջ կողմը մայրաքաղաքին և ձախ կողմը Գալատիոյ ափունքը. քանի մը ձկնորսի նաւեր և քանի մը պահնակ նաւեր միայն կային ծովուն վրայ, որոնց մէկ հատը միայն

մտածելով նաւուն և լազար իր նշանի բառը տալով ազատ իրենց ձանբան կը շարունակէին նաւուն գլուխը դէպ ի վոսքոր միշտ ուղղելով։ կ՚անցնէին շարունակ և ետ կը ձգէին այս օրուան պէշիքթաշ, Օրթագեղ, Առնավուտ գեղ, և կարգաւ արուարձանաց շարունակութիւնքը դէպ ի վեր, մինչև որ հասան թարաբիայի ծովեզը տան մը առջև և հոն նաւակը կեցաւ։ Ան տանն լազար ելաւ ցամաք և ձեռամբ հրամցնելով զԹորոս, որ ցատկեց ելաւ նաւէն Բաբկէնի հետ, նաւավարներուն քանի մը խօսք ըրաւ ու ձանբեց։ Հոն ծովեզը վերնիք թողլով պտոյտ մը ըրաւ տուաւ տան քովէն ձանբան, զարկաւցած երկաթապատ պատուհան մը և պատաւ կրնկ մը ձայն տուաւ ներսէն. երբ իր անունը տուաւ՝ «Աստուածածին, ըսաւ կինը, այս տանն լազար, ինչ կ՚ուզես։

—Բայց, մայրիկս, ըսաւ ձայնը, հիմա խօսելու ժամանակ չէ, զովը զմեզ սառեցուց»։

Պատաւը նիգերը խախտեց և քովէնի դուռը բացուեցաւ։ Լազար ներս մտնելով նշանացի լուռթիւն հրամայեց պատաւին, և կանթեղը առնելով ձեռքէն հիւրերը ներս մտուց և դռնապանի բնակարանը թողլով, շիտակ գերենք մաքուր սենեակ մը հանեց, ուր անկողին և ամենայն ինչ պատրաստ կար իրենց պիտոյից համար։

Գիշերը յառաջացեր էր, լուսինը լեռներ կը թագաւորէր երկնքին վրայ և հանդարտ ընթացքը կը շարունակէր, ծովը հանդարտ նոյնպէս, իբրև թէ երբէք աչկոծութիւն չէր ունեցեր. բնութիւնը վերջապէս իր բոլոր գեղեցկութեամբ զարդարեալ խաղաղութեան կերպարանքն ուներ. Թորոս պատուհանին առջև նըստած կը նայէր, բայց տեսարանին գեղեցկութիւնը ոչ կը տեսնէր՝ ոչ կ՚զգար այլ նա մանաւանդ թէ աեղի կ՚երևար իրեն ամեն բան, և դժար էր որոշել եթէ վերահաս վտանգը արդեօք թէ գեղեցիկին երեսէն հապճեպ աքսորն էր որ իրեն ծանր կը թուէր, բայց սոյգն հոն էր որ լուսինը արիւնագոյն կ՚երևէր աչքին, ծովը պղտոր հայելի մ՚էր, ծաղիկները հոտ չ՚ունէին, և սոխակը՝ որ վարդերուն մէջ կը դայլայլէր՝ մահուան երգի պէս աեղի էր իրեն, վասն զի նեփիմ չի կար։ «Աւա՜ղ, ուրեմն առանց անոր հայրենեաց փրկութիւնն նաև իմ սրտիս չպիտի բաղդրանա՜յ,» մրմնջեց և ըստ կուեցաւ դէպ՝ անկողին, երբ յանկարծ միտքը եկաւ Բաբկէն որ հոն

կեցեր էր արձանի պէս. միտքը նաև եկաւ թէ քանի որ դուրս ելած էին իրենց տունէն ոչ բառ մը նա արտասանած՝ և ոչ ինչ իւր պապանձման մէջ խօսք մը անոր ուղղած էր. թէպէտ սէրը խիստ՝ նախանձոտ և անողոք խորհրդական մ՚է և կը մերժէ ամեն բան որ սէր չէ, բայց Թորոս շատ մեծ սիրտ ունէր մոռնալու համար այդ աղնիւ մարդուն հաւատարմութիւնը իրեններուն և իրեն. ուստի ձանբան փոխեց և անոր մօտենալով՝ «Բաբկէն հայրիկ. դու ի՞նչ կը խորհիս առ մեր դիպուածին,» ըսաւ դառն և մտերմական ժպիտով մը միանգամայն։

—Ի՞նչ զրուցեմ, Իշխանիկս, վաղը մը թէպէտ կ՚երևայ մեր փախուստէն, բայց կը թուի նաև թէ յաջող ելք պիտի ունենանք, վասն զի մինչև հիմա կոտրած թափած չ՚ունինք։ Ոչ թշնամին վրեզ հալածեց և ոչ ձանբանիս կորեց. ու սուրը պատեանէն հանելու չի պարտաւորեցանք։

—Ճշմարիտ է, Բաբկէն, թէ վանգաւոր դիպուածներ կրնայինք ունենալ, բայց հազիւ թէ բանտէն ելած՝ բանտի սպառնալեաց նեղքև գտնուիլ շատ ծանր է։ Հաւերը կը խօսին. արշալոյսը մօտ է, երթանք քնանալ. քու անկողինդ . . .

—Ո՜հ, իմ անկողինս հոն է ուր որ բազմոց մը կայ, Աստուած քեզի հանգստութիւն տայ Իշխանիկս։

Թորոս հազիւ թէ անկողին մտաւ քունն ալ իր աչաց վրայ ծանրացաւ վասն զի հոգն ու յոգնածութիւն այն տարիքին մէջ քուն չ՚են վտարեր, նա մանաւանդ թէ կ՚անուշցնեն. երբ արթընցաւ, արդէն արեգակը իր ճառագայթներով երկնքի վրայ կը թագաւորէր և բնութիւն բոլոր ոտքի վրայ էր։ Նոյնպէս Բաբկէն դուրսի սենեակը արևուն հետ ելած՝ անձայն և անշշունչ կը պտրեր և առանց երևալու ձկնորսներու՝ նաւավարներու՝ ծովու և ցամաքի՝ անցորդներու երթևեկը ու իրենց օրևանած ամրաններն կը դիտէր, և ակառաները կձրտելով «Անիծեա՜լ քաղաք, նզովե՜ց քաղաք, հիմնայատակ ըլլա՜ս.» կը մրմնար։ Եւ վերջը երբեմն աչք մը կը ձգէր կապոյին որ Օրիորդը իրեն յանձնած էր իր պլպլութեան մէջ առանց բառ մը զրուցելու, «Մեր տիկինը, Աստուած լուսաւորէ հոգին, երբէք լինձի այդպիսի ամբարտաւան աչք ձգած չ՚ունէր «Բաբկէն հայրիկ, հոգիս հայրիկ, Ռուբէնս քեզ եմ յանձներ, նայէ

կրակոտ է . . . Թորոս խելօք է, բայց տղայ է . . . »Մեղը կը վազէր շրթունքներէն, ան մեռաւ, մեր բաղդը դարձաւ, վերջն անկողնին ընկնին էր. նորէն ինձի յիշեց՝ յանձնեց, և աչքերը իր խոշոր ձեռքերով բռնցի կը սրբէր: «Ո՞ւր է անանկ տիկին . . . աս Հոռմի կանանց քովէն երկինքն է . . . : » Եւ Թորոսի ներսը ոտքի ձայնը լսելով՝ տղու մը պէս աչքերը դարձեալ լաւ մը շփեց ու սենեակը մտաւ գնաց:

ԳԼՈՒԽ Զ.

ԱՌԻՈՅԻՆ ԿՈՐԻՆԸ ԱՌԻՈՅ Է

Մենք տեսանք որ Եւփիմ մինչև վերջը առանց դիմադրութեան կամ խորհրդածութեան բառ արտասանելու օգներ էր նաև Թորոսի փախստեան, վասն զի իւր սրամտութիւնը վտանգը յայտներ նշմարեր էր: Բայց երբ սրահներու մթութեան մէջ տեսաւ թէ իր սիրելին անհետացաւ՝ «Ո՛հ Աստուած իմ» ըսաւ, և բազմոցի մը վրայ ընկաւ երկու ձեռքերն երեսին վրայ սքօղելով իսկ Դիոնիս անխռով մօտենալով՝

—Եւփիմ՛, ըսաւ, ախտութեանդ և արտասուաց ժամանակ չէ, քաջ եղիր որպէս զի կարենանք կատարեալ վտանգին առաջն առնուլ:

—Դեռ վտանգ մնաց ուրեմն, ըսաւ աղջիկը սոսկումով:

—Այնշուշտ՝ թէ որ անհոգ նստինք, ոչինչ՝ թէ որ աշխատինք:

—Բայց չեմ գիտեր թէ ի՛նչ պէտք է ընել:

—Ես ամեն բան պատրաստեր եմ, անհոգ եղիր, միայն զիս մի՛ շփոթեր:

—Ո՛հ, ի՞նչպէս կ'ուզես որ անհոգ լինիմ, երբ իմ Թորոսս կորուսի:

—Թորոս կորսուած չէ, և վաղը ես ձեր պսակը կատարել պիտի տամ:

—Ի՞նչ կը զրուցես . . .

—Այ՛ այդ արարողութիւնը գրաւական մի է քու ապագայ երջանկութեանդ համար, և ո՞ գիտէ թերևս ղէնք մ'ալ է ապագային անկարծելի արկածից համար:

—Բայց ես Թորոսին վրայ ամենևին կասկած չունիմ:

—Ես ալ չունիմ, մանաւանդ թէ շատ համարմունք ալ ունիմ: բայց ժամանակը՝ պարագաները՝ բաղդին փոփոխութիւնները մարդկային խեղճ սրտին վրայ շատ և անկարծելի ազդեցութիւններ ունին: Ես չեմ կրնար իմ Եւփիմէս՝ իր պատիւը՝ իր առաքինութիւնը՝ իր գեղեցկութիւնը՝ երիտասարդութեան փոփոխամտութեան անձնատուր ընել. պսակի արարողութիւնը բաւական գրաւական մի է:

—Ես բոլորովին քու կամացդ հետևելով ալ՝ չեմ կրնար մոռնալ ամեն օրուան պսակներու ոչնչանալի պատրիարքական վճիռները:

—Մեր եկեղեցին շատ թուլցուցած է ամուսնութեան կանոնաց խստութիւնը, բայց Հայոց մէջ այդպէս չէ. (1) Անոյ թագաւորներն նաև գիտեմ թէ ամուսնութեան կանոնաց անհնազանդ գտնուելու յանդգնութիւն շատ քիչ անգամ ունեցեր են: Բայց ժամանակ կորսնցնել պէտք չէ:

—Ես քեզի արգելք չեմ, հայրիկ, երբ ինչ որ կ'ուզես:

Ծերը շուտ մը ելաւ ծառայ մը կանչեց, ապսպրեց Թորոսի տան ծառայող երկու անձինքը առնուլ՝ գեռ չի լուսցած՝ նաւակ մը դնել Թարապիա տանիլ. երկու որմնադործ՝ որ արդէն իր հրամանին կը սպասէին՝ բերել տուաւ և գաղտնի դուռը ամրացնելէն վերջը հռոմայեցի ծեփով (2) (որու գաղտնեաց հմուտ էր ինք) որմնել տուաւ ներսէն, և անմիջապէս նստաւ թուղթ մը գրեց բարեկամ Հայ վարդապետի մը, ուսկից կը խնդրէր ծպտեալ իր ցոյց տուած ժամատեղն գտնուիլը և երբ այս ամեն բանն կարգադրեց ու կատարեց՝ բարի գիշեր մաղթելով իւր սանուհւոյն գնաց իր սենեակը քաշուելու քնանալու:

---

(1) Սմբատ Տէրզեքահալէ եր քրոջ աղջկան հետ ամուսնանալն գայթակղութեան դէպք երբև կը յիշուի պատմութեան մէջ:

(2) Ciment romain, որու բաղադրութիւնը հիմա կորսուած է:

Իսկ Եւփիմ տեսնելով իր Ծեր Լենամակալին անխռով վըստահութիւնը, հանդարտեցաւ. կանչեց իր նաժիշտները զինքը հանգստացնելու, և իր երկրորդ օրուան երջանկութեան մտածութեամբն զբաղած՝ մոռցաւ գրեթէ ալեկոծութիւնը որ քանի մը ժամ առաջ զինք կը տարուբերէր, և երջանիկ քունի մէջ ընկղմեցաւ։ Երբ առաւօտուն արթնցաւ, Դիոնիս եղած՝ քանի մը երևելի անձանց այցելութիւն ըրած՝ իր էն կարևոր տեղեկութիւններն ստացած և վտանգը հեռացնելու ամեն հնարք ի գործ դրած էր։ Ուստի երբ Եւփիմին քով մտաւ՝ նա իւր առջի նայուածքէն ապահովեալ՝

—Հայրիկ, ի՞նչ պիտի ընենք այս օր, հարցուց։

—Կը հագուինք, կը զարդարուինք, և կ՚երթանք զուարճանալու։

—Զուարճութի՜ւն . . ո՜հ, բառը դեղեցիկ է, զուարճութիւն Դիոնիսի համար, իր գրքերէն՝ իր ուսմունքներէն դուրս. ինչչա՜փ սուղի կը լինիմ քեզի, սիրո՛ւն Հայրիկ, ըսաւ Եւփիմ և ծերուն երեսները պագաւ։ Դիոնիս իր բոլոր փիլիսոփայական ծանրութեամբ չի կրցաւ ախորժանաց ժպիտ մը չ՚արձակել վասն զի ծերերուն բնական է ախորժիլ երիտասարդ գգուանքէ։ Բայց զարձեալ պէտք եղած պատրաստութիւնները տեսնել հրամայեց, ամեն բան կարգի դրաւ, և երբ ձաշն ըրին ու Եւփիմ կը հարցնէր թէ պէտք չ՚էր պատրաստուիլ, «Ինչ մալ կ՚ըսէր ծերը պէտք է համբերել վասն զի ոստիկանութեան կը սպասեմ». և իրօք ծառայ մը եկաւ իմացնելու թէ ոստիկանութեան մեծը կը խնդրէր այցելութիւն մ՚ընել պալատին՝ տիկնին Օրիորդի հրամանաւ։

Եւ ահա ոստիկանապետն ներս մտաւ ու ամենայն մեծարանօք ողջունելէ վերջ՝

—Տիկնին Օրիորդ, ըսաւ, խնդրեմ հրաման տաք որ քանի մը սենեականերու փոքրիկ խուզարկութիւն մը ընեն մեր պաշտօնատարք։

Ի՜նչ արդեօք, ըսաւ Եւփիմ, միթէ մեծ յանցանք մը՝ ոՀ՚ին մը իմ տանս մէջ կը յուսացուի։

—Յուսացուիլը չէ, բայց ո՜ր դիտէ, տանը յարմարութիւնը՝ դիրքը՝ կասկածներ կրնան տալ, ուստի ամեն անունք փարատելու համար . . .

—Լա՛ւ, Տէար, ի՞նչ խուզարկութիւն որ ուզէք՝ տէր էք։

Ան տաեն, շիտակ արդէն մեզի ծանօթ կողմը երթալով, ան սենեակը որ Թորոսի անկողնին սենեկին կը պատասխաներ, փնտռեցին նայեցան և երբ տախտակամածին բերանը քարածեփ պատ մը գտան՝ ամեն իրենց կասկածները փարատեցան. և ոստիկանաց գլուխն խստութեամբ կարճահասակ մարդու մը դառնալով, որ արդէն մեզի ծանօթ է վասն զի անգամ մը տեսանք.

—Ա՛ս երիտասարդին փախստեան պատասխանատու դո՛ւ ես, տիար Միքայէլ, ըսաւ, հսկողութիւնը քեզ կ՚ինկնէր. պէտք էր որ դու անոր ամեն շարժմունքը գիտնայիր. և ահա մարդը անյայտ կը լինի, և ոչ միայն ինք, այլ նաև անոնք՝ որ դու տուած էիր իրեն ծառայելու, և դու, ապուշ ու անմիտ, բառ մը չ՚ունիս պատասխան. դատաստանին կը ճնայ քեզի պատասխանելու. փուճ տեղ բերանդ մի՛ բանար հոս խօսելու։

—Բայց Տիար . . .

—Մի՛ խօսիր, անօգուտ կ՚աշխատիս ինձ պատասխան տալու համար, պահէ քու բոլոր ձարտասանութիւնդ գատաւորին, անոր առջև միայն պէտք կայ խօսելու։ Ոստիկա՛նք, այս մարդը դատարան տարէք։

—Բայց անգամ մ՚ալ մտիկ ըրէք, ես այդ երիտասարդին ծառայողները չ՚եմ ճանչեր, անգամ մը միայն տեսայ, երկու օր առաջ և այս օր . . .

—Այդ խօսքով քու յանցանքդ կը ծանրացնես, դու չի ճանչցած մարդկանցդ յանձնեցիր քու հսկողութեանդ յանձնեալ մարդիկ։ Տարէ՛ք, տարէ՛ք։

Իսկ խեղճ Միքայէլ զարմացական ձևեր ընելով, և ձակէն ջրի պէս քրտինք թափելով, երկու ոստիկանաց մէջէն դուրս ելաւ դատարան երթալու։

Ոստիկանութեան գլուխը յարգանօք ողջունելով զնփիմ և Դիոնիսի կամաց ձայնով յայտնելով իր զարմանքը կ՚ըսէր։ «Տէրութիւնը կառավարող մեր մեծերը յիրաւի զարմանալի են, ազատ կը թողուն տասնակ վտանգաւոր մարդ մը աս ծովու պէս քաղքին մէջ, մեզի լուր մը չ՚են տար, և խեղճ մարդու մը, որ իր գլխուն տէրը չ՚է, կը յանձնեն, և հիմա կ՚երևին մեզմէ կը փնտռեն։

—Եւ դու, Տիար, անշուշտ երբ փնտռես՝ մէկը կրնաս գտնել։

—Անշուշտ, ըսաւ ոսոիկանութեան պետը, թէ որ փախցնողը Դիոնիս չէ։

—Թէ որ նա ինքն է։

—Ուրեմն չե՞մ դտներ, ըսաւ ժպտելով պաշտօնատարը։

—Լաւ կ՚ընես, զգուշցեց Ծերը նոյնպիսի ժպտով մը։

—Բաւական է այսչափս, խմացայ, երբ ինձի հրաման մը եկաւ ձեզմէ և չի կատարուեցաւ, սիրտդ Հանգիստ բռնէ, Թող Հայ երիտասարդը Հանգիստ պտըտի, միայն թէ Անդրոնիկոսէն զգուշանայ վասն զի ամեն չարեաց պատճառ նա է, բաւական է թէ Հայ մը գտնուի խնդիրի մը մէջ՝ իր ատելութիւնը դաւ և վտանգ կը տեսնէ հոն, երկինք երկիր իրար կը խառնէ։ Քանի՛ քանի՛ անգամ Կայսրը և Ծերակոյտը աս ապուշ երիտասարդին ազատութիւն տալու հրամանն ըրին, և ինք միշտ արգիլելու ձարը գտաւ, և հիմա որովհետև ապստամբ ու վտանգաւոր Հայ մը տեսնուած կայ եղեր քաղքիս մէջ, իր զրգռութեամբ երիտասարդը կ՚ուզուի, որպէս զի բանտի դատապարտուի, և այդ Միքայէլը Անդրոնիկոսի մարդն է։» Ասոնք ըսելով ոսոիկանապետը Թողուց և գնաց։

Իսկ Դիոնիս սանուհոյն գալով, հրաւիրեց պատրաստուիլ երթալու և դանելու համար Թորոս։ Եւ քիչ մը ժամանակէն վերջը երկու դեսպակ կը Թողուին պալատը և կը շտկուէին դէպ ի ծովեզերը ուր գեղեցիկ նաւակ մը իրենց կը սպասէր։

Նոյն գիշերը Թարաբիայի ամարանոցին մեծ սրահին մէջ Թորոսի և Եվփիմէի պսակի հանդէսը կը կատարուէր հայկական արարողութեամբ. Բաբկէն՝ կնքահօր պաշտօն կը կատարէր ամենայն գոհութեամբ, ներելով սրտանց Եվփիմէի արեան մէջ ինչ որ յունական կաթիլներ կը գտնուէին, և ծածկելով ինչ չափ որ կարելի էր արբանեակն ուրախութեան արցունքին քանի մը կաթիլներն։

—Երբ ամեն բան կատարուեցաւ և գիշերը կէս եղաւ, Դիոնիսի կարգադրութեամբ մեր Հարսն ու փեսան հասարակ նաւակ մը մտած Բաբկէնով՝ երկու ծառայով և մէկ նաժիշտով կ՚անցնէին գիտցի Ասիոյ ծովախունքը, և ծովեզերէն մղոն մը հեռաւորութեամբ անտառախիտ ծառերէ շրջապատեալ գիւղական ամպճի տուն մը պատրաստ կը գտնէին զկերնիք ընդունելու Համար. Հոն ինչ որ բնութեան պահանջելիք կար, այս երկու գեղեցիկ անձանց ուրախու-

թիւնը կը պսակէր. Բաբկէն իր լեռներուն գարունը կը յիշէր, և երբ իր երկու սաները կ՚երթային բնակարանէն և կ՚սկսէին հեռանալ, իր երկայրին մէջքը՝ հեռուանց անտեսանելի՝ անոնց հետց կը հետևէր, պահապան և աշխուրջ գարփռի մը պէս ամեն ծառի՝ ամեն բլրակի շուքը կը քննէր որ վտանգ մը անոնց չի պատահի։

Ութ օր աս երջանիկ կեանքն անցուցին մեր նորապսակ առաւսինք, և Թորոս իր հարսին քով կը գտներ ան ամեն գեղեցիկ և բարձր զգացմունքները, որ երազն են երիտասարդութեան փափաքանաց, ու իր եջանկութեան՝ միայն իր լեռները կը պակսէին, և այն ազգային ազատութեան օդը, որ իր նախահօր Ռուբէնի արեան հետ իր երակներուն մէջ կը շրջէր։

Ութ օր էր նաև որ Դիոնիսէն լուր ամենևին չի կար, այլ ըստ սովորութեան անտեսը ամեն օր կերակուրը կը բերէր արշալոյսին հետ և մէկէն կը հեռանար, որպէս զի կասկածի տեղիք մը չի տայ։ Յանկարծ երեկոյ մը ծեր Դիոնիս երևցաւ. Թէպէտ շատ դժուար էր նորա երեսին վրայ գաղտնիք մը նշմարել, բայց Եվփիմէ իրեն սիրալիր ընդունելութիւն մը ընելէ վերջը, երբ քիչ մ՚ատեն առջև աղբիւրին քով նստան, կասկածոտ ծիծաղով մը ըսաւ.

—Հայրիկ, դու մեղի բան մ՚ունիս պատցելիք, և կ՚երևայ թէ կը դանդաղիս։

—Ա՛յո՛ Եվփիմէ, լաւ գիտցար թէ բան ունիմ ձեզի հետ խոսելիք, և շատ կարևոր բան։

—Ինչո՞ւ կ՚ուշացնես, կ՚երևայ թէ շատ անախորժ լուր մը պիտի բերես։

—Ես, քանի օր է, Թորոսի փախստեան համար նաւ մը կը նայիմ, և այսօր հազիւ թէ փնտռածս գտայ . . . ։

—Ինչո՞ւ այդչափ շուտով, հայրիկ, միթե ինձի համար նաւուն մէջ տեղ չի կա՞յ։

—Մանաւանդ թէ ան կը յաւիմ որ իմ կարծածիս չափ շուտ չի կրցայ շարժիլ. վասն զի այսօր փոքրիկ նամակ մը ինձ կ՚իմացնէր թէ ձեր փախստեան տեղն իմացուեր է ձեր թշնամիներէն, ուստի պատրնօք եկայ զձեզ տանելու, Եվփիմէ։ Մինչև որ Թորոս իր գործերը կարգի չդնէ, մինչև որ յաջողութիւնը իրեն չի ծիծաղի, դուք թէ իրեն օգտակար՝ այլ վնասակար կրնաս լինիլ։

—Ամենևին, ըսաւ Եւփիմ, որոշ և վճռողական ձայնով կը փափաքէի մանաւանդ որ դիպուածը այնպէս բերէր որ կարենայի ղքեղ համոզել իմ ըսածիս ճշմարտութեան։

—Քեզի հետ այս նիւթիս վրայ վիճիլ լինճ աւելորդ է, տէր և դատաւոր՝ այս խնդրոյս մէջ՝ լինճմէ և քեզմէ շատ աւելի ուրիշ մը կայ, ըսաւ ծերը Թորոսին դառնալով։

Իսկ Թորոս այն միջոցին դէպ ի անտառին կողը աչքերը տընկած կը դիտէր կէս ուշադրութիւն մ՚ընելով այս խօսակցութեան, ու երբ ծերը՝

—Իշխան, դու մեր խօսակցութեան կ՚երևայ թէ ուշ չ՚ես դներ, բայց ես շատ կարևոր նիւթի մը վրայ կը խօսիմ։

—Այո՛, ձեզ ալ ուշ կը դնեմ, բայց ուրիշ բանի մ՚ալ ուշ կը դնեմ, ըսաւ առանց իւր սուր աչքը խախտելու իւր նպատակէն։

Ան ատեն Դիոնիս ու Եւփիմ նոյն կողմը դարձուցին իրենց աչքը և բան մը չի տեսնելով դարձան Թորոսի՝ որ տեսնելով ալ՝ իրենց հարցնող նայուածքին առանց պատասխանելու, ոտք ելաւ, մկկ ձայնով՝

—Բաբկէ՞ն, կանչեց,

—Բաբկէն հոն չ՚է, ըսաւ ծառայ մը։

—Ուրեմն, զգուշեց Թորոս, հիմա կուգայ և մեզի որոշ լուր մը կը բերէ։

—Ի՞նչ բանի լուր, հարցուց Եւփիմ պլպլելով։

—Կ՚երևայ Թէ, սիրելի Եւփիմ, մեր թշնամիները, որոնց համար լուր առած ըլլալը իմացուց Դիոնիս, մեզի պցցելութիւն մ՚ընել կը փափաքին։

—Եւ դու հիմա որ բան մը կը դիտէիր, անո՞նք էին. տեսա՞ր...

—Հինգ վեց հոգի և գէնքի փայլուն տեսայ։

—Ի՞նչ կ՚ըսես, հինգ վեց հոգի՞...

—Թէ որ այդչափ են մեր թշնամիները, ըսաւ Թորոս ժըպտելով, Բաբկէն միայն բաւական է զանոնք ցրուելու, իսկ Թէ որ անոր կրկինն են, պէտք է որ ես ալ օգնեմ։ Բայց խնդիրը հոն չ՚է, աւելցուց Թորոս, Դիոնիսի դառնալով, «մեր թշնամիները» կրնանք իմանալ Թէ որոնք են. Կայսրը և իր ոտիկանութիւնն է Թէ մանաւանդ մարդիկ։

—Հիմա սա միջոցին քու թշնամիդ Անդրոնիկոս Կեսարն է. բայց Թէ որ իր փոքրիկ խումբը վերադարձի և ցրուի՝ իրենց վերադարձը չ՚գիտեմ Թէ ինչչափ բազմութեամբ կրնայ լինիլ։

—Ուրեմն մեզի պարտք կը ձգես այնպէս շարժելու որ ասոնցմէ ոչ ոք չի դառնայ։

—Ան չ՚է իմ միտքս, բայց ըլլալիքը յայտնի է, մկկ փախըստական մը տասնապատիկ բազմութեամբ կը դառնայ։

—Քու նաւդ երբ կուգայ հոս՝ աս ծովեզերը։

—Վաղն առաւօտ, կանուխ։

—Ահա Բաբկէն, ըսաւ Թորոս, որ ծովեզերին կողմէն կուգայ. հիմա ճիշդ լուր կառնունք... աս ծանր քալուածքէն ալ կը ցցնէ Թէ վտանգը մեծ չ՚է։

Սպասելու լռութիւն մը տիրեց, մինչև որ Բաբկէն հասաւ, առանց այլայլութեան նշան մը ունենալու իր կերպարանքին վրայ, իրրև Թէ բան մը տեսած չէր, իսկ երբ որ Թորոս նշանացի հարցուց իրենց լուր կար, ան ատեն պատասխանեց։

—Ես անտառին մէջ պտոյտ մը կ՚ընէի, երբ տեսայ որ քալելու և կամաց խօսելու ձայն կուգար ծառերու մէջ քիչ մը հեռուէն, ուստի Թուփի մը խստութեան մէջ ծածկուեցայ և տեսայ որ երկու-քը երկու-քը 12, 13 հոգիի չափ զինեալ մարդիկ քովէս անցան. և այնչափ մօտ՝ որ մկկ հատը՝ որ տեսած էի արդէն, ճանչցայ. նոյն մարդն էր որ ասկից տասն օր առաջ աւերածին կորիւնը կը նախատէր։ Վերջապէս տեսայ որ անոնք պտոյտներ կ՚ընէին անտառին մէջ խուզարկութեան համար, ուստի ես ալ կամաց մը ելայ դէպ՝ իրենց եկած ճանբան գնացի, և տեսայ որ մակոյկ մը գերիներ բերած էր և մէջը պահապան մկկ հոգի մը ձգեր էին։

—Լաւ, ըսաւ Թորոս անխռով, կարծեմ Թէ մեր կերակուրի ժամանակն է և պէտք է քիչ մը բան ուտել, որովհետև հաւանական է Թէ վերջը ժամանակ չ՚ունենանք։

—Եւ չորսերնին մէկտեղ շտկուեցան դէպ ի տունը. երբ դռնէն մտան՝ պարտէզին վրայ դիտող աչք մը պարզուց Թորոս և Բաբկէնին քանի մը բան ապսպրեց կամաց ձայնով՝ որ անմիջապէս դռներուն մկկը քարերով ամրցուց և միւսը առջի վիճակին մէջ ձգեց. երբ նաւան կերակուրի մեր երկու Հայերը՝ ըստ իրենց սովորութեան կիւրան, Եւփիմ կը խաղար քան Թէ կ՚ուտէր, իսկ ծերը մտախոհ

քանի մը պատառ առնելէն վերջ՝ «Ի՞նչ է քու միտքդ» ըսաւ Թորոսի, երբ նա դադրեր էր ուտելէ և անհոգ կը խորհէր։

—Մենք պարտական ենք ինքզինքնիս պաշտպանելու. մանաւանդ որ մանաւոր անձի մը թշնամութիւնն է որ մեր կենաց ոխերմաբար կը դարանի, և գիշերուան մութը իրեն ընկեր կ՚առնու։ Կը տեսնեմ թէ դու խմաստուն մարդ մը, որու նման ես շատ քիչ տեսեր եմ, կը վարանիս. կ՚երևակայեմ թէ քսանը հազիւ անցած երիտասարդի մը զենուց վարժութեան վրայ վստահութիւն չ՚ունենաս, բայց այդ մի հոգար, ես տղայ տարիքէս զենքի վարժութեան և վանդի մէջ ծներ և մներ եմ. անոր համար՝ ալ աս իրիկունը չ՚եմ մտածեր, վաղը կը մտածեմ. այս իրիկուն ան մարդիկը ժամ մը չի քշեր հաւու պէս կը թօթափին։

Եւ աս խօսքերը այնպիսի անհոգ արհամարհանք մը ունէին, և իր յստակ ու որոշ ձայնը այնչափ փոխուած չ՚էր որ եթէ իր մեծ աչքերուն բոցը չը լինէր, որ ամեն շարժմունքին կայծակ կը հանէր, արձան կը կարծուէր. այն միջոցին Բաբկէն ներս մտաւ.

—Ելլ Իշխանիկ, ըսաւ, մարդիկը կուգան, ի՞նչպէս պիտի ընենք։

—Թող զերինք որ մեծ դռնէն ներս մտնեն, դու երբ ամենքը կը մտնեն դուրսը կեցիր, ո՛վ որ ելնէ մահուան հարուած մը տուր։

—Բայց դու հոս մինակ ես, անոնք կամ տասն երկու կամ տասն երեք են։

—Դու լսեցիր, Բաբկէն հայրիկ, քու պաշտօնդ գրանը դուրսը՝ մարդ ողջ չի հանելն է։

Այնպիսի անդիմադրելի եղանակ մը զգուցուեցաւ այս՝ որ Բաբկէն դուրս ելաւ առանց խօսելու, քթին տակէն աղօթք մը մրմռալով. անտարակոյս աղօթքը Թորոսին համար էր։

Տան վարի պատուհանները երկթէ վանդակներ ունէին. ձրագները վերցնել տուաւ. վերի փեղկերը՝ ըսաւ Պետիկին թէ՝ պէտք է պաշտպանել որպէս զի եւփիմէ չի վախնայ։ Իսկ ինք թռաւ սանդուխներէն վեր, Լևոնի ահագին սուրը մերկ՝ ձեռքը բռնած և երկայրի սուրը մէջքը, իջաւ փայլակի մը պէս. Եւփիմէի որ անխօս կեցեր էր դռնանօք ձեռքը պագաւ «Սիրտդ հանգիստ բռնէ, ժամ մը չի տևեր, ասիկա դիպուած մ՚է, ըսաւ, վաղուան համար մտածենք։» Սա անխոով խօսքերը թէպէտ կ՚ապահովէին

քիչ մը անոր սիրտը, և կ՚ուզէր խօսիլ՝ բայց չի կրցաւ, ու նոյն միջոցին տեսաւ որ Թորոս վենք ձգեց դուրս ելաւ պարտէզ և տան դուռը վրայէն գոցեց, ու պատին քով թուփերու մէջ ծածկուեցաւ։ Ինք տան շուքին մէջն էր, ով որ դռնէն մտնէր որոշ կը տեսնէր լուսնի լուսով. և ահա կիսաբաց դուռը բացուեցաւ և մկիկ մկիկ գողի պէս կը մտնէին իր սպասած մարդիկը. մտնողը մէկ մը կանգ կառնուր, չորս կողմը կը դիտէր, և դէպ ի դուռը կը յառաջանար։ Երբ եօթը ութ հոգի ներս մտան և առջի մտնողները տան գրանը և թուփերուն մօտեցան՝ ահագին և սոսկալի ձայն մը որոտաց. Թորոս ինքն էր, և հարուած հարուածի վրայ կը յաջորդէր. արդէն երեք հոգի գետինը կը տապալըկէին և երկուքը փախան. հազիւ ան ատեն երեք հոգի թշնամիներէն կարողացան նորա վրայ յարձակիլ, բայց այս յարձակմունքն ալ նոյնչափ օգտակար եղաւ իրենց՝ որչափ առջի յանկարծակի գալն. երկու հոգի դարձեալ մահացու վերաւոր կ՚ինկնէին, և իր ահագին սուրը մկկի կը թռցնէր զէնքերու բեկորներ՝ թևեր՝ մատներ, և վերաւորք կամ վատք որ դուրս կ՚ելնէին Բաբկէնը կը գտնէին որ հարուած մը միայն տալով կը պառկեցնէր զերինք. և որպէս զի արդելք չ՚ըլլան ուրիշ ելլողներուն՝ լազմանաքաբար ոտքերնին կը քաշէր և պատին տակ կը դիզէր։ Երբ երեք չորս եղաւ դիակը և տեսաւ որ դեռ ներսը զենուց հարուածները չեն դադրիր, «Քիչ մ՚ալ ներս մտնենք, ըսաւ, վասն զի երկայն եղաւ.» ձիշդ ժամանակին մտաւ, վասն զի չորս հինգ հոգի զԹորոս շրջապատած սուրերնին ձեռուընին կանոնաւոր յարձակում կ՚ընէին. ասոնց մէկուն կռնկին՝ Բաբկէնի սուրին հարուածը՝ գայն գետին գլորուց, և աս անակնկալ օգնութիւնը միս ամբը՝ զայն գետին գլորուց. փախչելու որոշումն տուին։ Թորոս սաստիկ յոգնած էր, իսկ Բաբկէն «Առնք ալ Թող երթան սատանային դիրկը, ահմ հոգն է, կ՚ըսէր, բաւական է որ աս ինկածներուն մէջ ան անպիտան մեծաբանն ալ գտնուի՝ որ չէր հաւատար թէ առիւծու կորիւնն միշտ առիւծ է։ Ապրիս Իշխանիկս, տես քանի մարդ գիտցաւալ կացուցիր է... ես գիտէի որ քաջ էր, բայց ինչչափ ժամանակ է ոչ կռիւ տեսած էր ոչ զէնք գործածած... լաւ սկսանք, մեր Սև լեռն հասնինք, ան տեղն տատնապատիկ պիտի մեծնայ...»

Այս միջոցին լռութիւն տիրած էր պարտիզին մէջ, զինուց շաչիւն և շառաչիւն ամէն բան դադրած էր, միայն քանի մը վնասուրք և հոգեւարք կը տրքային. ան ատեն Թորոս «բացէք դռռներն» գոչեց, և տան դռներն բացուեցան. ձրագներն վազցուցին, տունն ու պարտէզը լուսաւորեցան. դուրսն ու ներսը եօթը ութը զինակք կային և մեր քաջակորովը կանգնած էր անոնց մէջ, կ'ապսպրէր ծառաներուն ողջ մնացողներն ներս առնուլ և դարմանել: Իսկ Նեփիմ՝ երբ տեսաւ զԹորոս՝ ողջ բայց արիւնով ներկուած, և երբ իմացաւ թէ՝ չէր անգամ վերաւորուած, աչքերը ուրախութեամբ երկինք կը վերցնէր, գոհութիւն կու տար Աստուծոյ: Եւ առանց ծառաներուն սպասելու ինք ջուր կը բերէր որ իր փեսան մաքրուի լուացուի: Եւ երբ Թորոս ան ահագին աշխատութենէն վերջը բազմոցին վրայ տարածուեցաւ, Նեփիմի երևակայութեան մէջ աշխարհիս բոլոր Աքիւլէնները և Հերակլէսները աւելի բարձր էր, ուստի դառնալով Դիոնիսին՝

—Վաղը՝ նաւը որ պիտի գայ, մենք ալ մեկտեղ կ'երթանք, այնպէս չէ՞ հայրիկ, ըսաւ:

Իսկ Դիոնիս առանց պատասխանելու ան հարցման՝ Թորոսին կը նայէր որ նոյնպէս պատասխան չտալով ծերուն կարծիքը կ'ուզէր իմանալ: Իսկ նա երբ տեսաւ թէ երկուքն ալ լուռ կեցեր են՝ «Ուր է՞ Բարկէն, Բարկէն հայրի՞կ» սկսաւ կանչել: Բարկէն ներս մտաւ գլուխն ու երեսը ծածկած և հաղիւ քանի մը քայլ կրցաւ առնուլ միայն նստաւ և դլորեցաւ. ամենքը տեղերնէն ցատկեցին ելան և գլուխը բոլոր արիւնաշաղախ տեսան. ինք մարած էր կամ մեռած: Դիոնիս մեկէն մօտեցաւ, զննեց, գլխուն պատուածը լուաց վերքերը դարմանեց պատեց և իմացուց թէ սուրի հարուած մը ձնկանին ոսկորը թեպետ կտրեր էր, բայց ուղեղն չէր վնասած, ուստի ապահովցուց զամենքը յուսացնելով թէ քիչ մը ժամանակէն կրնար առողջանալ բոլորովին: Ան վերջի խօսքը մխիթարեց զԹորոս, բայց Նեփիմի խնդիրը չի լուծեց:

ԳԼՈՒԽ Է.

ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ՇԱՌԱԻԻԴ ՄԸ

Դիոնիս թեպետ ուրիշները ապահովցուց Բարկէնի համար, բայց զինքը մեկ երկու ժամ ամենևին չի թողուց, և պաղ ջուր շարունակ գլխուն վրայ պնել հրամայելէն և իրեն խօսիլն արգիլելէն վերջ, եղաւ պոյտ մը ըրաւ անկելոց մէջ. ամենքը մեռած կամ հոգեւարք էին, ուստի ու մեկ հոգի: Ծերը սկսաւ մտածել. ուրեմն երկուքը փախած էին, և առաւօտուն երկրորդ այցելութիւն մը կարելի էր Անդրոնիկոսի կողմէն՝ որ անոնց մէջ չի կար. և Դիոնիս կ'երևակայէր թէ անշուշտ այդ խումբին գլխաւորը գտնուած էր նա, ուրեմն փախած էր և պիտի դառնար, և թերևս Բարկէնի հարուածը տուողը նա ինքն էր: Ուստի ծառայ մը առած հետն և լապտեր մը, դէպ ի ծովեզրն գնաց, և ծովուն քով մարդ մը տեսաւ որ կը ջանար գրկելու ուրիշ ահագին մարդ մը որ ինկած էր գետին, և որ տեսնելով թէ երկու հոգի դէպ իրեն կուգան՝ ցատկեց մակոյկի մը մէջ որ ծովեզրն էր ու միջոց մը անցնելով կեցաւ և սկսաւ դիտել. ծռեցաւ Դիոնիս և զննեց մարդն ու իր վերքը. մարդը Անդրոնիկոս ինքն էր, վերքը սուրի մը հարուած՝ որ աջ թոքը վնասուցած էր, և թէ որ թողուէր մահաբեր կրնար լինիլ ուստի շուտ մը ծոցէն շիշ մը հանելով թաչկինակը թրջեց և վերքին բերանը լացեց. արեան դադրիլը և դէղին զօրութիւնը Անդրոնիկոսի հառաչանաց ձայն մը հանել տուին: Այն ատեն ծերը քիչ մը մտածելէն վերջ դէպ ի ծովեզրը գնաց և մակոյկին մէջ կեցող մարդուն ձայն արձակեց:

—Բարեկամ, ըսաւ, դու կը տեսնես որ մենք քու սիրոյդ թշնամի չենք, իր վերքը պատեցինք, և թէ որ կ'ուզես իր կեանքը ազատել՝ եկ մեզի օգնէ որպէս զի կատարելապէս մոհուընէ ազատենք զինքն:

Մարդը քիչ մը մտածելէն ետքը խրեց իր մակոյկը ցամաք, եաւ նաւէն և ծառային հետ շալկելով վերաւորը շտկուեցան դէպ ի

տուն։ Եւ այսպէս Դիոնիս ապահովեցաւ թէ ալ մարդ չի կար լուր տանելու մայրաքաղաքը։ Մանաւանդ որ բուն Թշնամին իրեն ձեռքն էր։ Միայն չ'էր կրնար գուշակել թէ ի՞նչ ընդունելութիւն պիտի ընէր Թորոս իր մահացու Թշնամին ափն անցնելով. և գոհ եղաւ՝ երբ լոյսը մօտեցնելով տեսաւ որ նա անտարբեր՝ և հազիւ թէ արհամարհոտ աչք մը ձգեց իր ոխերիմ Թշնամւոյն վրայ, և Բարկէնին մօտ կ'ուղէր տեղաւորել՝ որպէս զի դիւրին լինի երկուքին ալ միասին խնամք տանիլ։ Բայց ծեր բժիշկը որ Թորոսի մեծահոգութիւնը կը տեսնէր, նոյնը չէր հաւատար ոչ Անդրոնիկոսի և ոչ Բարկէնի համար, ուստի զատ սենեակներ երկուքն ալ պատրաստել կը մտածէր։ Եւ ահա Եւփիմէ երեւցաւ սենեկին դուռը Բարկէնի ձեռքէն բռնած որուն անխոռով կ'առաջնորդէր դէպ ի սենեակը, իմացնելով Դիոնիսի թէ ինք իւր հիւանդը նայելու մտադիր էր, իսկ Թշնամւոյն խնամքը ուրիշներուն կը վերաբերէր։

Դիոնիս՝ մանկութեան պահապանը և ծառայ մը Անդրոնիկոսի քով ձգելէն վերջ, երկու հնացած ծառայից հետ մտակայ տանջի և անջրդի հեղեղատի մը մէջ նետել տուաւ դիակները ո՛երբ ամէն բան կարգի դրաւ, դարձաւ տուն իր վերատրները տեսնելու։ Անդրոնիկոս կը զառանցէր, ուստի պէտք եղած դարմանները՝ ինչ որ կարելի էր այնպիսի տեղ ապահովելէն վերջ, Եւփիմէ՝ սենեակը դրան առջև եկաւ և տեսաւ Բարկէն որ անկողնին մէջ նստած կը պատմէր Թորոսի։

— . . . . . ինծի ըսիր թէ գանէն ոչ մարդ պիտի չ'ելնէ, ես տեսայ փախչողները. ըսածդ մոռցայ. հօրեղբայրդ ըսած էր մեզ. «Տղաք, փախչողին մի՛ պիք, Թողէք երթան,» միտքս հոն գնաց. երբ ուշաբերեցի՝ վազեցի եանէնուն, մկը գանէն տասը քայլ անդին գետին փռեցի, միսը մեծ էր, ուժով կը Թուէր. ծովուն մօտ հասայ, դարձաւ, ի՛նչ տեսնեմ, մեր մարդն էր. Աղուէս, կոյ, ըսի, առիւծին ձագը տեսա՞ր. հազիւ թէ սուրը կուրծքին դրի, գլխուս սուրի լա՜ հարուած մը իջաւ, ինք ալ գլորեցաւ։ Աչքերս մթնցան, աղբիւրին վազեցի, լուացի արիւնը, տեսայ որ չի կտրիր. վերակուս վերքին վրայ բռնեցի գոցեցի. հոս եկայ. գլուխս պատյա կուգար. Տիկինին ձայնը լսեցի որ «Բարկէն հայրիկ» կը կանչէր, և ալ ինչ եղայ չ'իմացայ . . . .։

— Լաւ, ըսաւ Դիոնիս, ես ալ քեզի արգիլած եմ որ չը խօսիս, հանգարտ պէտք է նստիս. Բարկէն լռեց և Եւփիմէ ամէնը ձանձեց ու իր վրան առաւ դնա խնամել. դուրս ելան և հոն Թորոս ու Դիոնիս սկսան խորհուրդ ընել երկրորդ օրուան ճանապարհորդութեան վրայ՝ եթէ նաւը գայ, և որոշեցին որ Թորոս երթայ, իսկ Բարկէն առողջանալէն վերջ Դիոնիսի և Եւփիմէի հետ գայ։

Ըսածի պես որոշմունքն ընելէ վերջ արդէն կէս դիշերն անցած էր, Թորոս ընկողմանեցաւ բազմոցի մը վրայ, իսկ ծերը երբեմն իր հիւանդնալուն այցելութիւն կ'ընէր, երբեմն կը մրաբեր մինչև արշալոյսը երեւցաւ։ Բարկէն քանի քանի անգամ նոյն դիշերն աղաչեց Եւփիմէի որ վէնքը Թողու և հանգչի, բայց նա շարունակ պաղ ջուր դնելով գլխուն և լսել հրամայելով լուացուց։ Եւ երբ անտեսն, ըստ սովորութեան իրենց, պատրաստ կերակուրը բերաւ, իջաւ առանձին պատուէրներ տալու և եաքը իր հիւանդին քով քաշուեցաւ։

Թորոս և Դիոնիս նաւուն գալը կը դիտէին, և նաւ չ'էր երեւար, ծովեզերը կ'իջնէին, լուր չի կար, և այսպէս կ'անցուներին ժամանակը մինչև կէս օր։ Անդրոնիկոսի վիճակը աւելի ծանր էր, Թէպէտ Դիոնիս չ'էր յուսահատած, իսկ Բարկէն Թէպէտ ինքզինքը լաւ կը գտնէր՝ կամայ ակամայ իր բռնաւոր տիրուհւոյն ձեռքը ձնացեր, Թորոսի կը հարցնէր «Ա՛ր բաւական չ'է՞» որ կը ժպտէր և պատասխան չ'էր տար։ Կէս օր եղաւ և ձաշի նստան, Թէպէտ ամենուն սիրտը անհարպատ. Դիոնիս երեւակայելով որ Անդրոնիկոսի մը անհետանալը չ'էր կրնար յուզմունք մը չ'հանել և ոսոխականութիւնը Թորոս փնտռելով գանի պիտի գտնէր. Թորոս որ նաւուն կ'սպասէր և Եւփիմէն ու Բարկէնէն պիտի բաժնուէր. Բարկէն որ իր Տիկնոջ խնամիքներէն կը քաշուէր, կ'ամաչէր և ձեռքէն սպասելու ձարը չ'էր տեսներ. միայն Եւփիմէ անխոս անմտունչ բժշկին հրամայած պաղ ջուրը Բարկէնին գլխուն առանց պակաս ընելու՝ նստած տեղէն ծովը կը դիտէր. անոր համար ալ հազիւ քանի մը պատառ առած եւաւ հիւանդին քով երթալու։ Դիոնիս խմացուց Թէ ալ Բարկէնին համար վտանգ չի կար. և Թէ ուղեղին ցնցմունքն՝ վէրքին և հարուածոյն հետեւանք հիւանդութիւնն ալ անցիր էին. ուստի հանգիստ կրնար ընել. իսկ Եւփիմէ առանց պատասխան տալու գնաց վեր և հազիւ Թէ սենեակը եաւ և պատուհանին աչք

մը ձգեց՝ գոլի մը պէս մաուլընելուն վրայ կոխելով իջաւ սանդուխէն և պարտիզին դուռը գոցաւ. հոն անտեսը դիմաւորելով ձեռքի կապոցը առաւ.

—Նաւէն լուր առիր, հարցուց։

—Գենովացի նաւը կուգայ, ջուրը պիտի առնու և ձանրայ եղեր։

—Լաւ, դու մտիր սեղանատունն և իմաց տուր։

Եւ ինք կապոցը ձեռքը սրացաւ վեր, մտաւ իր սենեակը։

—Բարկէն հայրիկ, բժիշկը քեզի հրաման կուտայ եղնելու, և հանդարտ ծանր քալելու. դու ի՞նչպէս ես։

Ո՛հ, Տիկինս, Աստուած քեզի երկար կեանք տայ, ես լաւ եմ, ահա կը տեսնես, ըսաւ ձակտին լաթը վերցնելով և կանգնելով։

Չ՛էֆ, մ՛արտորար, ըսաւ Եւփիմէ, վերջը լաւ մը փաթթեց ինչպէս տեսեր էր Դիոնիսէն, գլխարկը գլուխը դրաւ հիմա հանդարտ քայլերով դուրսի սրահը գնա, ինձի սպասէ։

Եւ աս խօսքերը այնպէս մայրենի անուշութեամբ մը ըսաւ, որ խեղճ Բարկէնի աչքերը լցուեցան և առանց բերանը բանալու ձեռքը երկնցուց. Եւփիմէ ձեռքը տուաւ և կորովի ծերը իր շրթունքները վրան դնելուն՝ երախտապիտութիւնն և որ մեծն է մանաւանդ իր համակրանքը կը յայտներ, բոլորովին զգջալով իր առաջին գիշերուան կասկածանաց վրայ։ Ուսի դուրս ելաւ, նայաւ սրահը և որովհետև Տիկինը ըսած էր թէ ալ առողջ էր, միտքն բնական թէ անօթի է, և զղջայ թէ ի՞նչպէս Տիկնոջը չէր հարցուցեր թէ ի՞նչ կրնար ուտել։

Ահա ծանր խորհրդածութեան վրայ էր Բարկէն, երբ Թորոս և Դիոնիս սանդուխին վրայ երևցան կամաց ձայնով խօսելով։

—Դու չ՛ես ճանչեր Եւփիմէն, կ՛ըսեր ծերը, ոչ թէ միայն դու, ես նաև չ՛գիտեմ թէ ի՞նչ կերպով պիտի կարենամ ազատիլ ձեռքէն։

—Ես ալ չ՛եմ ուզեր և չեմ կրնար իրմէ զատուիլ բայց դու ազնիւ բարեկամդ իմ, դու որ արևարհ կը ճանչես, լաւ կրնաս դատել իմ վիճակս և թէ ինչ վտանգներու դիմագրաւ պիտի երթամ. ինչպէս այսպիսի անձ մը . . . բայց դուռը կը բացուի . . .

Երկու խօսակիցք ապուշ ծնացին տեսնելով որ սենեկէն դուրս ցատկեց վայելուչ և պարզ հագուստով՝ մէջքը գաշնով խիստ ժըպի-

տով՝ տասնևութ տարեկան գեղեցիկ և կորովի պատանի մը, որ առանց խօսելու սրահին մէջ կանգնեցաւ, և անքթիթ իրենց կը նայէր։ Անոնց զարմանքէն աւելի մեծ եղաւ Բարկէնի հիացումը՝ որ ձեռքերը երկինք վերցնելով՝

—Փառք Աստուծոյ, կեցցէ՛ մեր քաջ Տիրուհին, կանչեց։

Եւ լուրթիւնը դարձեալ յաջորդեց։ Վերջապէս Դիոնիս դառնալով Թորոսի՝

Տեսա՞ր, Իշխան, զըուցեց, ես քեզի չ՛ասի՞. . .

—Լաւ, ըսաւ Թորոս, ես կեանք մը ունէի զոհելու Ապիս համար, կէսը դու կը յափշտակես, Եւփիմէ։

—Ո՛չ այդպէս, կեանք մը ունէիր նուիրելիք Ապիս, ահա երկուք ունիս անոր նուիրելիք. իմ երակաց մէջ ալ կայ այդ քու Արծրունեաց արիւնէդ. և Դիոնիսին դառնալով աւելցուց Եւփիմէ անխռով, ժամանակ պէտք չ՛է կորսնցնել երթանք, Բարկէն բաւական զօրեղ է, ի՞նչ կը դանդաղինք։

—Դու պէտք է մտածես թէ ձեր օգտին համար ես հոս պէտք է ծնամ, գոնէ քիչ մ՛ատեն։

—Մեր օգուտը՝ Աստուած և քու ընկերութիւնդ է։ Անոնք փուճ խօսքեր են, հայրիկ, ո՛չ դու առանց ինձի կրնաս ապրիլ և ոչ ես առանց քեզի և Թորոսի։ Ահա ինչ որ առայժմ ունիմ հոս է, իսկ ծնացածը՝ որ չ՛եմ կրնար տանիլ կը թողում յափշտակողին, կամ ան է որ Թորոսի բաղդը ինձի հաղարապատիկը կատարէ, կամ ան է որ՝ եթէ ողջ ծնայինք՝ անշուք և առանձին կեանք մը կը վարենք գոհութեամբ Աստուծոյ այն անհամար արարածոց պէս՝ որոց վաղուն Նա Ինք կը հոգայ։

Եւ ձեռքը ծերուն բերնին վրայ դնելով, ժպտելով մը՝ որ չի պատասխանէ՝ ձեռքէն բռնեց և Թորոսի ալ ակնարկեց ծրարը առնել որ ներսն էր, ու ինք առջևէն կ՛իջնէր. իսկ Թորոս երբ սենեակը մտաւ, իր աչքին առջև բանը որ դիպաւ Եւփիմէի դեղձան մազերու ոսկեփայլ կոյտն էր որ գետինը փռուած կը կենայրն, առաւ համբուրեց անոնք և նայեցաւ երկինք շնորհակալ եղաւ որ Աստուած այսպիսի կին մը իր առջև կը հանէր որ Հայրենեաց զոհողութեանց առաջինը իր գլխուն վրայէն կը սկսէր։ Ուսի առանց երկմտելու առաւ վերարկուն՝ զէնքերը ու ծրարը և սկսաւ հեռևիլ

անոր որ զուարթ երեսով ամենէն առաջ կ'երթար անվախ և համարձակ։

Հիւսիսային հովը ուժով և յաջող կը փչէր. նաւը իր բոլոր առագաստները բացած կը սահէր՝ կը թռչէր և մեր չորս ճամբորդները երեսալէ ղժուշանալով՝ նաւակներու հետաքրքիր նայուածքներէն կը հեռանային վոսբորի ափունքներէն, և վերջը ահագին մայրաքաղաքին տեսութենէն գոհ և ուրախ սրտով, և գեռ մութը չէ հասած, յամաքը սկսաւ անհետանալ և Մարմարայի մէջ կը յառաջանային հանդարտ ու խաղաղ։

Խեղճ Բարկէն գեռ անօթի էր, թէպէտ ուրախ, և իր ուրախութիւնը կ'աւելնար քանի որ միայն երկինք ու ծով կը տեսնուէր։ Երբ մեր նաւորդքն իրենց սպասական ընթրիքն ըրին, և վերջը Դիոնիս Բարկէնի վերջը վննեց և լաւ վիճակի մէջ գտաւ. երբ ամէն բան յաջող և ելջանիկ սկիզբով երջանիկ կատարած կը խոստանար՝ Բարկէն ոչ թէ առողջ այլ և երիտասարդ կ'երևէր, և երբ Եւփիմէ իրեն աս աշխուժին վրայ կը կատարէր, նա՝ Տարտանէլը թէպէտ գեռ չէին անցեր՝ ծիծաղելով կ'ըսէր. Տիկին, մի՛ զարմանար, իմ լեռներուս հոտը ես արդէն չնչեցի։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ

Եւփիմէ ուրախ էր, վասն զի ինչ ու սրտին սիրական ունէր՝ հետն էր. Բարկէն ուրախ էր, վասն զի կին, զաւակ և հայրենիք պիտի տեսնէր, Թորոս՝ թէպէտ անթափանց՝ ուրախ էր վասն զի կը յուսար՝ քանի որ կը հեռանար՝ ազատութիւն, փառք, հայրենի ժառանգութիւն և ամենայն ունենալու. թէ որ մէկը կար որ անտարբեր կ'երևար և որ թերևս դժգոհ ալ էր առանց յայտնելու՝ Դիոնիս էր. սրամիտ՝ փորձ և նախատես. ամէն բան կը քննէր, ամէն բան կը հարցնէր. նաւապետին՝ նաւաստիներուն հետ կը խօսէր, հեռուն նաւ մը՝ ծով մը՝ իր աւր աչքերէն չէր փախչեր. և

դիտակը՝ նորահնար գործիք ձեռքը՝ իր հետաքրքրութեան օգնական էր։ Նաւը որ ինք վարձեր էր թէպէտ, Կիլիկիա երթալու նպատակաւ, բայց Վենուացի նաւապետին կիպրոս գրուցեր էր. ան միտքով որ Կիլիկիոյ սահմանները երբ հասնին՝ հոն ելնեն։ Մանաւանդ որ ինք համոզուած էր թէ Կիլիկիոյ բոլոր ծովեզերքը խիստ պահպանութեան վիճակի մէջ էին, և ահրութեան նաւեր Թորոսի սպասելու հրաման առած էին։ Ուստի երբ առանձին իր մտածութեան հետ կը մնար, Եւփիմէի յանդուգն յամառութիւնը կը նըզովէր և ինքզինք կը մեղադրէր՝ որ բաւական քաջութիւն չէր ունեցեր դիմադրելու նորա աս ուղեւորութեան. թէպէտ երբ անոր մտածեր՝ իւր բոլոր մաղձը, տխուր նախատեսութիւնքը, անոր զուարթ կատակներուն և ծիծաղներուն առջև կ'անհետանային։ Եւ եթէ մխիթարութեան առիթ մը կար՝ այն էր որ, տասն օր հաղիւ թէ եղած՝ նեղուցները անցեր և միշտ յաջողակ հովմով աջ ու ձախ Արշիպելագոսի կղզիներու մէջէն կը սահէին. ոչ Սարակինոսաց հէն՝ ոչ ասպատակ որ այն ժամանակներ սովորական էին և ոչ Բիւզանդական կայսրութեան պատերազմական նաւ մը իրենց հանդիպած չ'ունէր։ Ձախ կողմը Տորոսի լեռներ արդէն իրենց ժայռոտ գլուխները կը ցցնէին, որոնց վրայէն Բարկէնի աչքերը չէին զատուեր. վասն զի սկիզբն և նախաշաւիղ էին իր Սև լեռներուն. ուստի կամաց և անմռունչ կ'երգէր երգը՝ զոր Ռուբէնի առջի ընկերները՝ Տորոսի բարձանց վրայ նոր հասած՝ երգեր էին։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գըլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սև ամպեր,
Ո՞ւսկից կուգաք, ո՞վ ամպեր,
Ինչո՞ւ մութ է ք, ո՞վ ամպեր։

Հեռու երկիր բարձրաբերձ են մեր լերինք,
Սպիտակափայլ միշտ ձիւնապարդ գըլխներին,
Հոն արեգին պայծառ նշոյլք չեն տոչորր,
Ի բնակիչըն նոքա անուշ կ'ակնարկեն։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գըլխներ է յամպերէ մըթընցեր,

Դուք ամպեր, սև ամպեր,
Ոչսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ էք, ո՛վ ամպեր։

Փոթորկալից մեզ բուռն հողմեր հոս բերին,
Մեծին Հայոց Մասիան էր մեր խանձարուրք,
Արագածու գլուխն էր մեր արքունիք,
Ընպատ՝ Գրգուռ՝ Բիւրակն էր մեր շտեմարան։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սև ամպեր,
Ոչսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ էք, ո՛վ ամպեր։

Ըսէք ուրեմն թէ օտար չ'եմք, ո՛վ ամպեր,
Մեծին Հայոց մենք ևս որդիք հարազատ,
Հոս վըտարեալ ի մարդագէմ գազանաց,
Ազատութեան ի սուրբ անուն կը գոռամք։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սև ամպեր,
Ոչսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ էք, ո՛վ ամպեր.
Ո՛վ բարեկամ դուք ամպեր,
Տո՛ւք մեզ ձեր շուք ո՛վ ամպեր,
Եւ ի շունդ և յօր մարտի,
Մեզ օգնութիւն տո՛ւք շանթեր։

Պայծառ գիշեր մ'էր նա կ'երգէր. երիտասարդութեան գեղեցիկ՝ օրեր՝ սիրոյ և յաղթութեան յիշատակներ ամենքն այն երգին հետ իր անդրդուելի սիրան կը տրոփէին, երբ փոքրիկ Թաթի հարուած մը յուս գինք յուշն բերաւ։

— Ի՞նչ է, Տիրուհիս.

— Բարկէն հայրիկ, ըսաւ Եւփիմի անուշ ձայնը, ի՞նչ կ'երգէիր։

— Է՞հ, մեր լեռները, մեր երիտասարդութեան յիշատակները

կ'երգէի, մեր տղաքը ո՞գիտէ ի՞նչ կ'երգեն, ննջեցելոց երգեր թե-
բևս. տեսնենք թէ մեռելներու քունէն ինչպէս պիտի արթննան։

— Ի՞նչ կարծես, հիմա որ երթանք, չէ՞ կարելի որ անտարբեր
ձեան ձեր իշխանները Թորոսի ձայնին։

— Մեր իշխանները, Տիրուհիս, միշտ անտարբեր կը ձեան.
բայց մեր լեռնցիք զանոնք կ'արթնցնեն, թէ որ պէտք ալ լինի կը
բռնադատեն որ միանան և նաև հնազանդին. թէ որ իշխաններուն
ձեայ՝ որ թէպէտ քաջ են՝ բայց նախանձոտ և հպարտ, մենք միշտ
ողբմելի գերի կը լինէինք ամենուն՝ Ձոյնին և Սարակինոսին։ Բայց
ժողովուրդը տեսար, ամենքն ալ զինուոր են, ամենքը կը կռուին.
անոնք էին որ Ռուբէնի՝ Կոստանդնի՝ Թորոսի ձայնին միացան ու
ժողվուեցան. ո՜հ, Թորոսը տեսնէիր, հա՛ մեր Իշխանիկը անոր կը
նմանի. բայց ի՞նչ մարդ էր, երկու աչերն երբ մէկուն վրայ ձգէր գիտէիր
թէ սիրտդ կը կարդայ, գէշ մտածողն ալ, լաւ մտածողն ալ, աչ-
քին երևալէն կը վախնային. մեր մեծ վարդապետները՝ ան մեծ մե-
րուք եպիսկոպոսները՝ ամենքը կը վախնային իրմէ. ինչ խօսք որ
ղօսցեին կը չափէին. մեր լեռը՝ բոլոր վանք ու անապատ է, կար-
դաւոր աբեղայ լեցուն է, մէկ հատ չի կար որ անկից չ'ակնածէր.
շատին խօսիլ չ'էր տար. մարգարէի պէս գիտէր թէ ինչի՞ համար
եկած են, ի՞նչ կ'ուզեն. մենք անոնց սև հրեշտակ կ'ըսենք, Թորո-
սին սպիտակ հրեշտակ կ'ըսէինք. նա անոնցմէ խելօք էր. լա՛ւ, բայց
բան մը զըսցեմ, Տիրուհի, օր մ'եղաւ որ մենք անկից խելօք բան
խորհուրդ տուինք, նա մտիկ չ'ըրաւ։ Ան մեծ կռիւն որ եղաւ, ուր
Լևոն՝ աս մեր իշխանիկին հայրը՝ որ առիւծի կը նմանէր, այնպէս
քաջացաւ որ՝ ոչ ք բանակի մը գործ կատարեց, ամեն իշխանք զար-
մացեր ծնացեր էին, ժողովուրդը միայն Ռուբինեանք կ'ուզենք ըսին.
մենք ալ կայինք հոն ժողովրդեան քանի մը հարիւր խելօքները. ը-
սինք որ այդ իշխանները այս օր Թորոսի ու Լևոնի քաջութեամբ
ազատեցան Սկիւթներէն՝ վաղը անոնց դէմ դաւաճանութիւն կ'ը-
նեն. քանի որ պատրաստ այստեղ են՝ ամենքը բռնենք հաւի պես
կտրտինք՝ արքայութիւն ուզարկենք. շատ չ'է յիսուն վաթսուն հոգի
մեծ ձօճերին, բոլոր երկիրը կը խաղաղի, ամենքն ասոնց կը հնա-
զանդին, Հայը կը լինի մէկ սիրտ մէկ հոգի։ Իրենք ներս էին վահ-
կայ բերդին աւազանին վրայ նստած մեծ ու պզտիկ իշխանք, մենք

պարտէզին ծայրը կայնած էինք։ Հոն մեծ իշխանը, մենք ինչ որ առանձին խօսեր էինք՝ բառ առ բառ իշխանաց ըսաւ. թէ ասոնք ազգին խաղաղութեան համար, հիմա աս վայրկենին դուրսն այսպէս խօսեցան, և խորհուրդ ըրին թէ զձեզ ջարդեն. մենք ապուշ մնացինք, իսկ Թորոս մեզ յանդիմանեց, իշխանները վստահեցուց, սիրոյ խաղաղութեան յորդորեց, և ըսաւ որ «եթէ Աստուած՝ իր ծառաներէն ումանց առաւելութիւն տայ, պէտք չէ հպարտանալ և ոչ ալ նախանձիլ, այլ յօգուտ ժողովրդեան և ի սէր ազգութեան և արդարութեան գործածել.» ու ամենքը սիրով ու ընծայութիւն ձանրեց։ Այսպիսի անձ մ՚էր, որ իր թշնամիներն անգամ դիտէր բարեկամ ընել, թէ որ անգամ մը միայն տեսնուէր։ Սաքը իր եղբօր օրով՝ մենք գիտենք որ Հայ իշխաններ, Լատին իշխաններ եկան ձեր Թագաւորին հետ միացան, որ առաջ բարեկամ էին՝ կ՚ուտէին կը խմէին մէկտեղ. թէ որ մենք անոնք ամենքը սպանած լինէինք, ուսկից եառ մեր վրայ պիտի ժողվուէին։ Ին խելքն ան անիրաւութենէ որ վախայ, անիրաւին կերակուր կը լինի։

—Չէ, այնպէս չ՚է Բաբկէն, ըսաւ Թորոսի կամաց բայց խիստ ձայնը. անիրաւութիւն միշտ վատ բան է. ան կարճուած այսօրուան օգուտը շատ և չի կարճուած վնասներ կը ծնանի. աւելի լաւ է արդարութեամբ մեռնիլ, քան թէ անիրաւութեամբ իշխել։

—Ես գիտեմ որ դուն հօրեղբօրդ պէս կը մտածես, փառք Աստուծոյ որ անոր ալ կը նմանիս, և կը յուսամ թէ նոյնպէս ալ յաջողիս։

—Բայց ո՞ր պիտի հանէ զմեզ նաւը, հարցուց Բաբկէն։

—Այդ ինձ չի վերաբերիր, ահա մարդը որ պաշտօն ստանձնեալ է զմեզ ցամաք հանելու։ Ան վայրկենէն իր պաշտօնը կը լըմընայ իմն կը սկսի։

—Այո՛, ըսաւ Դիոնիս, որ Կիլիկիոյ ափանց վրայ շատ իր գիտակը անթարթափ կը նայէր, բայց մենք, Իշխան, չ՚պիտի կարենանք հոս ցամաք եղնել այլ պէտք է շուտակ Կիպրոս երթալ՝ վասն զի շարունակ ծովեզերը նաւեր կ՚երևան որ կ՚երթևեկեն, անշուշտ մեզի համար է իրենց զգուշութիւնը։

—Ո՛վ որ հնազանդիլ չ՚գիտեր՝ չ՚գիտեր հրամայել քու է հիմա իշխանու թիւնը, ըրէ ինչպէս գիտես, ինչպէս արժան կը դատես։

Ուստի Դիոնիս ուղղուելով նաւապետին՝ և իրեն հետ քիչ մը խորհրդակցելէն վերջ, նաւը շտկեցին Կիպրոսի վրայ, մանաւանդ որ հովը յաջող էր և քիչ վերջը ահա ցամաք սկսաւ անհետանալ և կղզին երևիլ։ Իրօք մեր ճանապարհորդքը բաւական ձանձրացեր էին ծովէն, ցամաքի զուրկը սկսեր էր զերենք յոգնեցնել, ուստի նախիմ առանց իր զուարթութիւնը կորսնցնելու նաև ցամաք մը ոտք կոխելու մեծ փափաք ունէր, և երբ Կիպրոսի հիւսիսային կողմը սկսաւ նկարուիլ՝ արմաւենեաց բարձր գլուխներն երևիլ, Դիոնիս որ պզտութիւն և նախատեսութիւն ինքն էր, կասկածելով խնդրեց նաւապետէն որ փոխանակ Կիւրինէ քաղքին մօտենալու քիչ մը դէպ ի արևելք անշէն տեղ մը ցամաք հանէ, ուր գիւղ մը և քանի մը հիւղեր կ՚երևէին ցիր և ցան. շուտով մակոյկ մը մեր չորս ճանապարհորդքն ծովեզերը դրաւ և նաւն սկսաւ հեռանալ իր ճանբան։

Թէպէտ Բաբկէնի սիրտը տխուր էր Կիլիկիոյ ափանց հեռանալուն, բայց զարմանքով կը նայէր այս կղզւոյն որ շատ նմանութիւն ունէր իւր հայրենի երկրին հետ. նոյն ծառերն էին, նոյն բերքերն և նոյն լեռներու գօտիներն, նոյն կլիման ու բրիձն. միայն հոս Հայու լեզու և Հայու կերպարանք չէր կար։ Ուստի տրտում կ՚երթային ծովեզերը հիւրընկալ տեղ մը դանելու համար, երբ նախիմ՝ որ Թորոսին թևն ի վար կախուած կը քալէր՝

—Տես, ըսաւ, սա սևագլխա մօրուք հագնեալը որ անսովոր դևսարկ մը դրած լերան ստորոտը կը ձիավարէ։

Թորոս մէկէն թևն ազատեց և սրացաւ դէպ յայն կողմն, վասն զի Հայու վարդապետ մը տեսաւ վեղարաւոր, և երբ «Հայր սո՛րբ» ձայնեց ուժգին, եկեղեցականը ձին դարձուց և սկսաւ դէպ ի նա ձիավարել հանդարտիկ և երբ հատաւ՝ մօտցաւ Թորոս ակնարկ մը նետելով և երկայնահասակ՝ թիկնաւէտ կենդանի աչքերով վաթսուն տարեկան ծեր մը տեսաւ, որ աւելի կենդանի կը նմանէր իր շարժմունքներէն՝ քան թէ խաղաղութեան քարոզ՝ սեղանի պաշտօնեի մը, որ նոյնպէս իր սուր աչքերն Թորոսի ուղղելով կը զննէր։

—Աստուած օգնական, Հայր սուրբ։

—Աստուած պահապան, որդեակ։

—Այս կողմերը Հայոց բնակարան ո՞ր կրնայ գտնուիլ։

—Հոս՝ մեր Ս. Մակարայ վանքը կայ։

—Ձեզ նեղութիւն ընել չ՚ի մեր միտքը, բայց քանի որ ազգային անձինք կան մեզ աւելի սիրելի և անոնց հիւր լինիլ։ Հեռո՛ւ և շատ վանքը հոսկից, Հայր սուրբ։

—Երկու ժամի չափ կը տևէ։

—Ուրեմն ներեցէք մեզի՝ ձեր ազգայնոց՝ որ ձեզ ընկերանանք։

—Սիրով և ուրախութեամբ, որդեակ, ըսաւ վարդապետը, և խորաշունին ակնարկ մը ձգելով ամէնուն վրայ և երիտասարդի մը պէս ցատկելով ձիէն ու Նէփիմէին նայելով աւելցուց.

—Կը տեսնեմ որ ձեր մէջ այնչափ երիտասարդ և ակար անձինք ալ կան և որ աւազի վրայ քալելէն այնչափ յոգնած ու կարմրցած են՝ որ աս դարվէրն շատ նեղութեամբ պիտի երթեն։ ուստի սիրով կ՚ընծայեմ իրենց իմ կենդանիս։

—Աս խօսքին շնորհակալութեան բառ մ՚ըսելով Թորոս, փեռտուրի պէս ձիուն վրայ դրաւ զնէփիմ և Բաբիկենին յանձնելով, ինքն ալ Հայր սուրբին ընկերութեամբ սկսան յառաջանալ։ Փիչ մը առեն լռութեամբ ճանբան շարունակելէն վերջ, իրրև թէ երկու կողմն ալ կը սպասէին իրարու որ առաջին լինին խօսելու, վերջապէս Հայր սուրբ չի կրնալով համբերել և Թորոսի յամառութենէն ձանձրացած՝ ըսաւ ժպտելով.

—Զարմանք է, ծիսր, որ այսպիսի թարմ պատանեակ մը հետերնիդ աս օտար երկիրները կը պտըտցնէք։

—Զարմանքի ժամանակի մէջ կ՚ապրինք, Հայր սուրբ, ըսաւ Թորոս անհոգով, անոր համար կը տեսնէք զիս որ բանի մը վրայ և ոչ ձեզի պէս աստուածաշունչ անձի մը երկայրի սուրբին վրայ կը զարմանամ, և մանաւանդ թէ ուրախութիւն նաև կ՚զգամ որ քաջ նիզակակից մը մեզի կ՚աւելնայ։

Լաւ, որդեակ, ըսաւ վարդապետը, ուրախ եմ որ ժամանակին հարկը կը ճանչէք, և ես ձեր աս տարիքին վրայ՝ տեսնելով այդ պատահս խոհեմութիւնը՝ մեծ յոյս կ՚առնում, և իմ փափաքներս ու երազներս դրեթէ կատարեալ կը տեսնեմ։

—Շատ մեծ կը խօսիք, Հայր սուրբ։

—Ես շատ պայծառ կը խօսիմ, բայց դուք, Իշխան, չ՚ի՛ք ուզեր հասկնալ և ձեր խոհեմութիւնը չափազանցութեան կը տանիք,

և ան մարդուն՝ որ իր կեանքը քառասուն անգամ՝ մանաւանդ թէ հազար անգամ ձեր և ազգին փրկութեան համար վտանգի դրած է, վստահութիւն ցցնելէ ալ կ՚զգուշանաք, և դեռ նոր տեսութիւն մը իրմէ պ՚ուզեք։

—Խնդրեմ ձեր անունը ինձ յիշորհել ըսաւ Թորոս հետաքնին և հրամայական աչք մը դարձնալ Հայր սուրբին վրայ նետելով։

—Կոստանդին Բարձրբերդցին եմ, որ անցեալները դեռ ամիս ու կէս հազիւ կայ Բաբիկենին հետ տեսնուեցայ Պոլիս, դուք զիս չ՚էք ճանչեր և ես ալ զձեզ Բաբիկենին ընկերութենէն երևակայեցի։

—Եւ Բաբիկեն դարձնալ քեզ չի ճանչեց։

—Ան առեն զիս ուրիշ հագուստներով տեսաւ, և սև մօրուք։

—Բայց դուն վտանգ մը անցուցիր Պոլիս, և շատ չ՚է որ հոս եկար։

—Այո՛, աս նպաւից արմատ յոյները իմացեր էին իմ գալուստս, ուստի նոյն գիշեր զիս բռնել միտք դրած էին և ես փոխանակ դառնէն անցնելու, ինչպէս կ՚ապատէին, երդիքէն անցայ և իմ ճանբաս դնացի խաղաղութեամբ և փոխանակ Կիլիկիա երթալու, ինչպէս կը յուսային, եկայ Ս. Մակար քանի մը ամիս ճգնելու, մինչև որ այցելութիւն լինի յԱստուծոյ։

Եւ երբ Թորոս աս խօսքին վրայ փոքրիկ ժպիտ մ՚արձակեց, Կոստանդին ծիծաղով մը պատասխանեց, բայց դարձեալ շուտով ծանրութիւն մը առաւ, վասն զի երիտասարդին վսեմ կերպն ակնածութիւն կը հրամայէր և Կոստանդին կ՚ըսէր ինքնիրեն թէ՝ «Յիրաւի Թորոս անունովն ալ բնութեամբն ալ կենդանացեր է յեղբորդին. տեսնենք, քաջութեամբ ալ թէ անոր կը նմանի՝ Թորոս Բ. կ՚ունենանք։

Ծովեզերը արդէն ձգեր էին և դար վեր կ՚ելնէին անտառոտ ժայռերու և պարտէզներու մէջէն, հեղեղատի մը աջն ու ձախ շաւղին հետևելով. և Բաբիկէն որ անկարծելի տեղ մը Հայոց վանք դտնելուն ուրախ էր և շատ ալ նմանութիւն իր Սև լերան բնութեան և կղզոյն մէջ՝ և նաև Նէփիմէի անվեհեր ձիավարութեան վրայ՝ ղուարթ դէմքը դգեցաւ բոլորովին։ Անոր՝ Հայր սուրբին պաշտօնին վրայ, Հայոց ընդհանուր եկեղեցականաց վրայ տեղեկութիւն կուտար, անոնց ձգնաւորական կեանքին վրայ դալով, կը

պատրաստեր եւ փիմէ անապատական ընթրիքի մը, վասն զի օրն ալ արդէն սկսած էր եղեկոյիլ։ Եւ ահա մեծամեծ աւազաններ, և տեղ տեղ պարտէզներ ուր մշտադալար նարնջենի և կիտրոնի էր, շէնքի մը մօտիլը կը ցուցնէին, և վերջապէս եղևին անտառի մը ստորոտը երևցաւ Սրբոյն Մակարու վանքը, և մեր հինգ բարեկամները քանի մը վայրկեան եռքը՝ առաջնորդութեամբ Վանահօր՝ իրենց բնակարանը կը հանդչէին։

ԳԼՈՒԽ Թ.

ԿԻՊՐՈՍԻ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ

Այն գիշերը մեծ ուրախութեամբ և զուարթութեամբ վայելեցին վանքին հիւրընկալութիւնը մեր ուղևորք, և Բարկէն զարմանքով տեսաւ սեղանին վրայ իր քով նստած աշխարհականի ըզգեստներով ճերմակ մօրուօք մը՝ որ առանց խօսելու՝ իր բոլոր ծանրութեամբ և լաւ ախորժակով կուտէր, Բարկէն երբեմն երբեմն քովինի ակնարկ մը կը նետէր սա նոր սեղանակցին, որ ամենևին իրեն ուշ չէր դներ. վերջապէս Վանահայրը տեսնելով թէ սեղանին վրայի լռութիւնը այս պատճառաւ իրօք վանականաց սեղան մը կը դառնար, ինք որ աւելորթող կը համարէր այն օրը իր միաբանից՝

—Բարկէն հայրիկ, ըսաւ, ձեր ճանրու ընկեր վարդապետը չ'ես փնտռեր։

—Հայր սուրբ, ես կը յուսայի և կը փափաքէի զինքն հոս գտնել, բայց ձեր հրամանը գիտէ անօրինել. մենք զինուոր ենք՝ կրօնաւորաց համար ալ լսեր ենք թէ զինուոր են՝ իրենց վանահօր կը կը հնազանդին։

—Ետրա փոխարէն ահա քեզի ուրիշ բարեկամ մը ես գտայ, Սև լեռնէն է նա ալ, իրեն տեղեկութիւն ինչո՞ւ չ'ես հարցներ։

—Բարկէն քննող աչօք դարձաւ նայեցաւ քովինին, բայց չի կրնալով ճանչնալ, և սեղանին հորթի՝ կաքաւի և կամթնեղէնէ պատրաստած խորովկներն ու համադամներն՝ կիպրոսի տեսակ տեսակ

գինիներն իր ախորժակին յարմար գալով, և նորա յաճառ լռութենէն ձանձրացած՝

—Հայր սուրբ, ըսաւ, սա բարեկամը՝ ինձմէ աւօթի կ'երևայ, ոչ անուն կուտայ և ոչ ձայն կը հանէ։

—Բարկէն, ըսաւ քովինը շեշտակի իրեն նայելով, գիս չ'ես ճանչեր։

—Աստուած վկայ Կոստանդին ինքն է, նա է, անոր ձայնն է, ըսաւ Բարկէն դէպ՝ անոր դառնալով և աչքերը խոշոր խոշոր բանալով, փառք Աստուծոյ ողջ է։

—Փառք Աստուծոյ որ գիս ճանչեցիր։

—Թէ որ ձայնդ չի լսէի, լաւ որ պիտի չ'ճանչէի։

Ամենքը սկսան խնդալ, ուրախութիւնը կը տիրէր սեղանին վրայ. Վանահայրը որ պատուական և իմաստուն անձ մ'էր և որու իմացուցած էր Կոստանդին ով ոք լինելն, կատարեալ հիւրասիրութիւն ցուցուց իրենց, և խոստացաւ ամեն պիւրութիւն և ապահովութիւն ճարելու Տորոսի լեռները դանել տալու համար Հայ իշխանին։ Այն գիշերը ապահովութեան և վստահութեան վրհճակի մէջ՝ Դիոնիս իր տաժանելի աշխըջութենէն յոգնութիւն կ'առնուր, Բարկէն ուրախ էր ամեն բան դիւրանալուն. Թորոս թէպէտ սակաւախօս՝ գոհ էր ամեն բան մինչև այն օր անվտանգ յաջողելուն, Եւփիմէ միւսին պոհութիւնը տեսնելով զուարթութեան հաւասար կը փայլեցնէր, իսկ Կոստանդնի ուրախութիւնը անպատմելի էր։ Այս մարդը շարունակ իր Մեծին Հայաստանի ճանրորդութիւնները կը պատմէր, վասն զի հայաբնակ երկիր չի կար որ հինգ տարի շարունակ պոլտած չ'լինէր, Վրաստանէ մինչև Միջագետք, Սպիրէ մինչև Աղրպատական՝ տեղ չ'էր ձգած որ խուզած չ'ըլլար. վասն զի կենաց յոյս մը կը փնտռէր Կիլիկիայէ դուրս և չ'էր գտներ. Հայ թագերու պաշտպանութեան համար շինուած բերդեր՝ բերդաքաղաքներ օտարին իշխանութեան և բռնութեան գործիք ու ամրութիւն եղած էին։ Անի նաև, մեծ Անին, հազար ու մէկ եկեղեցւոյ Անին, նա ալ կենդանութեան յոյս չ'էր տար. և ժողովուրդը որ անդամ մը գնացեր իր թագաւորաց գերեզմաններուն վրայ ողբ ղրեր լացեր էր, ալ չ'էր հաւատար թէ նոցա ժառանգներն գարձեալ պիտի երևնին կանգնին, փրկել Հայաստան, Քրիստոնեայ ղրացի և ազգակից

ժողովուրդ Վիրք, նաև Հայ զօրավարաց ձեռամբ վարեալ Հայ ազգը հալածելու և հարստահարելու կը նկրտէին. Վասպուրականի դատաստանք Արծրունեաց յիշատակը անհետացեալ էր գրեթէ և յիմար ժողովուրդ մը կործանեալ գահին պատուանդաններուն վրայ կաթոլիկոսական բաժանման աթոռ մը հաստատելով կը միխիթարուէր:

Այս երկար պատմութեան ամենքը կը մրաբէին, Թորոս միայն այս կենդանի աշխարհագրութեան և վիճակագրութեան մէկ բառը չէր կորսնցնէր և մութ մնացած խնդիրները կը պրպտէր՝ կը լուսաբաներ. Կոստանդին կը զարմանար, կը շփոթէր իր իմաստակ հարցաքննութեան առջև, որ ամեն բան կը ճշդէր, տեղերը՝ վիճակները՝ հեռաւորութիւնները: Երբ ամենքը իրենց տեղը գնացին ննջելու՝ դեռ աս երկու անձինքը նստած կը խօսէին Կիլիկիոյ վրայ. Հայ և օտար ժողովրդոց թուոյն՝ վիճակին՝ յոյսերուն՝ իշխանաց՝ կառավարութեան ձևին՝ զօրաւոր դիրքերուն և ամրութեանց վրայ. մինչև որ նաև հաւերն ալ սկսան խօսիլ և Կոստանդին ինք պարտաւորեցաւ յորդորել զԹորոս երթալ քնոյ հանգիստ առնուլ: Երբ Թորոս գնաց, տեսաւ որ իր սենեկին դրանն առջև Բարկէն մէկ աչքը քուն՝ միսն արթուն կը պարտի. և երբ զինքը տեսաւ՝ գնաց իր հին զինուրակիցը դանելու: Մտաւ սենեակը ուր Կոստանդնի հետ պիտի պառկէին. առջի խօսքը՝ որ ըսաւ Կոստանդին՝ աս եղաւ.

—Բարկէն, Աստուած վկայ, որ աս իրիկուն համոզուեցայ թէ Կիլիկիա իր փրկիչը գտաւ. սա երիտասարդը՝ թէ որ ինչչափ խելք ունի, այնչափ ալ քաջութիւն ունի՝ հոգին ալ մեծ, հոգեկրթութիւն ալ մեծ պիտի լինի:

—Դու ի՞նչ կ'ըսես, եղբայր, անցեալ օր մեծ հօթը հոգի իրարու վրայ անշունչ դեմունը ձգեց, տասն երեք հոգի էին մեր վրայ յարձակողները:

—Այդ Հառամ ծերը և իր աղջկին ի՞նչ բան ունին ձեր հետ:

—Աղջիկը Հառամ չէ, իշխանին պահեակ կինն է. մեր Արծրունի թագաւորաց ցեղէն է:

—Իշխանը պահուեցաւ... Արծրունի կին առած... լաւ, հա, քիչ մ'ալ սա ծերն Հայ մկրտիր, Բարկէն:

—Ծերը Հայ չէ, բայց Հառամ ալ չէ, վասն զի շատ լաւ է և Հայու բարութիւն կ'ուզէ:

—Բարկէն, դու ցնդեր ես, խելքդ կորսուեր ես, այս մարդը Հառամ է, ուրեմն լաւ մարդ չի կրնար ըլլալ, Հայու ալ բարութիւն չի կրնար ուզել:

—Տէ, ի՞նչ կ'ըսես. նայէ սա իմ գլուխը Հայու գլուխ է, խօսթէ սա մատ ոսկորին մէջ, աս գլուխը Հառամները կտրեցին՝ այդ մարդ լաւցուց. հիմա հաւտացիր... մենք բանտէն ուսկից պիտի ելնէինք՝ թէ որ աս մարդը չ'ըլլար՝ թէ դա աղջիկը չ'ըլլար: Առանք մեզ ազատեցին. մենք նորէն բանտ մնած էինք քու պատճառդ՝ թէ որ աս ծերը մեզ չի փախցնէր... թէ որ աս ծերը մեզ հետ չ'ելնէր մենք Հառմի նաւերուն մէջ լինկած բռնուած էինք. ծովը պզտի հատ գաւազան մ'ունի ծակած, մէջը փայլուն. կր դնէ աչքին կը նայի աշխարհքին ծայրը ինչ կ'ընեն մարդիկ՝ կը տեսնէ, կ'իմանայ:

—Հիմա հաւտացի թէ լաւ մարդ է այդ ծերը և Հառամ չէ, ըսաւ Կոստանդին և կոշիկները հանելով վերարկուն քաշեց գլուխն՝ երկնցաւ պառկելու:

Ննջեցին բոլոր Բարկէն, բաղմոցին միւս կողմը, և սկսան քնել:

Վանահայրն իր հիւրերուն քունը չի խանգարելու համար, առանց զանգակի իջեր էր իր միաբանից հետ վանայ անշուք և փոքրիկ եկեղեցին, ժամերգութիւն կատարելու. պատարագին՝ ամենը ներկայ էին, և երբ սարկաւագը «Աղաւթիւն եղբարց մերոց գերեզմանի» կ'երգէր՝ Բարկէն մեծաձայն «Ամէն» գոռաց, ու ամեն գլուխ երբ իրեն կը դառնային ինք անխռով և մեծ հաւատոք իր աղօթքը կը շարունակէր:

—Երբ եկեղեցին եղան, Վանահայրը լաւ ճաշ մը պատրաստուեր էր իր հիւրերուն. և վերջը անոնց փափաքը կատարելու համար ինքն ալ իրենց հետ որսի ընկերացաւ: Կոստանդին ուրախ ամբողջ օրը իր աղջկան հետ և կը համոզուէր Թորոսի թևին զօրութեան և աչքին. ճշդութեան ի նետաձգութիւն, նորա սրընթաց կորովին որ այծեման պէս վախերու և դահավէժներու եղերքը կը վազէր, և այնչափ տարուան անշարժութիւնն որ իր միաքը պրպտողներ և բարձրացուցեր էր, ջղերուն ուժը չէր թմրեցուցեր: «Ահա երիտասարդը որ մէկ հատիկ մարդ է մեր փրկութեան համար. ես յիմար՝ որ Հալէպու Ամիրային պալատը կ'երթայի մարդ փնտռելու և երկու

թեթեւամիտ տղաք կը գտնէին, որոնց մէկուն սիրտը այնչափ չար էր որչափ գլուխը թեթեւ. իրաւ Աստուած մեր խեղճ լեռները կը սիրէ եղեր։» Եւ քիչ կը դիտէր Եւփիմէն որ ծերուն հետ կը քալէր միշտ աչքը Թորոսէն չէ զատելով «Հա, մեր Լեռնին տղան բարեբաղդ ալ է, այդ կինը գեղեցիկ և ազնուական է և մեր Իշխանը սրտանց կը սիրէ. բայց այդ ծերը ի՞նչ է իր սուր և արհամարհոտ աչքերով, հազիւ թէ աղջկան բսածներուն պատասխան կուտայ, միտքն ալ գիտես թէ ուրիշ տեղուանք կը պտըտի . . . » Եւ ասոնք խորհրդածութեան մէջ յանկարծ երբ որսը միտքը գար՝ երկու նետ կը նետէր որք երբէք պարապը չ'էին գներ։ Երբ Թորոս՝ բաւական զուարճացաւ և որսն ալ առատ դիզուեցաւ, վանքին վերի գլուխը ուր վանահայրը եղևնի ծառերուն շուքին տակ սեղանը պատրաստել տուած էր կանաչ խոտին վրայ՝ ծովը առջևնին. և անդին ամպերու պէս դիզուած Տորոսի լեռները, բաժակները քամուեցան Կիլիկիոյ ազատութեան և անոնց կենդանութեան համար, որ կեանքերնին այդ սուրբ նպատակին համար պիտի վատնէին։

Երկրորդ օրը, Թորոս՝ Վանահօր և Կոստանդնի ընկերութեամբ՝ ծպտեալ սրընթաց կենդանեօք կ'երթար Լեվքօսիա քաղաքը տեսնելու, և անկից վերջը ութ օր շարունակ բոլոր շրջակայքը կը պըտրտէր՝ կը քննէր բնակչաց կեանքը, իրենց զուարճութեանց զեղծմունքը, կղզւոյն պաշտպանութեան զօրութիւնը, բերդերուն վիճակը կ'ուսնէր։ Իր սուր դիտողութենէն բան մը չ'էր ազատեր։ Իր բոլոր ասպարէզ ընկեր էր նաև Եւփիմէ, որ թէպէտ ի բնութենէ հեռաքրքիր՝ տեղեակ լինել կ'ուզէր՝ այն ամենուն՝ որ Թորոսի խուզարկութեանց պատճառ էին։

Բայց ամենքը, որ կը պարտէին Թորոսի հետ, մէկը չի կար որ հասկնար իր միտքը, բաց ի Դիմիտրէն որ հեռուէն կը դիտէր և կ'իմանար այդ լուռ և անխոնջ բնութեան նպատակը, ուր կը նըշմարէր հայրենասիրութեան հետ նաև վսեմանդրութեան ոգին։ Ուստի ինք բնութեան ուսմունքով պարապեալ և ոչ կ'ուզէր տեսնել քաղաքական կիրքերը՝ որ իր շուրջը կը յուզէին. և կը վերագառնար բոյսի մը՝ քարի մը՝ խոտի մը կտորի վրայ յառիլ՝ պչնուլ քան թէ ուրիշ բանով մ'զբաղիլ։

Այսպէս լեռները կը պարտէր Դիմիտրէ երբ երեկոյ մը Թորոս

արշաւանքէ դարձած և տեսնելով զծերը լերան բարձր գագաթան վերայ մուրճ՝ի ձեռին՝ ժայռի կտոր մը գնդելով, ելաւ քովը գնաց.

—Հայրիկ Դիմիտրէ, ըսաւ, մենք այս դի այն դի կը վազվզենք, դու ուրիշ աշխատութեամբ կը տաժանիս. ինչո՞ւ այս ժայռերը կը կոտրտես։

—Տես, ըսաւ ծերը, տես, այս կոտրած ժայռերու կտորուանքին մէջ ծովային խեցիները, որ կը վկայեն թէ անչիշատակ ժամանակաց մէջ ծովը կը ծածկէր ասոնց լեռներուն գլուխները։

Եւ իրօք կը տեսնէր Թորոս ծովային խեցին ժայռին ծոյը փակուած. երկայն լռութիւն մը յաջորդեց. նստաւ ծերը և Թորոսին ակնարկ մը ըրաւ քովը նստելու, սուր աչքերը երիտասարդին յառելով ծանր ծանր ասոնք խօսքերն սկսաւ զրուցել.

—Ո՞վ երիտասարդ, կը տեսնեմ թէ որչափ հեռու ենք մենք իրարմէ. դու երիտասարդ՝ կորովի՝ եռանդուն՝ վաղը միայն կը նըշմարես և ապագային կը դիմես. ես ծեր՝ տկար՝ դանդաղ՝ երեկուան և հազարաւոր տարուան անցեալին կը նայիմ։ Բայց օր մը կար որ ես ալ ներկան և ապագան կը դիտէի, և իմ շրջանիս մէջ հայրենիք՝ փառք՝ մեծութիւն և թագաւորութիւն կ'ուզէի. բարեբաղդաբար երկար չի քշեցին անփափաքները, և ուսմունք բնութեան՝ մարդկային սրտին ու մարդկութեան անցելոյն գիս բժշկեցին այն անձուկէն որ զքեզ կը տոչորէ. անոր համար է որ դու կը տեսնես գիս անցեալին խորը իջած և ես զքեզ կը նշմարեմ՝ որ ապագային բարձունքը կը մագլցես։ Չ'եմ զարմանար, դու երիտասարդ ես, և անուն մ'ունես ազգիդ մէջ, հայրենիք մ'ունես կոտած և ինկած, անձնական ու ընտանեկան նախատինք՝ բանան և քուկիններուդ մահուան չիշատակն մաքիդ մէջ կը յաճին, և շարունակ կը մտածես վերականգնել՝ սրբել և վրէժ առնուլ։ Քեզի հետ խօսողը պէտք է համզսես որ ազգի մը չի վերաբերիր. մարդկութեան գաւակն է. և ամենէն առելի մարդիկ իրեն՝ աշխարհակալներն են. ուստի քեզի գինուրիդ իմ խրատս այս կ'ուզեմ լինի որ անիրաւ և անգութ չ'լինիս վրէժխնդրութեան հոգւով. յիրաւի, անիրաւ աշխարհիս մէջ չ'անիրաւել դժուար է, բայց դու մեծ հոգի ունիս և ես կը ճանչնեմ մարդկային բնութիւնը, անոր համար այս խօսքերը քեզի կ'ընեմ։ Չ'եմ ես այն անմիտ փիլիսոփայական կարծուած գպրոցէն՝ որ հայրենասիրութեան

դալափարը կը վտարէ մարդասիրութեան գալափար մը առաջ քը-
շելով. անոնք որ այդ վարդապետութեանց քարոզք են, իրենց սըր-
տին անարգ անտարբերութիւնը և վատ անձնասիրութիւնը սուտ և
սխալ արամաբանութեամբ վարագուրել կ'ուզեն: Թէ որ այս օր ազ-
գութեան և հայրենեաց գալափարը վերցնենք, վաղը գերդաստանի
և ընտանեաց գալափարը ճըր պիտի ջնենք: Ուրեմն լաւ իմացիր իմ միտ-
քըս, Իշխանդ, ինձի փափաքելի էր որ Հայքդ նեցուկ լինէիք Յու-
նաց կայսրութեան Ասիոյ մէջ, բայց որովհետև տեսլութիւն և ա-
րեանց հզօրներ զձեզ կը բաժնեն, և ինչ որ անոնցմէ առնուած
քաղաքականութիւն և ուսմունք կայ՝ եղած վնասներուն չ'են փո-
խարիներ. դուք յաւիտեան պիտի չլ մոռնաք ձեր Անուշ Հոգևարք
Թագաւորութեան ընդունած վերջի դատաճան Հարուածը յունա-
կան ձեռքերէ, և մեր յունական ամբարտաւանութիւնն ալ երբէք
պիտի չէ մոռնայ ձեր Կիլիկիոյ յափշտակութիւնը և անկախ Նկեղե-
ցին: Որովհետև մարդիկ երբ զօրաւոր են կ'ուզեն իշխել, երբ տը-
կար են ազատ լինիլ: Ուստի դու ալ քու իրաւունքդ պիտի ձեռք
բերես այս օր, վաղն ալ վրէժ խնդրելու պիտի եղնես. բայց քու
անձիդ և քու ազգիդ օգտին համար միշտ յիշէ Ծերուս մը վերջին
խօսքերը. միշտ չափաւոր եղիր, և չ'ըլլայ թէ յաջողութիւնը գլխդ
կուրացնէ. վասն զի մարդկանց կեանքին մէջ յաջողութիւն և ան-
յաջողութիւն իրարու կը յաջորդեն: Ես որ կասկ մը կ'ընեմ, ասե-
լորդ կը համարիմ քու սրտիդ յանձնարարել Եւփիմէն, գիտեմ որ
նա գլխդ ինչպէս կը սիրէ, դու ալ գնա նոյնպէս կը սիրես . . .

Այս խօսքերուս Ծերուն ձայնը փոխուեցաւ և աչքերը լցուեցան:

—Դու որ խելք ալ ունիս սիրտ ալ ունիս, կ'իմանաս Ծերուն
փափաքները երբ ձայնը իրեն կը պակսի. գնա, Աստուած հետդ ըլ-
լայ, գնա, շէնքդ որ պիտի շինես՝ երկարատև ըլլայ . . .

—Եւ ի՞նչ պէտք է ընել ըսաւ Թորոս, որ երկարատև կարե-
նայ լինիլ:

—Թէ որ Աստուած լաւ յաջողութիւն մը տայ, և քեզի պէս
չորս հինգ յաջորդ ունենաս՝ կրնաս ամբողջական Հայաստան սա լեռ-
ներուն վրայ փոխադրել, Թէ ոչ՝ առօրեայ սուուեր մը և քանի մը
աւերակ աւելի կը ձգես այդ աւերակաց երկիրը Սարդանապալին (1)

(1) Տարսոն՝ Սարդանապալի վերնոմանի մը աւերակները դեռ մինչև հիմա ցոյց կուտան:

գերեզմանին քով: Նայէ որ զանկերդ քաջ գործունեայ և օգտա-
կարացն գիտուն լինին: Թէ որ դու բանտիդ մէջ վանքին գրատունը
և կարգալու փափաք չ'ունենայիր՝ ոչ քու գեղեցկութիւնդ՝ ոչ սրա-
մտութիւնդ՝ ոչ բազմակողմանի կորովը չէին կրնար գքեզ բարձրա-
յընել. այլ դարձեալ բնութեան ամեն ձիրքերովդ ալ պակասաւոր
էակ մը կը լինէիր փոխանակ այդ խոհեմութեան յանձնապաստա-
նութիւն՝ փոխանակ հեռատեսութեան անհոգութիւն՝ փոխանակ
համբերող դիտողութեան հապճեպ գատաստան բաժինդ պիտի լի-
նէր: Տամ նաև քեզի օրինակն ալ, ասոր օրինակ՝ եղերական օրի-
նակ, բայց դու շատ զօրաւոր սիրտ ունիս և կրնաս մարիկ ընել: Քու
եղբայրդ Ռուբէն, թէպէտ սրամիտ՝ գեղեցիկ և կորովի, բայց չ'ու-
նէր ոչ քու համբերութիւնդ, ոչ գիտութեանդ սէրդ, ոչ քու խո-
հեմութիւնդ. և անոր համար ալ ամեն բան և կեանքն ալ կորսըն-
ցուց. գիտեմ, նախանձը կ'ըսէ աշխարհ, բայց նախանձ չի գրգը-
ռեր ալ իմաստութեան մասն է. ինչ որ դու համբերութիւն ցոյց
տուիր տարիներով՝ նա օր մը չի ցոյց. թշնամի ազգութեանց մէջ
նուիրական բան մը չի կար իրեն համար երբ բարկութիւնը սիրտը
լեցնէր, և հապճեպ թէ Գառագեղէն դուրս մէկ ոտքը դրած սարսա-
փելի մռնչեիններ կը ձգէր: Ես փուճ տեղ վնքը կը խրատէի և կը
դգուշացնէի: Քեզի հիմա այս խօսքերս միայն անոր համար է որ վը-
րէժխնդրութեանդ մէջ չափաւոր լինիս, միշտ ջանաս թշնամութիւնը
անհաշտ վիճակի մէջ չի մոյնել»:

Ծերուն այս խօսքերը անօգուտ չէին այնպիսի երիտասարդի
մը համար, որ ծանր միտ կը դնէր լսածներուն և կը խորհրդածէր
ասոնք լռութեամբ:

Եւ ահա Եւփիմ լեռն ի վեր կուգար կ'երթէր, երկուքն իրեն
նայելով կ'սպասէին՝ երբ անոնց մէջ եկաւ նստաւ և քիչ մը շունչ
առաւ՝

—Մինչև երբ սա կզզին պիտի նայինք, ըսաւ, ալ ձանձրացայ.
ես չ'եմ կրնար քեզի պէս, Թորոս, լեռներու՝ գիւղերու՝ բերդերու
ծակ ու ծուկը խառնել և զուարճանալ, և ոչ քեզի պէս Հայրիկ
մուրճ մը ձեռքս քարեր կոտրտել՝ բոյսի մը երակներուն վրայ ժա-
մերով յափշտակութեամբ սքանչանալ չէ, այդ իմ կարողութենէս
վեր է. ժամ մը առաջ ջանանք մեր տեղն հասնիլ և գործի սկսինք:

—Ո՜հ, ըսաւ Դիոնիս փոքր հեգնութեան ժպիտով, Եւփիմ, դուն գործի պիտի սկսի, պէտք չ՚է ժամանակ կորսնցնել, երբոր լեռները վրայ փողերը գոչեն, զինուց շրինգը սկսի, քաղաքներու՝ գիւղերու մուխն ու մոխիրը երկինք բարձրանայ, վերաւորներն հառաչեն, տղայք և կանայք անտէր՝ անբնակարան՝ որբ և այրի լան ու կսկծին ան ատեն գործի պիտի սկսիս։

—Այո՛, ձիշդ ան ատենն է իմ գործիս ժամանակը, պատասխանեց Եւփիմ եռանդով և ձայնը բարձրացնելով, իմ պարտքս է վերաւորները դարմանել, որբերու՝ այրիներու հայ՝ բնակարան ու մխիթարութիւն ձարել, յուսահատները քաջալերել այո՛, գիտեմ իմ պարտքս ասոնք են, և թէ որ ասոնք ես չի կատարեմ՝ արժանի չ՚եմ իշխանի մը ոչ թէ կին՝ այլ և ոչ աղախին լինելու։

—Եւփիմ, ես քու սկզբունքներդ գիտեմ, գիտեմ նաև թէ ինչ առնացի սիրտ մը ունիս, բայց, այսպիսի յանդուգն և մեծ զոհողութեան մէջ գիտեմ նոյնպէս թէ ի՜նչ վտանգներ կան ծածկուած՝ զորոնք նախատեսել անկարելի է շատ անգամ, ուստի հեգնութիւն մ՚իմանար իմ խօսքերս, այլ խոհեմութիւն. կ՚ուզես ծներու վատ խոհեմութիւն համարէ. բայց միտդ դիր որ դու հիմա Թորոսի անբաժանելի ուղեկից լինելովդ առնել իրեն արդելք մը՝ հոգ մ՚ես քան թէ օգնութիւն։

—Նայէ, Հայրիկ, աս քարոզները քանի որ կը նորոգուին, ինձի ոչ թէ յուսահատութիւն այլ կիրք կը բերեն, և գիս ի խոր կը վերաւորեն. թէ որ . . .

—Ո՛չ ո՛չ, ըսաւ Դիոնիս տեսնելով որ խօսակցութիւնը անախորժ ձև մը կ՚առնուր, դու կիրք մ՚եղիր. մենք ինչպէս ձանրայ եղանք՝ նոյնպէս կը կատարինք։

—Հա՛, այս է իմ վերատածս, հիմա, ահա գոհ եմ, և ձեզի խօսք կուտամ որ իմ բերնէս առնևին չ՚պիտի լսէք ոչ յոգնութիւն՝ ոչ երկիւղ՝ ոչ յուսահատութիւն և ոչ հառաչանք անգամ, այլ թէ պէտք լինի անշշուկ յանձն պիտի առնուի խմնալ մեռնիլ քան թէ գանգատիլ։

—Ծանր պարագայներու մէջ խոհեմութեամբ տեղի տալ հարկին առջև՝ սկզբունք մեղի դնելով, իմ սիրելի Եւփիմս, ըսաւ Թորոս ոտքի վրայ եղնելով և ծանրութեամբ, միշտ կը ջանանք իրարմէ վայրկեան մը չի զատուիլ։

Եւ երեքը միասեղ սկսան լեռնէն ծանր ծանր վար իջնել։

ԳԼՈՒԽ Ժ.

ԲԱՐԱՑԻՆ ԿԻԼԻԿԻԱ

Նոյն միջոցին Վանահայրը վանքին դրան դրսի դին կեցած Թիկնապահ՝ հաստաբազուկ և արևէն սևցած երիտասարդի մը հետ կը խօսէր կամաց ձայնով և շարունակ հարցմունքներ կ՚ընէր իրեն, և թէպէտ յայտնի էր թէ ախորժելի չ՚էին իրեն առած պատասխանները, բայց դարձեալ երբ իր հիւրերը տեսաւ՝ զուարթ ընդունելութեամբ հրամցուց զիրենք, և ինք ամենէն վերջը դռնները դոցել հրամայեց՝ վասն զի արդէն ժամանակը ուշ էր։

Ընթրիքը ընելէ վերջ, Թորոսի ակնարկ մ՚ընելով և առանձին սենեակ մը հրաւիրելով ու երիտասարդը ցցնելով՝

—Ա՛հա, Իշխանդ, ըսաւ, սա երիտասարդը հիմա նոր կը հասնի Կիլիկիայէ, ես չ՚եմ կարծեր թէ գանուի մէկը որ ասոր չափ լաւ ձանչէ այդ երկրին զանազան կողմերը և վիճակը. թէ որ ընդունելիք տեղեկութեանց վրայ ուզէք գարձեալ ամե՛ն վտանգաց դիմագրաւել և երթալ չ՚եմ կարծեր թէ ասկից քաջ՝ ասկից լաւ և ասկից հաւատարիմ առաջնորդ մը կարենաք գտնել։

Թորոս այս խօսքերը լսելուն, ուշի ուշով տղան կը դիտէր, որու բայ ձակատին վրայ անվեհերութիւն դրոշմած էր և իր նայուածքը կը զգուցեր թէ մարդիկ՝ տարերք և մահ գիտեր արհամարհել։

—Անունդ ի՞նչ է բարեկամ, հարցուց Թորոս։

—Սարգիս Ծառայ, ըսաւ տղան ձեռքը իր լայն կուրծքին վրայ դնելով։

—Ի՞նչչափ ժամանակ է որ Կիլիկիոյ սփոիւռքը թողիր։

—Այս առաւօտ։

—Ի՞նչ նաւով էիր։

—Մեր նաւով։

—Դու նաճ ունիս։

—Պզտի նաւ մը, ըսաւ երիտասարդը ժպիտով, վանահօր նայելով։

—Դու կը կառավարես նաւը։

—Այո՛։

—Ուրեմն ի՞նչ կարօտութիւն ունինք ուրիշի դիմելու, երբ Հայր սուրբը զքեզ կը ձանչնայ և քու քաջութիւնդ և տեղեկութիւնդ կը գովէ։

—Բայց իմ նաւուս թշնամին շատ է, Իշխան, և բոլոր ցուներս զիս խեղդելու կ՚աշխատին՝ բոլոր ծովեզրը զիս կը փնտռեն. ես ալ ճանկռելու համար հոս անցայ քանի մ՚օր։

—Զ՚ըսես որ ընկեր ունիք. ինձ ալ կը հաւատացնեն թէ զիս կը փնտռեն։

—Այո՛, քեզ ալ կը փնտռեն։

—Ի՞նչ դիտես. զիս ուսկից կը ճանչես. զըուցէ ի՞նչ որ դիտես։

—Նախ ես զքեզ կը ճանչնամ, տղայութեանս ամեն օր մէկտեղ էինք վահկայ բերդը, Թաթուլին Սարգիսն եմ. այս իրիկուն երբ վանքին դուռը տեսայ, Հայր սուրբ բան չ՚ըսած, զըուցեցի թէ Թորոս իշխանն է (մեծաւորը գլխովը նշանացի կը հաստատէր)։ Ես քանի տարի է ծովու վրայ ասպատակութիւն կ՚ընեմ, Հռոմիները իմ երեք նաւս այրեցին, ես անոնց քսանը կողոպտեցի այրեցի, ես նաւու ստակ չ՚եմ տար, բայց տասն հինգ օր մը կայ որ պահպանութիւնը սաստկացուցին. մեր ծովուն ամեն ժայռերը՝ ծակն ու ծուկը կը քննեն, կը նային, ցամաքն ալ Մամեստիոյ իշխանին զօրքերը աւելցուցին, անզգամութիւնը շատցուցին, Հայը ամեն տեղ կը հալածեն, և կը զըուցեն թէ ձեր իշխանը փախեր է բանտէն արքայական քաղաքը, ան կը փնտռեն։ Զեզ ամենքդ ալ պիտի ջարդենք։ Մեր ծերերը կ՚ըսեն թէ այսպիսի հալածանք չ՚ենք տեսեր։ Ուր որ երկայն հասակ՝ սև աչուր՝ սև ընքուր երիտասարդ կը տեսնեն կը կապեն Մամեստիա կը տանին. մեր լեռներն ալ այդպիսի մարդ շատ. մինչև հիմա քսան երեսուն մը տարին։ Թէ որ մէկ ոտք կոխես, Աստուած վկայ ամենքը ոտք պիտի ելլեն։ Բայց ծովեզրին պահպանութիւնը խիստ է։

—Ըսել է որ դու ալ կը վախճս, Սարգիս։

—Աստուած չ՚ընէ, Իշխան, որ ես բանէ մը վախեմ, հիմա հըրաման ըրէ Տարսոնի գետն ի վեր շտկեմ պզտի նաւս, աս մարմինը (կուրծքին մեծաձայն հարուած մը տալով) մէկ անգամ միայն պիտի մեռնի։

—Լաւ, ըսաւ Թորոս գոհութեան ժպիտով և ուսին պզտի հարուած մը տալով. կը տեսնեմ թէ քաջ ես, քու նաւդ պիտի տանի զիս Կիլիկիա։

—Հէ՛... հիմա սկսեցի վախնալ ըսաւ երիտասարդը քայլ մը հետ առնելով և մտածելով։ Դիշերները մթնելէն երեք ժամ առաջ մը հոս առնելով և մտածելով։ Դիշերները մթնելէն երեք ժամ առաջ մը հոս առնելով և մտածելով։ Դիշերները մթնելէն երեք ժամ առաջ մը հոս արևմտեան հով մը կը փչէ, կրնանք Ամանուսի և Կորիկոսի մէջ հաղար ծոցերուն մէկը խոյանալ և մտնել, մէկ մը ցամաք որ ելլէ ձակիլ հալածել։ Ես հինգ տղայ ունիմ, մէկը տասն մարդ կ՚արժէ, Բարկէնը տեսայ, տասն մարդ ալ այն կ՚արժէ. ծերացեր է՝ բայց ամեն շինած է. մենք եօթն հոգի կրնանք այդ լերան ժայռերու վրայ ելնել և Աստուծով կը հասնինք։ Այն օր Սև ձանրորդութիւնն ընել և Աստուծով կը հասնինք։ Այն օր Սև լեռները հարսնիք կը լինի։

Սարգիս իր անվեհեր արիութիւնը դատ ատ վերջն խօսքերուն հետ. և աչք թևը դօտիին մէջ դրած կ՚սպասէր, բայց Թորոս լուռն հետ. և աչք թևը դօտիին մէջ դրած կ՚սպասէր, բայց Թորոս լուռն էր հիմա որ կը մտածէր։ Յայտնի է թէ իրեն համար չէր մտածէ

—Ինչո՞ւ համար հիմա ձանրայ չ՚ելլենք մենք ալ միասին:

—Պատրաստութիւնը՝ Իշխան, ոչ քեզի և ոչ ինձի համար է, ըսաւ Սարգիս դանդաղելով. ես այնպէս կարծեմ թէ դու չ՚ես ուզեր այդ ծերը և այդ . . . . պատանին՝ որ քեզ հետ այս իրիկուն լեռնէն իջաւ՝ հոս թողուլ ուսախ անոնց համար գոնէ երկու ջորի պէտք է ձարել. քիչ մը ձանբու պաշար ժայռերու մէջ տեղ տեղ ծածկել և մէկ քանի տղայ հոն ձգել որպէս զի որոշեալ գիշերին ու ժամուն կրակ վառելով մեզի ուղեցոյց լինին:

—Սպրիս, Սարգիս, գնա՛ ուրեմն և պատրաստութիւններդ տես: Կարելի է սակի պէտք ունենաս. ահա ըսաւ՝ ու քսակը մը իրեն երկընցուց:

—Սարգիս ետ քաշուելով՝

—Ներէ Իշխան, ես փառք Աստուծոյ հարուստ եմ քանի որ ծովուն վերայ Հոռոմի նաւ կը պտըտի և ես ալ կը պտըտիմ, սակի նեղութիւն չ՚եմ գիտեր թ՚նչ է: Ուրիշ ազգի՝ Աստուած վկայ՝ դպած չ՚ունիմ, անոնք մեզի թ՚նչ ըրին և ինչեր կ՚ընեն: Մնաս բարով ուրեմն, ըսաւ և անհետ եղաւ:

Երբ Վարդապետն ու Թորոս մնացին,

—Զորս օր դեռ ձեզի հետ պիտի լինիմք, ըսաւ Թորոս:

—Երանի՛ թէ աւելի երկայն ժամանակ դԶեզ հիւր ունենայի, պատասխանեց վանահայրն, բայց կ՚երևայ թէ այս օրերս հոս ալ նաև իրենց չարութիւնը աւելցուցեր են Հոռոմք, վասն զի սկսեր են թշնամական հոգի ցուցնել և նեղութեան տալ Էֆքօշեա մեր ազգացոց. ամեն կողմ հալածանք մեր անտէրունչ ազգին վրայ կը տեսնայ, Աստուած մեր աղաչանաց լսէր և փրկութեան դրօշակը տայ ան ձեռքին որ իր ընտրեալն է արդէն, տայ իրեն զօրութիւն և յաջողութիւն իր գործը ի գլուխ հանելու:

Այս է ահա մեր ցերեկուան ու գիշերուան աղօթքը, երանի՛ թէ մեր ձայնը ընդունելի լինէր:

—Հայր սուրբ, թէ որ ձեր ցցուած նաւավարին և ձեր հիւրընկալութեան հատատ է աղօթքը՝ մեր ամեն գործը պէտք է յաջողի երթայ: Ա՛ս երիտասարդը որ յիշեցի՝ իմ տղայութեանս ընկեր՝ երբ անունը տուաւ, շատ քաջ և սրտմիտ տղայ կ՚երևայ, ես շատ ընդհակառակ եմ ձեզի:

—Մենք ձեզի ընդհակառակ պէտք է լինինք Ազգ և եկեղեցի երբ յաջողիք մեծ գործը ի գլուխ հանել. քանի որ ձեր հայրը Լեռն և դուք գերի եղաք, ալ Յունաց լըբութեան չափը անցաւ ամեն տեղ, ամեն հարստահարութեանց՝ ամեն բռնութեանց՝ ամեն նախատանաց ենթակայ եղաւ մեր ազգը. մեր եկեղեցին՝ մեր խաչն ու աւետարան կը հայհոյին, չի կրցանք հասկընել այս ամբարտաւան ազգին թէ խաչ և աւետարան մի և նոյնն է ամեն քրիստոնէի համար. ՏԷրն ինք այդ ընէ մեր տառապեալ Ազգին. քանի անգամ աղերսագիր ըրինք կաթողիկոսին որ գոնէ Լամբրոնի իշխանաց ձեռք կայսեր խնդիրք անէ որ զմեզ չի չարչարեն. բայց Կիպրոս ճար, կայսր ուր. Լամբրոնի իշխանքն ալ կէս հոռոմցած. թէ որ կաթողիկոսն իրենց ազգակից չը լինէր մինչև հիմա բոլորովին Հոռոմ եղած էին: Դարձեալ կ՚ըսեմ, Աստուած քու սուրդ հատու ընէ, Իշխան:

Աս խօսքերուն վրայ եղան, Թորոս ամեն բան եւփիմի հաղորդեց, ամեն վանդ աչքին առջև դրաւ, որ հանգարտ մտիկ ընելէն վերջ՝

—Քու այդ Սարգիսդ շատ լաւ տղայ մի է, ըսաւ ծիծաղելով, թէ որ Աստուած յաջողէ մեր ձեռնարկութիւնը՝ գերագոյն ծովապետ մը ունինք: Հիմա ես օրերը պիտի համրեմ. ուրբաթ առտու հոս է Սարգիս, նոյն իրիկուն ձանբայ կ՚ելլենք:

Եւ այսպէս պատրաստ ամեն վանդի այս դիւցազն կինը անհամբեր կ՚սպասէր ուրբաթին, և ամեն երեկոյ կ՚առնուր իր ծեր Բաբկէնը կ՚ի՛ջնէր ծովեզերը տեսնելու թէ նաւը եկած էր, և սրտնեղ՝ վանք կը դառնար մուխուն անօգուտ սպասելէն վերջ:

Երկրորդ ուրբաթ մը եկաւ և Թորոս անգամ կ՚պլպլէր՝ թէպէտ երեսէն բան մը չ՚էր իմացներ. Եւփիմ՝ այդ ջղային կազմուածքը՝ գաղտուկ արցունք կը թափէր, այնչափ իրեն նեղ կուգար կզզին, և Թորոսի անտարբերութեան դէմ կը դանգատէր, որ ղինք հանգարտեցնելու կը նայէր, և համբերութիւն սորվիլ կը յորդորէր: Ուրիշ ձար մը կը մտածէր այս երկրորդ բանաէն ազատելու և Կոստանդինն՝ նաւու մը լսօք կ՚ընէր որ Անտիոք պիտի երթար, և կը համոզէր թէ ապահով միմիայն ձանբան այն էր Սև երթալ, և կը համոզէր թէ ապահով միմիայն ձանբան այն էր Սև լեռն երթալու և երբ աս խորհուրդին վրայ էին՝ Բաբկէն ներս մտաւ շունչը հատած.

—Ա՛հա՛ւ, Իշխանիկս, Սարգիսն եկաւ, հիմա հոս կը հասնի։

—Ի՛նչ վիճակի մէջ, հարցուց Եւփիմէ։

—Լա՛ւ, շատ լա՛ւ վիճակի մէջ, Տիրուհիս, պատասխանեց Բարկէն։

Եւ իրօք Սարգսին սև երեսը երևեցաւ, բայց աչքերն ուրախութեան հուր կը ցոլացնէին. գեռ մութը չ'էր կոխած։

—Կը ներես, Իշխան, ըսաւ, բայց կիսկատար գործ չ'եմ սիրեր, ամեն բան պատրաստ ընելու համար պէտք էր անձամբ վահկայ մօտերն երթալ, և ձեր ապահովութեան համար օգնական խումբ մը բերել։ Բոլոր լեռը ոտք հանել կրնայի թէ որ անունդ տայի, բայց խոհեմութիւն չի սեպեցի տասն երկու տղաք առի ընտրանօք, ով Լուսաւորիչ կը սիրէ՝ չի հարցնէ թէղ հետս գայ ըսելով, ամենքը լեռներուն վրայ ցրուեցի՝ երթոց սպասելու տեղերը ցցուցի, պաշար գրատ ամեն բան գետեղեցի, գուք միայն պակաս էք, թէ որ կ'ուզէք աս գիշեր կ'երթանք, օդն ալ յաջող է, փառք Աստուծոյ։

Ո՛ւր, ըսաւ վանահայրը, այսպէս անօթի ծարաւ, անկարելի է։ Մէկէն սեղան դնել տուաւ, ընթրիքը շուտ մը պատրաստեցին, բայց յաջողութեան համար գաւաթը պարպեցին, եռքը իջան եկեղեցին «Տէր Ողորմեան» ըսին և մութը կոխեր էր երբ Եւփիմէ ջորին հեծած՝ Բարկէն քովէն անբաժանելի եղան և իջան ծովեզերը. նաւը արդէն պատրաստ էր՝ և երբ ամենքը մտան՝ իր բոլոր առագաստները պարզեց և յաջողակ հողմով սկսաւ սուրալ ծովուն վրայ, ձայն չի կար ամենևին բայ ի Սարգսի ձայնէն որ երբեմն համառօտ հրամաններ կուտար ղեկին գլուխը նստած։

Այս լռութիւնը շատերուն քունը բերաւ, արդէն Եւփիմէ հանդիստ և ուրախ գլուխը Թորոսին կուրծքը դրած շատոնց քուն էր, և Կիպրոսի եղերքը կ'անհետանային, երբ Սարգիս քովինին՝ որ անշշունչ նստած էր՝ ըսաւ.

—Հայր սուրբ, գուք սա ղեկը գործածէ ես պէտք է նաւուն ծայրը երթամ և զննեմ։

Եւ իրօք իր սուր աչքերով, որ մութն ալ ամեն բան կը տեսնէին, իր բոլոր նաւատեաց և կոստանդնի օգնութեամբ անցուց նաւուն քիթը տապալաձև երկաթ մը և եկաւ իր տեղը նստաւ։

—Հիմա Թող Թշնամի նաւն ալ գայ, ըսաւ ղեկավարին, ղոր

«Հայր սուրբ» կ'անուանէր, կ'իջեցնեմ մէկ հարուածով ծովուն տակ։

—Զի գայ Թող, որդեակ Սարգիս, պատասխանեց նա, և խաղաղութեամբ ցամաք մէկ մը գտնէինք։

Թորոս որ աս խօսքերը կը լսէր և անշարժութեան դատապարտուած էր Եւփիմէի պատճառաւ, ալ չի կրցաւ համբերել և կամաց մը ձայնեց։

—Սարգիս, ո՞վ է Հայր սուրբը։

—Վանահայրը, Իշխան։

—Մեր հեռն է։

—Այո՛ Իշխան, պատասխանեց վարդապետը, ես ալ ծովու լեզուէն կը հասկնամ քիչ մը, քսանը հինգ տարի է նաւավար էի, և ձեզի օգտակար լինելու յուսով մէկտեղ եկայ։

—Շնորհակալ եմ։ Բայց ի՞նչ է գործիքդ, Սարգիս, որ թըշնամի նաւը մէկ հարուածով ծովուն տակ կ'իջեցնէ։

—Նորահաս ցռուկ մ'է, Իշխան, Անտաքցի Աւետիք վարպետի շինած, մինչև հիմա տասը Հոռմի նաւ իջեցուցի անով։ Քամին լաւ է, արդէն կէս ճանբան առինք, քիչ մ'ալ ասանկ երթանք կ'իջեցնեմ այս առագաստները, սև առագաստ միայն կը թողում։

—Լա՛ւ, չի տեսնուելու համար Թշնամին. լաւ խելք է։

Դարձեալ լուռ և յաջող գնացին. ձայն չի կար նաւուն մէջ, Թորոս լուռ կը դիտէր. երբ յանկարծ Սարգիս ցաթկեց տեղայ, «Ցըղաք ըսաւ, պատրաստ կեցէք, նաւ մը կը տեսնեմ մեր ճանբուն վրայ, իջուցէք հիմա առագաստները». վայրկեանին առագաստները իջան, հազիւ թէ ճախարակաց ձայները կը լսուէին, այնչափ խըռնամքով եղոտած էին։ Թորոս կը նայէր, բայց բան մը չ'էր տեսնէր, ինքնիրեն կ'ըսէր թէ պէտք է գիշերային Թռչնոյ մը աչք ունենալ Սարգսին պէս մութուն տեսնելու համար։ Անցան նաւը հեռուանց և շարունակեցին իրենց ճանբան անվտանգ։ Կէս գիշերն անցեր էր, առաւօտեան երկու ժամ հազիւ կար, և ահա Սարգիս «Փառք Աստուծոյ» գոչեց. և երբ Թորոս պատճառն իմանալ ուզեց,

—Կը տեսնե՞ս սա լոյսը դիմացը, որ մերթ կը տատանի՝ խաչաձև կը շինէ, ահա մեր նշանն է. Թշնամի չի կայ և մենք ալ մօտ ենք ցամաքին ըսաւ։ Հա՛ տղաք, Թիակները օդնութեան, բացէք բոլոր առագաստները, ալ ո՞վ որ կ'ուզէ Թող գայ։ Ամենքը արթնցան.

լուսնոյ վերջին ճառագայթը ազօտ լոյս մը ձգեց Ծովուն վրայ. հազիւ թէ կէս ժամ վերջը նաւը կը խրէր աւազին վրայ և վեց կոտրովի տղաք գային կը շրջապատէին Յահերը ձեռքերնին. Սարգիս նաւուն Ծայրը կեցած «սանդուխը» ըսաւ, և սանդուխ մը դրուեցաւ նաւուն։

—Իշխան, ըսաւ Սարգիս, ահա հալցդ երկիրը, քեզ կը վայլէ նախ ոտք դնել հոս։

Յանուն Աստուծոյ ամենակարողի, ըսաւ Թորոս և ցաթկեց դուրս, ու Եւփիմի՝ որ սանդուխին գլուխն էր՝ ձեռք տուաւ և վար առաւ։

Հոն ան փոքրիկ խմբակը Կոստանդնի առաջնորդութեամբ աւազին վրայ ձեռքերնին երկինք տարածելով հաւատարմութեան երդում ըրին «յանուն Աստուծոյ» մեռնիլ հայութեան և Թորոսի համար։

Նաւը քանի մը վայրկեան մէջ իւր ամէն կարասիքէն մերկացաւ, առագաստ՝ դէկ՝ զէնք պաշար վերի անելանելի մացառներուն և ժայռերուն մէջ ծածկուեցան, և երբ ամէն բան անհետացաւ, Սարգիս հրամցուց խորը լերան ստորոտը ջուրին գլուխը իւր հիւրերը նախաճաշիկ ընելու։ Պայծառ և աննման աղբիւր մ՚էր որ դեռևին կը բղխէր, ամէն գար՝ ամէն լեզու գեղեցիկ աչքի մը կը նմանցնէին զայն, որ հանգարտ և լայնաբերան՝ վճիտ ջուր մը կը պոռթկար։

—Բայց նախ, Բաբկէն հեյրիկ, ըսաւ Սարգիս, քու տղաքդ ահա հոս են։ Երկու կորովի տղաք Բաբկէնի ձեռքերուն պլլուեցան, և Բաբկէն հաւատարիմ ասիական սովորութեան՝ հայրական սէրը խեղդել կը ջանար սրտին մէջ, թէպէտ ապստամբ աչքերը ուրախութեան արցունք կը թափէին։

Կրահապետական էր սեղանը. ահագին ոչխար մը խորոված իր մորթին մէջ փոսի մը խորչէն դուրս ելաւ։ Կիպրոսի գինին կուժերով առատապէս գաւաթներու մէջ կը վերերար. երբ ամէնքը կերան և յագեցան, Եւփիմ ուրախ և զուարթ Սարգսի Ծովապետին կենաց խմել առաջարկեց գինին, որ զերունք անվտանգ անցուց և բերաւ։

Երբ ելան կերակուրէն, երեք հատ չոր՝ ջրուտ ջորիներ մատուցին Հայ տղայքը, ուր Եւփիմ և վերջը Դիոնիս նստան, երրորդը Թորոսի համար էր, բայց նա մերժեց և հրամայեց ջուրի տիկեր բեռցնել և ինք սկսաւ Սարգսի առաջնորդութեամբ լեռն ի վեր շահատակել։ Եահէն կ՚ուզար Բաբկէն շատ անգամ ձեռքը Եւփիմի ջորւոյն գլուխը բռնած, վերջը Դիոնիս, ետքը մեր բոլոր գինուոր և նաւաստի տղոց խումբը, և էն վերջը Կոստանդին իր հասակաւը և ալեօք վարդապետին հետ։

Սելևկիոյ և Կորիկոսի մէջտեղ հրուանդանի մը քով կ՚իյնար այս կէտը ուր մեր կարաւանը կեսպուեցաւ, և իրաւունք ունէին հինները անուանելու զնա Կոթաչխոն գեղեցիկ վանն ղէ ժայռն ու անտառ՝ ծովն ու վտակ՝ երկինքն ու երկիր հոս գեղեցկութեամբ զարդարած էին. կէտ մը՝ ուր ժայռ ու մացառ իրարու հետ կը կռուէին՝ ուր ոտից կռուան մը գտնել միշտ դժուարին և երբեմն անհնար կը լինէր, մանաւանդ մեր ճամբորդներուն համար որ ժայռերու ընկերութիւնը աւելի կը վերադասէին քան մարդկանց թշնամութիւնը։ Այդ Տորոսի գօտիները երբեմն յանկարծ կը պատռէին տեղ տալու համար հեղեղատի մը. երբեմն բոլորակ թատրոն մը կը ձեւանայէին ծով մը շինելու համար ծովուն, և երբեմն ճանապարհորդք լերան գագաթը ելնել կը պարտաւորէին՝ երբեմն ծովեզերք իջնել. եւ և էջ միշտ վտանգաւոր՝ միշտ տաժանելի սոսկումի կը բերէր նայողին, բայց մեր կարաւանը անխօս անշշունչ կը շարունակէր իր ճանբան սպառնալից, վասն զի նիզակներուն շողիւնը, վահաններու՝ սուրերու և տալապարանոցներու շառաչը, և այդ հաստատ երիտասարդաց քայլերը այդ փոքրիկ և ընտրեալ խմբին անընկճելի լինելուն վկայքն էին։

Երեք ժամու չափ ճանբայ հազիւ առած էին և Սարգիս իր սուր աչքերը կը նետէր քննելու համար լերանց գագաթները, երբ տեսաւ որ ճերմակ դրօշակ մը կը ծածանէր, մատնանիշ ցուցնելով զայն Թորոսի՝ «Յաջող և բաց է ճամբանիս, Իշխան, ըսաւ, ահա նշանը»։ Քիչ մը վերջը սպառազէն երիտասարդ մը խառնուեցաւ խմբին, իմացնելով թէ վտանգ չի կար, և ոչ ոք տեսած չէր։

—Կորիկոսի պահապանք իրենք կ՚ընէին, հարցուց Սարգիս։

Մեռելի պէս դռները գոցեր նստեր էին, բերդի շուրջը բնակող գիւղացիք ալ չէին գիտեր թէ բերդապահք աւելի ինքնակալ են իրենց թէ աւազակք։

Եւ իրօք քիչ մը առաջ երբ եկան մերայինք՝ Կորիկոսի կրկին բերդերն՝ ցամաքային ու ծովային երեւեցան. ցամաքի բերդը իր բարձր քառակուսի և բոլորշի աշտարակներով՝ երկաթապատ դրռնեւ լով պզտի քաղքի մը երեւոյթն ունէր. անոր դիմացը՝ մօտը՝ ծո վին մէջ բերդապատ կղզի մը արհեստական լեզուով մը միւսին հետ իրրեւ կամրջով միացած կ'երեւար. հոս Սարգիս կեցաւ և սկսաւ մտածել։

—Ի՞նչ կը մտածես, ըսաւ Թորոս։

—Կը տեսնես, Իշխան, ձանբան երկուք է, մէկը կարճ՝ որ բերդին ստորոտէն կ'անցնի, միւսը երկայն՝ և ուր լերան վրայէն պէտք է պարսիլ։

—Երկայն ձամբէն երթանք. քար մը՝ նետ մը կրնայ մեր մէջ ջէն մէկուն կեանքը վտանգի դնել, անօգուտ քաջութիւնը մեղք է։

—Երկայն ձամբան բռնեցին և գերեզմաններու մէջէ կ'անցնէին. ի՜նչ անհատնում և քարակոփ գերեզմաններ, և ի՜նչ բարբարոս ու սեղանակապուտ ժողովուրդք անցեր էին հոնկից. գերեզման մը չէ կար որու կափարիչը խախտած չ'լինէր, կային գերեզմանք չորս բարձր սիւներու վրայ հաստատուած բայց ամբարիշտ և գերեզմանակրկիա ձեռքը հոն ալ հասեր էր և ահագին միակաւոր երեք կանգուն և աւելի մեծ կափարիչը խախտեր էր, ամէնն ու ոսկորը ցրուեր էր։ Երկայն մղոններ աս տեսարանը կը շարունակուէր և մեր ձամբորդք իրենց ձանբան կ'երթային, երբ յանկարծ վարէն վայրու ձայն լսուեցաւ և ամենքը կանգ առին. բերդապահ մը Կորիկոսէն եկած պատրոնոք կը դիմէր խումբէն առաջ անցնելու վարի ձանբով՝ երբ նետի հարուած մը Կոստանդնին ազիզէն եկած խեղճ մարդը յերկիր կործանեց, երկրորդ նետ մը անշուշտ մահացու հարուածով մարդուն հոգին պիտի հանէր, երբ Թորոս բարձր ձայնով՝

—Մի՛, բաւ է, կանչեց։

Կեցաւ Կոստանդին՝ «Թէ որ, կ'ըսէր ինքնիրեն մրմռալով, մենք այսպէս պիտի պատերազմինք աս անիծած ազգին հետ, վերջը շատ կը զղջամք, և անոնք կ'ուտեն կը հատցնեն մեզ։»

Շարունակեցին իրենց ձանբան։ Կէս օրուան արեւը իր կրակը կը թափէր. Թորոս եւս գարձաւ Նէփիմէի երեսները տեսաւ կարմրած տաքէն և յոգնութենէն. վար նայեցաւ տեսաւ գեղեցիկ դղեակ մը

որուն պարիսպները դէպ ի ծով կը խոնարհէին, փորձութիւն մը եկաւ հիւրընկալութիւն խնդրելու հոն, բայց միշտ շրջահայեաց և խոհեմ՝

—Սարգիս, ըսաւ, մենք ճը դադար պիտի առնունք։

—Հոս, սա դղեկին մէջ որ առջևնիս է, տես, ահա մեր ձերմակ դրօշակը կը ծածանի։

Եւ իրօք զարմանքով տեսաւ Թորոս որ դրօշակ մը կը ծածանէր։

—Մարդ չէ կայ ուրեմն հոդ։

—Ոչ տէր իմ, լքեալ դղեակ մ'է, Այսաշ կ'անուանեն զայդ Տաճիկք, մենք ձերմակ բերդ կ'ըսենք, և երբ ծովեզերը ապահով է մեղի համար հոս կ'ուզանք Հռոմները կատղեցնելու համար քանի մը ժամ կ'անցընենք, քանի մը նետ կ'ուղարկենք իրարու ի նշան սիրոյ և բարեկամութեան՝ որ մեր երկու ազգաց մէջ միշտ յարատեւ եղած է և պիտի լինի. անկից կը մտնենք նաւ և կը հեռանանք։

Եւ աս ըսելով կը մտնէին դղեկէն ներս որու մուտքը միայն կար և դուռը արդէն յարութիւն առեր էր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՏՈՐՈՍ

Սոսկալի եղէջները՝ արեւուն կիզանուտ ճառագայթները զամենքը վաստակաբեկ ըրած էին, ուստի ամենը շատ գոհութեամբ ընդունեցան այս դադարը՝ զոր պատրաստած էր իրենց համար Սարգիս. մանն խորհածը ախորժանօք կերան, և զարմանքով կը նայէին Եւփիմէի որ հազիւ թէ պզտի յոգնութիւն մը առած Թորոսին հետ դղեակը կը պտըտէր, որ իրօք այն ժամանակի շէնքերուն վայելուչներէն մէկն կրնար համարուիլ ընդարձակ սենեակներով, դեղեցիկ մատուռով, ջրի կապարեայ ադուզայներով և ընդարձակ պարտէզով՝ ուր խառն ի խուռն անուռացեր և վայրենացեր էին կիտրոնիք՝ ձիթենիք՝ թթենիք՝ բրաբեանք և դափնիք։ Սարգիս, որ

կիսկատար գործ չ՚էր ըներ, ձանբուն վրայ երկու պահապան դրած՝ կէս ժամը մէյ մը զանոնք կը փոխէր, և հրաման ըրած էր ոչ ոք չ՚անցընել, իսկ եթէ մէկը համարձակէր հրամանը ոանակոխել առանց սպասելու փողոտել, և այս զինուորական ձշդութիւնը կը տեսնէր Թորոս ու գոհ կը լինէր խորհրդածելով թէ լեռնցի ազատ ժողովրդեան այս կամաւոր հնազանդութիւնը զինուորական կանոնաց հայրենի ազատութեան երաշխաւոր էր։

Դիոնիս նոյն միջոցին, իր անցելոյն դիտողութիւնները կ՚ընէր. ուսման նիւթ էր իրեն համալ՝ թէ շինքը ո՞ր գարու, ո՞ր ժամանակի կը վերաբերէր, թէ մատուռը երբեմն թերափներու տաճար եղած՝ և եաքը քրիստոնէ կրօնքին պատկանեալ էր։ Բարկէն իր ազգ հետ նստած՝ կնոջը՝ ազգկանց և պզտի մանչուն վրայ տեղեկութիւն կ՚առնուր, իր գերութենէն վերջը անոնց քաշած նեղութեանց և հալածանաց պատմութիւնը մոիկ կ՚ընէր, վասն զի Հոռոմք որ Ռուբինեանց իշխանութիւնը կործանել յաջողած էին՝ երբէք ի Տաճկաց՝ ի Լատինաց և ի Քրդաց բռնութենէն չէին կրցեր պահպանել երկիրը որ կատարեալ անիշխանութեան մէջ՝ կը հեծէր աւուր առաջին բռնաւորին։ Անդին խումբ մը հինդ վեց երիտասարդներու, Թորոսի և հեռւաբար Եւփիմեայ վրայ կը խօսէին կամաց և դալատագոլի. մէկ երկուքը կը կարծէին թէ Յոյն պատանի մ՚էր որ ընկերացեր էր Իշխանին, իսկ աւելի խորագէտները կը պնդէին թէ կին էր, իսկ ուրիշներ՝ թէ Թորոսի կինն էր, և իրենց անժխտելի փաստ կը յուցնէին Բարկէնի պէս խիստ մարդու մը անոր բռնած պատիւն ու պատկառանքը, և թէ ի՞նչպէս անոր կապոյը Բարկէն զգուշութեամբ իր ուսէն չէր բաժներ։ Կային նաև քանի մը երիտասարդք ի նաւատետաց որ բոլոր գիշերն անքուն՝ ծառերու շուքին տակ գալարի վրայ ահապնաձայն կը խորդային՝ ծովուն վրայէն փչած կենդանացուցիչ հովին տուած քթերնին։

Իսկ Թորոս՝ Սարգսին, Կոստանդնին և Վարդապետին հետ կը խորհրդակցեր իրենց հետևելիք ձանբուն վրայ. և որոշեցին Սարգսի խորհրդեան հետևիլ գիշերով՝ մութն ձանբայ չ՚ընել, այլ ցերեկուան և արևու լուսով շարունակել ընթացքը. ուսմի առանց ուշանալու ելան ձանբայ, երբ արևը սկսեր էր դեռ նոր խոնարհիլ ձայն տուին տղոց, խումբը կազմեցին կանոնով՝ կազդուրեալ և

ոգևորեալ ձանբայ ընկան։ Թէպէտ ժայռ և անտառ պակաս չ՚էր, բայց ոչ երբէք անցեալին կրնար համեմատիլ, առուակներ՝ որ բլուրները կը կտրէին, անտառներ՝ որ երբեմն դեպ ի ծով կ՚երկննային. գեղեցիկ ծովափնեայ աւազուտ մը իրենց ձանբան կը կազմէին։ Լամոսի բերդին հեռուանց շրջան մը տուին, որու սակաւաթիւ բերդապահք ոչ թշնամութեան ցոյց և ոչ կենաց նշան տուին, և մեր խումբը մտաւ թաւ անտառի մը մէջ ուր գարաւոր ծառեր իրենց հովանին խաղաղ լռութեան մը վրայ կը տարածէին։ Սրընթաց վտակ մը անտառը կը կտրէր և երբ ջրին ընթացքին հետևելով կարաւանը վեր ելաւ բլուրին գլուխը՝ նռնենեաց անտառ մը զանի կը պատէր և Սարգսին պահապանը իր ձերմակ դրօշակը ձեռքը զերենք գիմաւորեց։

Ան գիշերը ձանբաներուն պահպաններ դրուելէն վերջ հանգիստ քնացան պայծառ երկնքի տակ և առաւօտուն կանուխ կ՚ելլէին ձանբայ, և դեռ արևը չ՚ելած Պոմպէուպօլսոյ աւերակներն և ծովը յաջ կողմը ձգելով, Տորոսի գօրներէն անբաժան կը ջանային անցնիլ անծանօթ Լամբրոնի բերդին քովէն ուր գիտէին թէ լաւ հսկողութիւն և պահպանութիւն կար ձանապարհայ։ Ուսմի մեր Սարգիսն շատ անհանգիստ էր, և իր սուր աչքերը լերանց գագաթները կը քննէին թէ պիտի տեսնէր իր ձերմակ դրօշակի ծածանումը, բայց ժամը երեկոյ կը լինէր և նշան չի կար, հոն ժամադրութեան տեղը իր պահապանը չ՚էր երևար, ուսմի կեցուց կարաւանը վազեց դեպ ի քարակերտի մը, և քանի մը քար խախտելէն վերջ գտաւ իր ծածուկ պաշարները, պակսիմաթ՝ պանիր՝ կարագ՝ ձիթապտուղ, վասն զի թշնամանդն մօտութիւնը չ՚էր ներեր կրակ վառել բայց դարձեալ առանց յայտնի ընելու իր մեծ անհանգստութիւնը ամենուն՝ յորդորեց ուտել և կշտանալ, վասն զի կ՚ըսեր տաժանելի է ձանբաս նիս. և Թորոսի ու Կոստանդնի միայն յայտնեց թէ իր պահապանին անյայտանալը վտանգաւոր դադարութիւն մ՚էր նոյն գիշերուան համար։

Այս յայտնութեան վրայ, Թորոս առանց Կոստանդնի ժամանակ տալու, որու յախուռն և յանդուգն քաջութիւնը լաւ կշռեր էր, երկայն հարցաքննութեան մը սկսաւ։

—Լամբրոնի բերդը հոսկից ի՞նչչափ կը տևէ։

—Ժամ մը։

—Ի՞նչչափ զինուոր կարծես թէ ունին։

—Գառասուն չիսուն, բայց ընտրանօք մարդիկ։

—Հոսկից ինչուան Կիլկիոյ կիլճերը ի՞նչչափ կը տևէ։

—Չորս ժամ։

—Հոն դարձեալ բերդք և պահակազօրք միշտ կը գտնուի՞ն։

—Մի՛շտ։

—Յո՞յն են զօրքերը թէ Հայ։

—Խառնակ, կէս կէս։

—Հոսկից Տարսոն ի՞նչչափ կը քշէ։

—Մ՚եր ընթացքով. չորս ժամ։

—Աւտանա։

—Գրեթէ նոյնչափ։

—Աւտանայէ Միսիս։

—Նոյնչափ։

—Բաւական է, ըսաւ Թորոս, շարունակենք մեր ճանբան։ Թըշ-նամին թէ որ գայ թո՛ղ այս լեռներուն վրայ մեզ գտնէ։ Դու Սարգիս նայէ որ միշտ ճանբուն բարձրերը բռնես՝ միշտ ապառաժուտը, նայէ որ անցնինք մէյ մը սա Լամբրոնի բերդը հեռուէն։

—Կայ մէկ ճանբայ մը բայց երեք ժամ ճանբանիս կը հեռացնէ։

—Չի ղըուչիս, այն ճանբէն գնա ուրեմն։

—Բայց երեք ժամ, ըսաւ Կոստանդին։

—Այ՛ո, երեք ժամ, բայց Լամբրոնի բնիկ և ընդոծին Հայոց հետ կռուիլ իրենց լեռներուն մէջ չիմարութիւն է, պատասխանեց Թորոս, այնպիսի ձևով մը որ պատասխան չէր վերցներ։

—Ուստի մեր խոսմբը բռնեց ափափայից ճանբան և մութ տեղ մը կը մագլցէին. Սարգիս առջևէն, Թորոս ետևէն, և վարդա-պետը վեղարը գլուխը Թորոսի անմիջապէս քովէն. սուրերը կարճ բռնուած էին՝ որպէս զի ձայն չի հանեն ժայռերու զարնուելով. գէնքերը չի փայլելու համար լաթերով ծածկուած էին, և այսպէս ժամ մը շարունակեցին իրենց ընթացքը, և սա միջոցիս Թորոս զվարդապետ կը կարդացնէր։

—Սարգիս որ առջևէն կը քալեր ետ դարձաւ և Թորոսին կա-տաղ ձայնով մը ըսաւ.

Իշխանդ, հոս Թշնամին հեռու չ՚է, վասն զի սա ճանբուն վրայ պատնիշապէս քարեր դիղեր են. կարելի է կռնակը քանի մը հոգի պահապան կան. ի՞նչ ընենք, յարձակի՞նք։

—Կա՛յ, ըսաւ Թորոս, լռութի՛ւն. չորս հատ նիզակաւոր կորո-վինեերէն բեր պատնէշին տակ կենան, ո՛վ որ գայ՝ անխնայ զարնեն. սա Կոստանդինն ալ և մենք երեքնիս բաւական ենք սա ժայռերէն շրջան մը ընելով անոնց կռնակը անցնելու և վրանին իյնալու. բայց անշշունչ, առանց ձայնի։ Ես ինք մօտենալով Բաբկէնի, Եւփիմէն դարձեալ իրեն յանձնեց պատսպարել վահանաւ, որ նետ մը՝ քար մը՝ վտանգ չի հանէ։ Սկսաւ իր երկու ընկերներով աղեղնաձև շըր-ջան մը ընել անելանելի ժայռերուն վրայէն, որոնց անդունդներուն վտանգը չ՚էր երևար գիշեր ատեն բայց կրնար երևակայուիլ շատ ծանր կը շարժէին մեր երեք անձինք զի երբեմն պէտք կը լինէր ոտք մը ձեռք մը փոխելու համար հինգ տասը վայրկեան կենալ և խարխաբել. վերջապէս ճանբուն վրայ եկան. հոն թէպէտ Կոստան-դին կ՚ուզէր առաջ անցնիլ բայց Թորոս անոր յանդգնութենէն կասկածելով լինք առաջ անցաւ, և երբ մօտեցաւ՝ նշմարեց չորս հոգի որ պատնէշին քիչ մը ասդին պառկեր էին և անոր վրատահա-յած հանգիստ քուն կը լինէին։

Մերկ սուրը ձեռքը՝ Թորոս «Պահապանք, կանչեց, թէ որ շարժիք կը մեռնիք» ու երբ մարդիկն քունէ արթնցած եղնելու փորձ մը կ՚ընէին «Մի՛ շարժիք ապա թէ ոչ կը մեռնիք» որոտաց. մարդիկը անշարժ մնացին այս սպառնալեաց առջև, երբ նոյն մի-ջոցին Սարգիս ու Կոստանդին զինաթափ ընելով զերենք պատնէշը հարթ յատակ կ՚ընէին. և այս գործողութիւնը այնպիսի արագու-թեամբ կը կատարուէր որ քանի մը վայրկենի մէջ մարդիկը անզէն և թևերնին կապած մեր կարաւանին հետ խաղաղ հանդարտ կը քալէին։

Լամբրոնի դղեակը հեռացեր անհետացեր էր. կարաւանը հա-սաւ լեռներու գլուխը ծառազարդ խոտաւէտ բարձրաւանդակի մը վրայ, հոն Թորոս Սարգսի հատանութիւնն առնելով յոգնութիւն մը տուաւ իր խմբին և հրամայեց իր չորս կալանաւորները բերել և ինչ որ կ՚երևակայէր՝ իմացաւ, այսինքն թէ Լամբրոնի իշխանքը և ինչ որ կ՚երևակայէր՝ իմացաւ, այսինքն թէ Լամբրոնի իշխանքը և ինչ որ կ՚երևակայէր՝ իմացաւ, այսինքն թէ հոնկից Սարգսին դրած պահապանը բռնած էին, և իմանալով թէ հոնկից

պիտի անցնէր Սև լեռնցւոց խումբ մը վարի ձանբան քաւսունը հինգ հոգւով մը պահպանել որոշած էին, իսկ վերէն, ուսկից չէին յուսար որ համարձակի մարդ հանդիպէր ձանբան խցել և չորս պահապան դնել հրամայած էին։ Պահապաններն ալ անկարելի համարելով այս օդագնաց շրջանը՝ հանգիստ և ապահով քուն եղած էին։

Ժամու մը չափ յոգնութիւն առնելէ վերջ՝ դարձեալ տաժանելի ուղեգնացութեան ընկան մեր ձանբորդները. և մկը չէր հարձակեր գանգատ մը մրքէն անցունել երբ կը տեսնէին Ռուբէնի պայազատը՝ որ անխօս հետևակ առջևէն կ՚երթար ու ոչ թէ վըտանգաց մտանակից՝ այլ դիմագրաւ կը լինէր։ Աչսպէս շարունակելով վերջապէս մտեցան Կիլիկեան Համբաւաւոր կիրճերուն՝ ուր զօրաց խումբ մը և կիսակործան բերդ մը կար, որ Թշնամեաց յարձակումն արգիլելէ աւելի անցորդաց նեղութիւն տալու պաշտօն կը վարէր։ Թորոս որ իր ձանբան կ՚ուզէր վարել խաղաղութեամբ եթէ կարելի էր՝ քան թէ անօգուտ կռուելով, պՍարգիս յուշարկեց բերդապահ աւազակին, որ քանի մը ոսկւով իրեն ձանբայ տուաւ առանց նեղելու, ի մեծ գայթակղութիւն Կոստանդնի որ կը զարմանար թէ Թորոս քաջութենէ զուրկ չ՚լինելով ի՞նչպէս յանձն կառնուր այսպիսի բանադնացութեանց մտնել։ Բայց Կոստանդին փիլիպոսի պատմութիւնը չ՚էր կարդացեր՝ և Թորոս՝ կարդացեր էր։

Վերջապէս լեռներու մէջ Հայոց դեղեր սկսան երևիլ, Սարոս գետեն վտակներուն վրայ. խստութեամբ արգիլուեցաւ մեր խմբին Թորոսի ոմ լինելն յայտնել. մինչև Վահկայ բերդն՝ արծուոյ բոյն՝ լեռներու մէջ երևցաւ. Բարկէն արտասուօք կը նայէր այն բարձանց՝ որոնց պաշտպանութեան համար այնչափ արեան թափուիլն տեսած էր, քանի՞ անգամ կեանքը վտանգի դրած, և հիմա օտարներու բնակարան եղած էր . . . ։

—Անմիջական վտանգը կարաւանին համար թէպէտ հեռացեալ կը կարծուէը, բայց պէտք էր որ Թորոս յենակէտ մ՚ունենար հրատարակուելէն առաջ, ուստի Կոստանդին՝ Բարկէն՝ Սարգիս և վարդապետը խորհրդի նստան. Եափիմ նաև ներկայ էր։ Նախ որոշուեցաւ որ Բարկէն պՆափիմ և պՊիռնիս առած անցնէր Ամանոսի հիւսիսային ծայրը ուր էր իր բնակութիւնը. Սարգիս առնուլ իր երիտասարդները՝ որոնք իրենց տունը միշտ պատրաստ պիտի դըտնէին առաջին ձայնին ժողվուելու համար հոն՝ ուր հրաման գայ յանուն Թորոսի։ Կոստանդին պիտի երթար իր քանի մը քաջակռըվելները ժողվելու և պատրաստ պիտի կենար առաջին փողն ձայնին՝ հոն՝ ուր պիտի գտնուէր Թորոս։

Այս խորհրդին վրայ Թորոս բերել տուաւ չորս կալանաւորները և հրաման տուաւ իրենց կապերը արձկել և ազատութիւն շնորհել, գարձեալ ի մեծ գայթակղութիւն Կոստանդնի. ու երբ երթալու վրայ էին գարձաւ իրենց ծանր ծանր և որոշ ձայնով սա խօսքերը ուղղեց. «Դուք որ Հայ ազգի զաւկներ էք, մարիկ ըրէք իմ խօսքերս. մտածեցէք որ ձեր եղբարց արիւնը պիտի մտնէ՛ք և անոր համար մահապարտ էք, և մեղի շատ դիւրին էր ձեզ հաւու պէս մորթել ձեր հայութիւնն է միմիայն պատճառ որ մենք ձեր ազատութեան՝ ձեր կենաց խնայեցինք. գնացէք ձեր Լամբրոնի տէրերուն բարև զրուցեցէք, և ըսէք թէ Լևոնի տղան Թորոսը տեսանք, և նա երդում կ՚ընէ յանուն Աստուծոյ ամենակարողի և սրտագիտի թէ՝ երբէք մեծութիւն՝ փառք և իշխանութիւն պիտի չ՚լինի իր գործոց նպատակը, այլ իր ազգին օգուտն ու երջանկութիւնը և եթէ հայր՝ եղբայր՝ զաւակ պիտի համարի ամեն Հայ որ նոյն հոգւով շարժի. իմացա՛ք, հասկացա՛ք ըսածներս, պիտի կարենա՛ք կրկնել։»

Իսկ մարդիկը սա խօսքերուն վրայ ապուշ դարձած ելան և իրենց ձանբան գնացին, վասն զի ըստ ժամանակին սովորութեան՝ նոր էր սա վարմունքը և սա խօսակցութիւնը ոչ միայն սա խեղճ զինուորներուն համար այլ թերևս վարդապետին համար նաև՝ որ Թորոսի քով նստած էր։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍԵՒ ԼԵՌ

Այս տեսարանը կ՚անցնէր Վահկայ բերդին շրջակայքը մայտուտ բլրի մը վրայ. առաւօտը շատ հեռու չ՚էր։

—Հապա՛ ամէն մարդ իր ձանբան, ըսաւ Թորոս իր խումբին. ասկից տասն օր չ՚եղած, Աստուծով կը լսենք փողերուն ձայնը, և ամենքս ալ կը ժողվուինք։

Այս անգամ Նափիմ գոհ յանձն առած էր բաժնուիլ իր փեսէն. ուստի պագտուելէն վերջ իրեն հետ, գարձեալ անոր օգնութեամբ հեծաւ ջորւոյն վրայ Դիւնիսի ընկերութեամբ, շրջապատեալ Բաբկենէն և նորա տղոցմէն՝ շակունեցաւ դէպ ի Սև լեռը ուր առջևնէն քիչ մը հեռուանց կ՚երթային Սարգսի խումբը. քանի մը ժամուան ձանբայ հաղիւ կը բաժնէր զերենք իրենց գիւղէն։ Թորոս քիչ մը աչօք ընկերանալէն վերջը իր հարսին որ գիշերուան սատևերներուն և ծառերուն մէջ ծածկուեցաւ, շուրջը նայեցաւ որ Կոստանդին և վարդապետը միայն մնացեր էին։

Ուստի Կոստանդնին ալ բարի յաջողութիւն մաղթեց, որ իր քաջերը առաջնին ձայնին բերել խոստանալով՝ Վահկայ արևելեան կողմի ժայռերուն մէջ անհետացաւ։ Երբ երկու հոգի մնացին՝ դարձաւ վարդապետին ու ըսաւ.

—Հիմա, Հայր սուրբ, մեր երկուքին կը մնայ խնդիրը, դու՝ քու Աստրի Մեհրապօլիտ աւելի ապահով կը համարիս և անոր վրայ աւելի վստահութիւն ունիս քան թէ մեր Հայ եկեղեցականաց։

Ո՛ Իշխանդ, ըսաւ վանահայրը, իմ միտքս սխալ հասկցեր ես. ես մեր եկեղեցականաց վրայ վստահութիւն չ՚ունիմ չ՚ըսի, այլ թէ հիմա, Հռոմեները մեր վրայ կասկած ունենալով՝ շարունակ խուզարկութեան վրայ են և մեր վանքերն ու անապատները տակն ու վրայ կ՚ընեն, երբ ընդհակառակն Աստրոց վանքը օտարին վերաբերելուն ամենևին իրենց կասկածի տեղի չի տար, դու՝ քու դիտողութիւններդ ընելու համար հոն հանգիստ առանձնարան մը ունիս, հիմա զանխոչ ձանբայներէ քեզի հոն կ՚առաջնորդեմ և կը տեսնես թէ Աստրի եպիսկոպոսը ինչպէս գոհ պիտի լինի Լևոնի տղան տեսնելուն, վասն զի քու հօրդ և հօրեղբօրդ պաշտպանութեամբ կրցեր ես իր վանքը շինել, և ձեր իշնալէն վերջը շատ պզտիներ քաշեր ես Հռոմներէն։

—Երթանք ուրեմն։

Մեր երկու ձանրորդներն սկսան իրենց շահատակութեան ընդ

ժայռ և ընդ մացառ. լուռ ու մունջ կ՚երթային, գետ և վտակ երբեմն գերենք կը զովացնէր և վերջապէս Ամանոսի էն բարձր գլուխները դտան՝ երկու ժամ շարունակ երթալէն վերջ. հոնկից շրջապակայ վանքեր՝ գիւղեր՝ անտառիկ բերդեր իրենց ոտքին առջև կ՚երևային՝ իրրև ողջոյնի ոչնչութիւնք, և այսպէս երկու ժամ ալ դեռ քալելէն ու քիչ մը իջնելէն վերջ դէպ ի հարաւ՝ հասան ժայռերու մէջ բերդանման վանք մը, որուն դռները չէին բացուեր վասն զի մեծ խստութեամբ արգիլեալ էր առանց մեծաւորին հրամանին դուռ բանալ. ուստի երկայն բանադնացութենէ վերջ նախ վարպետը վեր առին, և քառորդէ մը վերջը դռները բացուեցան նաև Թորոսի։ Ծեր Մետրապօլիտը երբ զԹորոս տեսաւ աչուընները արցունքը լցուած, ձեռքերը երկինք տարածելով փառք կուտար Աստուծոյ, որ Թորոսի ամենանման եղբօրորդի մը յարուցեր էր, ի փըրկութիւն Հայ և Ասորի եկեղեցեաց, որք միայն խաղաղութեամբ կը ապրէին և յանուն Քրիստոսի զերար չէին բզքտեր։ Եւ ինչպէս ծերերու սովորութիւնն է միշտ անցեալին վրայ անսպառ խօսիլ և պատմել, նոյնպէս Մետրապօլիտն Սթանոս՝ կը պատմէր թէ քանի անգամ Վահկայ բերդը գնացեր էի զԼևոն և զԹորոս տեսնելու, և թէ նոքա ի՛նչպէս սիրով զինք ընդունած էին և իր խնդիրքները կատարած, թէ դրամական օգնութեամբ և թէ պաշտպանութեամբ ընդդէմ անհաւատից, Յունաց և Լատինաց։ Բայց վերջապէս մտածելով թէ մեր ձանրորդներն տաժանելի ձանբէ մը կուգան՝ հրաման տուաւ իրենց կերակուր և սենեակ տալ, և այսպէս Թորոս քիչ մը հանդստանալէն վերջ, երբ ծեր եպիսկոպոսին ներկայացաւ՝ նա սկսաւ իրեն հարցնել թէ ի՞նչ էր իր դիտաւորութիւնը և գործերու յաջակագիծը։ Թորոս իմացուց թէ իր յաջակագիծը պատրաստելու համար իրեն հիւր եղած էր, և թէ կ՚ուզէր բոլոր շրջակայքը պտըտիլ ամեն տեղ ձանչնալ և ուսնիլ և ըստ այնմ գործի սկսիլ։ «Ուստի, ըսաւ, ես ձեզմէ քանի մը այծ և հովուի մը պիտոյ կ՚ուզեմ, որ առանց թշնամի կասկած յարուցանելու կարենամ իմ դիտողութիւնքս ընել։»

Եպիսկոպոսն ալ այսպէս աժան ազատելուն վրայ ուրախ՝ մէկէն ուղածն իրեն շնորհեց և ահա մեր Թորոսն գլուխը հովուի գտակ ուղածն իրեն շնորհեց և ահա մեր Թորոսն գլուխը հովուի գտակ և վերարկու մը վրան ձգած մինակուկ լեռն ու հովիտ կը պտըտէր,

և թէ որ իր այծերը բերդորդիից շըջակայ խոտերը և թուփերը կը սիրէին զարմանք չէր։

—Կը մտնէր երբեմն դիւղեր, կը տեսնէր Հայ ժողովըրդեան մռնչիւնը ընդդէմ նախատող և հարստահարող Յոյն վարձկանաց. կը լսէր անոնց հայհոյութիւնքը ընդդէմ Հայ հաւատոյ. կը տեսնէր իրեն ծանօթ հայրենի կալուածները յափշտակող Յոյն իշխանաց գոռոզ ամբարտաւանութիւնը, և այսպէս ութ օր դիտելով, զննելով, Ալեքսանդրիոյ Ծոցէն մինչև Ամանոսի հիւսիսային ծայրերը շըրջագայեցաւ քայլ առ քայլ դրեթէ նշանելով մաքին մէջ ծառ՝ թուփ՝ ժայռ՝ բլուր՝ լեռ՝ բերդ՝ աւան՝ դիւղ և աւերակ։ Ամէն տեսակ մարդ, ձանրորդ և աւազակ՝ կողոպտող և կողոպտեալ իր առջևէն կ'անցնէին, ամէն ազգ, Հայ՝ Ասորի՝ Յոյն՝ Արաբ և Թիւրքմէն իր շուրջը կը պարտէին։ Իսկ անտարբեր հովիւը անխօս և անշշունչ Մաթիանոս հովուին պէս՝ որ իր ժողովըրդեան վերկութիւնն կ'երկընչէր՝ կը շարունակէր իր ձանրան խորհրդածելով, և այսպէս հասաւ Ամուտա բերդին սորոտը, իր այծերուն ընթացքը ուղղելով դէպ ի վեր, դրան հակառակ կողմէն տեսաւ պատուհանի նման ծակ մը պարսպին վրայ, որ ժայռին վրայ հաստատուած էր, այդ անառիկ բերդին ջրի մը ձանրայ լինել մակաբերից յորդ անձրևներու ժամանակ, կամաց մը փորձ փորձեց և տեսաւ թէ հանգիստ կրցաւ անցնիլ. Թուփերը՝ որ ծակին երկու կողմերը ծածկեր էին՝ ըղգուշութեամբ իր գաւազանով բաժնեց և բերդին մէջ շարունակեց իր ելքը, ու երբ երեք չորս մարդաչափ բարձրութեամբ վեր եկաւ՝ հասաւ ծառազարդ գեղեցիկ հողաբլուր մը, և քիչ մը անդին վայելուչ պալատանման բնակարան մը բերդին իշխանին. ծառերու մէջ ծածկուած կը դիտէր տղոց խաղալը, կը լսէր կանանց և ծառայից ձայները, և թէ որ խոհեմութիւնն իւր բնական առաքինութիւնները մէկը չ'լինէր և չ'դիանար սանձել իւր քաջութիւնը, կրնար մինակուկ ամրոցին տիրանալ, բայց անխոհեմ բան մը չ'ընելու համար, նոյն ըղգուշութեամբ որով մտեր էր ներս, իջաւ փոքրիկ հեղեղատը և առանց թուփերուն վնասելու եկաւ դուրս, և շուտ մը իր այծերն ալ հեռացուց հոնկից ինչպէս ապահ մը իր գանձը թաղած տեղէն ամէն ոտից հետք կը ջանայ հեռացնել։ Կը ճնար իրեն իմանալ թէ ի՞նչ էր անունը, և ո՞ւմ կը վերաբերէր այդ բերդը։

Ուստի աչքը սկսաւ պտըտցնել և տեսաւ շըջակայ բլրոյ մը սորոտը քանի մը ցան և ցիր տներ և մէկ հատ մը՝ ամենէն հեռաւոր. հոն իր փոքրիկ հօտին հետ շտկուեցաւ և գնաց թուփերուն մէջ ցրուելէն վերջ՝ վայելուչ տղայ մը տեսաւ տասը տասուերկու տարեկան, որ կասկածոտ աչքը իրեն կը նայէր և պատրաստ էր անհետանալու. պէտք էր բան մը գըուցել, և Թորոս տղուն անուշ ձայնով մը՝

—Ջուր մը տուր խնձի, տղաս, ըսաւ։

—Հիմա, պատասխանեց տղան, և ներս վազեց։

Իսկ Թորոս իրը յոգնած նստաւ տունէն քիչ մը հեռու, և երբ տղան երևցաւ իր փայտափոր ջրի ամանով՝ լաւ մը խմելէն վերջը՝

—Սիրուն տղեկ, ըսաւ, Աստուած քեզ օրհնէ, դու որո՞ տըղան ես։

—Վարոսենց Բարկէնին։

—Փու հայրդ նոր հասաւ. այնպէս չէ՞։

—Այո՛, դու կը ճանչես զինքը։

—Իմ շատ բարեկամն է, հիմա ո՞ւր է, նե՞րսն է։

—Այո՛, ետէ կ'ուզես կանչեմ։

—Լա՛ւ, կանչէ որդեակ։

Տղան ներս գնաց. և քիչ մը ետքը Բարկէնին խիստ գէմքը երևցաւ, որ երբ զԹորոս տեսաւ այդ հովուական հագուստով՝ յիշեցաւ իր ահագին գաւազանին վրայ՝ ըսաւ.

—Աստուած քեզ օգնական լինի, Ի՛շ...

—Բարկէն հայրիկ, վրայ բերաւ Թորոս, քեզ հետ առանձին խօսիլ կ'ուզէի։

—Լաւ, շատ լաւ. Գրիգո՛ր, ըսաւ տղուն որ դրան քով կեցեր կը նայէր, դու ներս գնա. և երբ տղան հեռացաւ՝

—Ինչպէս հոս եկար, Իշխանիկս ըսաւ, ի՞նչպէս իմ տունս գտար։

—Դիպուածով. միայն խնձի գըուցէ, ի՞նչպէս է Եւփիմէ, ի՞նչպէս էք դուք։

—Փառք Աստուծոյ, արժանի չ'էի, Տիրուհին հանգիստ է և ուրախ, ամենքը ողջ առողջ գտայ, իրաւ շատ նեղութիւն քաշեր են իմ երթալէս վերջը, իմ խեղճ Շուշիկս որբերը մեծցուցեր է տառապանօք. բայց տղաքը քանի մեծցեր են՝ հանգստութիւնը եկեր է. գերութեան հանգստութիւն. խնամէ ալ բոլորովին յոյսերնին

կտրեր են, ննջեցելոց կարգը անցուցեր են։ Բայց դու Իշխանիկս, ի՞նչ կ՚ընես աս հովուի հագուստներով. չե՞ս մտներ ներս, իմ տունս չե՞ս պատուեր։

—Բաբկէն, չե՛մ ուզեր ձանչցուիլս դու ինձի կրնաս ըզուցել թէ ի՞նչ է սա բերդը։

—Ամուսայ բերդն է։

—Ո՞ւմն է. ովկ է հիմիկու տէրն։

—Այս Ամուսայ բերդը քու հօրեղբայրդ Թորոս իշխանը Սպղնարիպ Պիրի իշխանին պարգեւ տուաւ, երբ Փառանդները զինքը իր երկրէն զրկեցին յափշտակութեամբ և երբ փախստական՝ անոր ապաւինեցաւ։ Հիմա մեր գերութենէն վերջը Հոռոմ իշխան մը տէր եղեր է բերդին և կը բնակի իր ընտանեօք։

—Ի՞նչէ՛ փ բերդապահ կայ, կրցա՞ր իմանալ։

—Ո՛չ, Իշխանս, այդ չ՚հարցուցի։ Ե՛կ աս գիշեր մեզ մնայիր, մեր տղաքը կուգան տեղն ի տեղ կ՚իմանանք։ Թէ որ Տիրուհին եաքը իմանայ որ՝ օր մը մինչև այս դուռը եկար՝ երբ ինք ալ այս մեր տնակը կը բնակէր և ներս չի մտար՝ շատ կը տխրի։

—Բաբկէն, տղու պէս կը խօսիս. դու գիտես որ ես նախ մեծ գործը՝ եաքը ուրիշ ամէն բան դրած եմ. շաբաթ մ՚է ձիշդ այսօր՝ որ ես յարկի տակ չե՛մ պառկեր վախէս, որ չըլլայ թէ յանկարծ ժամանակէն առաջ մատնուիմ. . .

—Բաբկէնի խօսք վկայ թէ մարդ չի՛մտնար, թէ դու աս գիշեր հոս անցուցեր ես. տղաքս մէկուն խօսք չ՚ըլլին՝ քու անունդ անգամ չի տուին ան օրէն ուր իրարմէ բաժնուեցանք։ Ես եկայ, քանի օր է տնէն դուրս չեմ եղած որ յանկարծ համբաւ չի տարածուի և Հոռոմները չ՚արթննան քու գալուդ համար։ Գրիգոր միայն առաջին անգամ քեզի տուեր է իմ անունս։ Տիկինն ու Գիտիս գիշերներն միայն դուրս կ՚ելլեն օդ շնչելու համար։ Ես Իշխանիկս, ուրախացիր Բաբկէնի տնակը։

—Լաւ, Բաբկէն, քու կամքը թող կատարուի։

Եւ դառնէն ներս մտաւ. Բաբկէնի ցցուց ձեռօք իր հինգ վեց այծերը որ կարածէին. և նա կանչեց զԳրիգոր որ քշեց բերաւ այծերը՝ դոմը փակեց։

Բաբկէնի տունը թէև պալատ մը չ՚էր, բայց բնական դիրքովն

ու օդով ախորժելի բնակարան մ՚էր բլրակի մը ստորոտը շինուած, մէկ կողմը ահագին խորաձորի մը վրայ կը նայէր՝ ուր կենդանի ջուր մը ժայռերու վրայէն շառաչմամբ կ՚իջնէր. բլրակը և տնակը ծածկուած էին պտղատու ծառերու ճիւղերուն և տերևներուն մէջ, և որոնց շուքին տակ գետնէն ուրթը տասը կանգուն բարձրութեամբ տախտակամած մը կար ընդարձակ, պարզ փայտէ նստարաններէ շրջապատեալ և վանդակապատ, որ ամառ գիշերներ ննջարանի համար նաև կը ծառայէր այդ տաք երկիրներու մէջ։

Ճիշտ նոյն ժամուն ալ Շուշիկ իր երկու աղջկանց և Եւփիմէի հետ տախտին վրայ եղած նստած էին։ Եւփիմ իր առնացի զգեստները թողած՝ իւր սեռիններէն հագած իրօք թագուհի մը կ՚երևէր, և թագուհոյ մը պատիւ կ՚ընդունէր այդ լերան բնակիչներէն, որոնց սիրտը իրենց հօրը անկարծելի գարձին համար անպատմելի ուրախութեամբ և ընորհակալութեամբ զեղուն էր, և այդ Տիկնոջ համար Թորոսի և իրենց հօրը ազատարարը լինելն գիտնալով՝ երախտագէտ ակնածութեամբ և յարգանօք կը մտենային իրեն՝ իրրև գերագոյն էակի մը։ Իսկ Եւփիմէ անոնց գեղեցիկ պարզութեան վրայ կը զարմանար, այդ սէ՛ լայն՝ նշաձև աչքերուն կրակը կը դիտէր, որոնց մէջ թէպէտ լեռնային ազատութեան հոգին կը փայլէր, բայց աքանչելի հլութիւն մը ունէին ծնողական հրամանաց, սէ՛ ոգնիագէ մազերնին բարակ և խիտ հիւսքերը ուսերնին բոլոր կը պատէր, և պարզ գունաւոր կտաւէ հագուստ մը անոնց երկայն և ձոխ հասակին միակ զարդարանքն էր։

Երբ Բաբկէն իր հովիւ ընկերը առած տախտին մօտեցաւ, արդէն արևը քաշուած և մութը սկսած ըլլալով հազիւ թէ կերպարանքները կ՚որոշուէին. ուստի աղջկունքն իրենց հայրը տեսնելով ոտք եղան. Եւփիմէ տեսնելով զԲաբկէն որ անծանօթի մը հետ վեր կ՚ելնէր անտարբեր նայուածք մը ձգեց և գարձեալ աչքերը ջուրին սահանքին վրայ գարձուց երբ միտքը իր Թորոսին վրայ կը պատէր։ Իսկ երբ անծանօթը ձեռքը իր լայն կուրծքին վրայ դնելով անձայն ողջունեց և եկաւ Եւփիմէի մօտ նստաւ, ան առեն Եւփիմէ գայլայլին և դիտող աչքեր գարձնելով այս համարձակութեան վրայ, նորա երեսը նայեցաւ և զԹորոս տեսաւ. փոխուեցաւ բոլորովին և ուրախութեամբ ցանկէց ու վիզը փաթթուելով՝

—Այս ի՞նչ կերպարանք է, կ՚ըսէր, այս ի՞նչ փոփոխութիւն։

Իսկ Թորոս կատակելով իրեն կ՚ըսէր թէ «Պէտք էր մոռնալ աղնուապետական գաղափարները որ Տորոսի ոամկական և ազատ լերանց վրայ ապրեցութիւն չ՚ունէին և թէ երբ Եւփիմէ անգործ նստած էր ինք Թորոս այծ արածելով՝ դիշերները բացօթեայ կ՚անցնէր։»

—Կատակը մէկդի, ինչչափ ժամանակ դեռ աս կեանքը պիտի տեւէ։

—Դեռ մինչև վաղն իրիկուն։

—Անկից վերջը։

—Անկից վերջն ալ քեզ այս վայրենի լերանց Իշխանուհի պիտի հրատարակեմ։

—Իսկ հիմա։

—Կերակուրը պիտի ուտեմ՝ քեզի հետ և պիտի երթամ։

—Գիշերո՞վ։

—Գործի մարդուն համար գիշեր և ցերեկ զանազանութիւն չ՚ունին։ Բայց ո՞ւր է Դիոնիս։

—Հոն վարը՝ սա ժայռին վրայ նստած կը խորհրդածէ ջուրին սահանքը դիտելով։—Հայրի՛կ, Հայրի՛կ, ե՛կ։

Սև շունը շարժեցաւ, եկաւ և սկսաւ դէպ ի տախտը դալ. և տեսնելով զԹորոս իւր ուրախութիւնը յայտնեց ու նստաւ։ Ընտանիքը մէկ կողմէն կ՚ամբողջանային, մեծ տղայքն ալ եկան և յարգանօք ողջունեցին զԹորոս և իրենց ծնողքը։ Բաբկէնի ուրախութիւնը մեծ էր, պատուական մարդը չ՚էր կրնար նստիլ վասն զի իր Իշխանիկը իրեն հիւր էր, և որ իրեն ծանր կը թուէր՝ կը տեսնէր թէ ամբողջ գիշեր մը նաև իր տունը պիտի չի կենար. բայց տղայ տարիքէն սովրած էր իշխաններուն չ՚ընդդիմանալ, ուստի ալ չի համարձակեցաւ բառ մ՚աւելցնել։ Իսկ Թորոս՝ «Բաբկէն հայրիկ, զրուցեց, այս տղաքը Սարգսին տունը գիտե՞ն, կարելի՞ է զինքն հոս բերել տալ հիմա։

—Հիմա Իշխան. տղաք, մէկերնիդ շուտ մը գնացէք ըսէք Սարգսին իմ կողմէս որ հոս գայ։

Տղուն մէկը թռաւ, շուտ մը անհետացաւ, երբ աղջիկները տախտին մէջտեղ կախուած կանթեղը վառեցին և սեղանը կը պատրաստէին՝ կերակուրը չ՚եկած Սարգիս եկաւ, և ամենքը նստան կե-

րակուրի։ Սեղանին վրայ Թորոսի անսովոր զուարթութիւնը ամենուն սիրտը ուրախութեամբ լցուց, և Եւփիմէ քանի մը անգամ կրկնեց թէ անտարակոյս առանց պատճառի չ՚էր իր փեսին այս զուարթութիւնը։

Երբ սեղանէն եկան՝ Բաբկէն ամենը հեռացուց տախտէն Թորոսի ականարկութեամբ. Եւփիմէ, Դիոնիս, Բաբկէն և Սարգիս միայն մնացին. հոն Թորոս դարձեալ կրկնեց այն հարցմունքը։

—Ամուսայ բերդին տէրը ո՞վ է։

—Ջենոն անունով Յոյն իշխան մ՚է, քեռայր Մամեսափոյ Յոյն իշխանին։

—Ի՞նչ չափ բերդապահ զինուոր ունի ներսը այդ իշխանը։

—Քսան՝ քսան և հինգ հոգի մը կ՚ելնեն ընդ ամենը, նոյնչափ մ՚ալ ծառայք կան. որ թէ պէտք լինի կրնան զինուիլ և բերդին անառիկ դրիցը և պատերու ամրութեանը նայելով, բաւական՝ մանաւանդ թէ շատ ալ են։

—Լա՛ւ, ըսաւ Թորոս, վաղը մեր Հայու տղաքներէն պատրաստ զինեալ քսան հոգի կրնա՞ն ժողվուիլ անձայն անշշունչ։

—Ես քսան հոգի կրնամ ժողվել։

—Բայց լա՛ւ, ընտրեա՛լ և կորովի՞։

—Լա՛ւ, ընտրեա՛լ և կորովի՛։

—Կոստանդինն լուր ունի՞ք։

—Կոստանդին այս առաւօտ տղայ մը ղրկեր էր ինձի, քու վրադ լուր կը հարցնէր, և ինձի կ՚իմացնէր թէ յիսունի չափ մարդիկներով պատրաստ էր երևալու, երբ և ո՛ր ժամ իրեն լուր ղրկուէր, կարմիր վանայ աւերակները՝ որուն շրջակայքը կը գըտնուէր։

—Վաղը ճիշդ կէս օրին դու հոս գտնուէ քու քսան մարդիկներովդ, բայց ոչ ժամ մը առաջ ոչ ժամ մը ետքը. նոյնպէս Կոստանդնին ալ լուր ղրկէ նոյն ճշդութեամբ Ամուսայ բերդին մեծ դրան առջև ճիշդ կէս օրին գտնուիլ բայց ճիշդ։

—Լա՛ւ։

—Քեզ տեսնեմ Սարգիս, պէտք է ճիշդ լինիլ։

—Իմ ճշդութեանս վրայ մի՛ կասկածիր, Իշխան, բայց . . .

—Ի՞նչ։

—Այսինքն, եթէ համարձակութիւն տայիք, այն պիտի ըսէի թէ Ամուսայ բերդը վերջն ձգելու բան մի է։

—Դու պիտի չ'երթաս Ամուսայ բերդին վրայ, և Կոստանդին յարձակումի պիտի չ'ընէ. այլ կէս օրին ճիշդ կէս օրին հեռուէն իր խմբով մեծ դրան առջև պիտի կանգնի։

Սարգիս ալ պատասխան չի տուաւ, և Թորոս ալ ելլցուց.

—Ուրեմն, իմ քաջ Սարգիս, գնա և պատրաստուէ։

Երբ Սարգիս գնաց, Բաբկէնին դարձաւ՝

—Ահելորդ է քեզի ալ զուցել թէ պատրաստ ինձի պիտի սպասես հոս՝ քուկիններովդ։

—Յայտնի բան է, պատասխանեց Բաբկէն։

—Ան առեն «Մնաք բարեաւ» ըսելով Եւփիմի և ամենուն, իր հովուի գլխարկը և ցուպը առաւ, իր այծերը առջև ձգեց և Ասորւոց վանքին ճանբան բռնեց, ուր Հայ վարդապետը և Ասորի մեծապատիւ սկսեր էին կասկածիլ իր ուշանալուն վրայ։ Եւ երբ կէս գիշեր անցած հասաւ, դուռը զարկաւ, երկայն արարողութիւնները կատարելով դուռը բացին և ներս առին զինքն ու այծերը։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԽԱՉԻ ԴՐՕՇԸ

Առաւօտուն Ասորւոց վանքին դռները երբ բացուեցան, տասն երկու զինեալ մարդիկ ելան դուրս, և առջևնէն բոլորովին սպառազէն՝ արաբ ձիու մը վրայ հեծեալ ասպետ մը նոցա կ'առաջնորդէր. իր երկայն հասակը, իր անվեհեր և խոր նայուածքը մեզի յայտնի կ'ընեն թէ մի էր այդ անձը, որուն խաղաղիք մ'էր ձիուն իւրաքանչիւր ծածանմունքը, և որ արդէն իրրև լեռներուն իշխան և տէր կը թուէր իր ընթացքին մէջ։

Լուռ և մունջ կ'ընթանային եռեւէն տասն երկու երիտասարդները, այն Սև լերան խորտուբորտ ձանբաներուն վրայէն. երիտասարդը գրեթէ մոռցած էր թէ իրեն հետևող մարդիկ կային,

որոնց ձակտէն քարինք կը վազէր, բայց ոչ յոգնած կ'երևէին և ոչ լքեալ։ Սակայն երբեմն իրենց քաջալերիչ աչք մը կը նետէր առանց ընթացքը երբէք ընդհատելու. երբեմն նաև առանց արհամարհանաց և մանաւանդ թէ բարեգութ կերպիւ մը, «Ո՛վ որ յոգնած է ձեզմէ, տղաք, թող տուն դառնայ.» կ'ըսէր։ Բայց ոչ ոք այս յորդորանաց հնազանդելու պատրաստութիւն կը ցուցնէր, և ամեն ոք հաստատ և կորովի իր ճանբան կը շարունակէր։

Երեք ժամ միակերպ այս ընթացքը շարունակելէն վերջ, մեր Ասպետը՝ որ Թորոս ինքն էր՝ ժայռերու և թուփերու մէջ կեցաւ, ձիէն վար ցատկեց, և յանձնելով զայն տղոց մէկուն, «Դուք հոս՝ սա տեղ պէտք է սպասէք, ըսաւ, մինչև որ փոքրիկ տասը տասնուերկու տարեկան տղեկ մը ձեզի գայ, և ձերմակ դրօշակ մը ցոյց տայ. հետևեցէք անոր անկասկած»։ Այս խօսքերն ընելով սրացաւ և մեծաքայլ իջաւ լեռնէն վար, շարունակեցաւ Բաբկէնին տունը՝ ուր առջև իրիկուն զինքը տեսած էինք։ Երբ դռնէն ներս մտաւ ծառերուն տակ երեք երեք՝ չորս չորս զինեալ երիտասարդներ ցրուած էին. ոմանք նստած ոմանք ընկողմանեալ. և երբ զինքը տեսան, ամենքը ցատկեցին ոտք ելան իրրև թէ աներևոյթ զօրութենէ մը ոգեւորեալ։ Ամենևին իր պարզ ձևը առած փոխելու, մէջերնին կեցաւ, իր կենդանի աչքերը ամեն աչքերու մէյ մը պտըտցուց, Սարգիս՝ Բաբկէն և Տորոսի ճանբորդութեան ընկերները ամենքը տեսաւ, նաև անոնք որ առաջին անգամ կը նշմարէր։ «Հայրս տղաք, Թորոսն եմ ես՝ Լեռնի որդի, ես բանտէ, շղթաներէ ազատած եկայ ձեր մէջ, բայց ձեզ ալ կը տեսնեմ որ գերութեան մէջ կը հեծէք. մեր հայրերը այդ գերութենէն ազատելու համար իրենց հայրենի տեղերն ու քաղաքները թողին և ասպետները եկան. թէ որ գերութիւնը նախատինք էր, օտարութեան մէջ նոյն վիճակին մասնակից՝ այդ՝ նախատանաց անտանելին է. ես ուրեմն եկայ որ ձեզի հետ այս գերութեան՝ ամօթոյ և նախատանաց շղթաները կտրեմ, ով որ ինձի պէս սրտին մէջ այդ փափաքը կ'զգայ և մահուանէ չի վախնար, թող եռանդս գայ, լուռ մունջ ինձի հետևի և ես ինչ որ ընեմ, նոյնը ընէ։»

Ամենքը շարունացան կարգաւ և լուռ թեամբ իրեն կը նայէին։ Բաբկէնին ակնարկ ըրաւ Թորոս և կամաց ձայնով քանի մը հրա-

մանները տալէն վերջը, տեսաւ Եւփիմէն որ տանեայց վրայ կեցած իրեն կը նայէր, գլխով ղինքը բարեւեց. երբ սկսաւ սրանալ ամենքը՝ քան և հինգի չափ երիտասարդք իր եւեէն գացին, ու ինք Ամուտայ ամրոցին անմատչելի կողմը վերեկակեց։

Ամառուան տաք օրերն էին և կէս օրուան ժամանակը շատ մօտ էր. մարդ չի կար դուրսը ամենևին. ուստի մեր ղինուորները մէկուն չի հանդիպեցան, բայց արդէն շատերը գայթակղած էին իրենց զօրավարին յանդուգն ձեռնարկութեան, և աղայական խաղաղ մը տեղ կը դնէին. այս ընթացքը գիտէն որ շատ երկայն չի կրնար քշել. բայց տեսնելով զՍարգիս որ անմռունչ և լուրջ հաւատով Իշխանին կը հետեւէր՝ նոյնը ամենը միամտաբար կատարեցին, մինչև Թորոս իր թուփերուն առջև հասաւ, հոն առանց խօսելու սրոյն օգնութեամբ թուփերը մէկդի ընելով երբ գետին պառկեցաւ և քիչ քիչ զգուշութեամբ ծակէն ներս մտաւ և անհետացաւ՝ ամենքը զարմացան ինացին, ահա Սարգիս ալ նոյնպէս և անոր եւեէն ուրիշ՝ տասը՝ քան և բոլոր խումբը ներս մտան։

Վերջի մանողները երբ հասան, ծառատունկին մէջտեղ կեցած էր Թորոս, և անխռով իրեններուն կ՚սպասէր, գարձաւ. «Տղաք, ըսաւ, անօգուտ արիւն եղեռն է. ով որ անզէն և անպիտանի մէկուն ղէնք վերցնէ մարդասպան է և վատ. եկէք ուրեմն։ Կէս օրը արդէն քիչ մ՚ալ անցեր էր, ուստի երբ յարձակեցաւ Թորոս սպառազէն և իր զինեալ մարդկանց ընթացքը բնակարանին դրան՝ առջև լուռեցան, իրենց զէնքերուն փայլը տեսնուելուա, վայնասուն և աղաղակ մ՚է փրթաւ. պահապանք և զօրականք զէնքի կը դիմէին. կանայք և տղաք կուլային, կ՚ողբային և կը ձչէին. դռներ՝ վանդակներ՝ փեղկեր շառաչմամբ կը գոցուէին. վերջապէս սոսկալի շփոթութիւն մը տիրեց բնակարանին մէջ։ Իսկ Թորոս անխռով, Սարգսին հրաման տուաւ բերդին մեծ դրան վրայ վազել քանի մ՚ընկերով բանալ և Կոստանդնի զօրքը թէ որ հասած էին՝ ներս առնուլ ու բերդէն ոդջ մարդ ամենևին դուրս չի թողուլ։ Իրօք Սարգիս յաջողեցաւ դուռը գտնել և քանի մը պահապաններն որ հոն կեցեր էին սպանել և զինաթափ ընել. բայց Կոստանդին չի կար. ուստի ինք հոն սպասելու հետ եղաւ. իսկ Թորոս առանց ժամանակ կորսնցնելու յարձակեցաւ բնակարանին դրանը, մէկ երկու զինուոր որ իրեն դէմ կը խիզախէին իւր սոսկալի սուրին հարուածով գետինը փռեց և շարունակ ահագին ձայնով կը գոչէր թէ «Ո՛վ որ անձնատուր լինէր, անոր մահ չի կար. վայ դէմ դնողին.» բայց ներսի աղաղակները աւելի կը բարձրանային. ամեն դուռ՝ ամեն սանդուխ՝ ամեն սրահ՝ ամեն պատուհան կռուի տեղ եղած էր. վահան՝ նիզակ՝ սուր՝ կայծի ամեն տեղ կը շողար. հերթարձակ և կիսազգեստ կատաղի կանայք՝ պատուհաններէ ձեռնընկին եկածը կը նետէին. Հոռոմ իշխանը յանկարծակի վախէն և ընտանեայց վտանգէն խենթեցած՝ ներքնաբերդին դրանը նեղ սրահին առջև կանգնած սուր մը և վահան ձեռքը յուսահատաբար կը կռուէր, և արդէն քանի մը հոգի՝ Թորոսիններէն՝ այս կատաղութեան զոհ լինկած էին, երբ Թորոս ինք վրայ եկաւ և հրաւիրեց Թողուլ զինքը ու անձնատուր լինիլ. ասոր պատասխան Իշխանին սուրը շողաց որուն ընդդէմ՝ կայծակի պէս Թորոսի սուրը՝ որ թշնամի թուրը թռուց, և անզէն Հոռոմը Թորոսի զինուորները բռնեցին ու կապեցին։

Այս միջոցին յարդոյը կը խուժէին Կոստանդնի իրեններով և Բարկէն Ասորիներով. պատերազմողաց բազմութեամբ, զոր երբ տեսան յուսոյ ճնացեալ պահապանք՝ զէնքերը թողլով անձնատուր կը լինէին, կանանց յուսահատ կատաղութեան լքեալ յաջորդեց, և Թորոս Բարկէնին հրամայեց կանայք ու տղայք սենեակ մը փակել, և զինուորաց հրամայեց բոլոր ամրութիւնները դրաւել, դիակները վերցնել, արեան նշանները մաքրել երբ ամեն բան կարգի մտաւ, Բարկէն տեսնուեցաւ որ իր տղոց մէկուն օգնութեամբ եկած ներքնաբերդին տանեայց վրայ, յուսկան արձանակիր զրօշը վար ձգեր և տեղը Ռուբինեան խաչակիր զրօշը կը հաստատէր։ Բոլոր բազմութիւնը աս տեսնելուն ուրախութեան աղաղակ ներով օդը կը լեցնէր, որոնց արձագանգը լեռնէ լեռ տարածուելով՝ շրջակայ բնակիչքը արք՝ կանայք և տղայք այս խաչակիր զրօշակին փոխարէն ուրախութեան աղաղակաւ ու խաչակնքելով երկինք նայելով Աստուծոյ շնորհակալութեամբ ողջոյն կուտային, ծերերն ու պառաւները կուլային։ Եւ ահա գեղեցիկ տիկին մը բեհեզեայ ոսկեթել զգեստներ հագուած՝ արաբ ձիուն վրայ հեծած Բարկէնի կինն ու աղջկիկները եւեէն, կը մտնէր բերդին դռնէն ներս. ամենքը յարգանօք կը շարուէին իր առջև՝ զէնքերը կը խոնարհէին՝ և

ղինք ձանչցող չի ձանչցող՝ երևակայելով թէ Թորոսի էր նա՝ հա-
մակիր աղաղակներն կը կրկնէին, երբ նա իբր թագուհի մը՝ իր
ժողովուրդը սիրալիր կը բարևէր. Թորոս ղինք դիմաւորեց՝ ձիէն վար
առաւ և հոն ներքնաբերդին դրանն առջև ամենուն՝ որ դիմած էին
ամրոցն ի վեր խուժելով՝ նշան ըրաւ թէ կ'ուղէր խօսիլ. «Ո՛վ Հայեր,
ո՛վ իմ ազգս, Լևոնի որդին Թորոսն է որ ձեզի կը խօսի. Ասուած
ինք բանին դռները բացաւ և ղիս հոս բերաւ, որպէս զի ձեզի ալ
օգնեմ հայկական գերութիւնը և նախատինքը մեկտեղ ջնջեմ, և
այդ ազատ լեռներուն վրայ ազատ մարդիկ միայն երևանք: Ասուած
որ ամեն ձեռնարկութիւն մինչև այսօր ինձի յաջողեց անտարա-
կոյս իմ բոլոր փափաքներս պիտի լեցնէ և այս լեռներուն դլխէն
մինչև ծով մեզի նոր Հայաստան մը պիտի շնորհէ. միայն թէ գիտ-
նանք սիրով և միաբան լինիլ իրարու օգնել. անարգ նախանձ և
պզտիկ սիրտ չ'ունենալ. մեր անձնական շահուն հասարակաց օգուտը
նախադասել: Կինը որ հոս քովս կը տեսնէք, որ իմ ազատու-
թեանս առաջին գործիքն եղաւ, այս՝ իմ Հօրս սուրը՝ ձեռքս տուաւ,
մինչև այսօր իմ փախստեանս բոլոր վտանգներուն անբաժան մնա-
կից եղաւ, ահա ձեզի կը ներկայացնեմ, անոր պատիւը իմ և ձեր
պատիւն է, ինչպէս ձեր մերոյ՝ կանանց և զաւակաց պատիւը
իմն է . . .»

Ուրախութեան և «ապրի՛» ներու աղաղակներ ու երգուածներ
իր ձայնը ծածկեցին և բոլոր ժողովուրդը զԹորոս՝ իր քաջու-
թիւնը և իր իմաստութիւնը կը պատմէին և ինչպէս սովորութիւն
է շատ մը յեղափոխական վրդովիչներ գնողներ ալ կը գտնուէին.
իւրաքանչիւրն իւր տեղ սկսան ցրուիլ և փողահարները ամեն լե-
րան և բլրոց գլուխներ կ'ընթանային զինքի կոչելու Հայ ժողո-
վուրդը, որովհետև Թորոս՝ Լևոնի որդին՝ զերինք կը հրաւիրեր
Սմբատայ բերդին առորոտը, որու վրայ Հայկական խաչագրօշը կը
ծածանէր:

Իսկ երբ ժողովուրդը ցրուեցան գնացին, Թորոս զուարթ
կերպարանքով՝ պարզ ճակատով բոլոր զօրաց առջին՝

Բարկէն հայրիկ, ըսաւ, այս բերդը՝ որ տէր չ'ունի հիմա,
վան ղն Սալղարիպ չի կոչ, ըստ գրացութեան իրաւանց՝ տէրը
դու ես իր բոլոր կալուածներով, մինչ որ դու հիւրդ ինք ամենիս

ալ, շատերնիս հեռու տեղւանքներէ եկած, կէս օրը անցած լինե-
լուն անօթի ծարաւ կը յարդուինք, մեր այս վիճակին ճար և ճա-
րակ քեզմէ կ'սպասենք:

Տէր մեր և Իշխան, ըսաւ Բարկէն աչքերը լցուելով և Թորոսի
խօսքին մէջ տեսնելով իր այնչափ տարուան հաւատարմութեան
վարձատրութիւնը. իր՝ նչ որ կայ՝ ամենն ալ ձերն է, ինչպէս որ
գիտէք թէ ես ալ ձերն եմ, եղած եմ և պիտի ըլլամ միշտ. տես-
նենք ուրեմն թէ աս Հոռոմները մեզի համար ի՛նչ պատրաստեր են
և վայելեմք:

Մեկէն Բարկէն հրամայեց Յոյն իշխանին անասնը առջևը բե-
րել և կապանքը քակել, խոստացաւ իրեն թէ որ հաւատարմու-
թեամբ ծառայէ և թէ որ իր հիւրերը գոհ ընէ՝ վարձատրու-
թիւն և ազատութիւն: Նոյնպէս Շուշիկ տիկին՝ շուտ մը իր տան-
տիկնի սովորութեամբ և աղջկանց հետ թևերը սօթաեց և գոր-
ծին գլուխը անցաւ: Հօրթ՝ ոչխար՝ այծ և հաւ կը մորթուէին՝
կը խորուէին՝ կրակներու մուխը երկինք կը բարձրանար՝ գիւղայ
կարասներ կը պարպուէին՝ գաս գաս Հայ զինուորը բերդին գլխէն
Կիլիկիոյ դաշտին ընդարձակութեան հանդիսատես այսօր և վաղը
տէր, կ'ուտէր՝ կը խմէր՝ կ'երգէր՝ կը զուարճանար:

Իսկ Թորոս միշտ արթուն՝ միշտ անկարելին՝ նաև մտածող,
իբրև թէ զուարճութեան համար, բայց բան դիտելու համար,
զինուորին բարոյական և նիւթական վիճակը՝ պահպանութեան
կէտերը կ'նշմէր պարտելու հետն առած Կոստանդինն՝ Սարգիս և
քանի մը գիւղապետներ՝ որ կամաւ եկեր խառնուեր էին զօրայ
խումբին հետ և առանց պատերազմի յաղթութեան մասնակից
էին, բայց որոնց համար երկրորդ օրը խիստ և յարատև աշխա-
տութիւն կար, երկրին կառավարել ազատութեան համար. հոն Թո-
րոս որ իր սրամտութեան և քաջութեան փորձը անոնց քանի մը
հատին ցցուցեր էր քանի մը շաբթուան մէջ՝ միշտ Կոստանդինին
հետ խօսելով՝ վա՛յ, կ'ըսէր, պէտք է զինուորը ուրախ լինի. բայց
հոս պէտք էր պահապան դնել, հոս պէտք էր դէտ մ'ունենալ,
հոս այս դուռն ամրացնել» և այսպէս կը շարունակէր իւր այցե-
լութիւնը: Իրարու երես կը նայէին, և Կոստանդին՝ որ նորա հօրն
ու հօրեղբօրը ծառայած և քանի մը օր առաջ իրքներեն կը մրմռար

երբեմն Թորոսի արարքներուն՝ հիմա ամեն ըրածներուն դէմով և աչքով իրաւացի լինելը կը հաստատէր, և այցելութենէն վերջը Թորոս դարձաւ հոն ուր իրենց կ՚սպասէր սեղանը։

—Իշխան մեր, ըսաւ Կոստանդին, ներէ՛ որ երթամ ձեր արդար դիտողութիւնները գործադրեմ, և ներէ՛ մեր պակասութեանց որ անկարծելի յաղթութեան ուրախ հետևանքն եղան, յաղթութեան՝ որուն բոլոր արժանիքը ձերն է միայն։

—Ո՛չ ոք միայնակ յաղթութիւն չի կրնար տանիլ, պատասխանեց Թորոս, յետին հիւանդապահ զինուորը մատնակից է մեր յաղթութեանց, և մենք եղածը գործողութեաց սկիզբն պիտի համարենք, իշխան Կոստանդին, գնա և շուտով դարձիր, որպէս զի անօթի չեմեանք։

Սեղանին գլուխը նստած էր Սեփիմէ Թորոսի քով, Շուշիկ իր կերակրոյ հանգերձանքներուն զբաղած չ՚էր երևար, բայց Բարկէնին աղջկունները իրենց սիրուհւոյն հետ նստած անոր կը ծառայէին. նոյն միջոցին և հազիւ թէ նստեր էին՝ մեր Կիպրոսի վանուց վանահայր վարդապետը ջորւոյ մը վրայ հեծած՝ կէսօրուան արևուն բոլոր ճառագայթներէն այրած և մրկած կը հասնէր, և ուրախութիւնը աւելցաւ երբ տեսաւ թէ ճիշդ ժամանակին և սեղանի մը սկիզբը կը հասնէր։

—Բարի եկար, Հայր սուրբ, մեր սեղանը օրհնելու, կանչեց Թորոս։

—Ի՛նչ երանելի վեհակ վարդապետի մը համար, կ՚ըսէր բազմական մը ծիծաղելով։

—Այ՛, մանաւանդ ան վարդապետին համար՝ որ մեզ արքայաբար հիւրընկալելէն վերջը մեր փախստական և թաքթաքուն վիճակին մէջ, մեր նաւուն զեկավարը նաև գիտէր լինիլ, նեղ ժամանակին և իր կեանքը վտանգի մէջ դնել նաև Կիլիկիոյ ափափայից վրայ տաժանելի ուղեգնացութեանց մէջ։ Պէտք չ՚է մոռանալ թէ որովայնապարար և խաբեբայ եկեղեցականաց քով կան գործունեայ և աշխատասէր եկեղեցականք ալ որ իրենց ազգը և ժողովուրդը կը սիրեն և գիտեն նաև զերենք անոնց համար զոհել անոնց սեղանն ալ, պատիւն ալ, աստիճանն ալ...

Դեռ խօսքը չ՚էր լմնցուցեր որ զինուորաց խումբը միաձայն Ռուբէնի երգը կ՚երգէր, Ռուբէնի անուան տեղ Թորոսինը դնելով։

ԵՐԳ ՌՈՒԲԻՆԻ

Ի դառն Հողմոց արտասահման Հայրենական մեր երկրէն,
Օտար դաշտեր՝ սև լեռներու պանդուխտ եղանք տարագէմ.
Չև կաք Մովսէս՝ ոչ զօրավար և սիւն լուսոյ ուղղեցոյց,
Մեզ զօրավար և սիւն լուսոյ աբքայական արմատէն՝
Ընձիւղ պատուոյ՝ յոյս ծագեցաւ քաջն ու արին մեզ Ռուբէն։

Հայկայ տղոց ազեղանց լաբք թուլցեր էին և թևեր,
Վահան՝ սուսեր՝ նիզակ և տէգ անկեալ կային ժանգոտեր.
Հայրն անուն վատնաբացեալ՝ էրմէն (1) ոչ ոք կ՚անուանէը,
Մինչ մեր անշուք անկեալ վիճաց աբքայական արմատէն
Ընձիւղ վիճաց՝ լոյս ծագեցաւ քաջն և արին մեզ Ռուբէն։

Մեր այգինեըն վուշ բուսուցին, դարձաւ քացախ մեր գինին,
Ուրախութիւն հալածեցաւ, և սուգ տիրեց սրտերին.
Հարսն երգին՝ վեհն ձայնին փոխան բուեր ողբացին,
Մինչ կոզմանեալ աւերակաց աբքունական արմատէն՝
Ընձիւղ դալար՝ յոյս ծագեցաւ քաջն և արին մեզ Ռուբէն։

Մեր այգինեըն ոսկի ողկոյզ անուշ գինի կը հոսեն,
Մեր աղջիկներն քաղցրը ձայնիւ և քնարիւ զեղգեղեն.
Մեր կըտրիճներ ազատութեան զէն և սուսեր ըշխահեն,
Չև կոզմանեալ մեր գահոյից աբքայական արմատէն՝
Ընձիւղ դալար՝ յոյս ծագեցաւ քաջակորովն մեզ Ռուբէն։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԹԷ ԻՆՉՊԷ՞Ս Կ՚ՍԿՍԻ ԿԱԶՄՈՒԵԼ ԹՈՐՈՍԻ ԵՐԿԻՐԸ

Դեռ արևը չէր ծագած, Թորոս Ամուտայ բերդին իշխանական սենեակները կը հանդէր իր պէտք օրուան յօդնութենէն,

(1) Էրմէն, Թարգմանի պէտ մարդ, արի մարդ։

դեռ ամրոցին դռները չէին բացուած՝ երբ բիւրաւորաց բազմութիւն մը ծածկեր էր լեռ՝ բլուր՝ դաշտ. զէնքերը կը փայլէին, յիցակիր զրօշներ կը պարզէին և մարդկային ձայնը ծովու հեռաւոր ձայնի պէս կը բարձրանար դէպ յԱմուսայ դղեակը։

Անհամբեր երիտասարդութիւնը ապրիներու, կեցցէներու աղաղակներով երբեմն կ՚որոտար, և ժողովուրդը խումբ խումբ նստած ազատութեան և ուրախութեան անցեալ օրերուն յիշատակները կը նորոգէր, մինչև որ ամրոցին դռները բացուեցան, և Թորոս շրջապատեալ իր քաջերէն ելաւ ժողովրդեան քով. հոն քանի մը խօսք ըսուցելէն վերջը ծեր և փորձ զինուորաց և գիւղապետաց, հրամայեց որ գիւղ գիւղ իրենց հարիւրապետներն ընտրեն և իրեն ներկայացնեն. շուտ մը ընտրութիւններն եղան, և առանց վայրկեան մը կորսնցնելու, այն բոլոր բազմութեամբ յարձակեցան Վահկայ հայրենական բերդին վրայ՝ ուր փոքրիկ խումբ յունաց աւազակաբար կ՚ապրէին Լևոնի անկմանէն ի վեր. որք երբ տեսան այն ահագին բազմութիւնը՝ շփոթած կը նայէին, թէ երբ և ինչպէս այն ամբած Հայերը կրցեր էին գլուխ վերցնել։ Իսկ Թորոս իւր գեսպանը արդէն իր հետ բերած էր։ Ամուսայ բերդին բերդապահները խարդախ՝ շահասէր՝ ճոռոմաբան մարդ մը ընտրած էր, որուն ոչ թէ միայն ազատութիւն՝ այլ նաև հարստութիւն և գանձ խոստացեր էր թէ որ կարենար համոզել բերդակալը՝ բերդը յաղուն առանց պատերազմի, և գաղտնի վարձք ալ խոստանալով կ՚աւելցնէր որ եթէ դիմադրութեամբ և արիւնհեղութեամբ առնուէր բերդը՝ երբեմն կ՚ընէր իր նախահարց վրայ թէ իրմէ գթութեան պէտք չէր ոք սպասէր։

Ուստի Յոյն պատգամաւորը երբ գնաց և յայտնի ու գաղտնի պատգամները կատարեց, բերդակալը ժողովք մը ըրաւ. Ամուսայ բերդին սքանչելեօք առումը՝ վան ու վարձքը՝ պաշարի պակասութիւնը՝ ուժ իկներու չհանդիլը՝ պահապանաց թուոյն սակաւութիւնը բաւական պատճառ եղան բերդը յանձնելու Թորոսի։ Նոյն իրիկուն բերդին դռները բացուեցան ու բանալիները արուեցան Թորոսի, որ յաղթանակաւ իր հարցը բուն ժառանգութեան բնակարանը կը մտնէր և կը տիրանար. մեկէն պէտք եղած հրամանները արուեցան նորոգութեան համար որ հոն հաստատուի ինք, և ան

դիշեր իր բոլոր խումբերը կը բաժնէր ընդ ձեռամբ Բաբիկեան՝ Կոստանդնի և Սարգսի զնանալան բերդերու վրայ. իսկ ինք ընտրանօք երեք հազար մարդ հետն առած, ճանբայ կ՚ելլէր ուղղակի Մամեստիոյ վրայ, ուր կայսեր կուսակալը կը նստէր. առաւօտ չեղած իր զօրքերը հոն հասան, ուր իր անուան երկիւղը արդէն իրմէն առաջ հասեր էր։

Հետն էր նաև կապանօք Ամուսայ բերդակալ իշխանը, վեստայ Մամեստիոյ կուսակալին, զոր կանչեց Թորոս իւր առջև և հետը քաղցրութեամբ խօսեցաւ. խոստացաւ իրեն Ամուսայ բերդին իւր բոլոր ստացուածքը՝ զաւկները՝ կինը՝ ծառայքը՝ ամէնն ալ ողջ ամբողջ դարձնել թէ որ կարենայ համոզել իւր լնտամին, նոյնպէս կը խոստանար Մամեստիոյ իշխանին ամէն գիւրութիւն, ազատ երթալու իր բոլոր ընտանեօք՝ և զօրքերով, միայն թէ խաղաղութեամբ իր ձեռքն յանձնէր քաղաքը։ Իսկ ընդհակառակն եթէ պարտաւորէր պատերազմի սկսիլ պէտք էին որոշ դիտնալ Հոռոմք որ առջի թափուած արեան կաթիլին հրաման պիտի զրկէր տանելու ծախելու Հալապու Ամիրային կինն ալ՝ զաւկներն ալ և ամէն ծառայները՝ որ բերդին մէջ կալանաւոր էին։ Եւ ալ անկից վերջ գաշինքի ու գթութեան չսպասէին իրմէն։ Երեք ժամու չափ միջոց տուաւ իրեն և յուղարկեց։

Բայց Թորոս ան մարդիկներէն էր՝ որ պարապ ժամ անցունել չէին գիտեր. ուստի զօրաց երրորդ մասը զէնքի վրայ պատրաստ՝ քաղքին դրան առջև ձակատեցնելով, միւս երկու մասին հրամայեց գոց խրամը փորել. ինք գլխաւորն վերև կեցած կը ցուցնէր, կ՚աշխատէր, և իր օրինակաւ ամէնքը կը քաջալերէր, և աս գործողութեան հանդիսատես ու մասնակից կ՚ընէր բոլոր Հոռոմ գերիները՝ որ բռնուած բանակը բերուած էին, գաղտնի ապստրելով իր ներն՝ որ բռնուած բանակը բերուած էին, գաղտնի ապստրելով իր զօրաց որ եթէ ոմանք մէջերնէն քաղաք փախչելու փորձ ընեն՝ թող տան և աչք գոցեն։

Թորոսի բոլոր փափաքը այն էր որ առանց արեան ձգտելոյ և արագութեամբ գործը լմնցնէ, ժամանակ չի տայ թշնամւոյն ուշաբերելու, վասն զի գիտեր թէ առաջի արհաւիրքը մարդկանց սըրտին վրայ ինչչափ զօրաւոր է. ուստի իր զօրաց մէջ վերջի աստիճան վրայ ինչչափ զօրաւոր է. ուստի իր զօրաց մէջ վերջի աստիճան ձանի գործունէութիւն մը կը տիրէր. հիւանները բոլոր սանդուխ

չինելու զբաղած էին, խումբ մը գինուոր դէպ՝ Տարսոնի ճանբուն վրայ կ՚սպասէին որ օգնութիւն թէ գար քաղքին՝ ժամանակին դիմադրէին. բոլոր Սև լեռը հրաման գնացած էր քանի մը օրուան պաշար հասցնելու բանակին. ուստի ժողովուրդ՝ արք և կանայք՝ ծերք և տղայք՝ որ պատերազմի չէին եկած՝ գունդագունդ ունեցածն կը բերէին, և երեկոյ չեղած բանակը առատութեամբ լցուեցաւ:

Մամեստիոյ իշխանը ձայն չէր տար, Ամուսայ իշխանը չէր երևար, ուստի Թորոս քաղքին դիրքը լաւ մը քննելէն վերջ անձամբ՝ բոլոր փախստեան ճանբաները գոցեց, լաստափայտ մը Բիւսմոս գետին վրայ իջեցուց՝ որպէս զի քաղքին ամեն հաղորդակցութիւնքը կտրէ: Երբ իրեն լուր տուին թէ գերի Հռոմոց մէկ քանի հատը քաղաք փախչիլ յաջողեր էին, սպասեց: Ու իր յոյսը պարապ չելաւ, վասն զի քաղքին դռները բացուեցան, և պատգամաւոր մը երևցաւ որ դաշնագրութեան կ՚ուզէր մտնել. կայսեր կողմէն Թորոսի ներումն, Ամուսայ բերդը իրեն Թողուլ՝ Սև լերան բնակչաց տարուան մը հարկաց Թողութիւն կը խոստանար, միայն թէ բանակը վերցնէր ու երթար, և Իշխանին կինը ու զաւկները դարձնէր: Թորոս այս պատգամները հանդարտութեամբ մտիկ ընելէն վերջ՝ «Ամուսայ ամրոցը առնողն շատ աւելի դիւրին է Մամեստիա առնուլ. միայն կը ցաւիմ, ըսաւ, որ փուճ տեղ արիւն պիտի Թափի, բայց արիւնը ձեր իշխանին գլուխը լինի, ես անպարտ եմ, ես իմ հայրենի ժառանգութիւնս եկեր եմ առնելու, իմ իրաւունքս պահանջելու. վայ անոնց որ իրենց վիճակին անգէտ՝ դաշնագրութեան եղած են ինձի հետ. Թէ որ Մամեստիան ալ՝ ինչպէս տարակոյս չունիմ՝ Ամուսայ բերդին պէս առնուի. ես չեմ կրնար արգիլել զօրացս որ անգթութիւնք չի կատարուին: Վասն զի երկայն տարիներու վրէժխնդրութիւնք դիզուած են սրտերու մէջ և վախեմ Թէ զեղանին: Վաղը արևուն հետ պատերազմը կ՚սկսի. այսպէս գնացէք ըսէք ձեր տիրոջ:»

Ինք մեծ յոյս ունէր Թէ երկրորդ առաւօտուն քաղաքը անձնատուր լինի, վասն զի ժամանակ չէր տուած պաշար ունենալու, վասն զի միայն ի Ցունաց բնակեալ չէր, այլ բաւական Հայ ժողովուրդ ալ կար որ կրնար խռովութիւն մը հանել և մէկ մ՚ալ որ

Ամուսայ իշխանը իր դժբաղդութեամբ կրնար մեծ ազդեցութիւն գործադրել Մամեստիոյ կուսակալին վրայ: Դուրսի հետ ամեն հաղորդակցութիւն արգիլելովն կը յուսար որ վախը աւելի սաստկացնէ: Պաշարեալք գիշերուան վրայ յոյս ունէին որ կարենան սուրհանդակ մը Թողնել ի Տարսոն, բայց Թէ գետին վրայէն և Թէ ցամաքէն Թղթատար մը հանելու փորձը անկարելի եղաւ, վասն զի արթուն պահապանք խստիւ ամեն ճանբաները բռնած էին:

Երբ առաւօտ եղաւ՝ արշալոյսին հետ Թորոս կ՚սպասէր պատգամաւորի մը որ չէր երևար, ուստի աղեղնաւորաց և պարսաւորաց ընտիր խումբ մը շարեց պարսպին ան կողմերը որ յարմար էին սանդուխներ կռթնցնելու, որպէս զի պարսպին վրայ գտնուողները մէկդի վարեն՝ որ արգելք չլինին անոնց որ վերելակել պիտի փորձէին, և որոնց գլուխ կանգնիլ որոշած էր ինքն. իսկ խրամին համար ալ խումբ մը գործաւորք անխոնջ կ՚աշխատէին, երբ քաղքին դռները բացուեցան և պատգամաւորը երևցան: Այս անգամ յունական զօռղութիւնն եթէ խոնարհած ալ չէր՝ գոնէ տեղի կուտար: Ամուսայ իշխանն էր պատգամաւորաց գլուխ, որ կիմացնէր Թէ Մամեստիոյ կուսակալը յանձն կ՚առնուր քաղաքը տալ այն դաշինքներն ընդունելով՝ զորս առաջարկած էր Թորոս: Ուստի շուտ մը հրաման ղրկեց Թորոս՝ Ամուսայ ամրոցը բերելու իշխանին ընտանիքը և ամեն ստացուածքը. նոյնպէս ամեն Թոյլտուութիւն ըրաւ կուսակալին որ ահագին կարաւանաւ մը քիչ առեներ երևցաւ իր պահապաններով՝ իր ընտանիքով՝ և ամեն ինչքերով որ կրնար տանիլ: Լաւ ընդունելութիւն ըրաւ Թորոս և ամենայն դիւրութիւն տուաւ իրեն, ուրկէն տիրացաւ քաղքին, վասն զի ինչպէս իրաւամբ կը կասկածէր՝ իրեն ղրկած լրտեսները քիչ մը վերջը լուր բերին Թէ Տարսոնի կուսակալը արդէն ճանբայ եղած էր իր բոլոր զօրութեամբ Մամեստիոյ օգնութեան հասնելու, և ամեն տեղ Ցոյն և կայսեր հնազանդ Հայ իշխանաց հրաման ղրկած էր որ գան Առանա ժողվուին իրեն քով, ամենևին չի կրնալով երևակայել Թէ զողի պէս մտած կէս ապուշ երիտասարդ մը՝ ինչպէս իրեն կը նկարագրէին Կոստանդնուպոլսէն եկած Թղթերը՝ բաւական զօրութիւն ժողված լինէր իրեն դիմագրելու համար:

Կային շատեր նաև իր բանակին մէջ որ տեսնելով Մամեստիոյ

կուսակալին իր բոլոր հարստութեամբ աղատ արձակը, կը մրմռային՝ կը հառաչէին և կը մեղադրէին զԹորոս, որ չ՚էր դժուր խոստմունքին այնպիսի մարդկանց, որ դժանքը և խաբէութիւնը՝ պատիւ և յաջողակութիւն կը համարէին։ Բայց Թորոս հաստատ իւր խոստման, գուշակելով նաև իր շուրջը եղած լռելեայն խորհրդածութինքը, վասն զի ժամանակին ոգին լաւ կը ճանչէր, կը քարոզէր թէ ինչ վստահութիւն որ ուրիշներուն վրայ կը քամահրենք, պէտք չ՚է երբէք իզործ դնենք։

Եւ Մամեստիա մտնելով շուտ մը պէտք եղած ամրութիւնները հրամայեց աւելցնել և ինչպէս լաւ երեւակայեր էր՝ խմացաւ թէ քաղքին անձնատուր լինելուն դլխաւոր պատճառներուն մէկն ալ քաղաքին մէջն Հայոց խլըտուխն եղած էր։ Ուստի նոյն օրը զօրաց լաւ հանդիստ մը տալէն՝ երեք օրուան պաշար իւրաքանչիւրին բաժնել տալէն և քաղքին պաշտպանութիւնը Մամեստիոյ Հայոց յանձնելէն վերջ՝ մուրճն ի լուսոն ձանրայ եղաւ դէպ՝ Սատանա իր երեք հազար հոգիով, որ ամենէն ընտիրներն էին բոլոր Տորոսի լեռնոց։ կը յուսար յանկարծակի հասնելով Տարսոնի կուսակալին վրայ, քանի որ նիզակակիցներու օգնութեամբ չ՚էր զօրացած, յաղթութիւն մը կանդնել և իր համբաւը բարձրացնել։

Իր բանակին մէջ հազիւ թէ ձիաւորաց փոքրիկ խումբ մը կար, մնացեալ բոլորն ալ հետեւակ էին, բայց այս հետեւակները լեռներու բնակիչ պղնձէ սրունգներ ունէին, և որ մեծն է՝ կը տեսնէին Ռուբէնի ժառանգը՝ արտաքոյ կարգի հակ մը իրենց աչքերուն՝ որ սպառազէն՝ վահան ու բոլոր պէնքերն ստանձնեալ ամենուն առջևէն կը քալէր հսկայաբար, իբրև թէ իրեն համար խաղալիք լինէին տաժանմունք՝ վտանգ՝ արև՝ փոշի՝ ծարաւ և անօթութիւն։ Ցիրաւի այդ զարմանալի զօրաւոր կազմուածքը, այդ վեհ նայուածքը, այդ համառօտ և ազդու խօսքերը, այդ կերուխումի ժուժկալ չափաւորութիւնը, ամենուն պատկառանք՝ վըստահութիւն և հպատակութիւն կ՚ազդէին, որ օր աւուր պաշտօնի պիտի դառնար։

Երբ այսպէս լուիկ կ՚արշաւէր բանակը և միայն երեք հազար մարդու ոտից տրոփէ ի զատ ձայն չ՚էր լսուեր, և ծարաւի զինուորը Սարսուռ դեռին հասնելու՝ իր ծարաւը զովացնելու յուսով կ՚արտո-

րար, յառաջապահ գունդը՝ որոնց գլուխն էր Թորոս՝ կանգ առաւ, վասն զի դժբաղդ տեսարան մը զինք արգիլեց։ Հայ ջրբեռաններու խումբ մը ուղիը տասը հոգի, մեռեալ և վերաւոր, ձանրուն վրայ արիւնլուայ ինկած մնացեր էին. հազիւ թէ մէկ երկուքը կեանքի նշան կուտային. պէտք եղած դարմաններ՝ քիչ մը գինախառն ջուր տրուելով, քիչ մը զօրացան։ Այն ատեն իմացան թէ Մամեստիոյ իշխանին գունդը այս խեղճերուն հանդիպելով ձանրան վրէժխնդրութեան ոգւով պերնիք զարկեր սպաններ և վերաւորեր էին և իրենց ցորենաբարձ գրասաներն յափշտակեր տարեր էին։ Քանի մը հոգի ձիաւոր իջեցնել տուաւ Թորոս, իր և անոնց ձիերը տուաւ՝ թէ վերաւորները և թէ մեռելները բեռնաւորելու համար, մինչև որ Հայու գեղ մը հասան, հոն զանոնք յանձնեց գիւղացւոց որ թաղելիքը թաղեն, դարմանելիքը դարմանեն, մինչև որ Սատանա ու քաղաքը երեւցաւ իր ծառաստաններով. այն ատեն ձիաւորաց խումբին հրամայեց զգուշութեամբ յառաջ անցնիլ և քննել թէ արդեօք ոչ էր թշնամին, և ինք գետին եղերքը նստաւ իր բանակաւ, զօրքը իրենց ալքատիկ պաշարը հանեցին ու կերան, և ինք Թորոս քանի մը ձիթունով ու կտոր մը պանրով անոնց պէս կը շատանար, և միայն իր զրկած տեղեկաբեր խումբին կ՚սպասէր որ որոշ լուր մը առնու։

Մեծ եղաւ իր ուրախութիւնը՝ երբ լուր բերին իր թեթև ձիաւորները թէ Յունաց բանակը Տարսոնի ձանրուն վրայ Սատանայի երկու ժամ մնացած ծառաստաններու տակ կը հանգչէին կէս օրուան արեւուն տաքութեան չ՚ենթարկուելու համար։

Անպարիսպ Սատանա մտնել և տիրանալ բան մը չ՚էր, և զարմանալի օգուտ չունէր, բայց Տարսոնայի զօրքին վրայ յանկարծուստ հասնիլ ջարդ ու բուրդ ցիր ու ցան ընել՝ գեղեցիկ և շահաւէտ գործողութիւն մ՚էր. այս էր որ զինք կը դրդէր, բայց երբ կը մտածէր որ զօրքը դեռ երկու ժամ ձանրայ պիտի քայլէին և հանգչած ու դարձած զօրաց հետ պիտի կռուէին՝ կը վարանէր. ուստի փորձ մը փորձել մտածեց, և զօրքը ժողվելով իրենց հետ այս կերպով սկսաւ խօսիլ.

«Ո՛վ իմ Հայերս, մէկ քանի օրուան մէջ ես ձեր քաջութեան փորձը առի, կը տեսնեմ թէ տակաւին էք աշխատութեան և ձեր

զօրավարաց գիտէք հնազանդիլ՝ որ զննուօրի մը էն մեծ կառավարութիւն է. բայց այս օր շատ յոգնեցաք և ես հարկաւոր կը տեսնեմ երթալ գտնել մեր Թշնամիները և Ցունաց զօքին վրայ քալելը ուզողը թող եւեէա դայ, ճեացեալքդ հանգչեցէք և վերջը մեզի հասէք։»

Այս կարճ բայց որոշ խօսքերուն վրայ, աղաղակ մը վրթաւ, ամեն ձեռքեր երկնցան և ամեն ոք իրեն հետ մահուան նաև երթալ յանձն կ՚առնուր։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու հրամայեց ճանբայ ելնել, և ինք կ՚առաջնորդեր տեղեկաբեր հեծելազունդը առջևէն ձգած։ Այն եռանդով շուտ մը հասան Թշնամոյն բանակը որ հազիւ դեռ քունը կը թօթափեր և կը խլտեր. երբ երեք հազար հոգւոյ աղաղակը օդը թնդացուց և սուրերը ձեռուընին կատաղի խումբ մը այրած՝ մրկած՝ արիւնն սեւցած՝ սատանանեռու պէս նոցա մէջն ինկան և սկսան կոտորել, սոսկալի վայրկեան մը եղաւ ուր նոցա համար վերջնին օրն գրեթէ հասած կարծեցին։ Բայց նոքա Թուով կրկին էին քան զՀայս, ուստի վերջնապահ խումբը կրցաւ փաղանգ մը կազմել և փախչողներուն պատըսպարան լինիլ և ժամանակ տալ որ ինքզինքնին գտնեն և խմբուին պատերազմի, այս որ տեսաւ Թորոս՝ քաջակորով խումբ մը իրեն միացուցած՝ ինկաւ սաստկութեամբ ասպ փաղանգին վրայ որպէս զի կանոնաւորեալ նահանջի մը տեղի չի տայ. երկու կողմէն ալ արիւնը գետօրէն սկսաւ վազել, նիզակները կը կոտրտէին, վահաններ կը ջախջախէին, սուրերու բեկորներ կը թռչտէին, մինչև որ գեռս կազմ փաղանգը ցրուեցաւ և Ցունաց խումբերը ցան և ցիր սկսան փախչիլ. իրենց կոտորածը շատ աւելի պիտի լինէր եթէ Հայոց խումբը յոգնած չ՚լինէր, բայց Թորոս դարձեալ չի կեցաւ, այլ հեծնելով իր արաբ ձիուն վրայ, իր ան փոքրիկ հեծելագունդը առած, երկու երեք ժամու միջոց կը ջարդէր՝ կը հալածէր փախստականները։ Եւ թերևս չ՚դադրէր զերինք հալածելէն մինչև Տարսոնի դռները, եթէ յանկարծ ամպի պէս փոշի մը երկինք բարձրանալով հեռուանց չ՚իմացնէր իրեն թէ հեծելագունդ մեծ խումբ մը օգնութեան կը հասնէր Թշնամոյն. ան խումբը որ Լամբրոնի կողմէն կուգար, կ՚իմացնէր Թորոսի թէ որո՞նք էին եկողները, ուստի խոհեմութիւն սեպեց ետ դառնալ, բաւական համարելով եղածը։

Երկու հազարի չափ մարդ կորուսած էր Թշնամին. իրեն կորուսան ալ հինգ հարիւրէն աւելի էր՝ մեռած և վիրաւոր. մեռեալները պատուով թաղել, վիրաւորները այն գիշեր ձանբայ հանել որպէս զի իրենց տուները իրենց ընտանեաց քով գարմանուին և ցերեկուան արեւու ճառագայթներէն չի նեղուին, իր առաջնի գործն եղաւ, նոյնպէս մեռեալներու ընտանեաց և վիրաւորաց ասարին ընտիր մասը նախ բաժին հանեց անոնց՝ որ իրենց արիւնը թափած էին քաջութեամբ պատերազմելով։ Անկից վերջը արդարութեամբ բաժնեց ասարը պատերազմողաց, իսկ իրեն ամենևին բան մը չի պահելով զարմացուց ամենքը։ Այն գիշերը Թշնամոյն բնակած տեղը անցուցին զննուորները։ Երկրորդ առաւօտուն կանուխ Աատանա քաղաքը պաշարել տուաւ Թորոս և հազար ոսկեզօ տուրք մը ձգեց քաղքին վրայ ժամուան մը միջոց Թողլով, և երբ պահանջածն առաւ, վերցուց բանակը ու եկաւ Մամեստիա, ուր տեսաւ թէ իրեն կ՚ապաստին Բարկէնի հետ Եւփիմ և Դիոնիս։ Եւ փառաւոր յաղթանակի մուտք մը իրեն պատրաստեր էին։

Անդէն իր անունը քանի մը օրուան մէջ բոլոր Կիլիկիա և աւելի հեռու տեղեանք սկսեր էր տարածուիլ ու Լևոնի որդւոյն գարձը՝ Հայոց ուրախութիւն և օտարաց երկիւղ դառնալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԱՆԱՐԶԱԲԱՑ ԿՈԻՄԱԿԱԼԸ

Արտաքոյ կարգի վճռակ մ՚էր այն առեն Կիլիկիոյ վիճակը. Հայ ժողովուրդ մը Տարսոնի լեռներուն մէջ օր աւուր կ՚աւելնար, վասն զի Հայաստան և Փոքր Ասիա այլակրօնք տիրանալով անտանելի կ՚ընեին Հայուն հայրենական՝ անձնական՝ և կրօնական ազատութիւնը, հալածանք և գերութիւն իր և ամենքին բաժինն էին։

Ժողովուրդը, ինչպէս ասիական ամեն ժողովուրդք, երբէք չ՚էր երևակայած այնպիսի ազատ կառավարութիւն մը, ինչպէս որ Ցոյնք և Հռովմայեցիք իրենց պատմութեան մէկ ժամանակին կրցեր

էին ունենալ և ի գործ դնել՝ և զոր հանրապետութիւն անուանած էին ի փառս և ի պատիւ Հայրենեաց ու մարդկային ազգին: Մեր եկեղեցական նախնի Հայրապետք հաղիւ թէ քրիստոնէական կրօնից դրքեր ու գաղափարներ թարգմանելու և տարածելու ժամանակ ունեցեր էին, և ազգային պատմութեան մէջ Համառօտութիւնը Մովսէս Խորենացւոյ չնորհիւք այնչափ սակաւ էր ժողովրդեան մտքին մէջ որ Հայ զօրավարներ իրենց զօրաց քաջալերութեան օրինակի համար, Հրեից պատմութեան դիմելու պարտաւորած էին: Եւ ի՞նչ զարմանք: Թէ որ Եւրոպական ժողովուրդք ասկից հարիւր յիսուն տարի առաջ Հայրենեաց և ազգութեան գաղափար հաղիւ թէ ունէին, ասկական ժողովրդոյ համար նոյնը երևակայել ասկից եօթը հարիւր տարի առաջ, բոլորովին տղայամտութիւն կրնայ համարուիլ: Ուստի Տորոսի վրայ ժողուած Հայուն բազմութիւնը, ինչպէս նաև ժամանակակից օտարազգիք ալ կը վկայեն, երկու կատարելութիւն ունէր. պատերազմական քաջութիւն, քրիստոնէական հաւատք. ամեն մարդ զինուոր՝ և ամեն մարդ իր Հայրենի կրօնին գերին էր: Իրեն համար ազգային դրօշակ նայն էր, և իր բոլոր աստուածաբանութիւնը Նուսաւորչայ կրօնքն անփոփոխ պահպանելն, ուրիշ նրբաժիտ ժողովրդոց բաժինն էր իրեն համար կրօնական դաւանութեանց՝ ալարողութեանց և վարդապետութեանց համար փոփոխութիւններ մտցնել, ինք որ Պարսից՝ Յունաց՝ և Արաբացւոց դէմ իր բոլոր զօրութեամբ այն իւր կրօնքին պաշտպանութեան համար ամեն բան զոհած էր, աս մասին անպրդուելի էր: Ուստի Հալածանք Սելևկեանց՝ Հալածանք Ամիրապետաց և անթիւ Մահմետական Ամիրայից՝ Հալածանք Բիւզանդական կայսերաց՝ Հալածանք նաև ի վրաց, զինք քշեր բերեր էին Տորոսի բարձունքը և հոն կը լեցուէր կը դիզուէր ամբի պէս ժողովուրդը, որ կարելի չէր թէ քիչ քիչ իրարև վտակ՝ վերջը իրարև գետ և էն վերջը իրարև հեղեղ չիջնէր և դաշտը չողողէր:

Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պէտք ունէր, ինչպէս ամեն ժողովուրդք ունեցեր են և պիտի ունենան. հաւատարութիւն՝ որ Սպարապետ օրէնսդիրն անգամ չէր երևակայած՝ անկարելի է, քանի որ բնութիւնը զմարդիկ հաւասար չէ ստեղծած նիւթական և մտաւորական կատարելութեամբք, ուրեմն մեր Հայ ժողովուրդը

միշտ կը նկատէր երկու տեսակ մարդիկ. իր կրօնական գլուխները, որ զինք միշտ կը յորդորէին Պօղոսի հետ «Հնազանդ լինիլ մարմնաւոր տէրանց» և նախարարական հին սերնդոց պայազատքը որ իրրև թէ փառաց ձաձանչ մը գլխուներն վրայ կը կրէին, յայտնի՝ պատիւ և իշխանութիւն աննախանձ և անուրանալի սեփհականութիւն անձանց համարելով:

Ամեն ամրոց՝ բերդ՝ դղեակ, իշխանի մը տասգուածքն էր որ միշտ Արծրունի՝ Բագրատունի՝ Կամսարական՝ Սիւնի՝ Պահլաւունի՝ Մամիկոնեան և ուրիշ ասոնց նման սերնդոց կը վերաբերէին, որք աշխուժականաց բնական առաքինութեամբք և թելութեամբք առաջ կամ ետ կ'երթային, յօգուտ կամ ի վնաս անձանց և հայութեան, ժողովուրդը միշտ իր սրտի ձայնին և մտքին համոզման հետևելով այս իշխանաց և բերդակալաց մէջ զանոնք կը վերագասէր որ առաւել ինքնիշխանութեան և Հայրենի հնաւանդ կրօնից և սովորութեանց պաշտպան էին, և հետևապէս իրենց ազգին անհատից: Ասկից նաև Ռուբինեանց ժողովրդականութիւնը՝ որոնք հայութեան բուն ներկայացուցիչքն էին իր աչքին, մինչ իրրև օտարածին կ'արհամարհէր յունացեալքն և լատինացեալք, որք Սեբաստոսութեան, Տուքութեան և այլ ուրիշ պիտղոններով բիւզանդական կայսերէն մեծապատիւ կը վարձատրուէին:

Կային նաև անոնց մէջ այնպիսիներ՝ որ ոչ միայն իրենց ազգին պաշտպանութիւնը կ'արհամարհէին, այլ օտարաց հաճոյ լինելու համար իրենց ազգը արհամարհել, և անկից օտարանալն ու զանի հարստահարելն իրենց սովորութիւն ըրած էին:

Երբ Թորոս, յաղթանակաւ և աւարաւ, ժողովրդեան ծափահարութեամբ և գովասանական երգերով կը մտնէր Մամեստիա, իր առաւօտն քովն ունենալով, որուն աշխատական գեղեցկութիւնը ժողովրդեան աշխոյժը կ'ոգևորէր, հոն իրարու վրայ կը հասնէին իր սեղակալքը, Կոստանդին որ Բարձր բերդի տէրն էր, և Սարգիս որ Աւրիճ բերդն առեր էր և այսպէս իրարու վրայ յաջողութիւնք կրնային ո՛ և իցէ գլուխ մը գինեհարել, Բայց Թորոսի ուշիմ լրջութիւնը շատ հեռու էր ինքզինքն կորնչեցնելէ: Անոր համար միշտ կը հարցնէր և կը տեղեկանար թէ ո՞ր էր թշնամւոյն զօրութիւնը. Ո՞ւր դիրք կար՝ ի՞նչ զօրութիւն կար իրեն վնասակար լինելու:

Քաղքի մը անուն կար իր մաքին մէջ, ժառանգութիւն հայրենական՝ ուր իր տղայութեան մէկ մասը ուրախ զուարթ անցուցեր էր, բայց կ՚սպասէր որ ուրիշները զգուշացեն և յիշեն, Վերջապէս Կոստանդին զգուշացաւ. «Թէ որ կ՚ուզէք աս Հողը անպիտան և վնասակար խոտերէ մաքրել պէտք է բոլոր զօրութեամբ Անարզաբոյ տիրենք:

—Ո՞վ է անոր կուսակալը:

—Մանաւանդ թէ ըսէք՝ ո՞վ է անոր տէրը, ո՞վ է անոր բռնաւորը:

—Ինքիշխան ուրեմն հոն կը տիրէ:

—Պապհռոնի տէրը որ Յունաց Հաւատարիմն էր, հօրդ դեռ թէենէն վերջը Անարզաբայի կուսակալ եղաւ, ես Անարզաբացի հայերէն քանի մը հոգի՝ որ ինձ եկեր էին դողալով՝ հոս մկաեղ բերի, և իրենց վիճակին ինչ որ պատմեցին, ինձի զգուշանք բերաւ. լսեցէք ու գտեցէք:»

Այս խօսքերն ըսելով Կոստանդին հրամայեց իր մարդկանց որ ներս բերեն Անարզաբացիքը: Յնդոտիներով ծածկուած երեք չորս հոգի մտան շարուեցան սրահին մէջ, նոցա խոնարհ կերպարանքը՝ վշտերնուն կորութիւնը՝ յուսահատ նայուածքը՝ որ շատ հեռի էին իրենց լեռնարնակ ազգայնոց խրոխտութենէն՝ յայտնի կը քարոզէին իրենց վիճակին թշուառութիւնը:

—Ի՞նչ կ՚ուզէք, ինչո՞ւ եկեր էք մեզի, հարցուց Թորոս:

—Ո՞վ որդի մեր Իշխանին, ըսաւ ծեր քահանայ մը մէջերնէն, տասը տարի է; քանի որ դուք մեզ թողիք գնացիք, տասը անհատնում տարի եղան որ մենք Անարզաբայիքս խիստ կը չարչարուինք: Թէ որ բռնաւորը Պարսիկ լինէր՝ Արաբ լինէր՝ Յոյն լինէր, խաչ չ՚ունի՝ հաւատք չունի՝ Լուսաւորիչ չի ճանչեր կ՚ըսէինք կը համբերէինք, բայց այդպէս չէ, այս անիծիչ Ծնունդը ազգաւ Հայ է, անունով Սմբատ է, ցեղով Մամիկոնեան է կ՚ըսէ՝ կը պարծի, վասակի գործ կը կատարէ, հարկ՝ տուրք կ՚առնէ, մեզ ու մեր տղաքը անօթի կը մեռցնէ, ինք չի կշտանար. մարդ մ՚ունի որ արդարութեան համար դատաւոր պրած է, դատաստան ուղղ չի կայ՝ դատ կը հնարէ, սուտ վկայ կ՚սահեցնէ որ բանտի՝ պատժոյ՝ տուգանքի ձար գտնէ, կաշառք առնէ, արիւն թափէ, չար սիրտը զովացնէ. ուրիշ մարդ մ՚ալ ունի որ Աստուծոյ պաշտօնեայ՝ քահանայ՝ վարդապետ՝ եպիսկոպոս է կ՚ըսեն, բայց մենք պձնասէր՝ արծաթասէր և հեշտասէր տեսանք զինք. այր է կ՚ըսեն՝ կնկան պէս բեհեզներ կը հագնի, մեղուրով ներկուած կը տեսնենք: Պատուհաս քահանայից՝ պատիժ ժողովրդեան՝ բարեկամ օտարաց և անհատնում: Մեր գեղերը քանդուեցան, մեր տուներն աւերակ դարձան ինք՝ պալատներ կը շինէ, պարտէզներ կը շինէ մեր աւերակաց վրայ. իր ամեն ազատքը մէյ մէկ աւազակ՝ մէյ մէկ պատուհաս են դլխուներս վերև, մեր տղայքը մեր աղջկունքը իրենց ծառայութեան և զուարճութեան համար են ստեղծուած. մեր լեզուն՝ մեր հաւատքը հռոմէն աւելի կը նախատեն, օտարին նախատել կուտան. քաղաքը գեղ դարձաւ, միջնաբերդ ապարանքը Բաբիլոն՝ Սոդոմ Գոմոր եղաւ: Ես ալ չ՚եմ խօսիր, մեռացածը դու գնա հասկցիր: Մենք հոս եկանք, թէ որ դու ձար ձարակ չ՚ընես, մենք մեր տուները չ՚ենք կրնար գտնալ. մեր զաւկներուն կեանքը ո՞ գիտէ, հիմա ի՞նչ վտանգի մէջ է, վասն զի երկիրը լըռեներով լեցուն է: Մենք անգամ մը Տարսոնի կուսակալն բողոքեցինք. անոնք որ Տարսոն գնացին չ՚դիտենք թէ՝ ո՞ղջ են թէ մեռած. բանտ մտան մէկ մ՚ալ չ՚ելան. կնիկներն՝ զաւկներն հալեպ ծախուեցան, այն դիտենք:

Քահանան լռեց, սխուր լռութիւն մը տիրեց ամենուն. ամեն աչք Թորոսին կը նայէր, և ոչ ոք հարցմունք ընել չէր համարձակեր. մինչև որ Թորոս՝

—Տէր Հայր, ըսաւ, թէ որ սխուր մոռածութիւն մը եկաւ մեզ ամենուս՝ սա ձեր պատմածներուն վրայ, մի կարծէք թէ զբժկամակութիւն մ՚ունինք ձեզի օգնելու, կամ աշխատութենէ կը փախչինք անոր համար, ոչ երբէք. մենք ըսածներուդ վրայ տրխտեցանք, որովհետև աս ձեր իշխանը Հայ է, որովհետև դուք ալ իրեն կրօնակից և ազգակից եղբարքն էք, և մենք ձեր փրկութեան համար պիտի պատասխանինք Հայու հետ պատերազմիլ՝ հայ արիւն թափել, զոր մեծ մեղք կը համարինք: Բայց քեզի բան մը պիտի հարցնեմ, չ՚էք ձանչեր մէկը որու խօսքը անցուկ լինի այդ ձեր իշխանին առջև:

—Մարդու խօսք ազդեցութիւն ընէ, հրեշտակ Աստուածայն՝ մարդ չ՚ըներ: Այդ իր եպիսկոպոսին անարգանաց և վատութեան վարմունքը կաթողիկոսին ականջ գնացեր հասեր էր, չ՚ենք գիտեր ի՞նչ կերպով. նա ալ իշխանին օրհնութեան թուղթ գրած,

ընպիսկոպոսն ուղած էր Մովք՝ ի կաթողիկոսարանն որ խրատէ. քաղաքն ու դղեակ տակն ու վրայ եղան, կաթողիկոսի յիշատակութիւնն արգիլուեցաւ պատարագի մէջ, և քահանայ մը՝ որ կամ անգիտութեամբ հրամանին կամ գիտութեամբ յիշած էր Սրբազանին անունը՝ այնչափ ծեծ կերաւ և այնչափ ամիս բանտը կեցաւ, որ ելլելէն վերջը հազիւ երեք ամիս ապրեցաւ։

— Լաւ, ըսաւ Թորոս, մենք իրեն քաղցրութեամբ ազդարարութիւն կ՚ուղարկենք, և թէ որ իր ընթացքը չի փոխէ այն ատեն միայն խօսքով չ՚ենք շատանար, և պէտք եղածը կը գործադրենք։

Մարդիկը դուրս ելան, բայց հոն վարը դրան քով ձեացին, և յայտնի կը զգուցէին թէ իրենց իշխանին խրատ՝ ազդարարութիւն ոչ ինչ օգուտ չ՚էր ըներ, սուրը մի միայն մէկ հատիկ դարման էր, «Բայց ան ալ, կ՚ըսէին, ի՞նչ օգուտ ունի Անարզաբայ պարիսպներուն. արդէն իշխանը լսելուն Մամեսիոյ առնուիլը, թող հոս մեր վրայ գային տեսնէինք ո՛վ որի անձնատուր կը լինէր, կը կռուըռտէր, Աստուած ինք մեզի ողորմի։»

Նոյն միջոցին երիտասարդ մը ելաւ պատգամաւոր, որ մէկէն ձի հեծաւ և Անարզաբայ ճանբան բռնեց սլընթաց. հրաման ունէր նոյն իրիկունը դառնալու։ Ուստի տղան կ՚երթար անդադար կրակի պէս, ոչ յայլ և ոչ յահեակ նայելով, և երեք ժամ հազիւ թէ ւզաճ կ՚իջնէր Անարզաբայ միջնաբերդին դրան առջև, խնդնելով թէ պատգամաւոր էր Ռուբինեանց Թորոսի, որդւոյ Լևոնի, իշխանին Վահկայ՝ Մամեսիոյ՝ Առիճոյ՝ Ամուտայ՝ Բարձր բերդի՝ և Սիմանակլայ։ Թէպէտ երիտասարդը անհամբեր կ՚սպասէր, բայց Սմբատ իշխանը կամաւ քամահրելու համար զԹորոս անոր սպասել կուտար։ Բայց Թորոս զուշակութեան ոգին ունէր, ուստի թէպէտ երիտասարդ մը ընտրած էր իրեն պատգամաւոր. բայց լաւ քններ էր զանի, և առանձին խրատեր էր թէ ինչպէս պիտի վարուի։ Ուստի տղան թէպէտ անհամբեր՝ բայց նոյն միջոցին իր Իշխանին պատմութիւնը կ՚ըներ բերդապահաց, թէ ի՞նչպէս հինգ վեց օրուան մէջ անառիկ բերդերը առիկ ընելու սքանչելի զօրութիւն մը կար իր քով, թէ ինչպէս անշահասէր և առատաձեռն էր, և թէ ինչչափ որ խիստ էր պատերազմի մէջ՝ նոյնչափ ալ գթած էր խաղաղութեան մէջ. և նայելով Անարզաբայ միջնաբերդին ամրութեանց, կը բաղդատեր Ամուտայ՝ Վահկայ բերդերուն հետ և ոչինչ կը գտներ անոնց քով պայման Սմբատ իշխանը պատգամաւորը բերելու։

Վերջապէս ժամէն առելի սպասեցնելէն վերջ՝ հրաման ըրաւ Իշխանը պատգամաւորը բերելու։

Հովանոցի մը մէջ՝ բազմոցներու վրայ ընկողմանեալ էր Սմբատ. ծաղկազարդ մարմարէ աւազան մը իր ցնցուղով կը զովացնէր օդը. զինեալ ծառաներ առջևը բաւև կեցած էին անշշունջ. ինք դաժան կերպարանքով հարցուց երիտասարդին.

— Ո՞վ ես, ուստի գաս։

— Մամեսիոյ իշխան Թորոս՝ որդի Լևոնի, զիս ձեզի պատգամաւոր կ՚ուղարկէ։

— Ի՞նչ կ՚ուզէ ինձմէ, ի՞նչ յարաբերութիւն կայ իմ և ապրստամբ փախստականի մը մէջ։

— Ձեր այն փախստական և ապստամբ ըսածը, այս օր, սասը՝ տասուերկու հազար պատերազմողի հրամանատար է, և այս օր շաբաթ մը չ՚կայ՝ վեց ամրութեանց տէր է, դեռ երեկ Տարսոնի կուսակալին բանակը ջարդ ու բուրդ հանեց և ցիր ու ցան ըրաւ. Առանց քաղաքը ընդ հարկաւ ըրաւ, և վաղը իր ձայնին երեսուն հազար հոգի պատրաստ են դիմելու. կարծեմ թէ շատ հաւատարիմ հպատակներ այս ապստամբին հաւատարիմ երջանկութիւն պիտի համարին։

Արդէն դաժան իշխանին աչքերը կրակով լեցուեցան և իր դէրքը փոխելով ու շարժելով՝

— Անզգամ, որոտաց, որովհետև գիտես թէ պատգամաբեր ես, անոր համար կը համարձակիս իմ առջևս այդպէս խօսելու, բայց միտքդ դիր թէ ես անոնցմէ եմ՝ որ ուշ կանուխ գիտեն վրէժ հանել։ Ի՞նչ կ՚ուզէ ինձմէ քու տէրդ։

— Իմ տէրս, Թորոս իշխանը, Լևոնի որդին, Անարզաբայ քաղքին օրինաւոր ժառանգը, ըսաւ երիտասարդը, միշտ հանդարտ և անխռով չի կրնար անտարբեր մնալ այս քաղքիս և իր շրջակայ գիւղերուն բնակչաց աղերսանաց և պաղատանաց, ուստի անոր համար զիս ձեզի կ՚ուղարկէ, որ ձեր գործակալաց խիստ և անլուր

վարմունքը՝ որ անշուշտ ձեր անգիտութեամբ կը գործուի՝ չափաւորէք և արգիլէք, բարի դրացութիւնն՝ որ հայ իշխանաց կը վայլէ՝ չ'աւերուի և հայ արիւն փուճ տեղ չի վազէ։

—Ի՞նչ, քու Իշխանդ օրինաւոր ժառանգ է այս բերդաքաղաքիս... ի՞նչ, քու փախստական աւազակդ ինձի հետ բարի դրացութիւնն կ'ուզէ պահել... իմ գործակալացս անգթութիւնը և խստութիւնը կ'ուզէ չափաւորել... ո՜հ, յիրաւի աս անտանելի է... կորիր առջևէս թէ որ չ'ես ուզեր հիմա հոս շան սատակ իյնալ, և գնա զրուցէ տիրոջդ թէ աւազակ մ'է իր հօրը և հօրեղբօրը պէս, և թէ շատ չի քշեր՝ ուսկից որ գոցի պէս եկաւ՝ հոն պիտի դառնայ և կախաղանն իրեն կ'սպասէ. ցե՛ղերը ու կորիր։

Երիտասարդն այս խօսքերը դարձեալ անխռով մտիկ ընելէն վերջ, առանց պատասխան տալու և առանց երկիւղ նշան մը ցուցընելու իշխանին կատաղի և թունաւոր նայուածքներէն, դլխով բարև մը տուաւ՝ իջաւ դուռը՝ հեծաւ իր ձիուն վրայ և նոյնպէս սարսաշաւ անհետացաւ. ու երբ հասաւ Մամեստիա արդէն մութը տապծուած էր քաղքին վրայ։ Բայց ամեն Հայու տունն ուրախութեան երգերու և նուագարանաց ձայներ կը լսուէին, գինուորները եկեղեցեայց բակերն ու գաւիթները և հրապարակները կը լեցնէին. լեռնցի հայն ու դաշտեցին իրարու հետ կը պագաուէին, Աստուծոյ այցելութեան հասնիլը կը պատմէին, երբ անդին Յունաց թագերն ու տուները լրին ախրութիւն կը թագաւորէր, և հազիւ թէ դիպուածական անցորդ մը միայնութիւնը կ'ընդհատէր։

Բայց մենք դառնանք Անարզաբայ՝ ուր տեսարանը բոլորովին տարբեր էր. հոն միջնաբերդին մէջ Սմբատ իշխանը կատաղած կը պարտէր, մրմռալով և հայհոյելով, բայց ամեն բան վերջ մը ունի, ուստի այս կատաղութիւնն ալ երկայն չի տևեց, վասն զի երբ յիսուն տարիքին կը հասնի մարդ և կ'անցնի՝ կամայ ակամայ խոհեմութիւն մը կ'սկսի՝ կատարեալ կամ անկատար. ուստի թէպէտ բնաւորութեամբ դէդ՝ ժանտ և կամակոր, բայց վերջապէս սկսաւ մտածել լսածներուն վրայ. և դժբաղդաբար դիւրագրգիռ լինելուն չէր կրցեր հանդարտ մտիկ ընել պատգամաւորին բսածներուն, ուստի թէպէտ գիտէր Ամուսայ և Մամեստիոյ առումը, բայց «Ցարսոնի

կուսակալին զօրաց ջարդ ու բուրդ և չան ու չիլ» բառերը դեռ իր ականջին կը հնչէին. արդեօք իրա՞ւ էր՝ թէ զինքը վախցնելու համար շինծու խօսք մը. տես դժբաղդութիւնն ալ որ ուրիշներու հարցնել տղեկանալու ալ կ'ամաչէր. ուստի վեր վար պտըտելով կ'անցընէր ժամանակը. ահա ուրիշ դժբաղդութիւն մ'ալ որ երբ այն յուզեալ վիճակին մէջ կը գտնուէր՝ հազիւ քանի մը հոգի միայն կային որ կարենային համարձակիլ քովը մտնելով և հետը խօսակցիլ, և անոնց երկուքն ալ այն միջոցին ձիերով ժուռ գալու ելեր էին մեկտեղ, այսինքն Նալիսկոպոսը և իր կինը որու ամենքը Սրբազան անունը կուտային։ Ուստի մեր Սմբատ իշխանը իր բարեկութեան և հանդարտութեան սահմանակիցը հասած՝ ուժով ուժով իր պիսակ մօրուքը կը խառնէր. բարեբաղդաբար այս իր տանջանքէն ազատելու համար վրայ հասան Տիկինը և երիտասարդ Նպիսկոպոսը։

Դիտելու արժանի էր այս երկու անձանց մուտքը, և այս մուտքը՝ խոստովանութիւն մ'էր դիտող աչքի մը, մանաւանդ թէ ամեն աչքերու՝ որ նայիլ գիտեն, և միայն երիկներու աչքերը տեսնել չ'են գիտեր։ Կինը որ արդէն քառասուն և քիչ մ'ալ աւելի տարիք ունէր, համարձակ և զուարթ կերպ՝ ձայն ուժով՝ քիչ մը կերկերը՝ նայուածք՝ հաստատուն՝ քալուածք վսեմ՝ գրեթէ խրոխտ՝ երես անզուրած՝ արեւանունք ներկուած՝ ձեռքը խարազան՝ մատերը մատնի. երբ իր երկան և տիրոջ մէկ նայուածքով ձնակատը տեսաւ, իբր քաջ նաւապետ ճանչցաւ թէ փոթորիկ մը անցեր է հոնկից, բայց խնդիրը պէտք էր իմանալ, ուստի զօրաւոր ձայնով մը՝ զոր պարագան աւելի կը զօրացնէր՝

—Ա՛յս ի՞նչ է, տխուր ինք, տեր իմ, ի՞նչ, մտածելու նիւթ մը, կիւրք ելլելու առիթ մը ունեցանք դարձեալ ըսաւ։

—Ո՛չ ի՛նչ, պատասխանեց Իշխանը իր յօնքերը խոժոռ իջեցնելով։

Ա՛յս «ոչինչ»ը, յօնքերու խոժոռ խանարհումը, մեր երկու ամիներուն ահ ու դող պատճառեցին, և փայլակի պէս ակնարկ մը իրարու ձգելէն վերջ, ակնարկ մը՝ ուր խղճի խայթը՝ ոճիրը յայտնութեան երկիւղը՝ հետևանքը՝ ամենքը կը պարունակէր, Տիկինը դարձեալ խօսքը առաւ անհամբեր ձևով մը.

—Թէ որ մարդ իր կնոջ և բարեկամաց ալ իր սրտնեղութեան պատճառները ծածկէ, սուտ են ուրեմն ընտանութիւն՝ բարեկամութիւն և վստահութիւն։

—Ինչ մը առաջ հոս որ լինելիք կրնայիք տեսնել ապըստամբին որդւոյն ինձի ըրած պատգամաւորութիւնը, և դուք ալ անձամբ կրնայիք դատել թէ իրաւունք ունիմ բարկութեան շարժելու։

Այս յայտնութիւնը մեր երկու սիրասուն անձանց մեծ շունչ մը առնել տուաւ, և գոհութեան ակնարկ մը այս անգամ յաջողեցաւ. և ալ խօսելու կարգը Սրբազանին էր որ մինչև հիմա երկիւղալի լռութիւն մը կը պահէր, բայց ալ երկիւղը փարատելով, երեսին վստահութիւն եկաւ, թէպէտ շատ դժուարին լինէր շպարեալ երեսի մը վրայ բարոյական կիրքերը նշմարել։ Եւ յիրաւի, այս անձը որ ձանչցինք քիչ մը վերը, երբ շատ խիստ կը նկարագրէր մեր խեղճուկ Տէրտէրը՝ ի Մամեստիա Թորոսի և իւր խորհրդականաց առջին, գրեթէ երեսուն և հինգ տարեկան երիտասարդ մ՚էր, միջահասակ՝ համեմատ և վայելուչ կերպարանքով, որու ընորհիւք, և հետևաբար ընորհիւք մեր Մամիկոնեան Տիկնոջ (և այս երկու ընորհքներուն մէջ յայտնի է թէ երկնային ընորհք ամենևին միջամտութիւն չ՚ընելով) քիչ ժամանակի մէջ եպիսկոպոսութեան աստիճանի արժանի եղաւ։ Բնականաբար այսպիսի երկնային տուրք մը՝ այսինքն դիմաց վայելչութիւն, որ իրեն յառաջադիմութեան այնչափ օգներ էր, մեծ խնամքով կը տարածէր և օրուան քանի մը վայրկեաններ անոր ղօհել իրաւունք կը համարէր։ Ինչ գործիք որ մարդկութիւնը գտեր էր դեղեցկանալու, ածելի՝ խլիչ՝ վրձին՝ զանազան հեղուկներ և փոշիներ՝ Բիւզանդիոն իրեն կը մատակարեր։ Աւելցնենք ասոնց վրայ քնքուշ և շինծու ձայն, նազելի՝ գրեթէ իգական քալուածք մը, մանրիներով զարդարուած ձեռքեր՝ որոնց ճերմակութիւնը պահելու համար՝ Սրբազանը փոքրիկ բազկատառածութիւն մը հնարած էր որ արմունկներէն կ՚սկսէր. մարդը կատարեալ կ՚ունենանք, եթէ յիշենք որ իր հասարակ սերունդէն դըժդոհ՝ նախաբարական տոհմերու կը դիմէր ազնուական ճիւղագրութիւններ հնարելով։ Ուստի, ազու ձայնով և գլխու կոտրտուք շարժմունքով սկսաւ խօսիլ

«Մեծազօր Իշխան, Ձեր տէրութիւնը այս ամուր բերդաքաղաքին մէջ ոչ միայն ապստամբի որդի մը արհամարհելու, այլ նաև զօրաւոր ինքնակալութեան մը զօրութեան դէմ խիզախելու իրաւունք ունի։

—Այո՛ Սրբազան, պատասխանեց Իշխանը, բայց թէ որ իրաւ է պատգամաւորին մեծաբանութիւնը, այս տղան շաբթուան մը մէջ այնչափ առաջ անցեր գնացեր է՝ որ իր հայրն ու հօրեղբայրը տարիներու մէջ մոքերնէն չ՚անցուցին երթալ։ Տասը տասուերկու հազար հոգւի բանակ կազմել... Տարսոնի դքսին բանակը խորտակել ցիր ու ցան ընել... և մեզի ալ ազդարարական պատգամ ղրկել որ մեր ժողովուրդը քաղցրութեամբ կառավարենք....

—Ի՞նչ, ըսաւ Տիկինը վեր ցաթկելով վերաւորեալ վագրի մը պէս, այս միայն կը պակսէր, այս երկուան սրիկան մեզի հրաման խրկելու եղեր է. շատ բան, իրո՞ն էր մնացեր։

—Բայց հոս խնդիրը, ըսաւ Սրբազանը խորհրդածելով, երկու կէտ ունի ստուգութեան արժանի. ճշմարիտ է որ կրցեր է տասուերկու հազար հոգի գլուխը ժողվել, ճշմարիտ է որ խորտակեր է Տարսոնի Դքսին բանակը։

—Տեսնենք մեր տղաքը բանի մը տեղեկութիւն ունի՞ն, ըսաւ Իշխանը՝ որ կ՚ուզէր անհոգ և արհամարհոտ ձեւին տակ իր սրտին մեծ տանջանքը հանդարտեցնել։ Տղա՛ք, Վասիլին ձայն տուէք։

Լռութիւն մը յաջորդեց այս մեր երեք ժողովրդականաց մէջ, ուր Տիկինը շատ յուզեալ ինքզինքն կը ցուցնէր քան թէ ինչ որ էր և ուր Սրբազանը իր իգական փափուկ շարժմունքներուն մէջ գոհութեան ժպիտներ առ նա կ՚արձակէր, վասն զի ներկայ վտանգը անցեր և հեռաւոր ու կասկածելի ապագայի մը վրայ էր խընդիրը. երբոր Վասիլ երևցաւ իր տխուր և կատուի աչքերով (այս անարգ անձը Իշխանին երևելի լրտեան էր, իր տանը ընդհանուր գործակալն էր, և առաջին գողը ու մեր երկու հրեշտակային անձանց կցորդակից միանգամայն), Իշխանը ըսաւ.

Վասիլ դու ի՞նչ կը լսես ապստամբին համար, իրա՞ւ է որ Մամեստիայէ զատ քանի մը բերդերու ալ տիրեր է։

—Տէր, իմ լսածիս թէ որ հաւատալ պէտք լինի, այս շրջակայքը Անարզարայէ զատ ամեն տեղէ տէր եղեր է, և բոլոր Տորոսի ժողովուրդը գէնք առած գունդագունդ կը վազեն իր դրօշակին տակ

մանելու համար. կը պատմեն նաև թէ Տարսոնի Դուքսը արտորնօք ղօրքը առած Մամեստիոյ վրայ գալու ատեն, ապստամբը գինքը դիմաւորելու մեծ յաղթութիւն մը ըրեր է. այս վերջինը ստուգութեան արժանի:

—Լա՛ւ, իմացայ, Վասիլ, ըսաւ Իշխանը, և գործակալը կըրցաւ չափ պզտիկնալով և ետ ետ քաշուելով անհետ եղաւ:

—Ի՞նչպէս, Սրբազան, լեցիք հիմա:

—Զարմա՞նք: Բայց Վասիլ ալ կը գլուցեր թէ ստուգութեան կարօտ է այս վերջին լուրը,

—Փուճ տեղ կ'այլայլիք, ըսաւ Տիկինը քաջասրտութեամբ, անոր հօրն համար ալ կ'ըսէին՝ մեծ մեծ կը ջարդէին՝ երբ ես նոր հարս էի, դեռ տղայ էի, եւքը Կայսրը եկաւ, Հայրն ալ՝ մայրն ալ՝ տղաքն ալ՝ ամէնն ալ կապեց առաւ Պօլիս տարաւ, երկիրն ալ խաղաղեցաւ:

Տիկնոջ ամէն ըսածը շիտակ էր, բայց իր տարիքէն, վասն զի այն ժամանակներն ալ երեսուն տարուց՝ և աւելի կար և արդէն տասուերկու տարեկան տղու մը տէր էր:

Իսկ Սմբատ, որ թէպէտ Մամիկոնեան ալ լինէր, փոքրոգի մէկն էր, յաջողութեան մէջ մեծամիտ. հիմա աւելի կը մտածէր մեր ձակայ վտանգին վրայ՝ քան թէ իր Տիկնոջ տարիքին սխալը շըտկելու. կերակուրի նստաւ՝ ախորժակ չ'ունէր, անկողին մտաւ՝ քուն չ'ունէր, և երբ վերջապէս շատ գժուարաւ քունը տարաւ, անհանգիստ երազներ՝ որոնց մէջ Թորոս մեծ դեր կը խաղար՝ գինքը անհանգիստ ըրին:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՄԱՐԳՐԻՏ

Երբ միջնաբերդին վերնագաւառները զանազան կիրքեր կը յուզուէին, վարը պահապան զօրաց խումբը նստած կը խորհրդածէին պատգամաւոր երիտասարդին տուած լուրերուն վրայ:

—Տղայ, կ'ըսէր տարեց կորովի քաջակուսի մարդ մը՝ որուն

աչքերը կը փայլէին իր արևէն թխացեալ դէմքին վրայ, ի՞նչ, խելքա՞ս ես, ի՞նչ ես, Թոզ գայ ըսելն դիւրին բան է. . . «Ապստամբ, ապստամբ» կ'ըսեն կ'երթան. անոր Հայրն ալ ապստամբ էր, Հօրեղբայրն ալ ապստամբ էր, բայց Տաճիկն ալ՝ Փռանգն ալ՝ Հոռոմն ալ անոնց անունէն կը դողային: Այս մեր բոլոր իշխաններն անոնց առջև բարև կը կենային, երբ հրամայեր կը նստէին. նեղն որ մըտնէին՝ անոնց ծոցը կ'ընկնէին. անիրաւութիւն մէկն որ ընէր՝ անոնցմէ կ'ակնածէր: Հոռոմն որ Կայսր ունինք մեծ քաղաքը կ'ըսեր՝ կը պարծէր, տարին տասն անգամ ալ անոնց ձանբան կը չափեր կը շողոքորթէր, վասն զի գիտեր որ այն կայսրը շատ հեռու էր թէ որ քուն չ'էր. Փռանգը որ մեծ թագաւորներ ունինք արևմուտք կ'ըսէր, գիտեր որ եթէ երբ գան՝ ձանբան անօթի չմեռնին ողջ հասնին այս տեղ՝ շատ բան կրնան ընել. բայց ծովն ու ցամաքը անոնց ոսկորները լցուցին ամէն անգամ որ եկան. անոր համար էր որ երկուքն ալ անոնց հետ լաւ կը վարուէին, մինչև որ մէկ անգամ կայսրն եկաւ, այն աղուէսները քովն եկան ժողվուեցան, և ապստամբներուն վրայ լինկան, տունը քանդեցին. ես այս մեր Իշխանին հետ մէկտեղ էի, երբ Լևոն բռնեցին կայսեր բերին, Աստուած վկայ ես ամչցայ երբ նա Հայ իշխաններուն ու զօրքերուն վրայ աչքը դարձուց. չ'գիտեմ ի՞նչ կար այն աչքերուն՝ այն նայուածքին մէջ: Այն Լամբրոնի Սեբաստոնները, այն մեծ Հայ իշխանները մինչև ականջ կարմրեցան, երբ այն մարդուն ձեռքերը շղթաներ անցուցին, ես չի կրցայ դիմանալ լացի . . . :

—Դուն լացիր, ըսաւ անդիէն գուարթ ու սկրտած երիտասարդ մը, Տէ՛ տղայք, Աւագ աղբարն լացեր է, կը լսէք. գեանաչաւիժ եղաւ այն օր թէ փոթորիկ:

—Հա՛, գլուցեց Աւագ, անանկ փոթորիկ մը եղաւ որ Հայուն անուն՝ ի՞նչ պատիւ ունէր տարաւ, այն օր այս օր, Հոռոմն ու Փռանգը, Տաճիկն ու Թուրքը մեր վրայ քամահրանքով կը նային. մեր իշխանը Պապերոնի տէրն է, Անարզաբայլ կուսակալն է կ'ըսենք, քանի մը մուրիկ Հոռոմ որ կայ քաղքին մէջ՝ անկից աւելի մեծ ձայնով կը խօսին. ամէն օր մենք ենք քաղքին տէր, կ'ըսեն, ձեր Իշխանը մեր Կայսեր ծառան է կ'ըսեն, և մեր Իշխանը անոնց ձայնը չէ լսեր, ու մնացեալ ո՞վ որ մնայ կը դողացնէ . . . :

— Մինակ լինքն ալ Տիկինէն կը դողայ, ըսաւ մէկ ձայն մը քըքիջով։

— Ինչպէս, Տիկինն ալ Սրբազանէն կը դողայ, ըսաւ ուրիշ մը, և ծիծաղը ընդհանուր եղաւ։

Մինչ Աւագ՝ խոժոռ, չ'էր խնդար, և դաժան կերպով մը ըսաւ.

— Իրաւ որ ես չ'եմ կրնար խնդալ այդ ըսածնուդ վրայ, վասնեմ այդ Պիսկոպոսին պատիժը մենք ամենքս պիտի քաշենք. Կաթողիկոսին հրամանին չի հնազանդեցաւ մեր Իշխանը, այն ալ նըզովեց. մեր բանը բուսած է. մարդ սխալական է, այսօր կ'սպաննէ, վաղը կ'աւազակէ՝ կը յափշտակէ՝ անգթութիւն կ'ընէ, Աստուած կը բարկանայ, Տէրտէրն «Ողորմիս» կ'ըսէ, Թողութիւն կուտայ. բայց երբ Կաթողիկոսի հրամանը՝ որ Լուսաւորչայ փոխանորդ է, եպիսկոպոս կ'արհամարհէ, Աստուած Տէրտէրին ողորմիսին չի լսեր, մեղքերն ալ չ'են ալձակուիր, Աստուած ալ թողութիւն չի տար. մենք՝ փառք Աստուծոյ՝ մեղաւոր ենք ամենքս, հոս՝ վարը՝ ժողովուրդն արիւն արցունք կուլայ ձեր ձեռքէն, թէ որ երբեմն երբեմն մեր մեղքերը չի քաւուին, Անարզաբայ վրայ երկնքէն կրակ կը թափի, ամենքս ալ կը լափէ, և մենք ոչինչ կը լինինք։

— Ի՞նչ կ'ըսես, մարդ, ըսաւ ուրիշ մը, թէ որ կրակ կայ երկինք թափելու, թող Եպիսկոպոսին վրայ թափի, նա է չարեայ պատճառ։

— Փառք տուէք Աստուծոյ որ Մարգրիտ օրիորդը կայ, ըսաւ անդիէն ուրիշ մ'ալ, մէկ հոգի մը թէ որ կայ որ մաքուր է Աստուծոյ առջև՝ այդ աղջիկն է այս միջնաբերդին մէջ. թէ ոչ՝ Աստուած իրաւ կը կործանէր՝ և ամենքս քարին հողին տակ կը ծածկէր։

— Թէ որ պատգամաւորին պատմածն իրաւ է Թորոսի համար, քարն ու հողը նա պիտի ծածկէ մեր գլխուն, ձայնեց Թևթևասլիկ տղայ մը.

— Տէ, մանուկ, դուն ուսկից գիտես անոր պատմածն, ըսաւ խստութեամբ Աւագ։

— Ես հոս էի, երբ խօսեցաւ ձեր հետ, հաքը երբ Իշխանին քոմէն ելաւ, ես ալ հետէն ելայ... Իշխանին ըսաւ որ քու մարդիկդ գող են. ժողովուրդը մի՛ չարչարէք. քու մարդիկդ գյին կը

չարչարեն. հաքը Իշխանը բարկացաւ, տեղայ ցատկեց, փրփրած՝ աչքերը սանկ սանկ շարժեց. ես փախայ, հաքը մարդն ալ եկաւ, ձին հեծաւ, հա կը վազէր՝ կը վազէր...

Տէ, լռէ, ըսաւ Աւագ, հիմա ծեծը կուտես. տղան այս խօսքը լսածին պէս՝ հետացաւ զգուշութեամբ միջոց մը ձգելով իր և Աւագին մէջ։

— Կատակը մէկդի, Աւագ եղբայր, հարցուց երիտասարդ մը, թէ որ այս մեր Անարզաբան պաշարեն, դու ի՞նչ կարծես, վտանգ կա՞յ առնուելու։

— Պաշարմունքը գիտէ. Անարզաբա՝ կայսրը պաշարեց՝ առաւ Լևոնէն, թէ որ տիար մէկը պաշարէր՝ Լևոնին ձանկէն ի՞նչ կ'առնէր։

— Ամուսայ բերդապահ պընուոր մը տեսայ այս օր՝ վարը՝ քաղաքը. դուք պատրաստ եղէք կ'ըսէ, ձեր բերդը մերինէն շատ ակար է։ Ապստամբին համար կը պատմէ թէ մէկ հարուածը չի կրկնէր. աչքերէն կրակ կը թափի, ինք մինակ՝ ութը տասը հոգի գետին փռեց, անոր ձեռքէն ինկնողն ողջ չ'եղաւ։

— Չ'ըսիս, այդ նըզովեց արմատ՝ հօրը գլուխն է, ըսաւ Աւագ ձակատը թթուեցնելով։

— Երբ ես լսեցի, վախն գլխս առաւ, թէ որ հոս մէկ մը երևայ՝ վարի քաղաքացին դռները մէկէն իրեն կը բանան, մենք միջնաբերդին հետ կը մնանք։

— Ես ալ քաղաքացի որ լինիմ, դռները կը բանամ, դուք ծեծ ու փետ՝ հայհոյութիւն միայն գիտէք. թէ որ ապստամբը ձենէ աղէկ է...

— Տէ, պօռաց Աւագ, դու դեռ հո՛ս ես և կը խօսի՞ս, ես այդ լեզուդ չի կարեմ՝ մարդ չ'եմ, և դեռ նա ոտք չ'եղած՝ մանուկ աներևոյթ եղաւ։

Ամենը սկսան ծիծաղիլ, և Աւագ որ ծիծաղելու արհեստը չ'էր գիտեր՝ գլուխը շարժելով՝

— Հիմիկու խնդութեան ամենէն խելօք կը խօսին, քաղաքացին մենէ ի՞նչ աղէկութիւն տեսած է որ հաւատարիմ մնայ։

Այն միջոցին վաթիլէ սուր քիմը երևեցաւ դաւթին ծայրը, և լռութիւն մեկէն յայտնեց, վասն զի գիտէին թէ Իշխանին լստեան է։ Երբ աներևոյթ եղաւ,

—Դժոխքի պատուհա՜ս, սատանայի գլուխն իյնա՜, ըսաւ մրմռալով երիտասարդ մը՝ մուր տալով եաւէն. ես քեզի լաւեսութիւն կը սորվեցնեմ, վաթսուն գաւազան, ութ օր բանտ, չոր հաց, հէ՛:

—Թէ որ իշխանին Օրիորդը քու ձայնդ չ'իմանար չ'աղաչէր, հարիւր յիսունը պիտի ուտէիր, բաղդ ունիս եղեր:

—Ի՛նչ որ կերայ խմեցի, բաղդ է ատիկայ, բայց հոգ չ'է. վասիլեն չի մնար, օր մը ես ան կը հոգամ:

—Այդ շանը հետ մ'իյնար, տղա՛յ, կ'լսեմ քեզի, ըսաւ Աւազ, ետքը հանգիստդ կ'աւրես, տեղէդ՝ հացէդ կ'ըլլաս, ես փորձով քեզի հետ կը խօսիմ: Երբ քսան տարու էի, Լամբրոնի իշխանին քոմէն էի, հոն վերակացու մը կար, իրա՝ ասոր պէս անպիտան չ'էր, բայց խիստ մարդ էր. պզտի բաներու համար խարազանի հարուած կը բաժնէր, օր մ'ալ աղջիկ մը փախուցեր էի լեռը, հայրն ու մայրը եկան դանգատեցան... ի՞նչ կը զարմանաք, հոն՝ Լամբրոն՝ ասանկ բանի համար կատակ չ'են ըներ, Անարզաբա չ'է: Վերակացուն դիս բռնեց, Իշխանին պիտի տանէր, շատ աղաչեցի որ թող տայ. բերդին դրան առջև էինք, ազատելու ձար չի կար. դանակը մէյ մը որ կողը մշտեցի, այն ելնելն էր, մէկ մ'ալ այն տեղուանք չի տեսանք. բայց լաւ դուռ էր, հոն մնացողը մարդ կը լինի, սրինկայ չ'լինիր:

—Հոս այդպէս բանի նեղութիւն չի կայ: Ահա իշխանիկը կուգայ: Եւ ամենքը ոտք ելան շարուեցան:

Փառնը հինգ տարու երիտասարդ մը ներս կը մտնէր նոյն միջոցին, երեք չորս զինեալ ծառաներով, բարակներով և բաղէներով, որսի կը դառնար: Դեղեցիկ և դուռդ երիտասարդ մ'էր, հազիւ թէ աչք մը ձգեց պահապանաց խումբին վրայ, առանց բարևելու իջաւ ձիէն և իւր սենեակները գնաց: Ցայտնի է թէ մօրը ամենասիրելի տղան էր այս. ինչ հաճոյք որ կարելի էր հոգալ իր անդրանկին՝ հօրը կամքը կ'ընէր և կը ձարէր, և որպէս զի աչքին առջևէն չի կորսնցընէ, դեռ տան և ութը տարեկան կարգած էր վայելչէ՝ թարմ և միամիտ աղջկան մը հետ, որ այս շփացած տղուն հաճոյից համար ստեղծուած լինելն հաւատալով, նորա բռնաւորութեան և ամեն կոպիտ վարմունքներուն աղախնաբար կը տանէր:

Խեղճ կինը որ արդէն երկու զաւկի ալ տէր էր, մի միայն միսիթարութիւն մը թէ ունէր և խորհրդատու իր տալը՝ օրիորդն էր որուն սուր միտքը՝ առաքինի ծանրութիւնը՝ ամենուն ակնածութիւն կը բերէին, մանաւանդ որ հօրը ամենասիրելին էր: Սև աչք՝ սև ընքուի՝ սև մազերէ պսակեալ բարձր ձակատ մը՝ վայելուչ հասակ մը՝ նայուածք որ դիմացինին սրտին գաղտնեաց կը թափանցէր. տաքիքէն առաջ անսովոր ուշիմութիւն իւր բնաւորութիւնն էին. ներքին և արտաքին ամեն իր հօրը տան և իշխանութեան անկարգութեանց տեղեակ և վերահաս, և դարմաններու անհնարութեան նախատես՝ շատ անգամ ուզեր էր կուսանաց վանք մը քաշուիլ և միայն հօրը աղաչանաց զիջեր էր, և ոչ թէ մօրը հրամանաց՝ որ շարունակ զինք կարգելու կ'ելնէր, միշտ մերժուելով և աղջիկը տեսակ մը անզգայ կը համարէր: Իր կեանքը կ'անցուներ աղօթքի՝ բարեգործութեանց՝ իր հարսին միսիթարութեան և նորա տղայոց խնամքներու հետ. թէ որ բարի նախախնամութեան մէկ նշոյլը Անարզաբայի պարիսպներէն կրցեր էր սպրդիլ անշուշտ այդ աղջիկն էր, և տառապելոց միակ յոյսը իր վրայ էր, թէ որ կարենային յաջողիլ իմացնելու անոր իրենց վիճակը՝ անյողդողդ պաշտպան մը կը գտնէին. բայց շատ անգամ, նաև այն պաշտպանութիւնը՝ վերջը սոսկալի վտանգներ և վրէժխնդրութիւն կրնային պատճառել, անոր համար շատերը իրենց վիշտերը անկից նաև կը ծածկէին: Ասլիսի էր Մարգարիտ այդ պալատին մէջ՝ փշոտ մացառներու և տատասկներու մէջ աննման ծաղիկ մը, որ ամենէն ժպիրհները և անզգամները կը յարգէին ու կը պատուէին, բայց ի մէկ անձէ՝ որու անարգ բզեզի սիրտը և վատ զգացմունքները՝ այդ ազատնոյն մաքուր սրտին բարձրութիւնը չէին կրնար հասկնալ: Մինչև անգամ մի յարմար առիթ գտնելով համարձակեր էր աղտեղի սրտին գարշութիւնը իրեւ փափուկ զգացմունք օրիորդին առջև տարածել. իսկ նա այնպիսի արհամարհոտ ծիծաղով մը պատասխանեց Սրբազանին, և իր պզտրտիկ ոտուընկրով այնպիսի անխնայ սաստկութեամբ կոխկռտեց այդ գարշութեամբ լեցուն փամփուշտը՝ զոր նա սիրտ կ'անուանէր, որ ալ պայթելով զեղանելով՝ համարձակեցաւ օրիորդին թևը բռնել իրեւ թէ բռնութեամբ առ ինքն ձգելու համար, բայց չ'էր գիտեր նա ի՞նչ անընկճելի բնաւորութիւնք կան. մէկէն սոսկալով ետ քա-

շուկայաւ, վասն զի օրիորդին աջ ձեռքին մէջ փոքրիկ սայլասուր դաշոյն մը այնպիսի արագութեամբ իր աչքերուն փայլեցաւ, որ նուիրական անձը բոլոր իր սրբութեան վերարկուն հագնելով, ինչպէս օձն իր շապիկը, խոստովանեցաւ թէ փորձելու համար էին ամեն խօսքերն ու շարժմունքները, և թէ շատ գոհ էր օրիորդին առաքինութենէն, որ նոյնպէս պարզութեամբ խնդրից իրմէ իւր միամտութիւնը ուրիշ անգամ չի փորձել, վասն զի այդ տեսակ փորձառութեանց ու կատակներու փոխարէն, կրնար հարուած մը տալ և ամեն բան հօրը իմացնել. և ոսկեզատեան փոքրիկ դաշոյնը իր գգեստներուն մէջ դարձեալ ամփոփեց և հեռացաւ:

Նոյնպէս Սրբազանը իր ճանբան գնաց՝ ուխտ և դաշինք գնելով մտքէն ուրիշ անգամ այսպիսի վայրենի և անամոթ սրտերու փորձութեան խաղ ամենևին չի խաղալ:

Գիտեն մեր ընթերցողք թէ ի՜նչ տաժանելի գիշեր մ՚անցուց Սմբատ իշխանը. ուստի առտուն կանուխ եկաւ ծաղկանց պարտէզը պտոյտ մ՚ընելու համար, և զարմացաւ այն ժամանակ հոն գանելով իր աղջիկը՝ որ վարդի կոկոն մը ձեռքը կը պաըտէր:

—Այս առեն դու եղեր ես, աղջի՛կս, ի՜նչ գարմանք:

—Զարմանք թէ որ կայ՝ քեզի համար է, հայրիկ, որ միշտ ուշ կ՚ելլես, իմ սովորութիւնս միշտ այս առեն հոս գտնուիլն է: Ուրեմն արտաքոյ կարգի՞ վիճակի մը մէջ ես:

—Այո՛, արտաքոյ կարգի երազներ գես անհանգիստ ըրին: Չ՚ես հարցներ թէ ի՜նչ երազներ էին:

—Գիտեմ. ըսաւ օրիորդը:

—Ի՞նչ, իմ երազներս գիտե՞ս, հարցուց Իշխանը աչքերը մեծ մեծ բանալով:

—Գիտեմ թէ Թորոսի հետ էիր բոլոր գիշերը:

—Ինչէ՞ն գիտես:

—Անկից գիտեմ որ մենք տասը տարիէ ի վեր, քանի որ ես ինքզինքս կը ճանչնամ, այսպիսի վտանգի մը մէջ չէինք գտնուեր. և կարելի է որ քանի մը օր վերջը թէ որ չ՚ընկնինք իր ձեռքը՝ փախստական և թափառական՝ օտարներու դուռը պիտի զարնենք, ապրնդականութիւն փնտռելու համար:

—Այս ի՜նչ յուսահատ և թշուառ դուշակութիւններ են, քու աչքերդ կ՚երևայ թէ ամեն բան սեւ ու տխուր կը տեսնեն:

—Թէ որ ես սեւ ու տխուր կը տեսնեմ, միթէ իմ է յանցանքը: Հինգ տարի է, հայր իմ, որ ամենուն և քեզի շատ անգամ աղաչեցի որ քիչ մը գումթ ունենաք խեղճերուն վրայ, որոնց բազդը ձեր ձեռքն է յանձներ Աստուած. և լինչի մտիկ չ՚ըրիք: Այնչափ աղաչեցի որ սա անպիտան՝ անգութ և սրիկայ գինուորաց տեղ, պարկեշտ՝ համեստ և ուղիղ մարդիկներէ խումբ մը կազմել, և թէ որ աւելի քիչ ալ լինէին՝ կարելի էր աւելի վստահութիւն ունենալ մտիկ չ՚ըրիք:

—Աւելի քիչուոր թէ լինէին, ինչպէ՞ս աւելի վստահութեան արժանի կ՚ըլլային: Չ՚եմ հասկնար:

—Շատ պարզ էր. քաղքին բոլոր ժողովուրդը մեզի հետ կը լինէր. երբ հիմա աս աւազակներուն պատճառաւ՝ նաև մեր հարըստահարութեանց պատճառաւ՝ ամենքը մեզի հետ թշնամի են. և վաղը առաջին վտանգին մեզի դէմ պիտի միաբանին: Եւ որ աւելի մեծն է, այս անպիտան աւազակներուն վստահիլ կարելի չ՚է, և մեծ անխոհեմութիւն:

Այս խօսքերուն Իշխանը տխուր՝ աչքերը գետինը սևեռած կը մտածէր, և լռութիւնը երկար քշելէն վերջ, ըսաւ.

—Ուրեմն ես շատ դէշ ըրի՝ երբ երկ բարկութեամբ և նախատանօք մերժեցի Թորոսի պատգամաւորը:

—Անոտարակոյս, դժբաղդաբար ես երբ իմացայ՝ շատ ուշ էր, և պատգամաւորը արդէն ձի կը հեծնէր:

—Բայց դու իմացար թէ ինչ ամբարտաւան պատգամ ինձ յուղարկել յանդգներ էր այդ ապստամբը:

—Ամենն ալ իմացայ տեղն ի տեղ:

—Լ՚աւ . . .

—Կեցի՛ր, սիրելի հայրիկս, արդար լինելու համար դու ինքզինքդ Թորոսի տեղ դիր, Թորոս եղիր վայրկեան մը, բանտէն փախած՝ ութը տասը օրուան մէջ հինգ վեց բերդի տէր եղեր. տասը խած՝ ութը տասը օրուան մէջ հինգ վեց բերդի տէր եղեր. տասը քսան հազար զօրաց հրամայէ, եղիր քաջ՝ եղիր խելօք, Տարսոնի կուսակալը խորտակէ . . . . .

—Բայց դու այս առասպելներուն կը հաւատա, աղջիկ:

—Բայց ասոնք առասպել չ՚են, ստուգութիւն են:

—Դու ուսկից գիտես։

—Ես այս քաղքիս մէջ քու լուեանդիդ, ամենէն և Վասիլէն շատ աւելի աղէկ գիտեմ ինչ որ կ'անցնի։

—Ի՞նչ կ'ըսես։

—Այո, ես երբ առտուները իմ ծերուկ Մարտիլոսը հետ առած, իմ դեղերու տուփս մէկտեղ կ'իջնեմ քաղաք, ամեն տուն կը մտնեմ, Հայ՝ Յոյն՝ Տաճիկ իրենց հիւանդու թիւնները և վէրքերը՝ ինչպէս տուները՝ ինձի կը բանան, ամեն բան կ'իմանամ. գիտեմ որ բոլոր քաղաք այր և կին՝ ծեր և տղայ՝ քահանայ և աշխարհական մեզի թշնամի են, գիտեմ որ երբ թշնամին գայ ու բանակը զարնէ, առանց նեռ մը՝ քար մը նետուելու դռները պիտի բացուին. եաքը այս մէջնաբերդը իր բերդապահները պիտի մատնեն։ Եւ գիտեմ թէ թշնամին՝ որ մենք ապստամբ կ'անուանենք՝ մեր կարծածէն և լսածէն շատ աւելի զօրաւոր է։

—Բայց դու ինչէ՞ն իմացար այս ամեն բան։

—Ես քանի օր է Յոյն այրի կնկան մը աղջիկը կը նայիմ՝ որ ծանր ջերմով կը պառկի, և որուն եղբայրը Մամեստիոյ իշխանին ծառայութեան լինելն գիտէի. երէկ՝ կէս օրէն վերջը՝ երիտասարդ մը տեսայ հիւանդին սենեակը վերաւոր, որ էշ մը հեծուցած բերեր էին Սառանայի պատերազմէն իր մորը տունը. տղուն վէրքը նայեցայ, որ ծանր չէր, այլ անհնամ ճիալէն ծանրացեր էր. եաքը իրեն պատմել տուի ամեն բան, իմացայ թէ այդ ապստամբը սովորական մարդ մը չէր և ինքնիրեն ամբողջ բանակ մը կ'արժէր իր քաջութեամբ՝ խոհեմութեամբ և առաքինութեամբ։

—Թողունք հիմա այդ մարդը իր կատարելութիւններով։ Բայց դու ըսիր թէ քահանաներն ալ մեզի թշնամի են հոս այս քաղքիս մէջ։ Ես անոնց ամենուն փիլոնն առնուլ կուտամ։ Հիմա Սրբազանին հրաման կ'ուղարկեմ։

—Ի՞նչ օգուտ անոնց փիլոնը առնելէն. անով մեզի աւելի բարկամ կ'ընենք զերենք։ Արդէն այդ Սրբազանն ալ միթէ մեր վէրքերուն մէկը և մեծը չէ՞... ի՞նչ պարապ տեղ կը խօսիմ այս նենթերուս վրայ, տեսնենք դիպուածները մեզի ի՞նչ կը պատրաստեն։

Երկար լռութիւն մը յաջորդեց։ Իշխանը իր պողպատ սկսաշարունակել պատիզին մէջ վայրկեան մը, և վերջը անհետացաւ գնաց իր սենեակը իր լուեաններուն հետ խորհրդակցելու համար։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՍՏԵՓԱՆԷ ԵԻ ՄԱՆԷ

Անաբզաբայ իշխանը անձամբ իւր համբարանոցները աչքէ կ'անցուներ, տարիէն աւելի ժամանակի պաշար գտնելով՝ կը հանդարտէր. նոյնպէս ամեն տեսակ զէնք քննութեան կ'առնուէին, զրահ կրթութեան հանդէսներ կ'լինէին. բոլոր ձանբաները ապիս անդին լուեաններ կ'ուղարկուէին. և ամեն օր նոր նոր լուրեր կ'առնէր նա ի շրջակայից՝ նաև ի հեռուստ. և ոչ մէկը գոհացուցիչ էին։ Հինգ օրէն վերջը Տարսոնի իշխանէն նամակ մը առաւ որ իրեն կ'իմացնէր թէ, թէպէտ անկարող էր առժամայն իրեն հասնելուն, բայց թէ յոյս ունէր քիչ առենէն մեծ և զօրաւոր օգնութիւն դանելու Կոստանդնուպօլսէն. վասն զի գրած և իմացուցած էր թէ Հայք բոլոր ապստամբին հետ միանալով, ինք պաշտպանողական դիրք մը բռնելու պարտաւորուած էր։

Ամեն օր՝ քանի մը կասկածելի անձինք ոչինչ պատճառներու համար, նաև մէկ թշնամական դրգռութեան համար՝ միջնաբերդը կը բերուէին, կը տանջուէին, կը բանտարկուէին, բայց ապացուած էր ամենուն որ ամեն այս տեսակ գործեր գաղանի և լռելեայն լինէին քան կարելոյն, որ «Մարդ չ'իմանայ» այսինքն՝ Օքթոդէս չ'իմանայ։ Վասն զի Իշխանը որ իր աղջիկը կը սիրէր առաջ՝ քանի կ'երթայ կը յարդէր նաև զանի, և քիչ քիչ կ'սկսէր ակնածել իրմէ։

Այս ակնածութիւնը բոլոր ընտանեաց իւրաքանչիւրը մէկ մէկ կերպով ունէին իրեն համար, Տիկինը առանց սիրելու այս գաւակը՝ կը դողար որ յանկարծ իր անկարգութիւնը չի նշմարէ աղջիկը, ինչպէս ամեն յառաջատար մայր՝ նաև նա որուն բարոյականը ի մեծ նաւակոծութեան կը գտնուի՝ կ'ուզէ անվկանդ երեւալ իր զաւկին.

անդրանիկը իր կնոջը թափած արցունքներուն մխիթարիչ ի նա կը գտնէր. Սրբազանը՝ որովհետև նա ալ կերպով մը ընտանեաց մաս կ'համարուէր, որ ղենք կ'առէր հիմա սրտին բոլոր զօրութեամբ՝ բոլորովին իր ձայնին անուշութիւնը, բառերու և իմաստներու վայելչութիւնը ու ձևերու քաղաքավարութիւնը պատրաստի ունէր անոր համար:

Թորոսի դէմ եղած պատրաստութեանց մէջ կար նաև քաղքին պարիսպներէն հեռանալու արգելքը, որով մեր որսորդ իշխանիկը Բակուրան կը պարտաւորէր ակամայ բանտուիլ ինչպէս Տիկինը և Սրբազանը՝ որ իրենց ձիարշաւները գադրեցնելու պարտաւորուած էին: Այս արգելքները բոլորովին անհիմն չէին, վասն զի ասպատակ ձիաւորաց խմբեր երբեմն քաղքին պատերէն կ'երևային, և անհետ կը լինէին: Իսկ քաղքին մէջ բոլոր դէմքեր թէպէտ ախոյր կը տեսնուէին, բայց մեծին ու պզտկին սիրտը ուրախութեամբ կը տրոփէր, և անհամբեր կը սպասէին թէ երբ պիտի երևայ ազատարար զրօշը:

Այս սպասողներուն ցոյսը պարապը չ'ելաւ, վերջապէս պատրաստուելու եկած օրէն ութ օր վերջը, առաւօտուն մեծ ամպ մը փոշոյ՝ քաղաքը պատեց, և երբ փոշին անհետացաւ՝ տեսնուեցաւ Թորոսի բանակը՝ ուր քան հազարի մօտ մարդ վարժ աչք մը կրնար դատել. և ուր զարմանալի բարեկարգութիւն մը կը տիրէր անծանօթ բոլորովին երկրին բնակչաց. վրաններըը կանոնաւոր՝ ի կարգ շարուած էին, բանակին չորս կողմը խրամներ կը փորուէին և անոնցմէ պեղած հողը պարսպապէս ամուր պատնէշ մը կը կազմէր բանակին չորս կողմը. մէքենաներ կը բերուէին կարգաւ կը շարուէին յարմար պիրքերու դէմ՝ ուր պիտի գործադրուէին, և որ դիտելու արժանի էր գեղեցիկ և բազմաթիւ հեծելազօրաց խումբ մը կ'երևար որոնց կէս մասը արաբացի ձիերէ կազմուած էր: Ու երբ Թորոս տեսնուեցաւ բարձր և ահեղարանոց ձիու մը վրայ՝ ղենուորաց ուրախութեան աղաղակը բոլոր Անապատը կը թնդացնէր:

Իր աջ կողմէն բեհեզներով և ծիրանիներով զարդարուած, իշխանական պատկ ի պէտս, ձերմակ ձիու մը վրայ առնարար հեծած կուգար Եւփիմ, և երկուքին քովէն երկու երիտասարդք ոսկեփայլ սաղաւարտներով և արծաթապատ վահաններով ձոխացեալ՝

նժոյգներու վրայ կը շահատակէին. ասոնք էին Մլեհ և Սահփանէ, որ իրենց եղբօր յաջող գալուստը լսելով, Հալապու Ամիրային ընծաներով և հինգ հարիւրի չափ հեծելազօրօք կուգային ուրախութեամբ իրենց եղբօրը գարձը վայելելու, որ Կիլիկիոյ դռները կը բանար յաղթապէս. այնչափ տարուան օտարին ծառայութենէն վերջ: Այս երկու երիտասարդք ալ իրենց եղբօրը կը նմանէին կերպարանօք և քաջութեամբ, և իրօք առիւծու կորիւններ էին. ամեն աչք զերենք տեսնելուն միայն կրնար վկայել թէ մեծ պատերազմական զօրութիւն մը կը հաներ Թորոսի: Թէպէտ Թորոսի հեռատես աչքերը մեկէն կշռեցին զերենք, օգտի և վնասու բաժինը նշմարեցին վայրկենին, բայց դարձեալ միշտ անթափանցելի՝ եղբայրական սրտով և սիրով գրկեց՝ ընդունելեաց զերենք բոլոր բանակին առջև, ներկայացուց իր սիրասուն կնոջ՝ որ անկեղծ սրտով իբր եղբայր ընդունեց զերենք, և ամեն սիրտ ուրախութեամբ լցուեցան և նոցա գալուստը տօնեցին: Ու որովհետև ժամ էր ելնելու ի Մամեստիոյ Անապատեայ, բանակը արդէն եղած էր և հրամայած քիչ մը հանգչելէ վերջ՝ ելան նոյնպէս բանակին առաջին:

Երկայն տարիներու պարագաներ այս ճանապարհութեան մէջ կը պատմուէին, ծնողաց կորուստ՝ դժբաղդ և ուրախ օրեր՝ արկածներ կը յիշատակուէին: Նոյն միջոցին Կոստանդէն և Բարկէն զրահաւորք որ քովէ քով կը ձիավարէին, իրարու աչք մը նետեցին, Բարկէնի սպարտական բնութիւնը դոհ եղաւ ակնարկէն, բայց Կոստանդին՝

—Կը յիշես, Բարկէն, Կոստանդնուպոլսոյ մեր տեսութիւնը և քեզի ինչ որ պատմեցի, այս տղոց համար, ըսաւ. հիմա ես կը վախնամ թէ Իշխանին գլխուն ասոնք մէյմէկ փուշէ պսակ լինին... Սահփանէ անվնաս թերևս՝ բայց պզտիկը Աստուած հեռի ընէ: Իրաւ Բարկէն, առջև նայելուդ ասոնք եղբայր են կերպարանօք, բայց նայէ դիմէ, Մլեհին աչքերուն մէջ բան մը կայ՝ որ մարդուս սիրտը կը ձմրէ և կը քաշմերկնէ: Պատասխան չ'ես տար:

—Եղբայր, ինչ գըուցեմ, քիչ մը կամաց խօսէ:

—Դու ալ լաւ մարդ ես, եղբայր, բերանդ չի բացուիր՝ բացուի ալ խրատ տալու համար միայն կը բացուի:

—Դու ալ լաւ մարդ ես, քաջ մարդ ես, ինձի պես վախկոտները

կը գտնես քանի մը տարիէն, բայց բերանդ շարունակ կը բացուի՝ միշտ գանգատի համար կը բացուի։

—Չա՛, խօսք էր ըսածդ, թէ որ միշտ գանգատի համար կը բացուի իմ բերանը, քանի ամիս է մէկտեղ ենք, ոչ օր մը Թորոսի համար բան մը՝ խօսք մը լսեց բերնէս։

—Ես։

—Տէ՛հ, երբ, զըուցէ նայիմ։

—Թէ որ կամաց խօսիս՝ չի պօռաս՝ կիրք չ'ելլես, կը զրուցեմ, ըսաւ Բարկէն ծիծաղելով՝ և ձայնը աւելի ցածցնելով։

—Լա՛ւ, մարկ ըրէ։ Լամբրոնի առաջ՝ այն գիշերը միռքդ է, երբ Իշխանիկը մարդիկը կապից, դու կ'ուզէիր մեռցնել...

—Ես ի՞նչ ըսի...

—Է՛հ. Թէ որ իմ ըսածս ասանկ արգիլես, ես խօսք մը չ'ունիմ։

—Կը լսեմ, զրուցէ։

—Անկից առաջ երկայն լերան ձանբան բռնել տուաւ Իշխանը, դու ալ գանգատողներուն առաջինն էիր... է՛հ, համբերէ լմնցուցի։ Ամուսայ բերդին առջև հասար չի հասար՝ «այս բերդը կ'առնուի» ձայնդ ձգող տղայ առջև դու էիր, միռքդ կուգայ։ Իշխանը ասոնք գիտէ, բայց ես լաւ գինքը կը ճանչնամ, չի խօսիր, չի մռնար, և մարդկանց գործը միշտ բարի կողմը կուգէ մեկնել։

—Ինչի բան մը ըսա՞։ Մարդ գանգատ հարցնելու, այդչափ որ խօսելդար չնորհակալ պէտք է լինիլ։

—Կոստանդին եղբայր, Իշխանը չի խօսիր, ես քեզի ըսի, բայց ամէն բան կը տեսնէ ու կը լսէ։ Քու քաջութիւնդ կը գովէ, միայն մէկ բանի մը սիրտը նեղացաւ, և ինձի յատկապէս ապսպրեց քեզի ըսել՝ Թէ Սարգսին հետ լաւ վարուիս։

—Ես Սարգսին ի՞նչ ըրի։

—Կամաց, եղբայր, հիմա կը ձգեմ կ'երթամ, ըսաւ Բարկէն՝ ձին մէկդի քշելով։

Մի՛ նեղանար, Բարկէն, ինձի անհամբեր կ'ըսեն, դու ինձմէ անհամբեր ես։ Ես Սարգսին ի՛նչ եմ ըրեր՝ որ Իշխանին սիրտը նեղացեր է։

—Ես գիտեմ, դու մտածէ, անշուշտ կը գտնես։

—Երբ Իշխանը անոր տասը բերդ ալ տայ՝ իմ ի՞նչ հոգս. միայն այնչափ ըսի, չ'եմ ուրանար, թէ մենք բոլոր Կիլիկիոյ ալ տիրենք, ժամին չ'ժամին պարզևելով քաղաք ու բերդ՝ Իշխանի բնաւ կութեան տեղ չ'պիտի մնայ։ Ինձի Բարձր բերդը տուաւ, քեզի Ամուսան, Սարգսին՝ Ադիւճը, խեղճուկ գիւղացւոյ մը տղուն բերդ մը տալ՝ ինձի առատաձեռնութիւն չ'երեւար, այլ շռայլութիւն։ Այս զրուցեր եմ, յանցանք մի ըրեր եմ։ Եղբայրները եկան. անոնց ի՞նչ պիտի տայ. Թէ որ Վահկայ մէկուն տայ՝ Մամեստիա ալ միւսին՝ ինչ գետի՞ն պիտի նետի։

—Այս խօսքերը Իշխանին լրիւն կրնաս զրուցել։

—Ինչո՞ւ պիտի չի զրուցեմ։

—Երբ դու այս խօսքերը կը կրկնես, ալ մի զրուցեր Թէ Սարգսին ի՞նչ ըրի. երբ անի ժամին չ'ժամին կարգը կը գնես, երբ գեղացւոյ տղայ լինելուն բերդ մը իրեն շատ կը տեսնես. Իշխանին առատաձեռնութեան վրայ չ'է քու կիրքդ. ուրիշ տեղ փնտռէ դու անոր պատճառը։ Ատուած վկայ, ես Սարգսի առ Իշխանն ըրած ծառայութիւնը չ'եմ կրնար մոռնալ. ինչ որ տրուի իրեն՝ արժանաւոր է։ Մեր պարտքն ի՞նչ է, Թորոս մենք ի՞նչ կ'ուզէ. սիրով վարուիլ իրարու հետ, ազգին ազատութեան և լաւութեան համար աշխատիլ. գոհ լինինք, եղբայր, մեր և ազգին վիճակէն, փառք տանք Աստուծոյ. փուճ խօսքերով ինչո՞ւ իրար Թունաւորինք. ես ծերացայ. դու ալ ծերանալու վրայ ես. քիչ մը հանդարտէ. խելօք եղիր. տղաքը որ կը հասնին շահելու նայէ. չի տեսար քանի անգամ Իշխանը մեր երկուքը ցուցնելով տղոց «Առնք մեր հայրերն են, ասոնք մեր խելօքներն են, մենք ասոնց խօսքը մտիկ ընելու ենք» ըսաւ. հիմա կ'ըլլի՞ որ մենք անոնց սիրտը կոտրենք, կարծել տանք Թէ մենք կը չարանանք և կը նախանձինք։

—Բարկէնի այս ձառին վրայ Կոստանդին ալերեցաւ՝ ձայնը քաշեց։ Եւ ինչպէս որ զրուցեցինք՝ զօրաց աշալակը իրենց զօրավարին ընդունելութեան համար, մեր երկու ընկերները իրարև քունէ մը արթնցուցին իմացնելով Թէ Անարզաբայ առջև հասեր էին։

Սարգիս սրամիտ և արթուն՝ ինչպէս որ հասկցուցեր էր Թորոս իրեն նոյն կերպով ձիշտ բանակը ձակատեցուցեր էր բերդաքաղաքին պարիսպներուն դէմ, երեքի բաժնելով, իւրաքանչիւրին

իրեն խրատները և պատուհասները որոշելով ու յուշնելով, վրանները կանոնաւորեալ շարել տալով. վրան չ'եղած ներուն՝ ծառերու ճիւղեր բերել տալու հրաման ընելով, որպէս զի տաղաւարներ շինուին, և ամենքը կանոնաւոր միակարգ և ոչ խառն ի խուռն անկարգ:

Երբ Մլեհ և Սահիանէ՝ որ Տաճկաց զինուորական ծառայութեան մէջ անցուցեր էին իրենց օրերը՝ այս կանոնաւորութիւնը տեսան, զարմանօք Սարգսի մօտենալով, սկսան հարցնել թէ ո՞ւսկից ուսեր էր այսպէս բանակ պարնել տալ իսկ նա յուշնելով պատուոյ՝ «Իշխանին հրամանաւն և կարգադրութեամբ ամեն բան ընել կուտամ» ըսաւ: Իսկ Թորոս այն միջոցին հրաւիրելով զնփիմ և Դիոնիս հանդչելու՝ իրեն պատրաստուած վրանին տակ, քաղքին շուրջը պատյան մը կ'ընէր թէ քաղաքը դիտելու և թէ բանակը զննելու համար, ամեն տեղ ինչ պակասութիւն կար Բաբկէնի՝ Կոստանդնի և ուրիշ զօրավարաց կը յուշնէր, համառօտ և ճիշդ խօսքերով: Երբ իւր քննութիւնը լրացուց, եկաւ հանդչելու վրանին տակ: Խօսեցաւ եղբարցը հետ դարձեալ, շատ մը հարցմունքներ ըրաւ Հալապու Ամիրայի՝ Նուրէտտինին վրայ, անոր բնաւորութեան՝ վարմունքին՝ զօրութեան՝ Տաճկաց պատերազմելու ընդհանուր կերպին վրայ: Վերջը սեղանը պատրաստել հրամայեց, հրաւիրեց զամենքը որ նստին կերակուրին, յանձնելով Եւփիմէի պատուել իր նորեկ եղբայրները՝ որ դեռ հիւր էին քանի մը ժամու համար, և որ քիչ մը վերջը անոնց պիտի լինէին բոլորովին. զինուորներուն հետ պատուա մը հայ կերաւ, և յետոյ եկաւ դարձեալ պատյան մ'ընելու, ամենուն տեղեկութիւն հարցնելով Անարզաբայ վրայ, մանաւանդ անոնց՝ որ նոյն քաղաքացի էին. տեսաւ նաև մէկ քանի երիտասարդ ալ որ Սմբատի ծառայութեան մէջ գտնուած էին, անոնք առանձին հարց ու փորձ ըրաւ, և ինչ տեղեկութիւն որ կ'առնէր՝ ամենքն օգտակար համարելով, բան մը չէր արհամարհէր: Երբ նորէն իւր վրանը եկաւ, տեսաւ որ անոնք իրենց կերակուրը կերած էին, սկսաւ Բաբկէնի հարցմունքներ ընել Վահկայ բերդին նորոգութեանց վրայ՝ որուն համար ապագրեր էր բոլորովին նոյնպէս ընել ինչպէս իրեն հօրեղբօր և հօր ժամանակ. ու երբ իմացաւ թէ նոյնպէս կատարուեր է, գոհ եղաւ և ամենքը արձակելով հանդչեցաւ քունի:

Թէպէտ հաղիւ թէ ամիս մը եղած էր, բայց զինուոր և զօրավար ամենքը դիտէին իրենց Իշխանին արթուն սովորութիւնը, ուստի ամեն ոք զիշերապահ և պիշերայած իր պաշտօնը ճիդիւ կը կատարէր, վասն զի որոշ դիտեր թէ չի կարծած և չ'սպասած վայրկենին՝ զօրապետը ներկայ էր, խիստ և ներողամիտ միանգամայն որ դիտեր թէ երբ գործադրելու է պատիժ և վարձատրութիւն. ուստի ամենքը թէ կը վախէին և թէ կը սիրէին զինքը:

Երբ առաւօտ եղաւ. ամենքը տեսան գԹորոս որ ոտքի վրայ էր, և Սարգսի միջոցաւ աղեղնաւորաց խմբի մը կը հրամայէր նստած լինել ի քաղաք: Նետերուն վրայ Թուղթեր կապել տուաւ որոնց վրայ գրուած էր. «Թէ որ կ'ուզէք պաշարման նեղութենէ և ձեր Իշխանին բռնութենէն ժամ առաջ ազատիլ միայն եք և բայց դուռները, մենք ձեզ ազատելու համար եկեր ենք, գիտցէք որ Թշնամի չ'ենք այլ բարեկամ»: Այսպիսի հարիւրաւոր նետեր նետուեցան քաղքին մէջ. Սմբատ իմանալով խստիւ հրաման ըրաւ որ ժողվուին և իրեն բերուին:

Երբ խուրձեր այս նետերէն կը բերէին և Իշխանին առջև կը լեցնէին, ինք կատաղութեամբ ականջները կը կրճտէր ու կը հայհոյէր. «վատ, դաւաճան, մանիչ» բառերը բերնէն դուրս կը թափէին շարունակ. և իր բորբոքած փրփրած ժանտակը կ'ըսպառնար՝ կը հրամայէր կրակի տալ քաղաքը, Թորոսէն ալ՝ բնակիչներէն ալ վրէժ առնելու համար: Այսպիսի ժամանակ ոչ կինը, ոչ տղան, ոչ Սրբազանը և ոչ ոք չ'էր համարձակ իրեն մօտենալու. ուստի ամենքը հեռու կը պատահէին: Նոյն միջոցին էր որ Մարգրիտա իր ծերուկ Մարտիրոս ծառային հետ քաղքին հիւանդաց այցելութենէն կը դառնար, ձեռքն առած այն նետերէն մէկ հատ մը: Իր ծանր և լուրջ դէմքը, որ ամեն ժպիրմ նայուածք կը խոնարհեցնէր, հրեշտակի կերպարանք մը ունէր երբ իր հօրը կատաղութեան վայրկեանները կ'արթննային. ուստի երբ միջնաբերդը մտաւ և իր սենեակները երթալու տատն իր հօրը զոռալուն ձայնը լսեց, ձանձրան շեղեց և հօրը հովանոյն ուղղուեցաւ, ու ձեռքը նետը դեպ ի հայրը դնաց, որ զինքը տեսածին պէս, սկսաւ զառն զանգատներու ընդդէմ Թորոսի՝ ընդդէմ քաղաքացւոց՝ ընդդէմ՝ բերդապահ զօրականաց՝ ընդդէմ իր ծառայից և նաև ընտանեաց: Մարգրիտա արձանի մը պէս մնիկ կ'ընէր այս խօսքերը, և երբ հայրը իր բոլոր

կատաղութեան ձարտասանութիւնը և շունչը հատուց ու լռեց, այն ատեն քովը մօտենալով ու կարեկից աչքով սկսաւ նայիլ դարձեալ առանց խօսելու. Սմբատ վերջապէս կանչեց. «Զրուցէ, Մարգրիտ, դուն զրուցէ, միթէ ես իրաւունք չունիմ այս անիծեալ քաղաքը այրելու:» Երկայն լռութիւն մը այս խօսքերուն յաջորդեց, և Իշխանը տեսնելով իր զաւկին ձեռքը այն նետերէն՝ որ իր բարկութիւնը գրգռել էին:

—Դուն ալ այդ նետերէն՝ ձեռքդ կը պոռտցնես:

—Քաղաքը կ'երևայ թէ ողողուած էր ասոնցմով որովհետև ես ալ հատ մը գտայ:

—Անիծեց քաղաք, հիմն ի վեր տապալելու արժանի. անիծեալ բնակիչք:

Այս խօսքերը դեռ բերանն էին, երբ աղմուկ և աղաղակ լսուեցաւ. ձայները վերը միջնաբերդն կը բարձրանային, և պարիսպներուն միայն մօտենալով կը տեսնուէր որ ժողովուրդը և պահապանները իրարու հետ կը կռուէին, անոնք ուզելով դռները բանալ և ասոնք արգիլել: Ա՛լ կատարեալ մոլեգնելով Սմբատ զէնքերն առաւ, և առանց աղջկան ձայնին լսելու՝ դիմեց օդնելու իր զօրականաց որ ժողովրդեան բազմութեան դէմ կը մաքառէին: Իշխանին տեսութիւնը փոխանակ հանդարտեցնելու, ալ աւելի զայրացուց ամբոխը. քարեր անձրևի պէս կը տեղային, և միջնաբերդին դռնէն մինչև պարիսպները տուն տանիք չի կար որ զօրաց վրայ ունեցածը չի պարպէր, Իշխանը տեսնելով վտանգը ետ դառնալ կ'ուզէր, բայց անկարելի էր, շուարեալ մնացեր էր. իրաւ իր զօրքերը անգործ չէին կընար, արիւնը կը վաղէր, բայց ի՞նչ օգուտ որ մէկ ինկածին տեղ տասը քսան կը բուսնէր. վերջապէս ձայն մը եղաւ թէ ժողովուրդը կրցաւ դռներուն մէկուն տիրանալ՝ բանալ և թշնամին ներս խուժել. ուստի Սմբատ նոյն միջոցին գոնէ միջնաբերը կ'ուզէր ինքզինքը նետել՝ բայց կարելի չէր· այս յուսահատ վայրկենին ձայն մը թրթաւ ժողովրդեան և զօրաց մէջ:

—Օրիորդն, օրիորդն, պօռացին երկու կողմէն և լռութիւն մը տիրեց. քարի և նետի կարկուտը դադրեցաւ. Մարգրիտ երևցաւ դլուխը բաց, անպատսպար. վազելով գնաց և ինք հօրը ձեռքէն բռնած իրրև վահան զինքը ծածկելով զօրքերն ալ ետևէն՝

բերաւ մտուց միջնաբերդը և դռները դոցուեցան: Ժամանակ էր, վասն զի միւս դռնէն Թորոսի զօրքերը դուռդադուռդ ներս կը խուժէին և քաղաքացւոց հետ եղբայրաբար կը գրկուէին, և միջնաբերդին վրայէն տեսնողներուն յայտնի էր որ եթէ Մարգրիտ մը վայրկեան ալ ուշանար՝ հայրը ողջ կամ մեռած թշնամեաց ձեռքն ինկած էր:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Այս առաքինութեան յաղթանակէն վերջը, ուր անզէն աղջկան մը երևոյթը զինաթափ ըրաւ պատերազմող ձեռքերն և իր հայրը կորսունէ ազատեց, Սմբատ փոխուեցաւ բոլորովին: Իր հովանոցին մէջ նստած ոչ կը խօսէր՝ ոչ կ'ուտէր՝ ոչ կը խմէր. Տիկինը և Սրբազանը մէկ քանի մը ջանացին իր յամառ և անտարբեր լռութիւնը ընդմիջել, բայց ձար չ'եղաւ. ուստի Օրիորդին դիմեցին որ հօրը հետ խօսի, բայց ի՞նչ խօսէր, այն չ'էին կրնար որոշել:

Իսկ թշնամին քաղքին ամեն կողմին տիրելէն վերջ, պատրաստութիւններ կը տեսնէր՝ հոլապատանէներ կը շինէր՝ ձամբաներ՝ տուներ՝ հաղորդակցութեան միջոցներ կ'ապահովէր, բերդականաց ձգողական զէնքերն պաշտպանութեան համար, ինչ որ պէտք էր կ'ընէր և կը զարմանար թէ նոքա կենաց նշան ամենևին չ'էին տար:

Եւ իրօք Իշխանին այն վճռակը ամենը լքոյց, պատճառը ոչ ոք չ'էր հասկնար, վարձկան զօրականք սկսած էին քրթմնջել, և վերը արդէն Տիկինն, նա մանաւանդ Սրբազանը, Իշխանին խելքին վրայ ցնորք մը նշմարելով լռութենէն, սկսած էին դառապիր լինել կերպով մը տալն Բակուրա տեղը նստեցնել խորհելով, երբ նա որ մինչև այն օրը վտանգ մը տեսած չունէր, և իր հաճոյքներէն ու զուարճութիւններէն զատ բան մը չ'էր երևակայեր՝ այս միջնաբերդին մէջ բանտեալ վճռակէն ազատելէ ուրիշ բան չ'էր մնացեր, ուստի իր այս թեթևութիւնն ալ աւելի խայծ մ'էր Տիկին մօրը, տղուն անուշով կառավարել:

Երբ Մարգրիտ այս վճռակը տեսաւ և դուշակեց, երբ կիսակատար բառեր ամէն բան յայտնեցին և երեւակայեց թէ չարեաց չարագոյն վճռակ մը պիտի ծագի, որուընէ հօրը մօտենալ և իր պարզութեամբ քովը նստելով սկսաւ հարցմունքներ ընել թէ ինչո՞ւ տխուր էր, թէ ինչո՞ւ չէր ուտեր խմեր . . . և առանց ձանձրանալու այնչափ անուշ և այնչափ երկար խօսեցաւ և կրկնեց հարցմունքները, որ Մհբատ սկսաւ փոխուիլ իր դէմքին սեւեռող նայուածքն ու խլութիւնը անհետացաւ, սկսաւ իր աղջկան խօսքերուն ուշադրութիւն ընել յայտնել և վերջապէս իրրև քունէ մը ցնցուելով և արթննալով, պատասխանեց.

—Դու, Մարգրիտ, դու չէիր որ ըսիր թէ քաղաքացիք պիտի ապստամբին։

—Այո՛, հայր իմ, ըսաւ աղջիկը, հօրը աջն իր ձեռքերուն մէջ ամփոփելով փաղաքշանօք։

—Ապստամբեցան և քաղաքը մատնեցին։

—Այո՛, հայր իմ։

—Դու չէիր, որ ըսիր թէ այս վարձկան և սրիկայ զինուորները դէս պիտի մատնեն։

—Այո՛, հայր իմ։

—Ուրեմն ձար չէ կայ, պէտք է սպասել այս վճռակիս, պէտք է սպասել դերութեան, պէտք է սպասել աստուածական շրջելու սպասաւորան մը փնտռելու համար. դու ըսիր՝ ուրիմն աստղք պիտի լինին. դու դուշակեցիր՝ ուրիմն վերահաս է և պիտի հանդիսի. լաւ է ուրիմն մեռնիլ։

—Ինչո՞ւ համար դու այսպէս կը յուսահատիս, հայր իմ, ըսաւ Մարգրիտ՝ տեսնելով թէ իր նախատեսութիւնքը ինչպէս փլսակար եղած էին հօրը, ես մարգարէութեան հոգւով չէ զրուցեցի բան մը, այլ բոլոր իմ խօսքերս ըրած դիտողութեանցս վրայ երեւակայական գուշակներ էին. դու թէ որ ուզես, ես հիմա, ես տակաւ աղջիկ մը՝ ամէն բան կարգի կը դնեմ, միայն հրամայեցէ։

—Ի՞նչպէս կարգի կը դնես դու այս վճռակը՝ որ արդէն իր վախճանը գտած է։

—Հիմա Թորոսին քու կողմանէդ . . .

—Թորոսին իմ կողմանէս պատգամաւոր կամ նամակ չի՛ կրնար երթալ և պէտք չէ՛ երթայ։

—Բայց, հայր իմ։

—Հայր, մայր չի կայ. փութ տեղ ինձի հետ մի խօսակցիր, դէս մի նեղեր. ամեն մարդ իր բաղդին պէտք է հետեւի. ի՛նչ որ մինչեւ հիմա քու օրդ համար ըրիր՝ բաւական է Աստուած քեզ օրհնէ ու վարձատրէ. ինչչափ որ դէշ՝ անպիտան և չարագործ ալ լինի մեկը, իր զաւկին համար՝ մանաւանդ երբ զաւակը այնչափ առաքինի է քեզի պէս, մեկ անգամուան համար երբ աղօթէ՝ Աստուած անոր ձայնը կը լսէ. ուստի նորէն կ՚ըսեմ, ես ալ բան մը չ՚ունիմ, ամեն բան լմնցած է ինձի համար, ոչ իշխանութիւն, ոչ կարողութիւն, ոչ հարստութիւն, ամեն բան կորան և անոնց հետքն անդամ չի մնաց. հոս անզգամութեան չափը լցուեցաւ, դու միայն մնացիր անպատա այս գալշութեանց մէջ, Աստուած քեզ վարձատրէ, Աստուած քու վերջդ բարին ընէ։

Եւ այս խօսքերը ըսելուն Իշխանը ձեռքը զաւկին դլխուն դրած աչքերը արտասուալից երկինք վերուցած էր։

Տխուր և դառն սրտիւ մտիկ կ՚ընէր այս խօսքերը Օրիորդը. երբ հայրը ոտքի վրայ ելաւ, հանդարտ էր բոլորովին և սկսաւ վեր վար շրջապատիլ ու յանկարծ կենալով հրամայեց որ Վասիլ կանչեն, և երբ նա սոսկումով ներս մտաւ՝

—Գնա, ըսաւ, բոլոր բանտարկեալները հոս բեր հիմա։

Քանի մը վայրկեան վերջը քառասունի չափ անձինք իր առջև շարուեցան շղթայակապ։

—Այսքան ատեն ամրողջ ներկայ էն, հարցուց Իշխանը, չի կայ ոք պակաս։

Ո՛չ տէր, պատասխանեց Վասիլի ընդային ձայնը։

—Շուտ ատեց շղթաները քակեցէք։

Եւ երբ հրամանը կատարուեցաւ։

—Գնացէք ձեր տուները, ազատ էք ասկից վերջը դէս և իմ յիշատակս նզովելու՝ անիծելու և հայհոյելու, միայն չնորհակալ եղէք և օրհնեցէք այս աղջիկը. ինչ որ մինչեւ հիմա ապրեցաք և պիտի ապրիք՝ պիտցէք՝ ի շնորհս նորա է։ Տէհ, մ՚երեսաք աչքիս, գնացէք։

Ա.Հնպիսի դառնութեամբ զըուցուեցան այս խօսքերը՝ որ իրրև թէ՝ ինքնիրեն կը վախէր, որ կրնար ղղջալ և հրամանը յետս կոչել։ Ուստի մարդիկն ալ զարմանքով և ահով դողդոջ երբ միջնաբերդին դռնէն դուրս ելան, մեծ ծանրութիւն մը զնոց իրենց վըրայէն։ Բայց այս ամեն եղելութեանց Մարգրիտ նստած ձեռք ձեռքի վըրայ դրած կը մտածէր թէ ի՞նչպէս կարելի էր այս քարսիրտ մարդուն սիրտը կակղեցնել. ուստի ելաւ վերջին ձիգ մ՚ալ ընելու, վասն զի այս մարդը ինչ աստիճանի անդգամ ալ որ լինէր, իր հայրն էր, քովը մօտեցաւ.

—Սիրելի հայր իմ, ըսաւ, կը տեսնեմ թէ սոսկալի որոշմունք մը ունիս, բայց դու չ՚ես մտածեր թէ ես քեզմէ զատ մէկը չ՚ունիմ աշխարհիս վերայ, դու միայն իմ յոյսս և իմ պաշտպանս ես, ես առանց քեզի ի՞նչ պիտի լինիմ։

Ա.յս խօսքերով կը յուսար որ յուսահատ որոշմունքէ մը ղինքն ետ կեցնէ, բայց Իշխանը այնչափ միամիտ չ՚էր։

—Դու փուճ տեղ կը վախես, աղջիկս, ըսաւ, ես դեռ իմ վերջին որոշմունքս չ՚եմ ըրած, և ղքեղ ալ պաշտպանութեան կարօտ չ՚եմ գտներ, վասն զի երէկ դու զիս պաշտպանեցիր, արդէն քու փափաքդ յայտնի է ինձի. դու միշտ Մենաստան մը քաշուիլ կ՚ուզէիր, մենք զքեզ արգիլեցինք մինչև այս օրս. ուստի դու հանգիստ եղիր. բոլոր քաղաքը զքեզ կը պաշտպանէ և դու ուր որ ուզես կրնաս քաշուիլ։

Ա.յս խօսքերը խստութեամբ զըուցուեցան. ուստի իմանալով Օրիորդը որ ձար չի կար, տխուր իր սենեակը քաշուեցաւ՝ Աստուծոյ յանձնելով ինքզինքը և երիք անմեղները, հարսը և իւր պզտիկ տղայքը, որ ուրիշներուն յանցանքը կը տուժէին։

Նոյն միջոցին՝ որ լինք հօրը հետ վերոյիշեալ խօսակցութիւնը կ՚ընէր Տիկինը, տղան Բակուրա և Սրբազանը մէկտեղ կ՚իջնէին վարի մեծ գաւիթը՝ ուր զինուորաց խումբը կը կենային։ Քանի մը ձրագներ և քանի մը կանթեղ տակաւ և տխուր լոյս մը կը ձգէին. ուստի երբ այս մեր երիք անձինքը սանդուխին վերը կեցան, բոլոր խումբը հոն ժողվուեցան իմանալու համար թէ ի՞նչ կը նշանակէր այս անսովոր այցելութիւնը։

Սրբազանը սկսաւ տխուր ձայնով մը վեհակին ծանրութիւնը

նկարագրել, վերջը հոն ըներաւ խօսքը թէ ինչպէս Իշխանը յուսահատ՝ բոլորովին հակառական հրամաններ կուտար. երէկուան պատահարները այսօր կ՚արձակէր, թէ ինչպէս փոխանակ պատերազմի պատրաստութեան կամ բանագնացութեան՝ մունջ և համր եղած՝ հարցմունքներուն նաև պատասխան չէր տար, և թէ ինչպէս Օրիորդն անգամ իրմէ գոհացուցիչ պատասխան մը չէր կրցած առնուլ. . . Ուստի, աւելցուց Սրբազանը, թէ այսպիսի պարագայի մէջ Տիկինը և ինք և Օրիորդը աղաչեր էին Բակուրա Իշխանաղունը, որ յանձն առնու կառավարութիւնը այսպիսի ծանր պարագայի մէջ, որպէս զի քաղաքն անիշխանութեան չի մատնուի։

—Մենք, Իշխանը միայն մեզի տէր կը ճանաչենք, ո՞ւր է, թող գայ, ըսաւ ձայն մը։

—Մենք ձեզի հաւատարմութիւն չ՚ունինք, աղաղակեց ուրիշ մը։

—Օրիորդը թող գայ, այն խօսի, ըսաւ մէկ ուրիշ ձայն մ՚ալ։

—Անոր միայն վստահութիւն ունինք։

—Օրիորդը, Օրիորդը կ՚ուզենք, սկսան գոչել խառն ձայներու բազմութիւն մը։

—Դուք ալ մեզի պէս անպիտան էք, անպիտաններ, անզգամներ։ Եւ ձայները կը բարձրանային ու գաւիթը կը թնդար. մեր երիք անձանց վճռակը վստանգաւոր էր. ետ դառնալ և սանդուխներէն վեր փախչիլ անկարելի էր, գաղանի մը կռնակը դարձնելն յայտնի է թէ յիմարութիւն է։ Երիք անձինք՝ որ ինքզինքնին ծուղակի մէջ ձգեցին՝ բոլորովին շփոթեցան. և յիրաւի ամենէն քաջ մարդիկն նաև այդ արիւնալի և գաղանային աչքերը որ տեսնէին, կարելի չ՚էր սոսկում զերենք չի պատեր։ Տիկինը իւր բոլոր հնարիմաստութիւնը ժողվելով նշան ըրաւ որ կ՚ուզէր խօսիլ. բայց հազիւ թէ փոքրիկ լռութիւն մը կ՚սկսէր՝ աղաղակները դարձեալ կը բարձրանային և անհնար կը լինէր խօսք լսեցնել. այս առգնապին մէջ էին, երբ յանկարծ ճերմակ գիշերապահ հագած՝ մազերը կռնակն ի վար թափած երևցաւ Մարգրիտ, որ խառնակ աղաղակներէն կարծելով թէ միջնաբերդն ալ առնուեր էր, մէկ ձեռքը ճրագ՝ միւսով եղբօրը փոքրիկ տղան գրկած դէպ ի սանդուխը կը վազէր, հարան ալ միւս տղան գիրկը իրեն կը հետևէր. երբ զինքը տեսան

այս կէս գազան զինուորները, պատկառանաց լուռ թուն մը տիրոց և Տիկինը սիրտ առնելով, «Եկ աղջիկս, եկ, մեր զինուորները քեզ կ՚ուզեն որ խօսիս, և հանդարտին» կանչեց։ Ես իրեքն ալ մեկէն դէպ՝ անոր կ՚երթային սանդուխներէն ապահովուելու համար։

—Ապրի Օրիորդը, կեցցէ Օրիորդը, կը կանչէին զինուորները մեկ բերան։

Այս խառնակութեան և աղաղակներուն մէջ մայրը աղջկանը իմացուց քանի մը խօսքով թէ ինչ՞ն էր այս դրգռութիւնը, և թէ ինք միայն կրնար այս մրցեղին զօրականը հանդարտեցնել։ Ուստի Մարգրիտա առաջ անցնելով սանդուխներէն քանի մը ոտք իջաւ՝ միշտ աղաղակելով, ձեռքով նշանացի ըլլաս որ լռեն։

Գիւղեցկութիւն, երիտասարդութիւն և առաքինութեան դրոշմ կնկան ձակտի վրայ՝ այնպիսի ազդեցութիւն ունի մարդկանց, որ անոնց գազանները նաև անկից աղատ չ՚են. ուստի շուտ մը լռութիւնը տիրեց և Օրիորդը այսպէս խօսեցաւ։

—Ձեզմէ շատերը՝ իմ աղայութիւնս դիտեն, կան մէջերնիդ մարդիկ որ ես իրրև հայր ճանչցեր եմ, և որոնց պաշտպանութիւնը վայելեր եմ զանազան ուխտադնացութեանց մէջ. մեկ յարկի տակ բնակեալ՝ ամենքնիդ իրրև եղբայր ճանչեր էի մինչև այսօր, և այնպէս կը յուսայի թէ մեր այս թշուառ վայրկեաններուն, մեկ սիրտ մեկ հոգի՝ մեր ցաւերը պիտի չ՚աւելցնէք, և այս վիճակէն ելնելու համար ինչ կերպով որ կարելի է ձայրը մեկտեղ միտքեր պիտի հոգնք։ Ես բարկացայ աղաղակները՝ որ ձես այս վիճակիս մէջ դուրս ձգեցին սենեկէս, այս անմեղ ազգիդ արցունքը՝ որ ձես չվոխեցին, ինձ այսպէս կարծել տուին թէ թշնամին առեր է այս մեր վերջի ապաստանն ալ և մեղ գերութենէ զատ ուրիշ բան չէ մնացեր։ Իսկ հիմա կը տեսնեմ թէ մենք մեր տանը մէջ խռովութիւն կը հանենք, զերար կ՚ուզենք հարուածել. մի՛ կարծէք թէ այսպէս մէջերնէս մեկը օգուտ կրնայ քաղել. պէտք է ամենքս լաւ ըմբռնենք թէ մեր մէջէն նա որ հիմա վազէ այս դուռը բանալու և ներս հրաւիրէ թշնամին, էն սրհամարտը ինքն է նորա աչքին. մատնութեան պէս անարդ բ՚նչ կայ աշխարհիս վրայ, ո՛վ մէջերնէս Յուդայի անունը և բաժինը կ՚ուզէ ժառանգել։ Ոչ ոք։ Այս աղաղակները՝ այս կիրքը նաև մեղի բ՚նչ դեղ հեռանքներ պիտի բե-

րեն։ Հանդարտինք, եղբարք իմ, ձեր մէջէն կը տեսնեմ ես քանի մը խոհեմ ծերեր, անոնց խորհուրդ հարցուցէք, անոնք իրրև հայր յարգեցէք, անոնց խօսքը մտիկ ըրէք, բանի մը թէ կը փափաքիք՝ անոնցմով մեզի իմացուցէք. Իշխանը՝ իմ հայրս, գիտէք որ քիչ մը հիւանդ է, այսպիսի աղաղակներով իր վիճակը կը ծանրանայ, և դուք պիտասպան լինելու նախատինքն ու ապտը ձեր անուան վրայ կը դրոշմէք, զգուշացէք։

Այս խօսքերը լուրջ և ազնիւ դառնութեամբ մը զգուցած, բնի վրայէ տրուած քարոզէ մը աւելի ազդեցութիւն ըրին այս աւազակայ վրայ, և այս մաքուր շրթունքներէն ելած խօսքերը իրրև թէ զանոնք մկրտեցին, հաղիւ թէ մեկ երկու խենթ մտկներ «Կեցցէ Օրիորդը» պոռացին, «Լռութիւն» բառը ամեն բերնէ զանոնք պատանդեցուց, և մեր իշխանական ընտանիքը խաղաղութեամբ եղաւ իր սենեակները։ Մարգրիտա ազեկ յանձնեց Հարսին, և ինք առանց ուշադրութիւն ընելու մօրը՝ եղբօրը և Սրբազանին գովասանական անհամ խօսքերուն, որ վտանգէ ազատելնուն ինչ զրուցանին չէին դիտեր, լի գառն գուշակութեամբ հօրը հովանոցը ուղղեցաւ, հաղիւ թէ դրանը մօտեցաւ, իր ձեր և մունջ Մարիրոսը տեսաւ որ անսովոր համարձակութեամբ «Օրիորդ, մի՛ մըտներ. հոս ի՞նչ բան ունիս» ըսելով կ՚ուզէր զինք արգելուլ։ Այս արդելքը զինք իր համոզման մէջ հաստատելով՝ արգելքը վանեց և տախտին մօտեցաւ՝ ուր սովորաբար իր հայրը կը հանգչէր, և տեսաւ զնա տարածեալ՝ տուր մը սրտին գամուած՝ արիւնը որ առուակի պէս կը վազէր, հասկցաւ որ ամեն բան լմնցեր էր. չոքեցաւ հոն բազմոցին եզերքը, նայեցաւ այն աստեղազարդ երկնքին, իր մաքին աչքերը դեռ անպին աւելի բարձր ազօրմութեան Աստուածը տեսան, որուն դթութիւնը անսահման է և անչափ, անոր աղօթեց, իր թշուառ հօրը ձեռքերուն վրայ դրաւ իր շրթունքները, իւր մաքուր և որդիական արցունքները որ արիւնը կը լուային, ինք կը հաստատեր թէ ոճիրները նաև կը լուային երկինքը. և երբ աղօթքը լմնցուց և հովանոցին դռնէն դուրս ելաւ, տեսաւ զինուորաց ուխտը տասը հատ ծերերը շարուած որ իրեն կ՚սպասէին ամենայն յարգանօք իրեն ըսին.

—Ո՛վ աղնիւ Օրիորդ, Աստուած քեզ մխիթարութիւն տայ,

ինք Տէրն ողորմի մեր Իշխանին Հոգւոյն, մեր բոլոր զինուորակիցքը իրենց ցաւակցութիւնը քեզ կը յայտնեն զմեզ պատգամաւոր յուղարկելով և կը խնդրեն որ իրենց աղաչանաց մտիկ ընես և յանձն առնուս յաջորդ լինիլ Հօրդ, քոյ իմաստութեամբ և առաքինութեամբ անօրինես։ Իրենք յայտնի կ'իմացնեն թէ ոչ Տիկինը՝ ոչ Սբբ. բազանը և ոչ քու եղբայրդ Բակուրա իշխանը՝ կրնան ճանչել յաջորդ Իշխանին. իսկ եթէ դու յանձն չ'ես առնուր, այն ատեն իրենք գիտեն իրենց ընելիքը և անոր համար ալ առաջուց թողութիւն կ'ուզեն։

— Ասանկ վայրկենի մը մէջ, դժուարին է տաք խորհրդածելու. ձեր այս առաջարկութիւնը գիտէք որչափ ծանր է, ամեն կարգ կանոն տակն ու վրայ կ'ընէ, և աշխարհք ինչ կը զրուցէ երբ ես իմ մէկ հատիկ եղբայրս զրկեմ ժառանգութենէ՝ հօրս դիակը դեռ հողը չի մտած։ Խնդրեմ, այս պիսի բռնաւորական գործ մի՛ ընէք, և նայինք թէ ոչ վերը՝ ոչ վարը բաժանմունք չ'լինի մէջերնիս. ձեզ իրրև հօր անոնց իրրև եղբօր կ'աղաչեմ իմ այս խօսքերուս վրայ մտածել։

Ասանց պատասխանելու ծերերը ելան գնացին, և Օրիորդը հաղիւ թէ իր սենեակը մտաւ, զարմացաւ տեսնելով հոն մայրը՝ եղբայրը և անբաժանելի Սրբազանը, որոնք սոսկումով պատած սկսան աղաչել իրեն որ յանձն առնու ամեն առաջարկութիւն՝ ամեն իշխանութիւն, միայն թէ զերծնէք և իրենց կեանքը ազատէ այս կատաղի աւազակաց գնդին ձեռքէն, որ իրմէ զատ բանէ մը չէին ակնածեր, և որ վարը արդէն զՎասիլ յօշ յօշ պատառելով սպանած էին, իրրև լսեց և բանտարկու։ Իսկ երբ Օրիորդը իրենց պատմեց թէ ինք ինչպէս պայման դրած էր մինչև առաւօտ սպասելու, սկսան երեքը միաբերան լալ՝ ողբալ և կոծուիլ, մանաւանդ Սբբրազանը, թէ շատ դէշ բան եղած էր, և թէ շատ կարելի էր, որ «Ա յդ անպգամ չարագործները՝ որ ոչ Աստուծմէ կը վախնան և ոչ մարդկանէ կ'ամաչեն՝ դառնային գային և ծնկարծելի ոճրագործութեանց ձեռք զարնէին։»

Սենեկին դուռը բաց էր, երբ այս խօսքերը զրուցուեցան՝ Աւագին գլուխը ներս երկնցաւ նոյն վայրկենին և իր երկու բոցի պէս աչքերը իւր սեւացեալ երեսին վրայ փայլեցան նոստղներուն

աչքին. դաժան երեսով և սպառնալից ձայնով այս խօսքերն արտասանեց։

— Օրիորդ, մեր գունդին կամքն այս է որ կամ հիմա յանձն առնուս ամեն իշխանութիւն, կամ թէ ոչ որոշ յայտնես և մենք գիտենք ընելիքնիս։

— Թէ որ միաբան այդ որոշմունքը ունիք մէջերնիդ, թէ որ միաբան իմ ամեն հրամանացս պիտի հնազանդիք, ինչպէս հօրս միշտ կը հնազանդեիք՝ լաւ, կ'ընդունիմ. բայց թէ որ իմ անուանիս քօղին տակ ամեն անկարգութիւն պիտի տիրէ, ես գիտեմ հօրս հանգէն երթալու ձանրան։

— Մի վախեր, մենք ամենս կեցեր ենք, քու խօսքերդ Աստուածամօր խօսքի պէս պիտի ընդունուին. հոգ մ'ըներ, Օրիորդ։

— Մենք կեցեր ենք հոս ամենքս, ըսին տասը ձայն՝ որ դուրսը կեցած էին և որոց ոմանց գլուխները կ'երեւար՝ ոչինչ պակաս աչխարհաքան զԱւագինը։

— Հրամայէ ուրեմն, Իշխանուհիդ, ըսաւ Աւագ, որ երեսս մեր զօրականին։

— Վայրկեան մը լինի ժամանակ տուէք, ըսաւ խեղճ աղջիկը արցունքը սրբելով, և վրան սև հագուստ մը ձգեց, ու եղբը միայն իր Մարիամոսը առած իջաւ վարի գաւիթը ուր բոլոր զինուորները ժողվուած իրեն կը սպասէին։

Հոն, Աւագ՝ Օրիորդին կողմանէ եղած պատասխանը հաղորդեց, այն ատեն գաւիթը թնդաց վասն զի «կեցցէ՛ մեր Իշխանուհին» բառերը երեք հարիւր բերան որոտացին։ Օրիորդն ալ քանի մը բառով յորդորեց զերծնէք որ երթան հանգչին և իրեն ալ ժամանակ տան որ կարենայ հանդարտիլ և գիտնայ թէ ինչ պիտի ընէ։ Զինուորները իրենց խշտիները քաշուեցան։ Օրիորդը ծանր և մտախոհ կ'երթայ իր սենեակը պարագաներուն դառնութեանը վրայ խորհրդածելով և առաջադրելով որ այս վիճակին սպառած օրը իր վախճած կուսանայ վանքը քաշուի անդադար։ Մինչ կողմնն կը հշռէր վիճակը կը տեսնէր թէ անկարելի էր դէմ դնել այսպիսի անկարգ աւազակներով Թորոսի պէս թշնամւոյ մը առջև, ուստի կը մտածէր թէ ինչ դաշինքներով կարելի էր պատուով ազատել ընտանիքը, և այս խորհրդածութեամբ յուզեալ

հավնիւ թէ առաւօտեան դէմ մրափ մը առաւ իր անկողնին վրայ նստած և արշալոյսին հետ արթնցաւ։

Առաւօտուն Սմբատայ մարմինը գիտցաւ, սենեկի մը մէջ գլուեցաւ Օրիորդին հրամանաւ։ Ընտանիքը ժողովքի կանչուց և անոնց միտքը հարցուց, բայց անոնք տեսաւ թէ ահաբեկեալ՝ աղաւիլ միայն այն վճռակէն կը փափաքէին և ամեն բան իրեն կը թողուին։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու ձի մը պատրաստել՝ քանի մը ծեր զօրագլխներուն իրեն հետևիլ և միջնաբերդին գուռը բանալ հրամայելով՝ ուղեց որ իմացնեն Թորոսի թէ պատգամաւոր պիտի գար խաղաղութիւն խօսելու։

Բոլորովին սևեր հագած, սև ձիու մը վրայ հեծած, տխուր և դիմացը նայելով՝ մազերնին ձերմկցած արևէն սևցած ղենուորներէ շրջապատեալ կ՚երթար Իշխանուհին, և բոլոր քաղաքը՝ որ արդէն զինքը կը ճանչէին և կը յարգէին, գիտնալով թէ հօրը սգաւորն էր ասելի ակնածութիւն կը ցուցնէին. կանայք գոները և տանիքները կը լցուէին տեսնելու համար զինքը «Աստուած զքեզ միխիթարէ, Աստուած զքեզ օրհնէ, Աստուած քեզի երկայն օրեր տայ» ձայները հասկէն կը հասնէին։ Ոչ միայն զարմանալի էր Սբմբատայ մահուան լուրին տարածուիլը բոլոր քաղքին մէջ, այլ նաև ժողովրդեան կրից ներողամիտ լռութիւնը որ թէպէտ լի էր ատելութեամբ նորա յիշատակին դէմ՝ այլ թշուառ և առաքինի աղջկան մը ականջին ծանր և նախատանոց բառ մը չի լսեցուց։ Երբ քաղքին դռնէն ելաւ Օրիորդը և բանակին մօտեցաւ, տեսաւ խումբ մը հետևակ մարդիկ որ իրեն կ՚ուգային, առաջնորդները իմացուցին թէ Իշխանը անձամբ կուգար զինքը դիմաւորելու. մկկէն Մարգրիտա իջաւ ձիէն։ Թորոս մօտենալով և ողջունելով, կրկին կրկին հրաւիրեց դարձեալ ձի հեծնել մինչև վրանները. իսկ Օրիորդը հրաժարելով հետի կը քալէր իրեն հետ լռութեամբ, մինչև որ հասան իշխանական վրանը ուր Եւփիմէ և պատուով ընդունեցաւ զպատգամաբերը։

Մարգրիտա այն ընտրեալ և արտաքոյ կարգի բնաւորութիւններէն էր՝ որոնց լռութիւնը, նայուածքը, շարժմունքը նաև՝ կը խօսի և կ՚արտայայտէ հոգւոյն կատարելութիւնքը, և նոյն բնութեան վճռակեալ անձինք իրար շուտ կը հասկնան։ Այնպէս ալ հոս հիմա հանդիպեցաւ. Թորոս ու Եւփիմէ վայրկենին ճանչցին Օրիորդին բարձր բնութիւնը՝ ինչպէս նա ալ զանոնք ճանչցաւ և գնահատեց։

Քանի մը վայրկեան լռութենէն վերջ, Թորոս հարկ համարեցաւ խօսքը բանալու.

—Ազնիւ Իշխանուհի, ձեր այսպիսի պատգամաւորութիւնը պատիւ կը համարիմ, և կը փափաքիմ որ այնպիսի առաջարկութիւններ ընէք՝ որ առանց արեան կաթիլ մը թափելու կարենանք խաղաղութիւնը կնքել, և այս կռիւը՝ որ եղբայրասպան կրնայ համարուիլ՝ վերջացնենք։

—Որվ մեծ Իշխան, պատասխանեց Մարգրիտա, ես պայման չեմ բերած. հոն՝ ներսը՝ ընտանիք մը կան, որ իրենց սուգին մէջ՝ դաշնագրաց պայմաններու վրայ մտածելու վիճակի մէջ չեն. ձեր իմաստութիւնը կրնայ երևակայել՝ ես չեմ երկայնաբաններ. ձեր վեհանձնութիւնը ինչ որ կամի՝ պատրաստ եմ ստորագրել, միայն թէ ձեր սրտին՝ և ոչ մեր վարմունքին՝ կը խնդրեմ որ թելադրէք։

—Ես ներսի միջնաբերդին ընտանեաց վիճակէն և սրտիս վհանձնական թելադրութենէն աւելի առաքինութեան տիպար մ՚ունիմ առջևս, ուրեմն, նա հիմա թող հրամայէ և երաշխաւորէ որ ասկից վերջը մարդասիրութեան օրէնքներ միայն պիտի կառավարեն Անարպաբան, ես իմ ժառանգական բոլոր իրաւունքներէս կը հրաժարիմ, և բանակիս կը հրամայեմ հիմա այս վայրկեանիս ասկից հեռանալ։

—Այսչափ վհանձնութեան և այսչափ մարդասէր առաջարկութեան պէտք էր որ ես ուրախութեամբ յանձնառութիւն ցուցնէի, և դժբաղդաբար պիտի չի կարենամ. որվ եմ ես՝ որու երաշխաւորութիւնը այնչափ արժէք ունենայ. թշուառ աղջիկ մը պատրաստ է սիրով և սրտանց աշխարհէս հրաժարելու և այս պաշտօնը միայն քանի մը անմեղ անձանց ապագային համար յանձն առած է։

—Բայց ես իմայայ թէ բոլոր զօրականաց և ընտանեաց միաբան ընկերութեամբ ձեզի կատարեալ յաջորդական Իշխանութիւն տուեր է և դուք ընդուներ էք։

—Այո՛, ընդուներ եմ, ոպէս զի ինչչափ որ կարելի է մարդ-

կային արեան հեղեղներ կարենամ արգիլել և անկարգութիւններ սանձահարել. մի միայն ասոնց համար։

—Լաւ, իշխանազուն Օրիորդ, ես իմ պայմաններս ըսուցի, ձեզի կը մնայ ձերինները ինձ հաղորդել

—Իմիններս չափաւոր են և գոհացուցիչ մեր վիճակին և մեր անցեալին համար. փոխարէն Անարզաբայ՝ մեր հայրենի Պապեռոնի դղեակը շնորհուի, ուր եղբայրս իր ընտանեօք և մայրս բնակին ու ապրին՝ իրենց ամէն սեպհականքը հոն փոխադրելու իրաւունք ունենալով։ Բ. մինչև ցայսօր հօրս ծառայող զինուորները խրատքանչիւրն իրենց ասպիճանաւ ընդունուին ձեր բանակին մէջ ծառայելու պայմանաւ։

—Մնայն բան մը մոռցաք. Ձեր անձին համար բան մը չորոշեցիք։

—Շատոնց որոշած էր վիճակ՝ թէ որ թշուառ հօրս կամքը արգելք չլլնէր. ուրեմն, հիմա Աստուած ի՞նչ անօրինած է թող կատարուի։

Այս խօսակցութեան երկու հոգի միայն ներկայ էին. Եւփիմէ և Սահփանէ։ Ամէնն ալ այս ազնուական ապջկան պարզ համարձակութեան վրայ կը զարմանային. վասն զի իւր որոշմունքը յայտնի կ'երևար, և այդ չնաշխարհիկ ծագկին թաւամիլը սերտութեամբ կը լեցնէր զբերնիք։

—Ձգեցինք ամէն պայմանները, ըսաւ Թորոս։ Ա. Անարզաբայ միջնաբերդը ինձի պիտի յանձնուի։ Բ. Ես ձերայնոց՝ հոս մնոտիկ՝ Պապեռոնի ամուր բերդը պիտի տամ, որու հիմա բանալիները ինձի բերուեցան։ Գ. Ձերայինք՝ իրաւունք ունին ամէն ինչք և սեպհականք առնուլ և երթալ։ Դ. Ո՛վ որ ձեր հայրենի զինուորաց յանձն առնու իմ ծառայութեանս մտնել՝ իրաքանչիւրն իւր աստիճանաւ ընդունելի լինի։

—Ե... ըսաւ և կեցաւ Թորոս, առանց շարունակելու։ Օրիորդը ուշադրութեամբ ապասեց և երբ տեսաւ որ չէր խօսեր՝ ըսաւ.

—Խիստ դաշինք մը կ'երևայ թէ ձեր վիհանձնութիւնը կ'արդիլէ։

—Դուք գտանեցէք։ Ե. Անարզաբա քաղքին կատարութիւնը և եկամուտը Մարգրիտ Իշխանուհւոյն կը վերաբերի յաջորդաբար։

—Այս խօսքերը լսելուն, կարմրութիւն մը պատեց Օրիորդին երեսը և պատասխանեց.

—Ո՛վ մեծ Իշխան, ձեր հինգերորդ դաշինքը ձեր սրտին վեհանձնութեան արդիւնքն է, ես իրրև կատակ մը կը լսեմ. արդէն նա որ աշխարհք կը ձգէ առանձնութեան և Աստուծոյ համար՝ ոչ ժառանգութեան պէտք ունի և ոչ յաջորդութեան։ Գարձեալ ձեր մեծութիւնը պէտք է գիտնայ թէ ես շատ ուշացայ հոս և սիրտս հանգիստ չէ, վասն զի հոս ինչ որ կը խոստանամ՝ չ'գիտեմ թէ ազատ պիտի լինիմ հոն բերդին մէջ գործադրելու։

—Այժմ ըսածնուդ վրայ իրրև հին և բազմամեայ բարեկամ մը՝ կը խնդրեմ և կը պահանջեմ որ արտօրնօք որոշմունք մը չ'ընէք. ես թէ որ անհոգանամ՝ ապահով եմ որ հոս ուրիշ մը կայ որուն ձեռքէն չ'էք կրնար ազատիլ. ըսաւ Թորոս եւփիմէի նայելով՝ որ գլխով ըրածը կը հաստատէր. իսկ վերջն ըսածնիդ կը խնդրեմ մեկնել վասն զի չ'եմ կրնար հասկնալ։

Այն առեն Մարգրիտ վրանին դրանը աչք մը ձգեց. Թորոս զինքը ապահովցուց թէ մեկը չի կար իրենց խօսքը մտիկ ընելու համար. ուստի Օրիորդը բերդապահ զօրականին նկարագիրը ըրաւ համառօտիւ և պատմեց թէ ի՛նչպէս իր ներկայութիւնը միայն բոլոր գիշեր կրցեր էր զերծնք հանդարտեցնել։ Թէպէտ այս պատմութիւնը՝ իր գովասանութեան մասին շատ համառօտ էր, բայց իրերը և վիճակը այնչափ յայտնի էին որ ամենքը զարմանքով լսեցուցան և Թորոս որ բաւական սրամիտ էր մասէն ամբողջը դտնելու համար, ոտքի վրայ եղաւ և ձեռքը տալով Օրիորդին՝

—Ի՛նչ պարագայի և ի՛նչ վիճակի մէջ որ գտնուիք հիմա՝ վաղը և ապագային, կը խնդրեմ և պատուաւորութիւն կը ձգեմ ձեզ ինձի դիմել, և ես ձեռքէս եկածը թէ որ չ'ընեմ յանցաւոր եմ առաջի Աստուծոյ։ Ահա եղբայրս Սահփանէ և կինս Եւփիմէ վկայ լինին իմ երդմանս։ Արդէն ես հիմա քաղաքապահ զօրաց հրամանս կ'ուղարկեմ որ ձեր ամէն ակնարկութեանց հնազանդին իրրև ինձի։

—Թէ որ հրամանդ ընէք, ըսաւ եղբօրը՝ Սահփանէ որ մինչև այն վայրկեանը բերանը չէր բացեր այլ խորին ուշադրութեամբ մտիկ կընէր եղբօրը և Օրիորդին խօսակցութիւնը՝ ես ալ կ'ընկերանամ Իշխանուհւոյն և ինչ որ հարկ տեսնէ կը գործադրեմ։

—Շատ լաւ կը լինի, եղբայր իմ, միայն թէ ինք ինչ որ հրամայէ՝ այն մինակ ի գործ դիր։

—Այո՝ այդպէս։

—Եւ ահա պատգամաւոր խումբը ձանրայ ելան, և Թորոս մէկ երկու անգամ յանձնարարելով Սահակեանի ղեկոյշ լինիլը և ընկերանալով նոցա մինչև բանակին մուտքը՝ նա դարձաւ։

Ի՞նչ կը մտածես Եւփիմէ, ըսաւ Թորոս, Սմբատի պէս գաղանի մը այս հրեշատակ զաւկին. թէ որ բոլոր Անարզարայ բնակիչք և գործքերը չի վկայէին թէ խնամատարութիւն և առաքինութիւն անձնաւորեալ է ինծմե՝ չէի հաւատար։

—Շատ լաւ եղաւ որ Սահակեանէ ներկայ էր այս խօսակցութեան, ըսաւ Եւփիմէ, ուրախ ժպիտով մը. թէ որ մեր երկուքին վրայ այնչափ ազդեցութիւն ըրաւ Օրիորդին հոգւոյն և դէմքին դեղեցկութիւնը, ի՞նչ կը յուսաս Սահակեանի վրայ։

—Թէ որ Սահակեանէ ուզէ, և Մարգրիտ յանձն առնու, ասկից յարմար և օգտակար բան մը չեմ կրնար երևակայել ու փափաքիլ։ Սահակեանէ այն տեսն ապահով մերն է։

—Ինչ ըսել կ՚ուզես չեմ հասկընար։

—Այն կ՚ուզեմ ըսել որ իմ այս երկու եղբայրներս որոնց քաջութեան և կորովին համար կասկած ունենալ կարելի չէ, դրժբաղդաբար մեզի հետ գերի չէլին եկած Պօլիս այլ աստանդական, բարբարոսաց մէջ, զրկ ամեն բարեկամէ՝ ամեն կրօնական սկզբունքէ՝ ամեն ուսմունքէ՝ ամեն բարի օրինակէ, իրենց վախուկ տարիները անցուցեր են սուր և նիզակ շարժելով՝ յաջ ու ձախ շահատակելով և ամեն անգթութեանց՝ ոճիրներու մասնակցելով։ Մեհի համար ես յոյս չունիմ, վստահութիւն չունիմ, ինք կորսուած երիտասարդ մ՚է։ Սահակեանի համար կը մտածէի, հիմա թէ որ այս դիտողութիւնդ ստուգի, այսպիսի կին մը ինչ որ իրեն կը պակսի՝ կը լեցնէ և ես այս ծանր գործիս մէջ, որուն դեռ սկիզբն ինք, աջ բազուկս զօրաւոր կը լինիմ և զժուարութեան մը տեղ օգնութիւն մը կ՚ունենամ։

—Դու անհոգ եղիր, այս գործը իմս է, և ես կը խոստանամ ի գլուխ հանել։

—Ինչ դիւրութիւն որ ուզես իմ կողմէս ամենն ալ քեզի կո-

տամ։ Անարզարան արդէն ես Օրիորդին ժառանգութիւն համարեցի. դու կ՚ուզես օժիտ համարէ կ՚ուզես սեփհականութիւն. Սահակեանէ իրմով դերագոյն կին մը և զաստիարակ մը կ՚ունենայ, և իր զաւկներուն ալ աքանչելի մայր մը։

—Ուրեմն անոնց եռանդէն ես ալ քաղաք կերթամ։

—Եւփիմ եղաւ Բարկէնին հետ յԱնարզարա երթալու, երբ Թորոս իր անբաւ զբաղմանց հետ սկսաւ պտրաստիլ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Յարմար և ձիշդ ժամանակին հասաւ Մարգրիտ Անարզարայ միջնաբերդը և իրեն կասկածները արդէն այդ սրիկայ և անպիտան զինուորաց համար շատ իրաւացի էին, վասն զի ոմանք սկսած էին մտածել թէ կարելի չէր արդեօք իշխանուհւոյն ընտանիքը պատանդ ունենալով ձեռնընկին՝ Սմբատայ բոլոր ստացուածքը իրենց դրաւել և այնպէս իրենց օգտակար դաշինք մը գնելով յանձնել Թշնամւոյն միջնաբերդը։ Սակայն իր ներկայութիւնն ամեն այդ խորհուրդները հալածեց և ամեն գրգռութիւն հանդարտեցուց. առանց ժամանակ տալու միջնաբերդին դրանը տրեց Սահակեանէ, և Ռուբինեան խաչի դրօշը սկսաւ ծածանիլ փոխանակ Յունական դրօշին, որ բոլոր քաղքին և բանակին ուրախութեան աղաղակը խնամեցուց Թորոսի։

Նոյն միջոցին էր որ Մարգրիտ կ՚խմայներ մօրը և եղբօրը թէ իրենց համար ընտրուած կար Պապեռն, և անոնք մեծ ուրախութեամբ ընդունեցին այս պայմանը և սկսան իրենց փոխադրութեան պատրաստութեան։ Միայն թէ երբ սրբազանը միջնաբերդէն դուրս ելաւ, քահանայ և ժողովուրդ միաբան դասախաղ կայնեցան և խնդրեցին որ օրինաւորապէս դասուի և մինչև նոյն ժամանակ եպիսկոպոսարանը արգիլուի, և Թորոս հաւանեցաւ Կաթողիկոսին գրել ի Ծովք դղեակը՝ որպէս զի ժողովրդեան արդար պահանջը կատարուի։

Մենք աւելորդ կը համարինք անարժան և դայթակղեցուցիչ եպիսկոպոսի մը վրայ դառնալ՝ որ ըստ իւր անառակութեան արժանեաց՝ վանքի մը մէջ ապաշխարելու դատապարտեցաւ. երանի թէ իր զըջումն ալ սրտանց լլնէր՝ որպէս զի հանդերձեալ կենաց մէջ երկրորդ և մեծ դատապարտութենէ մը ազատ լլնէր:

Իսկ Մարգրիտ որ որոշած էր՝ ոչ այլոց բռնադատութեամբ այլ իր կամաք և փափաքանօք հեռանալ յաշխարհէ, և չի գործած մեղքերուն համար ապաշխարել, պարտաւորեցաւ Եւփիմէի ու Սոփանէի ազաչանաց զիջանիլ և քանի մը ամիս վերջը Անարզաբայ իշխանական պալատին մէջ իր պսակի հանդէսը կը կատարուէր լուլեայն՝ յուրախութիւն բոլոր քաղքին բանակէաց, որ ազգութենէ իր առաքինութեան և իմաստութեան վրայ մեծ համարմունք ունէին և զինքը կը սիրէին: Աւելորդ է զըուցել թէ Թորոսի գուշակութիւնը իր եղբօր վրայ բաւական կատարուեցաւ. Սոփանէ իր կնոջ ազդեցութեամբ սիրելի եղաւ ժողովրդոց և եղբօրը՝ և շատ անգամ օգտակար գործիք նորա գիտաւորութեանց գործադրութեան: Ընդ հակառակն Մլեհի խստերախ և վայրենի բնաւորութիւնն վտանգ մ՚էր նորածին Իշխանութեան: Ինչ չափ որ Թորոս արդարութեան և քաղցրութեան վրայ հիմնել կը ջանար իւր Տիրապետութիւնը, նոյնչափ Մլեհ ամբարհաւաճութեամբ և անխորհուրդ խստութեամբ կ՚օտարացնէր սրտերը իրմէ, և եղբօրը բոլոր արիութիւնն պէտք էր անոր բոլոր ղառանցանքն ուղղելու համար:

Անարզաբայ առումը երկրին ամրողջութիւնը մասամբ կ՚ապահովէր. Թորոս հայրենի իշխանութեան կատարեալ տէրն լլնելով սկսաւ ներքին բարեկարգութեան. զինուորական կրթութիւնը ընդհանուր ըրաւ, այնպէս որ Տորոսաբնակ ամեն Հայ՝ զինուոր էր տղայութենէ մինչև ի ծերութիւն, պատաւորական իշխանութեան և իրաւանց վրայ խստիւ կը հսկէր, ոչ միայն որ ի բնաւսա անիրաւութեան թշնամի էր, այլ նաև անոր համար որ լաւ համոզուած էր թէ առանց արդարութեան ո՛չ և իսկ իշխանութիւն մեծ ու փոքր կը կործանի: Ներմաական մատակարարութիւնը լաւ և խնայուն վճակին մէջ դնելով, չափազանց տուրքերէ կը զգուշանար և կը զգուշացնէր: Կրօնասէր էր առանց կրօնամոլութեան, գիտէր յարգել կրօնքն ու նկեղեցին, չի շփոթելով նոցա հետ եկեղեցական-

նին անկարգութիւնն ու տգիտութիւնը: Անյարիսի խառնաշփոթ և անիշխանութեան ժամանակի մէջ, ուր անկարելի էր ապահովութիւն, ամեն շրջակայ իշխանութեանց քով լրտեսներ կը հաստատէր, գիտնալու համար թէ ուսկից իրեն վտանգ կրնար հասնիլ. կամ օգուտ. վասն զի ոչ խոստմունք, ոչ դաշնագրութիւն, ոչ երդմունք նշանակութիւն չ՚ունէին ամենևին. Քրիստոնեայ և Մահմետական իրենց օրինաց գրքերը խարէութեան գործիք ըրած էին, դիւրութեամբ խարդաւանելու համար այլակրօնն ու կրօնակիցը. ընտանեաց և բարեկամաց մէջ դաւաճանութիւն օրէնք էր գարձած, անգթութիւն և մահութիւն բնութիւն էր եղած: Յոյն և Փռանգ, Հայ և Ասորի, Պարսիկ և Արաբ, Թիւրք և Թաթար, կատաղի պատերազմներ կը մղէին, երէկ զօրաւոր Թագաւոր մը՝ վաղը մուրացկան մը՝ գերի մը՝ փախստական մը կրնար դառնալ. երէկ տիար կին մը՝ վաղը բերդկերու, գիւղերու և քաղաքներու Տիրուհի կը լլնէր, և այսպէս անհաստատ և անկայուն վիճակի մը դատապարտեալ էր ամեն ոք. հոս գերի ժողովուրդ մը՝ անդին ազատ էր և տէր. ճիշտ այս ժամանակին համար էր գուշակութիւնը՝ «Յարիցեն ազգ ազգի վերայ և Թագաւորութիւն ի Թագաւորութեան վերայ.» Եւրոպա իր հրոսը Փոքր Ասիոյ և Պաղեստինու վրայ կը պարպէր, և Թաթարաց խուժանը կը յորդէր Կասպիականէն եռանդն. հին ազգութեանց արմատներ կը ցնցուէին. նոր ազգութիւնք կ՚ընձիւղէին. քաղաքներ և ամրութիւնք կը տապալէին, նորեր անոնց տեղ կը բուսանէին: Այս վիճակը կը տեսնէր Թորոս և կը մտածէր իր շինութեան հաստատ հիմ մը ձգել:

Ինք կը տեսնէր Կիլիկիա ուր ամեն ազգաց խառնուրդ մը կը բնակէր, Յոյն՝ Արաբ՝ Թիւրք՝ Հայ՝ Ասորի ցիր ու ցան իրենց որջերը շինած էին. Բիւզանդական կայսրութիւնը ինքզինքը տէր կ՚անուանէր երկրին, թէպէտ շատ տարիներէ ի վեր իր իշխանութեան ոչ միայն հիմունքն խախտեալ էին՝ այլ նաև երեւոյթն անգամ կ՚անհետանար. Արաբք առջի հարուածը տուած էին նոյն իշխանութեան, և անոնց տկարանալէն վերջը շարունակ պատերազմի դաշտ մը եղած էր երկիրը այս զանազան ժողովրդոց մէջ: Իր ջանքն եղաւ՝ իր ազգը որ ցրուած էր ի Փոքր Ասիա, յԱսորիս, ի Միջագետս և մինչև յԵգիպտոս, գաղտնի հրաւիրակներով ժողվել ի Կիլե-

կիա և զօրացնել մանաւանդ որ կը տեսնէր վտանգը որ ամեն կողմէ իրեն կ՚սպառնար, իր դիտող՝ հեռատես և խոհուն սրամտութիւնը շատ հեռու էր այն անհոգութենէն՝ որ եղած յաջողութեանց վրայ կը քնանայ և զուարճութեան ու թուլութեան կը մատնէ ինքզինքը։

Ասսոմ քանի մը ամսուան մէջ ոչ միայն իր հայրենական երկրին տէրն էր Թորոս, այլ երջանիկ՝ գոհ և զուարթ ժողովրդեան մը հայրն էր, նա որ երբեմն միայնակ իբրև Սև լերան խոթաբիանները այծերու հետ չափեր էր հետ. հիմա շատ անգամ փոքրիկ բայց ընտիր դունդ մը առնելով բոլոր Տորոսի բերդերուն՝ սահմանները՝ դիւղերուն անխոնջ այցելութիւն կ՚ընէր, ամեն բան անձամբ կը տեսնէր, կը քննէր, ամեն տեղ յանկարծական զննուց հանդէսներ կ՚ընէր, դատաւորներու և լրտեսարաններու վրայ տեղեկութիւն կ՚առնուր, անիրաւները կը պատժէր, քաջերն ու առաքինիները կը վարձատրէր, աւերակները կը շինէր՝ կը բնակեցնէր. ամեն տեղ ժողովրդոց ապաստաններ կը պատրաստէր, և միանգամայն խստիւ կը պատուիրէր թշնամի չի դադրիլ՝ չի զարթուցանել այնպիսի ժամանակ և այնպիսի դրացնութեամբ՝ ուր բարեկամ գտնել անհնարին էր, իսկ թշնամին միշտ ինքնայօրդոր և պատրաստ։ Երբ իր անհամբեր եղբարքն ու զօրավարք կը ցուցնէին իրեն Կիլիկիոյ լայնարձակ դաշտերն ի հարստութեամբ անպատրաստ բան օրս ամենայն յարձակմանց, երբ Մլեհ իրմէ կը խնդրէր ուժը հաղար զինուոր միայն ազրելու համար Տարսոնի և մինչև ի ծով՝ Թորոս անուշ ժպտով մը կը պատասխաներ։

—Ես քու քաջութեանդ վրայ վստահ եմ Մլեհ, և կը հաւատամ որ դու աւելի պակաս զօրքով կրնաս յաղթել ոչ միայն Տարսոնի՝ այլ մինչև Սելևկիոյ ալ ազրելու, և թէ որ չեմ ուզեր՝ միայն պատճառը այն է որ, հոս այս փոքրիկ զօրութեամբ յունական թէև վատթարացեալ՝ մեծատարած կայսրութեան դէմ պատերազմիլ եթէ անկարելի ալ չէ շատ դժուարին է։ Ասոր փորձը մեր հայրը ունեցաւ երբեմն և մենք ալ իրեն հետ շղթաներու՝ դերութեան և օտարին ծառայութեան մատնուեցանք տարիներով։ Հիմա որ Աստուած մեզի ողորմեցաւ՝ մեր պարտքը մեր ժողովուրդը զօրացնել և աղէկ կառավարելն է։ Օգնենք իրարու, սիրենք մեկզմեկ, ըլլանք

մէկ սիրտ մէկ հոգի, զօրացնենք՝ շատցնենք մեր ժողովուրդը, բնակիչք լեռները ուր մեր ցուրտ երկրի բնիկ Հայը կորովի և քաջ կը լինի, օրը հեռու չէ որ դաշտը մերինն է, գիտնանք համբերել և մեր փառասիրութիւնը չափաւորել։

Այս խօսքերուն պատասխան չէին տար Մլեհ և իր նմանիքը, այլ առանձին դանդաւոներ և լուտանքներ կը թափէին անոր դէմ՝ որ իբր թէ կորովի բաղուկներ կը չլատեր և եռանդուն սրտեր կը սառեցնէր իր խոհեմութեան քարոզներովը։

Շատ անգամ կը տեսնուէր Մլեհ Վահկայ բերդին մօտ փոքրիկ հովանոցի մը մէջ իր մտերիմներուն շրջապատեալ խնջոյից և գինեբուաց տուած ինքզինքն՝ որ եղբօրը դէմ կ՚ոտոտար, մանաւանդ այն միջոցներուն երբ Թորոս օրերով իր քննութենէն կը պարտէր։

—Տեսէք այս իշխանաց Իշխանը որ սուրհանդակի պէս լեռնէ լեռ կը վազվզտէ. ի՞նչ ընելու համար. հոս տասը քսան տուն գիւղացիներու հետ խօսելու համոզելու համար ձիճիմութեամբ, անդին դատաւորի մը վճիռն անիրաւ գտնելու համար, քիչ մը հեռուն ժայռ մը պարսպով պատելու համար, և աւելի հեռուն եկեղեցի մը շինել տալու համար, և ասոնք ընողը այն մարդն է՝ որուն խիստ կերպարանքը, կամաց ձայնը և ծանր ծանր խօսակցութիւնը և ձևը, իշխանաց՝ ազատաց՝ ազնուականաց և ինձի՝ իր հարազատ եղբօրն անդամ՝ սանձ մ՚է ոչ թէ վհճելու այլ խօսելու նաև։ Ստեփանէին համար ի՞նչ զրուցեմ. տղուն գլխուն այնպէս կախարդ կին մը հանեց, որ ոտքով ձեռքով կաշկանդեցաւ և եղբօրը կապիկը դարձաւ. ի՞նչ որ զրուցես, ի՞նչ որ առաջարկես, «Մեր մեծ եղբօրը պէտք է հարցընել, անոր հաւանութիւնը պէտք է առնել» կ՚ըսէ, և կնկանը երեսը կը նայի. երես մը՝ ուր օր մը ժպիտ չէ ծագած. լուրջ կերպարանք մը որ իբրև թէ միշտ Աստուծոյ սեղանին առջևն է։ Ես՝ եղբայրը, ես՝ իր այնչափ տարուան ընկերը խնջոյքի մը գինքը չկրցի հրաւիրել կինը հրաման չի տար, ի՞նչ որ առաջարկես՝ մէկ մը աչքը կնկանը կը դարձնէ, բան մը կը հարցնես՝ կնկանը կը նայի. առանց կնկանը հրամանին ոչ կ՚ուտէ, ոչ կը խմէ և ոչ Անապատ պարիսպներէն դուրս կ՚ելնէ . . . : Բայց մի՛ կարծէք թէ կապրայ պարիսպներէն դուրս կ՚ելնէ . . . : Բայց մի՛ կարծէք թէ կախարդը միայն Անապատայ է. չէ, կախարդին մեծը այս դիմացի խարդը միայն Անապատայ է. չէ, կախարդին մեծը այս դիմացի մեր Վահկայ բերդը կը բնակի. այս Հայ—Հռոմ կինը տեսանք, որ

միշտ կը ծիծաղէ, միշտ անուշ կը խօսի, միշտ խօսքդ կատակի կը դարձընէ, միշտ հագուած սգուած ծիրանիներով բեհեզներով կը պտըտի, ձշմարիտ կախարդը նա է։ Աստուած վկայ, քանի անգամ ես կռիւ փնտռելու համար գացի, ծանր՝ խիստ խօսեցայ, նա կաթ-ծես թէ ոչ իրեն համար, ոչ էրկանը համար էր խօսքերս՝ ժպտեցաւ, ծիծաղեցաւ, մրմնջեց, երգեց, վերջապէս յուսահատեցայ առի քալեցի։ Եղբայրք, ես այս կեանքին չեմ սորված, նամէ, նամէ, նամէ, սպասէ որ Աստուած պատերազմ մը ղրկէ որ կռուիս։ Եթէ կարող ես գնա գեղ մը, երկու բարեկամիդ հետ՝ հաճոյքիդ եկաւ՝ գառնուկ մը մորթել հրամայէ, երկրորդ օրը կ'իմանաս թէ լուրը և հաշիւդ ալ մկկոտղ եղբօրդ հասեր է։ Ինչպէ՞ս կախարդ չըսեմ ես այս մարդկանց, անուշ անուշ առջի օրէն քեզի հետ կը խօսին, քոյր եղբայր կը լինին քեզի, հայրենի ժառանգութեան խօսք չ'են ըներ, հայրենի բերդդ ահա կեցած է, նահապետական կեանքը գեղեցիկ է, Եղբայրնէր Ջլիւեղ Քնաչին Վաչելո–չ և սուրբին մկին է ըսեր. այս կախարդները՝ աստանային ալ հրեշտակին ալ կարդալ կը սորվեցնեն. պէտք եղածը, առ ինչչափ ուզես իշխանական գանձէն, մի քաշուիր. նոյն գանձը կը վճարէ հեծելազօրիդ թոշակն ու ռոճիկը. բայց զինուորական ատեան մը կայ որ քու մարդիկդ կը դատէ՝ կը դատապարտէ՝ կը պատժէ առանց քեզի հարցնելու, շատ անգամ ոչինչ պատճառներու համար. ալ անկից վերջը միտքդ դիր որ քու մարդիկդ քուկդ են. Անարզաբան Սահփանէին որ տուին, այն չիմարն ալ կարծէ թէ իրենն է, օտարին՝ թշնամւոյն աղջկանը տուին... ըսէք թէ՝ առ քու բաժինդ, ուզէ. գեղացիին տղուն ինչպէս բերդ մը տուին՝ քեզ ալ բան մը կուտան... Ծովասպասաւկին հաւասար եղի՛ր. դու՝ Ռուբէնի շառաւիղը։ Դու որ իշխան մ'ես, դու Ռուբէնի թոռը, պէտք եղաւ՝ հարկ եղաւ գեղացի մը յանդիմանել՝ պատժել՝ ծեծել երկրորդ օրը Իշխան եղբօրդ քիթը կախ,ընքուինները քթին ծայրը իջած կը տեսնես. շաբաթ մը ժամ նիք կայ, ի՞նչ բանի համար, իմանալու է, ճշմկից, ժանտերես մ'ալ կայ, ծառայ մը մեր տղայութեան ատեն՝ հիմա բերդակալ իշխան դարձած, անոր բերանը փնտռէ, քարէ մարդու բերան, շնորհք ընէ մկ մ'որ խօսի՝ կ'իմանաս թէ մեծ յանդգնքը ուր է եղեր։ Ես Հաբլապու Սմիրային քով շատ մեծ մարդ էի, երբ ձիս կը հեծնէի

կ'եղնէի, ամենքը կը դողային. հոս արաբ մը մէջ կոխես՝ անպիտան քոսոտ գեղացի մը՝ «Հոս արտ է Իշխանս, անդիէն անցիր» կ'ըսէ. քու պարտքդ այնչափ ցածէն եղած հրամանին չհնազանդիլն է, խօսք ըլլալ չի լսեր է. ակռայ կը կրճտեցնէ ետևէդ։ Այս է վիճակը, Աստուած համբերութիւն տայ... ամեն օր համբերութեան քարոզ մտիկ կ'ընենք... բայց թէ անոր Թորոս կ'ըսեն՝ ինձի ալ Մլեհ կ'ըսեն։ Օրը թէ մկ մը հանի՛...

Այս ձևով՝ այս կերպով խօսքեր միշտ անպակաս էին, եւ փիմէ անոնք կը լսէր, երբեմն Թորոսի կ'իմացըներ որ իրմէ առաջ իմացած արդէն՝ կը ժպտէր, անհոգ լինիլ կը յորդորէր, թէպէտ ինք ամենայն արթնութեամբ կը հսկէր, և այս տեսակ սպառնալեաց անհոգ ձևանալով՝ ժողովրդեան հարստահարութեան մասին միայն խիստ կերպարանք մը կ'առնուր։

Իրաւ գոհ էր Սահփանէէն, մանաւանդ երբ Մարգրիտ նորա գլուխն վերևն էր՝ կատարեալ իշխան էր նա. Անարզաբայ բնակիչք՝ որ Սմբատայ ժամանակ այնչափ հարստահարեալ էին՝ կիլկիոյ ամենէն երջանիկ ժողովուրդը կը համարուէին հիմա, գանգատ մը ամենևին չ'էր լսուեր, ոչ Իշխանին՝ ոչ պատասխանայ և ոչ եկեղեցականաց դէմ. վասն զի ժողովուրդը բողոքելու անձ մը ունէր պատրաստ. ամեն ոք և ամենէն ոլորմելին մասնաւոր միջնաբերդը կը յուսնէր, և «Տիկինը հոն է» կ'ըսէր, և այս սպառնալիքը ժողովուրդը անխտիր ամենուն կը գործածէր, բաւական էր թէ իրաւունք ունենալուն վրայ վստահ լինէր։ Եւ գաւեշտական մասը հոն էր՝ երբ միամիտ և տգէտ մարդ մը՝ սխալ համոզմամբ առանց իրաւունք ունենալու դիմէր Տիկնոջ, և նա երբ «Դու իրաւունք չ'ունիս» ըսելով ձամբէր, Մարգրտի անսխալականութեան վրայ ընդհանուր այնպիսի համոզմունք մը կար՝ որ նոյն անձը պարզաբար կը խոստովաներ իր սխալմունքը, վասն զի «Տիկինն իրաւունք չ'ունիս» ըսէր էր։

Մարգրտի սիրտը միշտ կը տրոփէր՝ երբ տագրը իրեն այցելութեան գար, վասն զի Թորոս սովորաբար ամբաստանութիւն մը ունէր՝ գրեթէ միշտ այն Հալէպէն Սահփանէի հետ եկած հեծելազօրին անկարգութեանց համար։ Որ թէպէտ շատ փոխուած էին Տիկնոջ հսկողութենէն և Սահփանէի խստութենէն, բայց գրեթէ

կատարեալ աւազակութեան և անառակութեան սովրած մարդիկ՝ նեղ կը գտնէին Կիլիկիան, և Հալէպու յիշատակը՝ Եգիպտոսի սոխն ու սխտորն էր իրենց փափաքանաց։

Թորոսի գալափարներն իր ընթերցմունքը նաև շատ փոխած էին գինուորութեան վրայ, և արևելքի մէջ ընդհանուր եղած սուվորութիւնը՝ որ արևմուտք նաև այն ժամանակը ընդունուած էր՝ բանակի զօրութիւն հեծելազնդին համարելու, ինք սկսած էր փոխել. հետևակ զօրքը կրթութեամբ ու գինուք կը կատարելագործէր, որով իշխանաց զօրութիւնը կը սկսարանար և իրենց գուռծէր, որով իշխանաց զօրութիւնը կը սկսարանար և իրենց գուռծը այս կարծիքը ապացուցանէր. իսկ նա համբերել գիտնալով, ամենուն հետ աղեկ վարուելով՝ միշտ աչքն արևմուտք դարձուցած կը սպասէր, ամիսները կը համրէր և ուրախութեամբ կը տեսնէր որ կայսրը ձայն ձուն չ՚ունէր, և գոհ էր նորա շատ զբաղած լինելուն Նէրոպլոյ կողմերը ընդդէմ Ոնկարաց և Պուլղարաց։

ԳԼՈՒԽ Ի.

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ ԿԵՍԱՐ

Քանի մը տարիներ անցան, Տորոսի Հայը Թորոսի լաւ իշխանութեամբ և իմաստուն կառավարութեամբ երջանիկ վիճակի մէջ մտեր էր. քաղաք՝ գիւղ և լերդ ուրախութեան երգոց և նուագարանաց արձագանքներով լեռները կը զուարթացնէին։ Ռուբինեանց տունը գրեթէ մի և նոյն ժամանակին մեծ հրճուանք մը կը տեսնէր. երկու ծնունդ ի միասին. Եւփիմ աղջիկ մը՝ Մարգրիտ անչ մը կը ծնէր՝ որ Ռուբէն անուանուեցաւ՝ և եղբը իր նախնեաց աթոռը նաև ժառանգեց։ Վահկա և Անարզաբա իրենց նորեկ հիւրերը կը տեսնէին։ Ամուսնոյ բերդը հազիւ թէ լուրը հասաւ՝ Բարկէնի երեսը խնդաց, որ ինչպէս գիտենք ցանցառ պատահար մ՚էր, վասն զի Իշխանիկը աղջիկ մ՚ունէր և ինք ալ սանուհի մը։ Ուրիշ ծեր մ՚ալ՝ որ հազիւ թէ Վահկայ բերդին մէջ լուս աչքով

կը տեսնուէր, վասն զի օրն ի բուն Տորոսի ժայռերուն և ըոյսերուն հետ զբաղած էր՝ հիմա օրրանի մը շուրջը զբաղրիթագէմ կը պտըտէր փոքրիկ հակին վերաբերեալ նաժշտաց խորհուրդներ տալով։ Մլեհ միայն կը մրմռար՝ կը գանգատէր Աստուծմէ՝ բաղդէն և կնոջմէն՝ որ իրեն զաւակ մը չ՚էին տար, և թէ բոլոր բնութիւն դաւադիր էր իր երջանկութեան։

Նոյն միջոցին յաջող լուրեր նաև ամեն կողմէն կը հասնէին Թորոսի. Մասուտ Սուլդանն Իկոնիոյ և Միջագետաց, Նուրէտտին Ամիրայն Հալապու, Լատինաց Բրինձն Անտիոքայ, Տաճարական կրօնաւոր Ասպետք Փեանգայ, և Հայոց մեծ Կաթողիկոսն իր հայրենի ժառանգութեան մտնելու ուրախակցութեան գեսպաններ կ՚ուղարկէին, և խաղաղութեան գաշինքներ կ՚առաջարկէին։ Հայ գաղթականներ խումբ խումբ կուգային կը դիմէին Տորոս, ոչ միայն ի Փոքր Ասիոյ և ի Միջագետաց, այլ մինչև Եգիպտոսէ հաղարաւորք կը հասնէին։ Զանոնք տեղաւորել, վիճակներին բարւոքել գինուորական կրթութիւններն կատարելագործել՝ Թորոսի անխոնջ նախատեսութեան ղեկավարներն էին, վասն զի իր գործակալներն ի Կ. Պոլիս, Կ՚իմացնէին թէ կայսրը իր աստուածատրանական սիրելի խնդիրներէն և արևմտեան պատերազմներէն վայրիկ մը ոգի առնելով՝ ուշադրութիւնը ի Կիլիկիա կը դարձնէր. մանաւանդ որ ոչ միայն Յոյնք այլ նաև եղան Լատին ոմանք որ նախանձոտ աչօք կը տեսնէին Հայկական իշխանութեան վերածնութիւնը, գաղտնի գրգռութեամբ կը հրահրէին յունական իշխանութիւնը ետ առնել այս փոքրիկ ազատութիւնը՝ որու ապագան իրենց կասկածի նիւթ մը կը լինէր։ Օրինակի համար կայսեր քանի մը ամրոցներ որոնք Լևոնի գերութեան ժամանակ Պերպերուժէն կայսրը առած էր ի Փոքր Հիմա երբ Թորոս անոնց սիրացաւ, Լատին իշխանք կը պահանջէին զանոնք յանուն Տաճարականաց, վասն զի անոնք հատուց համար եկած են պատերազմելու, կ՚ըսէին. թէպէտ իրենք ամենքն ալ հատուց համար պատերազմելու եկած ալ լինելով, և ի Հայոց երբեմն օգնութիւն գտած և երբեմն օգնութիւն նոցա մատուցած, մանաւանդ ամեն հարստահարութիւնքը Փրիսոնէից՝ Հայոց վրայ ծանրաբեռնել չ՚էին զգուշացած։ Ժամանակակից հեղինակ մը խոտիւ կը նկարագրէ քսանեհինգ երեսուն տարի առաջ

անցած դիպուածները: «Հոն, կը ցուցնէ նա, Փռանգ իշխանները կը յարձակէին նախանձելով Հայ իշխանաց վրայ, որք փոքր զօրութեամբ Պարսից ձեռքէն առած էին շատ տեղւանք իրենց քաջութեամբ և բնակարան կերտած էին, աւելի քան զԹուրքն կը նեղէին զանոնք ու տարիով պաշարելով իրենց բոլոր գաւառները ձեռքերէն կ'առնուին, որոնցմէ ոմանք Ապլհարիպ Պիրի իշխանին պէս կը թողուին ամեն կալուածքնին և անձարեակ կ'երթային առ Իշխանն Հայոց Թորոս (Հօրեղբայր մեր Թորոսին) յԱնարզաբայ. ինչպէս Տղայ Վասիլն Տէր Քեանոյ որ կ'երթայր փախստական ի Կոստանդնուպոլիս ամենայն ազատօքն. ինչպէս Բաղարատ, այր քաջ, Տէր Արևբնդունի՝ որ հազիւ կը ձողպրէր, ինչպէս Կոստանդին, Տէր Կառկայ որ Սամուսատա բերդին մէջ ի կապանս կը մեռնէր, նաև շատեր կային զեղեցիկ իշխանք՝ որ ի բանտի չարչարանաց և կապանաց մէջ կը մեռնէին, և շատեր ալ կային որոնց աչքերը խաւարեցուցած էին, ձեռքերնին քթերնին և այլ անդամներնին կտրած և ի կախաղան սպաննած էին. անմեղ տղայոց հետ նաև խստութեամբ և չարչարանօք կը վարուէին: Այսպիսի անհամար անզգամութեամբք գանձեր ժողվելու համար, երկիրը բոլոր աւերակ կը գտնէին. միշտ զբաղած էին, ոչ աշխատութեամբ՝ այլ նստած չարութիւն և նենգութիւն կը խորհէին, և ամեն չարեաց ճանապարհները կը սիրէին, բարեաց և երախտաց մոռացողք լինելով: Նոցա շատ անիրաւութիւնները կ'ուզէի գրել բայց չի համարձակեցայ, վասն զի նոցա իշխանութեան ներքև էինք:» Այսպէս կը խօսի Մատթէոս Ուռհայեցի:

Թորոս ասոնք ամենքը կը ճանչէր. բայց իւր զրուխիւնն էր յամառ և անդառնալի՝ խստութիւն չի բանեցնել, ժամանակին գիտնալ տեղի տալ յարմարիլ, և իրեն դէմ թշնամի չի յարուցանել. վասն զի կը տեսնէր թէ ուշ կանուխ՝ օրը հեռի չ'էր, որ Կոստանդնուպոլսոյ վրայ ժողվուած սպառնալից ամպերն՝ փոթորկալից իրեն պիտի գիմէին: Ու իր տեսութիւնն ատուգուեցաւ, իմացաւ թէ այն Անդրոնիկոս Կեսարն՝ որ Հայոց ընդհանուր և Ռուբինեանց գէմ մանաւոր ատելութեամբ լեցուն սիրտ մ'ունէր՝ զօրավար կարգեալ ի Մանուէլէ կը գիմէր բանակաւ ի Կիլիկիա: Գիտէր նաև թէ մեծ բանակի մը օգնականք միշտ անպակաս կը գտնուէին այնպիսի ժա-

մանակի մէջ՝ ուր բարեկամութիւնը հզօրաց և յաղթողաց համար էր: Ուստի բոլոր իր պատրաստութիւնքը տեսաւ, իր բերդերը, ամրոցներն ու լեռները զօրացուց, իր ընտանիքը ապահովեց, և զօրքերուն ընտիր ընտիր խումբերը միայն հետն առած և իր երկու եղբարքը՝ գնաց Մամեստիա սպասել թշնամւոյն, և հոնկից յառգուպ տալու համար Մլեհ եղբօր անհամբերութեան որ միշտ անգործութենէն կը գանգատեր, կ'ուղարկէր զանի զօրավար հեծելոց՝ Յունաց սահմանները յաստպատակութիւն: Տեսնելու էր այն առեն Մլեհ որ քանի մը տարի գրեթէ անգործ մնացած՝ իր նէ գործունէութիւն ձեռք կ'առնուր, իր նէ կորզպուտ և աւար կը հանէր երկրէն, միայն մէկ յանձնարարութիւն եղբօրը յիշելով՝ խնայել մարդկային կեանքին, անօգուտ անգթութեամբ պատերազմի գառն գործը աւելի չի գառնացնելով: Այսպէս կը հանէր Մլեհ մինչև Տարսոնի պարիսպներուն տակ ազատութիւն գտած բազէի պէս, ուր իր առջևէն՝ մերկ փախստականներ իր խստութեան համբաւը բերած էին և իր սպառնալիքը՝ «Թէ շնորհակալ լինին Հռոմք իր եղբօր հրամանաց, ապա թէ ոչ՝ ոչ ոք ի գերութենէ ազատ պիտի ինար իր ձեռքէն»: Ու թէպէտ Տարսոնի մէջ վեց եօթը հազար հոգի յառաջապահ խումբ մը կար պատրաստ Անդրոնիկոսի բանակին սպասող, բայց մէկը չ'էր համարձակեր դէմ ելնել այս երկու հազար և քիչ մը աւելի հեծելոց գնդին. ոչ զրպտութիւն, ոչ նախատինք, ոչ շղթակապ գիւզօրէից աւերմունք և ծուխ չի տուին յանգգնութիւն այս մոլեկան զօրավարին դէմ գնելու: Ուստի Մլեհ Տարսոնացւոյմէ յուսահատելով՝ յարձակեցաւ ի Լամբրոն վասն զի գիտէր թէ նորա Իշխանը Յունաց համամիտ և նիզակակից էր. ինչ որ յամրութեանց դուրս գտաւ՝ ապականեց, անբաւ պաշար՝ առջևն՝ ոչնար և գրատ բերաւ ի Մամեստիա աւելով կատարելով Թորոսի հրամանը, որուն փափաքը զԱնդրոնիկոս սովով նահանջել էր:

Անդրոնիկոսի բնական կատաղութիւնը չափ չ'ունենար երբ խմացաւ Մլեհի յրածները, հազարապատիկ վրէժ հանել ի Հայոց կը խոստանար՝ կ'երդնոյր և առանց դադրելու կը քշէր բանակը յառաջ. երկոյն կ'երևար իրեն ճամբան Տարսոնէ մինչև Մամեստիա՝ ուր լսեր էր թէ Թորոս կը բանակէր: Արդէն իր առան երկու հա-

զար զօրաց վրայ նոյնչափ մ՚ալ աւելցեր էին նիզակակից, որոնց մէջ քանի մը հատ երևելի Հայկազն իշխանք ալ կային, ոմանք հաւատարիմք յունական Կայսրութեան, ոմանք ի Թորոսէ և ոմանք իրենց բռնութեանց համար ժողովրդեան ապստամբութեամբ ղըրկուած իրենց կալուածներէն։

Իսկ Հայոց իշխանը իւր զօրօք նստած ի Մամեստիա կ՚սպասէր Թշնամւոյն. իր հանդարտ և զուարթ երեսը մեծ վստահութիւն մ՚էր իր զօրաց, և իրրև աւետիս ընդունեցաւ Թշնամւոյն հասնելն լուրը։

Բայց զօրապետաց և գնդապետաց զարմանքը բոլորովին այլայլութեան դարձաւ, և Մլեհինը կատաղութեան, երբ առ ժամայն զամենքը խորհուրդի հրաւիրելով, հրամայեց Բարկէնի առնուլ իրեն լաւ թարգման մը, և երթալ Յունաց բանակը առ Անդրոնիկոս Կեսար՝ խաղաղութիւն խնդրելու համար, ըսելով. «Մենք ալ Կայսեր ծառայքն ենք, միայն կը խնդրենք որ նա հաճի մեզի հետ բարեսրտութեամբ վարուիլ. ինչպես մենք մեր հայրենի ժառանգական երկրին սահմաններէն դուրս չ՚ելանք և թէպէտ դիւրին էր Ցարսոնի նաև տիրանալ՝ բայց չուզեցինք որպէս զի Կայսեր իրաւացի բարկութիւնը չի շարժենք. ուստի ինչ արդար խաղաղութեան պայմաններ որ ունի՝ առաջարկէ, և անօգուտ արիւն և աւերմունք չի բնրենք այս երկրին վրայ»։

Իսկ Բարկէն այս խօսքերը լսելուն թէպէտ սաստիկ վայրկեան մը, բայց ոգւովհետև լաւ կը ճանաչէր զԹորոս և գիտէր անոր քաջութեան չափը ու միանգամայն խոհեմութիւնը, դանդաղ քայլ մը առաւ երթալու՝ թէպէտ ակամայն իր երեսին վրայ նկարուած էր և կը մտածէր թէ արդեօք սխա՞լ հասկըցաւ, երբ տեսաւ թէ Իշխանը խօսք մը չ՚աւելցներ՝ եղաւ հրամայուածը կատարելու։

Բայց ապուշ սառնութիւնը որ ընդհանուր էր՝ անհետացաւ, և ընդհակառակն բոլորք մը սկսեր էր յաջողիլ ամենուն սրտին մէջ. արդէն Մլեհի երեսները կարմրցան և աչքերը արիւն լուսեցան, և Թորոս անոր սրտին ոգեվը քովէն գրեթէ կը լսէր. միայն ինքն կայր անխռով և սկսաւ խօսիլ.

«Որվ իմ քաջ նիզակակիցք, կը զարմանաք իմ այս դեսպանութեանս վրայ, և կարելի է որ ձեր մէջէն ոմանք, և թերևս

ամենքդ ալ բարկութեամբ և դառնութեամբ կը լսուիք լսելով այս իմ խոնարհական լեզուս, և ես թէ որ իմ սրտիս ձայնը լսեի ոչ երբէք այդ խօսքերը թշնամւոյ մը՝ և այսպիսի անզգամ թշնամւոյ մը պիտի ընէի. բայց ով որ ժողովրդոց առաջնորդ և իշխան է, պէտք է մարդկանց, Աստուծոյ և իր խղճմտանքին առջև լաւ քննէ ամեն բան և արդարութիւն գործէ։ Մենք մարդկային արեան ամեն մէկ կաթիլին համար պատասխան պիտի տանք Աստուծոյ. անոր համար մեր փառասիրութիւնն ու մեր ամբարտաւանութիւնը պէտք չէ որ մեզի առաջնորդ առնուն, այլ մեր աղքին օգուտը։ Ես ձեզի յայտնի կը խոստովանիմ թէ Հայ աղքին օգուտը կը պահանջէ որ Յունաց հետ հաշտարար երթանք, անոնց նիզակակից լինինք ընդդէմ այն Թշնամւոյ որ մեզ կը շրջապատէ և օր աւուր կը զօրանայ. Յունաց կայսրութիւնը թէ որ ձանչէր իր օգուտը՝ փոխանակ մեզ նեղելու մեզ կը զօրացնէր և պատնէշ մը մեզ կը կանգներ այն ամեն այլակրօնից դէմ որ մեծ ծովու պէս կը դիզուին՝ կը բարձրանան և մեզն ալ պիտի ողողեն։ Ես իրր Քրիստոնէ և իրր հեռատես իշխան պարտաւոր էի այս դեսպանութիւնն ընելու, և խաղաղութեան սկիզբ մ՚ընելով զօրաւոր դաշնակցութիւն մը հաստատելու ջանալ ի մէջ երկք Քրիստոնեայ ազգաց՝ որ միաբան կրնային թուով մը կազմել ընդդէմ այլակրօնութեան, մինչդեռ հիմա ընդհակառակն բաժանեալ աւելութեամբ պիտի կործանուին և անհետ պիտի լինին։ Պէտք էր Քրիստոնէից՝ նոյն իսկ Մահմետականաց օրինակին հետևիլ (1), որ իրենց մէջ ծագած պատերազմներու մէջ իրենց կրօնապետք ամեն ջանք կ՚ընեն խաղաղութիւն հաստատելու և արիւնը դադրեցնելու։ Երբ յամօթ և ի նախատինս Քրիստոնէութեան մերայինք չնչին և մտաց անհաս խնդիրներու համար արեանց գետերու պատճառ կը լինին. . . ։ Բայց դուք ինչի՞ զայթակղեցաք, ինչի՞ զայրացաք, դուք Թշնամին չէք ճանչեր, դուք Անդրոնիկոս չէք տեսեր, ես տեսեր եմ. ես պատերազմեր եմ իրեն դէմ, և մեր մէջ ամենէն աղեկ գինքը ճանչցող մէկը թէ որ կայ և սուր սուրի եկած է իր հետ, նա է որ հիմա իրրև դեսպան խաղաղութեան՝ գնաց իրեն հետ խօսելու։ Անդրո-

(1) «Մէ՛ անայր առներ զսուն Մուսլմանաց»։ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑ. 520

նիկոս ոչ միայն խաղաղութիւն պիտի չ՚ընդունի, այլ մեր խոնարհական դեսպանութիւնը մեր տկարութեան նշան պիտի համարի, և մենք անպարտ կը մնանք Աստուծոյ առջև այն արիւնէն որ պիտի թափի։ Բայց թէ որ անհաւատալին հաւատալի լինի և ցոյնք շնորհեն մեզի խաղաղութիւնն որ մենք կը խնդրենք, արդար և իրաւացի ապարէզ մը կայ մեր առջև արևելք ու հարաւ ընդարձակելու և զօրանալու համար և մեր խեղճ՝ անտէրունչ ազգը ժողվելու և դերութենէ ազատելու համար։ Ահա պատճառները որ զիս այս պատգամաւորութեան յորդորեցին. ով որ կամի բացատրութիւն մ՚ուզել պատրաստ եմ տալու։»

Գիշեր որ խօսեցաւ Թորոս կիրքերը խաղաղեցան և նոյն իսկ Մլեհ հանդարտեցաւ, մանաւանդ երբ Թորոս Անդրոնիկոսի խաղաղութեան ընդունելութիւնը անկարելեաց կարգը դրաւ՝ զուարթութիւն մը եկաւ երեսին վրայ և ըսաւ.

—Բացատրութեան պէտք չ՚ունինք, երբ կը տեսնենք թէ այս դեսպանութիւնը նախատինք մը չի կրնար բերել մեր պատուոյն և մեր քաջութեան։

—Ժողովքը ցրուեցաւ գարձեալ գումարուելու համար Բաբկէնի վերադարձին, երբ քաղքին դռները բացուեցան, և ծեր զինուորը մտաւ և եկաւ կայսեցաւ առեանին մէջ, լուռ՝ ամենքը պըշուցեալ իրեն կը նայէին և կ՚սպասէին։

—Իշխանդ մեծ, ըսաւ Բաբկէն, Հռոմք մեզի հետ խաղաղութիւն ընել չ՚են ուզեր։

—Ի՞նչ կ՚ըսեն, այն պատմէ մեզի, Բաբկէն իշխան, զրուցեց Թորոս։

—Որովհետև կ՚ուզէք որ ձեզի պատմեմ և այն Անդրոնիկոսին բսածները կրկնեմ, լաւ լսեցէք։ Նախ մեզ տարին վրան մը գոցեցին, իբր թէ անպիտան գերիներ լինէինք, ինչ նախատական խօսքեր որ ամեն առեն սովորութիւննին է զրուցել Հայուն անձին ու հաւատքին՝ անկանխնուս կը մրմռային վրանին շուրջը. ետքը զմեզ առին Անդրոնիկոսի առջև հանեցին, որ մեծ վրանի մը մէջ բարձր ուռած նստած, մեր խոնարհ պատգամը մտիկ ըրաւ, և անարգանօք ու քամահրանօք այս խօսքերը զրուցեց. Գնա զրուցէ ապըստամբին՝ ապստամբին տղուն թէ՝ Շղթաները որով քու հայրդ

կապեցինք, մկտեղ ունիմք որ զքեզ ալ կապենք տանինք։ Եւ ձեռամբ ըրաւ որ զմեզ դուրս հանեն։ Մենք ալ բոլոր Յունական բանակին հայհոյանքներն ու քրքիջները ետևնէս՝ հեծանք մեր ձիերն ու դարձանք։ Ահա մեր դեսպանութեան բոլոր պատմութիւնը։

Եւ այս խօսքերն ըսելով պայրագին՝ նստաւ Բաբկէն։

—Լսեցիք իշխանք, ըսաւ Թորոս, տեսնենք հիմա Աստուած զի՞նչ պիտի խնդացնէ։ Ես նորա արդարութեան միտ հաւատացեր եմ, ինք վկայ է որ ես ջանացի խնայել մարդկային արեան, Կայսրը և Անդրոնիկոս չ՚ուզեցին. ընենք ուրեմն մեր պարտքը, ցուցնենք թէ մեր հարց որդիքն եմք, և թէ դիւրին չ՚է ամեն անգամ շղթայ անցնել Ռուբէնի թոռներուն վիզը և Հայուն համբերութեան հետ խաղալ։

Ահա խօսքերը ըսաւ և ելաւ, ու ամենքը ցրուեցան իրենց տեղը. ինք միայն պարսպին բարձր մէկ կողմը Դիոնիսին դիտակը ձեռքը կը դիտէր կը նայէր այդ բանակին՝ ուր խառնակութիւն և վատահութիւն կը թագաւորէին. կը տեսնէր երաժիշտներ և դռնանններ, կը տեսնէր զինուորաց հետ խառնակեաց կանանց խումբեր, և ինքիրեն կ՚ըսէր. «Այդպիսի անկարգ բանակ մը հիմա զօրաւոր յարձակմամբ մը անկարելի չ՚է ցրուել, բայց աւելի ապահով միջոցներ ինչո՞ւ չի գործածենք, խնայենք մեր արեան, սպասենք յարմար առթին, հեռու չ՚է անշուշտ։»

Երբ իջաւ պարսպէն, անմիջապէս կանչել տուաւ Սարգիսը որուն յաջողակութեան և արթնութեան վրայ մեծ համարմունք ունէր։

—Այս գիշեր պէտք է Անարզաբա երթալ։

—Լաւ, Իշխան։

—Ստեփանէի իմացնել թէ պահեստի գնուած բոլոր զօրքերը դումարելու և թշնամւոյն ճանբան կարելու խորհուրդը պէտք չ՚է ուշացնել, այլ մինչև երեք օր պէտք է կատարել. վասն զի այս կնամարդեայ յանձնապաստան բանակին համար չ՚է այն ըզգուշութիւնները, ինչ որ առաջ իրեն հետ որոշեր էինք։ Ուրիմն քեզ տեանեմ, բարի յաջողութեամբ։

Եւ ահա Սարգիս ելաւ Իշխանին քովէն, փոքրիկ դուռը որ

պարսպէն գետը կը հանէր հոն լճաւ, ջուրերը շարժեցան և քիչ վերջը մուխին մէջ կորովի ընթացքով կը հեռանար՝ կ'երթար Անարզաբայ ձամբան։

ԳԼՈՒԽ ԻԱ.

«ՍԱՀՄԱՆՔ ՔԱՋԱՑ ՉԷՆՆ ԻՐԵԱՆՑ»

Անդրոնիկոս ալ ապահով էր յաղթութեան համար, միթէ ապստամբը չէր որ խոնարհաբար հպատակութիւն խոստանալով խաղաղութիւն կը խնդրէր, ուրմէն մինչև որ շղթաները գործածելու ժամանակը հասնէր՝ փախստեան ձամբաները պէտք էր գոցել, խրամներ պեղել և պատնէշներ կանգնել քաղքին դռներուն առջև բաւական հառաջեցաւ, և տուաւ ինքզինքը զբաղմունքի. երկու գիշեր իրարու վրայ գիւղերբուրք՝ երդք և երաժշտութիւնք բանային կին զբաղմունքն էին։ Իրաւ յունական բանակին մէջ կային անձինք որ ինչպէս Թորոսի խոնարհ պատգամաւորութեան վրայ կասկածանօք գլուխ շարժած էին, հիմա ալ այս անհոգ անտարակուսութեան վրայ գլուխնին կը շարժէին դարձեալ, բայց ո՛վ կրնար կասարու մը՝ Կայսեր հօրեղբօրորդւոյ մը՝ ընդհանուր արևելից սպարապետի մը համարձակիլ զբուցել թէ «Մի՛ հաւատար այդ խոնարհութեան, վան զի առիւծը երբեմն աւելի լաւ ծուղակը ձգելու համար իր որսը՝ կրնայ դերը փոխել և ազուէսի մորթը վրան առնուլ,» ո՛վ կրնար իրեն զբուցել թէ «Այդ հանդէսները աւելի յարմար էին յաղթութենէն վերջը քան թէ առաջ.» ուստի լռութիւնք կը լսէին, յիմարք և մեծապանծք կը խօսէին։

Իսկ Թորոս, երբ գիշերն հասաւ, յունական բանակին հակառակ կողման պարիսպը հրամայեց քանդել և հաղիւ թէ գործը սկսաւ դիւրանալ, սոսկալի փոթորիկ մը ահա փրթաւ, որուտեմ՝ կայծակ՝ անձրև՝ կարկուտ իրար կը խառնուէին, ուժգին հովը ժայռեր կը կործանէր՝ վրաններ փետուրի պէս կը յափշտակէր, յունական բանակը շփոթած անձրևէն և ոխովն շաղախեալ՝

շուարեալ ճնացեր էր բոլոր գիշեր, թէպէտ Անդրոնիկոս իւր զբաղմունքն ու գինեբուքը ամենևին չի դադրեցուց գիշերն ի բուն։ Արշալոյսը երևցաւ, և Հայոց զնդերը աշխոյժ և կորովի պարսպին պատառուածէն կիսաշրջան մ՝ընելով գոռոհիւ կը յարձակէին թշնամւոյն վրայ, որ անպատրաստ երբ թշնամին դիմացը ի բանա կը կարծէր՝ քովը կը գտնէր զայն սուրն ի կող մխելով։ Ա՛լ պատերազմ չ'էր, այլ փախուստ մէկ կողմէն՝ կոտորած միւսէն. հոն Մլեհ իւր մոլեգին հեծելազնդին հետ դաշտին տարածութեան մէջ անխնայ կոտորածը դեռ քիչ գտնելով՝ «Զարկէ՛ք տղաք, մի՛ խնայէք,» կը դոռար, և իր օրինակն ալ սոսկալի էր. իսկ Թորոս տեսնելով իր պատրաստած աւերմունքն ի գլուխ եկած, կը յորդորէր իւր զինուորն ի գթութիւն և հաղիւ թէ Յոյն և Հայ իշխաններէն կրցաւ մաս մը մահուանէ ազատել։ Իսկ թշնամւոյն այն մասը որ փախստեան յառաջընթացն եղած էր և ազատութիւնն ապահով կը կարծէր, Ատանայի ձանբան բռնելով Սաւփանէի և Սարգսի խումբին հանդիպեցան որք առանց փոթորկին ուշ դնելու չորս հազարի չափ մարդ իրենց կ'սպասէին։ Փախստականաց մէջն էր Լամբրոնի իշխանը իր դնդով որ յուսահատ ջանք մ՝ըրաւ պատռելու Հայոց խումբը և անցնելու իր ձանբան, բայց վրայ հասաւ աստկութեամբ Սաւփանէ և այնպիսի նիզակի հարուած մը տուաւ որ թաւալգլոր ձիէն կործանելով Օշին, վայրկենին զինաթափ և կալանաւոր եղաւ։ Այդ ահագին բանակէն հազիւ թէ կէս մասը ազատեցան, և բուն ազատ ալ անոնք էին որ իրենց նաւերը կրցան մտնել, ճնացեալք ամենքը կամ ջարդուեցան կամ գերի ընկան։ Իսկ բուն չարեաց սկզբնապատճառը և սա խեղճ ու խայտառակ պատերազմին հեղինակ և զօրագլուխ Կեսարն Անդրոնիկոս յանկարծ ի քունէ և ի գինւոյ սթափեալ հազիւ թէ ժամանակ գտած էր ինքզինքը իր ձիուն վրայ նետելու, և Անտիոքայ ձանբան բռնելու, բարեբաղդաբար իրեն համար, որով անվտանգ ազատեցաւ. թէպէտ Բաբկէն ամեն բան թողած՝ զանիկայ կը փնտռէր կոտորածին մէջ, խոստանալով ինքնիրեն կիսկատար հարուած մը չի տալ անօրինին։

Իսկ Թորոս որ այս անգամ և ոչ սուրը պատեանէն հանած էր, այլ արթուն՝ ամենայն պատրաստած, վասն զի վտանգ չի կար և ոչ ձանր պատերազմ, այլ ջարդ՝ կոտորած և աւար, այդ սպանդա-

նոյին վրայ կեցած կը նայէր՝ կը խորհրդածէր մարդկային անմըտու-
թեան վրայ, որ խաղալիք քանի մը անպիտան, չիմար և թեթև
գըւխներու, այդչափ ձագալեաց տեղի կուտար։

Այս խորհրդածութեամբք ձգեց պատերազմին՝ մանաւանդ թէ
կոտրածին դաշտը, մտաւ Թշնամւոյն բանակը իւր անձնապահա-
պետաց խմբովը. դիշերուան փոթորիկը՝ և աւելի սաստիկ առաւօ-
տեան Հայ արշաւանաց փոթորիկը՝ ամէն բան խառնափնդոր և
ողբամելի վիճակի մէջ կը ցուցնէր այդ բանակը, կիսակործան և
կանգուն վրաններ՝ վահաններ՝ նիզակներ՝ սուրեր գետին փռուած՝
թամբեալ ձիեր ոտնկապ կը խլխնջէին հեծեալներու սպասելով որք չէ
կային. այս տեսարանին վրայ ակնարկ մը ձգելով Թորոս, ակնարկ՝
ուր գոհութիւն և արհամարհանք հաւասար էին, մտաւ Անդրոնի-
կոսի վրանը որ գրեթէ պալատ մ՚էր իւր ընդարձակութեամբ և
բաժանմունքներով, իսկ հանդերձանաց հարստութեան՝ զեղեցու-
թեան և պերճանաց չափ չի կար. գորգեր՝ բեհեզեայ անկողիններ՝
ծիրանի վերմակներ՝ ոսկի և արծաթեայ զէնքեր՝ կանանց զարդա-
բանք՝ երաժշտութեանց նուագարանք խառն ի խուռն ըրուած էին,
այնպէս որ արդի մեծ թատրոնի մը մեներանոցի կը նմանէր քան
թէ սպարապետի մը վրան։ Թորոս աս ձոխութիւնքը տեսնելով մեծ
ուրախութիւն մ՚ունեցաւ, ոչ թէ անոր համար որ իր գանձը պիտի
երթային անոնք՝ ո՛չ, այլ անոր համար որ Հայ զինուորը զինուո-
րական կանոնաց ու զօրապետին հրամանաց հնազանդիլ սովրեր էր.
յետադարձի փողը չի հնչած մէկը չ՚էր համարձակեր աւարառու-
թեան ձեռք զարնել այլ Թշնամին հալածելու միայն զբաղած էր։
Ուստի ինքն ալ ցուրտ նայուածք մը ձգելէն վերջ այս թուլամոր-
թութեան կահուց վրայ. հետաքրքին աչօք բան մը կը փնտռէր որ
վերջապէս գտաւ, այսինքն բանակին դիւանական գրութիւնքը որ
վայրկենին մատանիովը կնքեց և իւր աաենապետին յանձնեց։ Անկից
վերջը հրաման տուաւ շուտ մը մեռելները թաղելու գործողութեան
որպէս զի օդը չ՚ապականի։ Նոյն միջոցին էր որ Սահմանէի բանակն
ալ գերիներով ծանրաբեռնեալ կը հասնէր՝ կը միանար իր բանա-
կին. իսկ Մլեհի մղեկան հեծելազունդը անհետ եղած էր բոլորո-
վին, և իրօք մեծ բարեբաղդութիւն մ՚էր Հայ իշխանաց համար որ
Սահմանէի ձեռք ինկած էին, վասն զի Մլեհէն գթութիւն յու-

սալ անօգուտ էր, նա դիշերուան մութն առանց կալանաւորի մը
դարձաւ գոհ և արիւնաթաթախ։

Նոյն դիշերը զինուորը մաս մը Յունաց բանակեցաը, մաս մը
Մամեստիա անցուցին, Թշնամւոյն գինւով և կերակրով զուարճա-
ցեալ և յղփացեալ, բայց միշտ դիշերապահ զգուշութեան օրէնքը
խստիւ պահպանելով վասն զի Թորոս կը տեսնուէր յանկարծ ամէն
բան անձամբ քննելով։ Բայց իրեն զբաղմունք նոյն դիշերը
եղաւ բոլոր Անդրոնիկոսի քով գտնուած թուղթերը հետախոյզ ը-
նել։ Հոն կը տեսնէր չորս տարուան միջոցի մէջ քանի անգամ դրա-
ցիք որ բարեկամութիւն ձևացնելով շնորհաւորութեան գեսպան-
ներ զրկած էին՝ իրեն գէմ որոգայթ լարած՝ Յունաց հետ գաղտնի
դաշինք կը դնէին և կը հրաւիրէին պատերազմի։ Հոն կը տեսնուէր
մանաւանդ Անտիոքայ իշխանին Ռընալտի և Տաճարականաց շահա-
սիրութիւնը, որ երբէք ձեռաս չէին տեսած՝ այլ օգուտ նաև հաշի-
շենց պետին մէկ գիրը՝ որ յորդորեալ ի Յունաց սպանել զԹորոս,
լի նախատանօք կը պատասխաներ այսպիսի առաջարկութեան մը՝
յիշեցնելով թէ այդ Հայը երբէք անիրաւութիւն մը ըրած չ՚էր
ընդդէմ Մահմետականաց։ Հոն կը տեսնէր թէ իր եղբայրը Մլեհ՝ նշա-
նակուած էր իրրև կարելի գործիք մը իր կենաց և աթոռոյն դէմ.
հոն կը գտնէր շատ մը գրգռութեան թղթերու օրինակներ ուղ-
ղեալ կայսերական կառավարութենէն առ Մահմետական իշխանս
Մաղասա Սուլթան և Նուրէտտին Ամիրայն իր նորածին իշխանու-
թիւնը կործանելու համար։ Թէպէտ Թորոսի հանճարը՝ ատոնք ա-
մէնքը կը գուշակէր, բայց ուրիշ էր վկայներ և ատուգութիւններ
ի ձեռին ունենալ. ուստի արշալուսոյ մօտ էր երբ պզտի քուն մը
քաշեց և կանգնեցաւ, առտյդ և զուարթ՝ որովհետև իւր կորովի
կազմուածքը շատ դիւրութեամբ կը տանէր ամէն տաժանմանց և
փոքրիկ հանգստութեամբ գիւրաւ կ՚սթափէր։

Նախ տեսան կալմեց իւր զօրաւորաց, հոն գերիներուն հա-
մար նոցա կարծիքը քննեց, Մլեհ մէկէն առաջարկեց զամենքն յու-
զարկել Հալէպ և վաճառել վասն զի կ՚ըսէր՝ այդ անպիտան ժողո-
վուրդը Քրիստոնեայ պէտք չէ համարիլ։ Ամենքը Թորոսի կը նայէին
և մարդ կարծիք չ՚էր տար։ Այն տեսն Թորոս մարդասիրութեան
և քրիստոնէութեան օրէնքները առաջ դրաւ, բացատրեց թէ չա-

փաւորութեան օրէնքներն ինչչափ օգտակար էին, և եթէ բաղդը ինչչափ անհաստատ էր. այս օրուան յաղթողը կրնար վաղը յաղթուիլ և թէ Հալէպ այդ Քրիստոնէից ծախուելովը քանի՜ ուրայութեան մեղք պիտի ծանրանար իրենց վրայ, ուստի կողոպտել և ձամբանին թողուլ որոշուեցաւ։ Իսկ Մլեհ իւր անհոգ ձևով կ՚ըսէր թէ իր խղճմտանքը թեթև էր, վասն զի ինք գերի մը նաև բերած չէր բանակը, և թէ որ Սահփանէ՝ կը յաւելոյր ծիծաղելով՝ իրեն պէս շարժած լինէր թշնամւոյն հետ՝ այս խնդիրը հիմա տեղի չէր կրնար ունենալ։ Ուստի հրաման եղաւ որ հասարակ զինուորը կապահով և կողոպտեալ ազատ երթան ուսկից որ եկած էին։ Խընդիրը կը մնար գլխաւորաց համար որ բերել տուաւ Թորոս, հոն Հայ և Յոյն իշխանաց կապանքը արձակել հրամայեց, նստել տուաւ, և զուարթ կերպարանօք սկսաւ իրենց հետ այսպէս խօսիլ

«Ասկից քանի մը օր առաջ գիտէք թէ մենք ձեզի խաղաղութիւն առաջարկեցինք խնամարհաբար և դուք արհամարհանօք մերժեցիք, կ՚երևայ թէ սխալ լմայեր էիք մեր դիտաւորութիւնը, և կարծեցիք թէ վախն էր որ զձեզ խաղաղութեան կը յորդորէր. կը տեսնէք հիմա փորձով թէ մենք խաղաղութեան սիրով միայն շարժեցանք, վասն զի քանի տարի է որ ձեզի կ՚սպասէինք և կը պատրաստուէինք, իսկ դուք պատերազմը խաղալիք համարելով, այսպէս խայտառակաբար յաղթուեցաք այսչափ մեծ բանակաւ։ Միայն կը ցաւինք որ հոս ձեր սպարապետը՝ վոխարքային մկատել չէ և յաջողեր է փախչիլ հոգ չէ, թերևս օր մը նորէն կուգայ և կը տեսնուինք։ Իսկ դուք որ մեծ իշխաններ էք և բերդերու՝ պալատներու և հարստութեան տէրեր, և մենք որ աղքատ և միամիտ լեռնականներ ենք, դուք քաղաքակրթութեան վերջին նըրբութեան էք հասած, իսկ մենք ասիական բարբարոսներ ենք ձեր աչքին. դուք Քրիստոնէական ուղղափառութիւնը ունիք իսկ մենք հերետիկոսութեան ենք ժառանգք, կ՚ուզենք զձեզ ալ ձեր զօրայ պէս արձակել որ երթաք ձեր տուները, միայն օրէնք է որ փրկանք մը մեզի վճարէք, և որովհետև ձեր արժէքը մեզ դժուար է գտնել և գնահատել, ձեզ իւրաքանչիւրդ կը թողումք զըուցել թէ ինչ կ՚արժէք՝ վճարել և երթալ ձեր ճամբան խաղաղութեամբ։

Հռոմ իշխանքը որ այսպիսի առաջարկութեան երբէք չէին

սպասեր, զարմանքով իրարու երես սկսան նայիլ չփոթած։ Լսուած չէր մինչև այն օրը թէ երբէք կալանաւոր ոք իր փրկանաց գինն որոշէ. պզտիկ արժէք մը տալ անձանց՝ իրենց մեծամտութեան կը դպչէր, գինը բարձր բռնել՝ յունական ամբարտաւանութիւնը գոհ կ՚ներ՝ բայց պէտք էր վճարել ուստի դարձեալ փախուստ տալով առաջարկեցին որ ինք գին կարէ։ Իսկ Թորոս կերպը փոխելով՝ լի արհամարհանօք՝

—Եթէ բան մը արժէիք զձեզ չէի թողուր որ երթաք, ըսաւ. և դառնալով իւրայնոց. Տարէք այս իշխանները որ իրենց արժանեաց վրայ մտածեն, մենք բաւական զբաղմունք ունինք հիմա և պէտք չէ ժամանակ կորսնցնել։

Եւ երբ իշխանները դեռ վրանին դռնէն դուրս չէլեր ելած բողոքովին, լսելի ձայնով աւելցուց.

—Այս օրուընէ տարին չի լսուած, պէտք է որ Հռոմ մը չի մնայ Կիլիկիոյ մէջ։ Պատրաստեցէք եղբարք, բանակը Տարսոնի վրայ։

Իրօք բանակը սկսաւ շարժիլ, մեծ էր ուրախութիւնը զօրականին, և քան զամենայն ոք մեծ էր ուրախութիւն Մլեհին։

Իսկ մեր կալանաւորքը տեսնելով թէ խնդիրը կը ծանրանար, վասն զի եթէ բանակը Տարսոնի վրայ երթար, Թորոս գտնել աւելի դժուարին պիտի լինէր, և ո՞ գիտէ յաջողութիւնն ալ աւելի հրապարտանելով վերջը պայմանի գիջուցանել զնա աւելի դժուար, մանաւանդ որ կային այնպիսիք՝ որոնց իշխանութեան երկիրները Կիլիկիոյ մէջ լինելով՝ թերևս իրենց ունեցածէն ալ պիտի զրկուէին, ուստի խնդրեցին իրաւահոգ լինիլ և ծանր գիներ որոշելնին համացուցին։ Եւ շուտ մը իրենց ծառաներէն մարդիկ զրկեցին Տարսոն՝ Լամբրոն՝ Կոռիկոս՝ Փայաս՝ Անտիոք և մինչև Կիպրոս, որ փրկանքը շուտով հասցնեն և ժամ առաջ ազատին։

Նոյն միջոցին Առանա քաղաքը Սահփանէի մկ փոքր ցոյցին վրայ անձնատուր կը լինէր և դռները կը բանար Թորոսի եղբօրը։ Իսկ Հայ յաղթութեան լուրը Կիլիկիայէն դուրս առջի տանողը նոյն ինքն Անդրոնիկոս եղած էր, երբ իւր քանի մը ճեպընթացով խայտառակաբար հալիւ կրցեր էր ձողալրիլ Անտիոք։ Կաստատրայ մէջ, ինչպէս գիտենք, զբաւուրն էր Օշին, Տէրն Լամբրոնի, զոր ամենևին ուրիշ Հայ իշխանաց հետ չէր ուզած որոշել Թորոս

ի ծունաց, և անոնց կարգը դնելով զանոնք՝ միշտ այնպէս կը վա-
րուէր որ իբրև թէ Հոռոմ եղած լինէին ազգաւ և կրօնիւք։ Օշին
հիմա վախէն ծանր փրկանք մը յանձն առած էր, և կ'սպասէր
հասնելուն ի Լամբրոնէ, իւր անդրանիկին հետ, վասն զի քառա-
սուն հազար ոսկւոյ տուգանքին կէսը միայն առժամայն վճարել
կարող էր և միւս կիսուն համար պատանդ պիտի թողուր տղան։
Ա.յս պայմանաց համար ամենայն բանագնացութիւնք Բաբկէնի միջ-
նորդութեամբ կը լինէին, որուն յանձնուած էր բոլոր կալանաւո-
րաց պահպանութիւնը։ Բանակը արդէն կը շարժէր երբ փրկանաց
մեծագոյն մասը հասաւ, հրամայեց Թորոս բերել բոլոր ծոյն իշխան-
ները, բերել նոյնպէս անոնց ազատութեան գիւները, և երբ ամեն
դրամները համրուեցան և ճիշդ գտնուեցան՝

—Ազատ էք ուրեմն, գնացէք ձեր ճանբան։

Եւ դեռ անոնց ներկայութեան՝ հրաման տուաւ բաժնել զօրաց
բոլոր այն ստակը, որ գանձ մ'էր, և երբ իշխանները զարմանք
յայտնեցին այս հարցմամբ թէ՝

—Ադեպ ստակ ի՞նչպէս կարելի էր այդ սինլքոր զօրակա-
նին բաժնել.

—Որպէս զի գարձեալ ձեզ և ձեր նմանիքը բռնեն ինձի բե-
րին, եղաւ Թորոսի պատասխանը։

Ա.Լ սկսաւ Թորոս հայրենական սահմաններէն դուրս ելնել։
Տարսոն խիստ պաշարմունքէ մը վերջը անձնատուր եղաւ. իր յաջ-
թող բանակին աջ թեւը մինչև Կոռիկոս կը տարածուէր, ձախը
մինչև Ալեքսանդրիոյ ծոցը, որ անկից եւքը Հայոց ծոց սկսաւ
ըլուցուիլ։ Իր զօրավարները ամենքը վարձատրեց, Մլեհ եղբօրը
Կոռիկոսի բերդը իր սահմաններովը տուաւ յորդորելով որ ի բաց
առեալ զՁոյնս լաւ վարուի ամենուն հետ։ Իսկ Փայասի ծովեզերեայ
փոքրիկ քերդը Սարգսի յանձնեց յորդորելով որ երբեմն ծովա-
պատակութիւնն շարունակէ յօգուտ իրեն և ի վնաս թշնամեաց,
միանգամայն Սարգսի արքունութենէն կը յուսար որ իր խոռվայոյզ
նղբօր կերպով մը դէպ կը լինի դրկից գտանելով, և նորա անձոռնի
շարժմունքներն իրեն կ'նմանին։

Բայց միշտ մոքէն չ'էր կրնար հանել այն գաղտնի նամակաց
ընթերցմունքն՝ որ բոլոր իւր դրացեաց ոգին իրեն յայտնի կը

պարզէր, ուստի պէտք էր զանոնք իրարմէ բաժնել։ Այն նամակները՝
յայտնի իրեն կ'նմանէին թէ Անտիոքայ իշխանը խոստացեր էր
Ցունաց օգնել, և կը գուշակէր թէ Անդրոնիկոսի ամբարտաւանու-
թիւնն էր միայն պատճառ որ այս օգնութիւնը տեղի չէր ունե-
ցեր, և իրօք այնպէս էր։ Ուստի Թորոս երբ այս խորհրդածու-
թեանց վրայ էր, Տարսոն՝ ուր իր գործողութեանց կեդրոն ըրած
էր այն ժամանակին, ահա յանկարծ հին բարեկամ մը, ամպնջական
մը՝ Բարսեղ վարդապետ, առաջնորդ Կիպրոսի Հայ վանուց՝ ներս կը
մտնէր Կոստանդնի հետ մէկտեղ։

—Ո՜հ, բսաւ Թորոս խնդալով, ահա մեր հին երկու սուրբ
միանձունքը. ուր գտար, Հայր սուրբ քու հին միաբանդ, թէ ոչ
նա զքեզ գտաւ, քանի տարի է որ զմեզ մոռցար, մենք ալ զքեզ
չե կրցանք յիշել, ներէ, գիտես թէ Եւփրիմէ միշտ զքեզ կը ղուշէ։
Բայց տխուր կ'երևիս . . . խօսէ՝ ի՛նչ ունիս։

—Մեծ Իշխան, մենք գիտէինք թէ դուք զմեզ կը յիշէիք,
վասն զի քանի անգամ Իշխանուհին թէ մեր վանուց և թէ մեր
Կիպրաբնակ Հայոց կարօտելոց համար օգնութիւն ղրկեց, ինչ ես
քանի անգամ ուզեցի գալ որպէս զի ձեր հզօր պաշտպանութիւնը
խնդրեմ մեր խեղճ ժողովրդոց համար, բայց Ցունաց չարութենէն
արգիլուեցայ, տարի մ'էր որ բանան էի նիգօսիա, վասն զի զմեզ իրրև
հերետիկոս չարչարել՝ հալածել սովորութիւն ըրին Կիպրոսի Հոռոմք
և ինչ որ մինչև հիմա յԱրաբացւոց չի տեսանք ասոնցմէ կը տես-
նենք, կրօնք՝ կեանք՝ ստացուածք՝ ամեն բան վտանգի մէջ է։ Ո՞ւմ
դիմէի, շփոթած էի. ուխտ ըրի Աստուծոյ որ բանտէն ազատած
միջոցիս Կիլիկիա ձեղի դիմեմ, և ոսկի խաչ մը՝ որ միայն ճնացեր
էր՝ կաշառք տալով բանտապանին, ազատեցայ և վանք եկայ։ Իմ
խեղճ վանքս, դռները այրած, միաբանքս՝ ոմանք ցրուած լեռները
փախած, ոմանք սպանուած, եկեղեցին պղծեալ, սուրբ սրտոք յա-
փշտակեալ գտայ։ Թէ որ արաբացի նաւ մը զիս հոս չի հանէր չ'եմ
գիտեր ինչ մահուամբ ալ զիս պիտի սպաննէին այդ նզովեալ ազգը.
ահա իմ վիճակս. եթէ Կոստանդին իշխանը, ինձի ընորհք չ'ընէր
այս հաղուստները ձարելու՝ զիս մուրացկանի հագուստներով հիմա
պիտի տեսնէիք։

—Յաւելի և անպատմելի բան մը թէ կայ՝ միայն մեռածներն

ևն, Հայր սուրբ, որոնց ձար չ՚եմ կրնար ընել իսկ ինացեալ ամե-
նուն հնարքը գիւրին է, փառք Աստուծոյ. դու հիմա քիչ մը
հանգչէ, Հայր սուրբս, քիչ մը հանդարտէ. ես բոլոր քու կրուսա-
ներուդ փոխարէն տանապատիկը հատուցանել կուտամ: Կոստանդին
իշխան, քեզի կ՚ընկնի առնուլ քու վանահայրդ, չինել տալ անոր ցու-
ցակ մը բոլոր իւր կորուսաներուն, և տանիլ գինքը, ամենայն քաղա-
քավարութեամբ ու քաղցրութեամբ հոս՝ Տարսոնի Յունաց արքե-
պիսկոպոսին, և ինձմէ բարև ընելով յորդորել գինքը որ անոնց փո-
խարէնը տայ. վասն զի ինչպէս օրէնք է որ սպասաւորը սեղանէն
ուտէ, նոյնպէս արդար է որ հարուստ սեղանը կողոպտեալ սեղանին
բաժին հանէ: Մենք Յունաց եկեղեցեաց ամենևին չի դպանք, բայց
նոցա եկեղեցիները պէտք է գոնէ մեր եկեղեցեաց վրասը տուժեն,
երբ իրենց կրօնակից զանոնք կը կողոպտեն: Իսկ քու Կիպրացիդ,
հոգ մ՚ըներ, Հայր սուրբ, իրենց պատիժը կը գտնեն:

Վանահայրը և Կոստանդին ելան իրենց պաշտօնը կատարելու:
Կրնան երևակայել ընթերցողք թէ Կոստանդին և թէ Հայր սուրբը
քանիցս բազմապատկեցին իրենց կորուստները, և թէ ինչչափ ձուա-
ցուցին խեղճ արքեպիսկոպոսն, որ իր վիճակին աղքատութիւնը՝
պատերազմներու պատճառաւ իր եկամտից կորուստը, և թէ ջըրհե-
ղեղէն և Պօղոս առաքելոյն Տարսոնի քաղաքացի լինելէն ի վեր ինչ-
չափ վրաս կրած էր իւր եկեղեցին՝ գանոնք կը համրէր: Բայց
ոչ վեղարաւոր և ոչ անվեղար գլուխը այս իրաւաբանութեան ու-
շադրութիւն տալու փափկութիւնն ու թափանցկութիւնը չ՚ունէին,
մէկ կողմէն ապառաժի պէս անպգայ՝ իրենց պահանջմունքը կը նո-
րոգէին և միտքն գանալու ամէն ջանք կ՚ընէին, և այս խաչէն՝ սկիհէն՝
աւետարանէն՝ պատկերէն՝ միանձանց ապրուստի և վանքի եկամտից
առևարին մէջ՝ Կոստանդին՝ գինուոր մարդ՝ անհամբերութեամբ եր-
բեմն կ՚ելնէր, երբ արքեպիսկոպոսը և վանահայրը՝ թէպէտ ոսոխ՝
կը միանային գինքը նստեցնելու, խմացնելով գոնէ այս հրատէրով
թէ՝ եկեղեցականը գիտէ տեղն տալ միշտ, բայց ի վերջին կէտին:
Ա՛յսպէս նաև եղաւ հիմա, Յոյնը՝ որ Կիպրոս կողոպտեր էր Հայուն
վանքը՝ Կիլիկիա կը տուժէր քառապատիկ. ոսկիները Համուեցան,
արծաթներու կապոցները շինուեցան. Հայ կրօնաւորն ամենայն յար-
գանօք և խոնարհութեամբ իր Յոյն պետէն ի պաշտակարգութեան

աջն առնլուն և օրհնութիւնը խնդրելուն՝ մօրուքն ի վար կը ծի-
ծաղէր, և փոխարէն նորա բերանը երբ անուշ օրհնութիւն կը
բղխէր՝ հազար դառն անէծք սրտին խորէն կը տեղայնէր, դժբաղ-
դաբար Աւետարանի բարոյականին համար՝ անշահասիրութեան քա-
րոզն Քրիստոս հոն չ՚էր որ չուանեայ խարազանաւ այս իր երկու
սիրելի աշակերտները լաւ մը դրոշմէր:

Կողոպուտն բեռնակրի շալակաւ բարձեալ՝ մեր Հայ սուրբը կը
դառնար Թորոսի իր շնորհակալութիւնքն ընելու. և երբ իշխանա-
կան պալատին դրան մօտեցաւ՝ ոչ սպասաւորաց բազմութիւն, ոչ
սպայից ելևմուտ, ոչ սուրհանդակաց երթևեկ՝ ոչինչ չէր երևար.
այլ խաղաղ լռութիւն մը կը տիրէր, և դրան քով լռիկ երկու զին-
ուորներ սուր ի ձեռին կայնած էին:

—Կ՚երևայ թէ Իշխանը մեկնած պիտի լինի, ըսաւ Կոստանդին:

—Ո՞ւր, պատասխանեց եկեղեցականը:

—Ո՞ր գիտէ, այնպիսի մարդ մ՚է որ դուլ դադար չ՚գիտեր,
մենք երբեմն իր հօրեղբօր վրայ կը զարմանայինք, բայց այս ան-
գամ զանի, լռիկ՝ անխօս կը մտածէ, երբ որոշէ՝ ալ դանդաղիլ
դադրիլ չ՚գիտէր, իր նպատակին կը վազէ, տեսնենք, խմանանք թէ
ո՛ւր է:

Մտան պալատը և տեսան Բարկէնն որ ձեռքերը ետին կապած
կը շրջապտէր, և երբ այս մեր երկու բարեկամները և բեռնակիրը
եռանուն տեսաւ որ կու գային, աննշմարելի ծիծաղ մը երեսին եկաւ,
յիշելով այն Կիպրոսի Ս. Մակարայ Թաքստեան տարտամ վիճակի
օրերն, երբ նոր գերութենէ ազատած, սիրտ ի դող, ելեց իջաց
կ՚սպասէին՝ անփորձ երիտասարդ Իշխան մը գլուխնին ունենալով որ
յոյս կուտար իրաւ իրեն՝ Բարկէնի, բայց ո՞ւր կարծեր թէ այնչափ
խոհեմութիւն այնչափ քաջութեան և նախատեսութեան հետ պիտի
ընկերացնէր և բոլոր իր պապերուն ըրածը քանի մը տարուան մէջ
աւելցուցը պիտի ընէր և գերազանցէր:

—Ո՛հ, Աստուած օգնականն, Հայր սուրբ, բարի ես եկեր:

—Ողջոյն, Բարկէն հայրիկ, Աստուած պահապանն, պատասխա-
նեց Հայր սուրբը:

—Բայց Իշխանը ո՞ւր է, կը հարցնէր Կոստանդին:

—Իշխանը Փայտս գնաց:

—Փայտս գնաց։ Բայց քու Իշխանիկդ յիրաւի զարմանալի մարդ է, Բաբկէն, յանկարծ կ՚ելնէ . . .

—Իմ Իշխանիկի ըրածը թագաւորները չ՚են կրնար ընել ես կ՚ըսէի երբեմն թէ իր հօրեղբօր պէս թէ լինի՝ շատ է մեզի, բայց հիմա, հէ՜, ոչ հօրեղբայրը, ոչ հայրը, ոչ պապը . . . Լուսաւորչայ պէս մարդ է պիտի ըսեմ, թէ Աստուած չի բարկանայ. քանի՛ տարի է օր մը թեթև գործ մը չի տեսանք . . . Դու, ես, այս Հայր սուրբը իր կարգովը, Կաթողիկոսն իր սուրբ մեռոնով, Աստուած վկայ թող լինի, եղբայրասպան կը լինէր թէ որ Մլեհի խօսքերը օր մը միայն լսէր . . . բայց իմ Իշխանիկս ամեն բան կը լսէր, գիտէր, ձայն չ՚էր հաներ, սուտ խուլ կը լինէր։ Օր մը՝ խոստովանանք Թող մնայ, քանի մը ամիս կայ Իշխանուհին ինձ ըսաւ. «Բաբկէն հայրիկ, կը զգուշանի թէ Մլեհ իշխանը իր եղբայրը չի սիրեր և անոր դէմ երբեմն կիրքով կը խօսի և սպառնալիք ալ կ՚ընէ, իրա՞ւ է, պէտք է հաւատալ։ Հաւատա Կոստանդին, մեր եղբայրութիւնը վկայ, պաղեցայ մնացի։ Իշխանուհին տեսնելով իմ շփոթութիւնս մէկէն վրայ բերաւ . . . շատ խելօք կին է. իրաւ որ մեր լեռներուն մէջ նմանը չի կայ։ «Ես չ՚եմ հաւատար ինչ որ ըսեմ, Բաբկէն հայրիկ, մարդիկ չարաչեզու են, խօսքերը ծուռ կը մեկնեն, վերագիր կ՚ընեն. դու որ ամենուն հօր պէս ես, թէ որ օգտակար գտնես՝ խրատէ զինքը որ խոհեմ լինի. իրաւ, եղբայր են, բայց կրնայ մէջերնին պատճառ մնանել»։ Ես ահաչեցի այս խօսքերէն, գիտէք թէ ամօթը ինձի համար էր, Մլեհին բան զգուշել պարապ էր, բայց պարտք է ըսի, զգուշեմ՝ խղճմտանքէս ազատիմ. այս մտքին վրայ էի, մէկ մ՚ալ Իշխանը ինձ օր մը յանկարծ երբ միտակ էինք, «Բաբկէն հայրիկ, ըսաւ, քանի օր է դու միտքդ կը յոգնեցնես, գիտեմ Մլեհին հետ խօսիլ կուզես, կը պատրաստուիս շատ անգամ, կը տեսնեմ երբ Մլեհ իմ քովս գայ՝ ներս կը մտնես դուրս կ՚ելնես, միշտ հոս կ՚ուզես դառնալ հոգ մ՚ընես, անոր սիրտը դէշ թիւն չի կայ, նա որ զգուշ չի գործադրեր փուճ տեղ մի յոգնիր, շատը գնայ քիչը մնայ. Մլեհ խնդիր խելօք գուրս կուգայ, ետրա ամեն պակասութիւնը անպարծութենէ է. չափը լեցուեցաւ, քանի մը օրէն Մլեհ գոհ և երջանիկ պիտի լինի. գալ ձեռ կ՚ըսեմ՝ հոգ մ՚ընես. ոչ մէկու բան մ՚ըսես»։ Իրօք մէկ մ՚ալ լսեցինք թէ մեր վրայ Հռոմ

ները պատերազմի կուգան. Մլեհ փոխուեցաւ, եղբօրը պէս ոչ մարդ կայր՝ ոչ իշխան։ Հիմա գնա այս միջոցիս Մլեհ կը գտնես Կոռիկոսի դռներուն առջև՝ ծովեզերը նստած, օղին կը նետէ և եղբօրը գովասանութիւն կը կարդայ, ինչպէս ասկից քանի մը ամիս առաջ Վահկայ Հովանոցին մէջ նստած օղին կը նետէր՝ նզովք կը կարդար։ Մլեհին ինչ զարմանամ. Թորոսի կը զարմանամ, որ եղբօրը ամեն ասածը գիտէ, իմ մտքէս անցածը գիտէ, Հռոմի թագաւորին ընելիքը գիտէ . . , աս մարդպետ է, ինչ է, դու ըսէ Հայր սուրբ, դու որ շատ կարդացեր ես. բայց գիտցիր թէ մեր Իշխանիկը քեզմէ շատ կը կարդայ։

—Եղբա՛յր, Հայր սուրբէն ինչ կ՚ուզես, կանչեց Կոստանդին, թէ որ Մլեհ՝ որ Կոռիկոսի իշխան եղաւ՝ օղին կը խմէ և եղբօրը գովասանք կը կարդայ, օղին բերել տուր մեզ ալ տես թէ Հայր սուրբը ինչ օրհնութիւն պիտի կարդայ մեր Իշխանին. այս բուռը կը տեսնես, բոլոր արծաթ ու ոսկի է, բոլոր եկեղեցական սպաս ու դրամ է, նորա խրատով մէկին տեղ տասն առաւ Հռոմ Եպիսկոպոսէն. տեսնէիր խեղճ մարդը, մինչև մօրուքը քրտնեցաւ։ Տէ՛, օղի՞ն, օղի՞ն, օղին բերել տուր, ըսաւ Կոստանդին, և իւր ափագին հասակով տարածեցաւ գետին։

Ես մեր երեք բարեկամները բոլորեցան սեղանի մը շուրջը, անցեալին՝ ներկային և ապագային վրայ խօսելով՝ մինչև քունը իրենց աչաց վրայ ծանրացաւ։ Բայց երբ Կոստանդին և Հայր սուրբը կը խորտկային բոլոր գիշեր, Բաբկէն՝ որու յանձնուած էր Տարսոնի կառավարութիւնը, երեք չորս պատյտ ըրաւ նոյն միջոցին՝ պահապանաց հսկողութեան ուշ դնելով։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԱՆՏԻՈՔԱՑ ԲԻՒԶԸ

Իսկ Թորոս այս միջոցիս կը սուրար՝ կ՚երթար տասն երկու հեծելօք միայն, ինչպէս իւր սովորութիւնն էր, հասնելու իր բանակին ձախ թեւին՝ որ արդէն մինչև Փայտս տիրած էր, և հասած

ի պուէնս Ասորւոց, և հոն իրեն կ՚սպասէր։ Ոչ թէ ինք անցնելու միաք ունէր այն դրունքը, ոչ, վասն զի միտքը չէր դրած Անտիոքայ սահմանները կոխել՝ այլ միայն այնպէս կարծեցնել տալ Ռընալտայ. վասն զի իւր քաղաքագիտութիւնը շատ հեռի էր այն յանձնառութենէն որ բոլոր դրացիները իրեն դէմ կրնար հանել իւր միայ ցոյց մ՚ընել և մտէն ձանձրանալ էր մարդ մը՝ որու յանդգնութեան և շահասիրութեան համբաւը իրեն ծանօթ էր, և որ յունական կայսրութենէն կ՚ուզէր խոտորցնել։

Դեռ քիչ մը հանգիստ չառած՝ պատգամաւոր ղրկեց այս Անտիոքայ բռնձին, տեսութեան փափաք իրեն յայտնելով, ապահով էր որ յաղթող Իշլանի մը այսպէս առաջարկը սիրով պիտի ընդունէր, ինչպէս եղաւ. երկու օրէն վերջը սուրհանդակը կը դառնար, և երկու Իշլանք ամենայն պզտութեան պայմաններն պատհելով, հարիւրական ձիաւոր ղինուոր հետերնին առած, կիրճերուն վերևը բլուր մը կը հասնէին՝ ուր վրան մը պատրաստուած էր։

Չոն երկուքն ալ ձիերնէն իջան՝ մտան պատրաստեալ վրանը մէյմէկ թարգման առած, թէպէտ երկուքն ալ բաւական յունարէն գիտէին իրարու միաք հասկնալու համար։

Սովորական քանի մը խօսքերէ վերջը, ուր Ռընալտ Թորոսի ընտհատութիւնները կ՚ընէր իր յաղթութենէն վերջ, և թէ ինչպէս ախորժելի էր իրեն նման պզտիկ ունենալ քան պզտնոյ կայսրութիւնը, որուն ոչ միայն մեծութիւնքը այլ խաբեբայ դրութիւնը սկզբունքը նաև բարեկամութեան ապահովութիւն չէին տար. Թորոս կարճ ձոյք խօսքը ըսելով թէ՝ «երկուքս ալ կը տեսնեմ թէ գործի մարդ ենք և մեր նպատակին կը դիմենք, այսինքն մեծնալ և ընդարձակիլ. ուրեմն բարեկամութեան և լաւ դրացնութեան վրայ ձայն չի բարձրացնենք, ոչ ես և ոչ դու այդ տեսակ խօսքերու չենք հատար (և Ռընալտ սկսաւ ծիծաղիլ), ուրեմն մեր օգտին խորհուրդ հարցնենք, նայինք թէ ի՞նչ պէտք է ընել շահաւոր լինելու համար։ Զիրար ջարդելը լինչ. վատակ կայ մեզի, դու թէ որ իմ լեռներս կոխես՝ տասես՝ քանի մը բերդ յափշտակես՝ ի՞նչ գործանալի կարողութիւն պիտի քաշես. ես քու հողերուդ վրայ գամ, թէ որ յաջողիմ, ի՞նչ տաւար կը տանիմ։ Անոր համար փնտռենք տեղ մը ուր քիչ աշխատութեամբ մեծ օգուտ կրնայ քաղուիլ»

Հոս Թորոս դադրեցաւ խօսելէ, և Ռընալտի աչքերը սկսան փայլիլ բոլոր իւր մտերեւաւ շահասիրութենէն գրգռեալ և անհամբեր՝

—Այդ տեղը, այդ տեղը անուանէ, կը գոչեր։

—Այդ տեղը, ըսաւ Թորոս անհոգ ձևով մը, այդ տեղը... դու ամեն միջոց ունիս այդ տեղն երթալու՝ և ես չունիմ... բոլոր օգուտը քեզի պիտի լինի։

—Ընկերաբար ամեն բան կ՚ընենք, կը կարգադրենք։

—Լաւ, թէպէտ այդպէս յանձն առնուս, ահա տեղը, ըսաւ Թորոս մատանիշ ծովուն անհունութիւնն ցուցնելով։

—Որը, ծովուն վրայ, ի՞նչ...։

—Կիպրոս. ահագին՝ հարուստ՝ անպատասպար՝ անդուն կղզի մը, բայց ամենայն յարձակմանց։ Թէ որ ես նաւ ունենայի, ժամանակ ունենայի...

—Ես նաև կը գտնեմ, հոգ մ՚ըներ։

—Ես չատ շատ՝ խումբ մը զօրք նիկոսակիոյ կրնամ տալ քեզ, թէ որ կը հաճիս։

—Ամենայն հաճութեամբ, մանաւանդ որ աւարը գտնողն իրաւունք ունի մատնակցելու։

—Երբ որ պատրաստ լինին նաւերդ՝ իմ գունդս ալ պատրաստ է իր զօրավարին հետ։

Երբ Թորոս տեսաւ իր մարդուն յափշտակութիւնը այս պիսի և հարուստ աւարին վրայ, և իմացաւ թէ հարուածը տեղը գտաւ, վասն զի մարդը չէր կրնար հանդարտ տեղը նստիլ ալ ոտք ելաւ, և պատշաճ հրաժարական ողջոյնն տալու ժամանակ, մէկ կողմն առնելով զինքը.

—Բայց, ըսաւ, պէտք չէ մոռնալ որ զինուորը նաև մանելու ժամանակ նաև պիտի չգիտնայ թէ ուր կ՚երթայ. և դու հիւր մ՚ունիս, թերևս բաբեկամ մը, որ քու տունդ է և ամեն ըրածներդ կրնայ խմանալ. պէտք է արթուն կենաս իրմէ, որովհետև շատ խորամանկ և վտանգաւոր մարդ է։

—Կ՚իմանամ, Անդրոնիկոսի համար կ՚ըսես, թէ որ կ՚ուզես՝ կապած քեզի զրկեմ վաղը, իբր նշան դաշնակցութեան։

—Ոչ, անոր պէտք չունիմ, բաւական է թէ հեռացնես զինքը.

վանգաւոր հիւր մ՛է, ոչ միայն դրացւոց այլ և ասպնջականին համար։

—Հոգ մ՛ըներ, դիւրին գործ մ՛է այդ ինձի համար, ութ օր չ՛եղած իմ նաւերս պատրաստ են արշաւանքի համար։

Եւ ահա մեր իշխանքն բաժանուեցան։ Թորոս կ՛երթար Տարսոն իր երկիրը բարեկարգելու, իսկ Ռընալտ իր զօրքերը պատրաստելու՝ որ շատ դժուարին չ՛էր այնպիսի մարդկանց համար որ ուրիշ զբաղմունք մը չ՛ունէին պատերազմէ զատ. և իրօք այս գործիս մէջ ամենայն ղգուշութեամբ վարուեցաւ և գաղտնապահութեամբ։ Մլեհ իր հազար հոգւոյ գնդովը մնաւ նաւ յԱլէքսանդրիոյ մեր Ս. Մակարի Հայր սուրբին հետ, և հեռացան Փռանգք իրենց նիւակակից խմբովը։

Ի՛նչ որ պատմութիւնը զգուշացած է, աւելորդ է հոս յիշել վասն զի ամեն ազգի հեղինակք, Հռոմք, Փռանգք և Հայք՝ միաբան են պատմելու թէ Կիպրոս ոչ երբէք այնպիսի բարբարոսական հարուած մը ընդունած էր և ոչ իսկ ի Սարակինոսաց։

Այս մելեգին գունդը որ հազիւ թէ տակաւ դիմադրութիւն մը գտաւ խեղճ բնակչաց կողմէ, հուր՝ սուր ի ձեռին կը վազէր կառուցն ամեն կողմը, ոչ տարիք՝ ոչ սեռ՝ ոչ կրօնք՝ ոչ պատիւ չ՛էր խնայեր. ամեն տուն՝ ամեն պալատ՝ ամեն եկեղեցի աւար և կոտորած ընելէն վերջը, մեծ ու պզտի՝ աշխարհական ու եկեղեցական կը համբեր կը դիզէր ծովեզերը, և այն ահագին բազմութիւնն՝ որովհետև կարելի չ՛էր տանիլ մէկտեղ, պատուաւոր եկեղեցականք և իշխանազունք միայն կ՛առնուր կը տաներ յԱնտիոք, որպէս զի ահագին փրկանաց գինը ամրողջ վճարուի։ Հոն Մլեհ լմնցաւ թէ աւազակութեան և անզգամութեան արհեստին մէջ իրմէ յառաջադէմն ալ կար, Ռընալտ Անտիոքացին. հոն տեսաւ թէ այն Փռանգ զօրաց մէջ, եկեղեցական, Տաճկաբական Ասպետք (զորս Փռերք Դամբլուենայ կ՛անուանեն Հայ պատմագիրք) շատ յարմար ընկերք էին իրեն թէ քաջութեան և թէ անզգամութեան մասին. և այն առեն հասկացաւ թէ օր մը անոնց կարգակից պիտի կարենար լինիլ

Ի՛նչ մեծ տարբերութիւն կար Մլեհի և Ռընալտի գործողութեանց և Թորոսի զբաղմանց մէջ այն քանի մը ամիս ժամանակին մէջ։ Թորոս կը նորոգէր, կը շինէր, իր ափրած երկիրներուն մէջ

ամեն ազգի ամեն կարգի անձանց ապահովութիւն կենաց և ստացուածոց կը հայթայթէր, աւարառուն և կաշառակուրծը խստիւ կը պատժէր, կողմնապահներով և բերդերով իր երկիրը կը ջանար ամրացընել ամեն յարձակմանց դէմ։ Մենք զգուշացինք վերը թէ առջի օրէն ի՛նչ փոյթ և ջանք ցուցուց զինուորութեան յառաջդիմութեան համար, և անոր շարունակութիւնն էր՝ որ երբ Ռուբինեանց տէրութիւնը շատ տկարացեր էր նաև, ամեն Հայ՝ զինուոր լինելուն համար դեռ երկրին կենպարանք մը կուտար։ «Հայերն ամենքը զինուոր էին, գրեթէ նոյնչափ վայրենի՝ որչափ իրենց լեռներն, ուր կը բնակէին, կ՛ըսէ պատմիչ մը, և գրեթէ միշտ զէնքը ձեռնուընին, և բոլոր պատմիչք զներնք կը ցուցնեն արագ՝ դաշնակցութիւնք լուծելու ինչպէս կազմելու՝ միշտ իրենց շահուն համար»։ Իսկ ձանապարհորդ մը որ մեր Թորոսի եղբօրորդւոյն ժամանակ Հայոց Թագաւորութեան երկիրներէն կ՛անցնէր, այսպէս կ՛ըսէ Կիլիկիոյ բնակչաց համար. «Երկիրը բնակեալ է ի Փռանգաց, ի Յունաց, յԱսորւոց, ի Թրքաց, ի Հայոց և յայլոց, բայց սակայն Հայերն են որ կը տիրեն։ Այս Հայերը շատ կրօնասէր մարդիկ են և գերագոյն քրիստոնեայք»։

Այս զբաղմունքներուն հետ էր Թորոս. դուլ և դադար չ՛ունէր, երկիրը կը պարտէր անձամբ քննելու ամեն բան։ Այսպէս անգամ մ՛ալ երբ Ռապան կ՛երթար տասն երկու ձիաւորով և ջոկատ մը հետևակօք, աւարառու Թրքաց խումբ մը զինք շրջապատեցին յանկարծ. իսկ նա անվեհեր՝ յաջ ու ձախ կոտորելով երեք հազար հոգի՝ մնացածը կը հալածէր և ի չեք կը դարձնէր։

Իսկ յունական կայսրութիւնը երբ իմացաւ իր զօրավարին խայտառակ պարտութիւնը, և Կիլիկիոյ ամրողջ կորուստը, և Անտիոքայ իշխանին Հայոց մասնակցութեամբ Կիպրոսի չարաչար անցքը, որովհետև Կայսրը զբաղած էր պատերազմի Եւրոպիոյ մասին մէջ՝ զեսպան կ՛ուղարկէր՝ գանձ կը խոստանար Իկոնիոյ Սուլդան Մաղսուտին որ Հայոց վրայ դիմէ և իւր վրէժը առնու։ Մաղսուտ ալ բարեպատեհ առիթ համարելով այս հրաւէրը, մեծ բանակ մը յարձակեցաւ ի Կիլիկիա, կարծէր անպատրաստ գտնել զԹորոս և զարմացաւ երբ քուն կարծած թշնամին դիմաց պատրաստ գտաւ ամուր դիրք մը բռնած և անխոով։

Մեծ բանակի մը առջև պզտիկ բանակ մը զարմացուց Սուլ-
դանը, ուստի դեսպան ղրկեց իմացընելու թէ ինք թշնամութեան
ոգի չ'ունէր ընդդէմ Հայոց իշխանին, այլ կ'ուզէր որ Հայք հնա-
զանդին և ի ցունաց առած քաղաքներին ետ դարձընեն։ Իսկ Թորոս
քաղաքավար և անուշ լեզուաւ շահեց դեսպաններուն սիրտը, տար-
տամ պատասխաններ տուաւ. «Մեծազօր թագաւորաց հնազանդիլ
մեզ նախատինք չ'է, կ'ըսէր, Բայց ցունաց քաղաք դարձնել անհը-
նար է»։ Սուլդանը մեծ օգուտ չի տեսնելով այս պարտականքին, ետ
դարձաւ, Թորոսի աւելի իրաւունք տալով՝ քան Կայսեր։

Բայց տարի մը չ'եղած դարձեալ ցունաց գրգռութեամբ աւելի
մեծ պատրաստութեան ձեռք զարկաւ մտնելու ի Կիլիկիա։ Բայց
ինք բանակը չի շարժած երբ Կիլիկիոյ դռները ձեռք կ'առնէր, Թո-
րոս իր լրտեսներէն լմացած, բոլոր իր բնակիչքը ապահոված, լե-
րանց՝ ամրութեանց՝ բերդերու և բերդաքաղաքներու մէջ, և անոնց
հակողութիւնը Ստեփանէի յանձնած՝ բանակին մէկ մասը անոր հաւ-
տալով, ինքը բանակին մեծ մասամբ իջաւ լերանց դժուար անցքե-
րէն և ափափայներէն, Իկոնիոյ երկիրը սկսաւ աւարել՝ քանդել և
կործանել։ Սուլդանը իւր երկրին պաշտպանութեան դիմեց և Թորոս
իւր աւարաւն ու գերեաւ քաշուեցաւ իւր լեռները։ Մասնաւոր այս
վնասակար պատերազմին վերջ տալ կը մտածէր խաղաղութեամբ՝ երբ
ցունաց Կայսեր դեսպանները հասան յորդորներով և մեծագոյն ընծայիւք. Կայսեր այս վերջին փափաքը անհերքելի էր, ուստի Մալ-
սուտ իր բանակը աւելի ստուարացուցեալ մնաւ ի Կիլիկիա ամե-
նայն զօրութեամբ, բայց պարսպապատ քաղաքներ կը դոներ և աւե-
րակ գիւղերը, դաշտեր ապականեալ էին բոլորովիմբ, ոչ հունձք կար
և ոչ արմտիք, և ոչ իսկ խոտ. ամառուան արևը կը տաղտկեր, մարդ
և կենդանի կաւևորը չ'էին դոներ, ուր ինց աւարն ու կողոպուտ։
Իսկ Իկոնիոյ և Սեբաստիոյ կողմերէն շարունակ սուրհանդակ սուր-
հանդակի վրայ կուգար իմացնելու զնաան ու կոտորածը՝ որ կը
հասցընէր Թորոս իր երկրին. գիւղերը, աւաններ աւերակ կը դառ-
նային, երկիրը զուրկ ի զինուորաց կը հեծէր այս նոր տեսակ պա-
տերազմին առջև։ Իսկ Սուլդանը առանց այս լուրերուն միտ դնելու,
կը յառաջանար աւերակ երկրին մէջ, կը հասներ, կ'ողողէր, կ'անց-
նէր բոլոր դաշտը, կը պաշարէր զՄամեստիա և զԱնարզաբա։

Մամեստիա՝ յանձնած էր Թորոս երիտասարդի մը, որուն ա-
նունը Թոռնիկ էր, և որ լսելով Իշխանին գալուստն ու համբաւը՝
թողած էր իր Սասուն գաւառը, եկեր էր նորա զինուորութեան
մտնելու. Թորոս շուտ մը տեսաւ և ուրիշեց նորա քաջութիւնն ու
սրամտութիւնը, հարցուց ալ լինելը և իմացաւ թէ համբաւաւոր
Սասունցի Թոռնկայ Թոռնիկ էր։ Ուստի այս կարևոր քաղքին պաշ-
պանութիւնը երեալէն առաջ իրեն յանձնեց։ «Նայէ, քաջ տղայ,
ըսաւ, ես ոչ միայն քեզի, այլ նաև պապուդ համբաւոյն կը յանձ-
նեմ այս քաղաքս. բայց քաջ լինիլ բաւական չ'է, քաջութեան հետ
խոհեմութիւն ալ ունենալու է. մեռնիլ յիմարաբար անօգուտ տեղ
քաջութիւն չ'է. ես քեզի քաղաք մը կը յանձնեմ, լաւ միտք դիր
թէ քու դիակդ չ'է որ կը փափաքիմ տեսնել այլ իմ քաղաքս ողջ
առողջ ինձի յանձնելդ կուզեմ։ Թոռնիկ որ քիչ կը խօսէր, «Ա-
ռաւօտով, Իշխան, քաղաքդ քեզ կը դարձնեմ,» պատասխանեց։

Թորոս Անարզաբան կնկան մը յանձնեց, և կինը կը ճանչենք.
Մալգրիտ սարդ, խոհեմ և միշտ գեղեցիկ, երբ իմացաւ թէ Թորոս
կուգայ, իջաւ միջնաբերդէն ի քաղաք զինքը դիմաւորելու, իսկ
Թորոս որ քիչ ժամանակ ունէր, ոտքի վրայ հարսին հարցմունք-
ներ կ'ընէր. թէ բաւական բերդապահ ունէր, թէ բաւական երկար
ժամանակի պաշար ունէր, և թէ քաղաքացւոց վրայ վստահ էր։
երբ ամենու համար ճիշդ ու գոհացուցիչ պատասխան առաւ, երբ
իմացաւ ինչպէս կ'երևակայեր թէ պղտ իմաստուն կինը կարծածէն
ալ աւելի պատրաստ էր և մանաւանդ թէ թիւը մտած կը տանէր
կը ցուցնէր ցորենի չուվալաններուը, զէնքերու մթերանոցները,
զինուորներու և քաղաքացւոց խումբերը իրեն ակնարկութեան միայն
կ'սպասէին։ Թորոս հրաժարական համբոյրը տալով իրեն, «Գիտես,
Իշխանուհի, ըսաւ, որ Ստեփանէ ի՞նչպէս զքաղաճ է, բոլոր Սև
լերան բնակիչք ու ամրութիւնք իրեն յանձնեալ են, գիտես դար-
ձեալ որ ես բանակին հետ կ'երթամ, բայց թշնամին կուգայ, և
պէտք է գայ վասն զի իւր ճանբաները ազատ ձգուած են, դու՝
պէտք որ լինի՝ տարի մը պիտի պաշտպանես քաղաքդ, ես քու
վրադ ապահով եմ, Աստուած հետդ լինի, նա քեզի օգնէ»։—«Ա-
ռաւօտ որ գքեզ կը պահէ, զմեզ ալ քեզի կը պահէ» եղաւ Մալ-
գրիտի պատասխանը։

Այս երկու քաղաքներն միանգամայն պաշարեց Սուլթանն, ոչ իւր բաբաններն՝ ոչ սանդուխներն և ոչ նետաձգութիւնները չ՚ազդեցին այս քաղաքաց վրայ։ Երբ իրեն իմացուցին թէ Անարզաբայ բերդակալը կիւն մ՚էր, «Թէ որ ասոնց կանայք, կ՚ըսէր, այսպէս կը պատերազմին, չ՚ըսէք որ մարդիկն՝ որ մեր երկիրը արշաւած են՝ ոչ աւերակ այլ անապատ ուրեմն գալճուցին»։ Եւ կը ցաւէր մարդը որ Ցունաց Կայսեր թելադրութեամբ այս անխոհեմ պատերազմին ձեռք զարկեր էր, բայց ի՞նչ ընէր, գոնէ պատուով պէտք էր երթար այդ բաւղին մէջէն։ Արդէն ձիերու հիւանդութիւն ինկած էր բանակին մէջ, որոնք շաբունակ կը սատկէին, զինուորը՝ որ բաւական պաշար չ՚ունէր չ՚էր կրնար բանակին մարմինէն զատուիլ և հեռանալ վասն զի աներևոյթ թշնամիներ ամեն ժայռի՝ ամեն ծառի ետևէն զինք կը վիրաւորէին ու կ՚սպաննէին։ Ուստի Մաղսուտ յուսահատած այս երկու քաղաքները առնելէն, գնաց պաշարեց զԹիլն Համտնոյ, որ աւելի անառիկ էր քան զնախայիշեալքն, և իր մէկ փեսային՝ Եաղուպ Մելիք անուանեալ՝ երիք հազար զինուորաց գունդով մը ղրկեց Անտիոքայ սահմանները արշաւել և աւերել. այս ժանտ մարդը յանդգնութեամբ երբ Անարզաբային անդին լերանց մէջ մեհեցաւ անկասկած՝ յանկարծ զինքը շրջապատեալ գտաւ Սոեփանէի և Տաճկաստանի Ասպետաց խումբերէն. ինք և բոլոր իր գունդը ի ծուղակի բռնուած՝ մինչև վերջինը չարդուեցան, հազիւ թէ մէկ քանի գուժարեր ազատեցան։ Նոյն միջոցին անսովոր փոթորիկներ՝ փայլակներ՝ կայծակ՝ կարկուտ և անձրևի հեղեղներ օրեր-ով բանակը կը նեղէին Թիլն Համտնոյ առջև. և երբ այս կոտորածին լուրն ալ եկաւ, ալ սոսկումը պատեց բանակը, զինուորին գանգատը ապստամբութիւն կ՚սպառնար. Սուլթանը թողուց գնաց, և այն մեծ բանակը ոչ թէ կանոնաւոր՝ այլ խառնաշփոթ փախըստեամբ ցան ու ցիր եղաւ, թողլով իր կահն ու կարասին և բոլոր իր ունեցածը։

Իսկ Թորոս՝ որ մինչև Սեբաստիոյ մօտերը քշած էր իր բանակը, դիմադիր մէկը չի գտնալով համարձակ ոտնակոխ ըրած էր բոլոր երկիրը, կը շառնար մեծ աւարաւ և կը սկսնէր թէ իր բոլոր պատրաստած յաւակագիծը լմովին և իր կարծածէն աւելի ի գլուխ եկաւ. փառք կուտար Աստուծոյ վասն զի Թշնամուն

աւարը ոչ միայն բանական եղաւ իւր ժողովրդեան ձեռքը հանելու, այլ նաև առատապէս վարձատրելու համար իր զինուորը։ Իսկ որ պիտելու արժանի է պատմութեան մէջ, այն է թէ իրարու վրայ երկու մեծ թշնամեաց բանակներ կը հալէին՝ կ՚անհետանային առանց ձեռ զէնէն, առանց մեծ արիւնհեղութեան իր զօրաց և առանց անդամահանելի կորստեան ժողովրդոց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՄԱՀ ՆԻ ՍՈՒԳ

Ինչպէս տեսանք, բոլոր այս պատերազմներուն միջոցին Մլեհ համար խօսք չի կար, մարդ մը որ պատերազմ կը փնտռէր, կռիւ կ՚ելլագէր, ի՞նչ էր եղեր։ Թէպէտ եղբօրմէն հրաւէր գնացեր էր իրեն ամրացնել Կոռիկոս. և բանական բերդապահ թողլով ինացած զօրք գալ մեծ բանակը. բայց նա յայտնի քէն ըրած կամ վատ քաղաքականութեան մը հետևելով տեղէն շարժած չ՚ուներ։

Մլեհ Կիպրոսի արշաւանքէն դառնալէն վերջը Լաւոնաց հետ զարմանալի բարեկամութեամբ մը կապուեցաւ. բայց որ Թորոսի ծանր էր լսել՝ այդ անգութ աշխատանաց գովութիւնն էր զոր պանծանօք կը յիշէր Մլեհ, և ոյու համաք խստիւ պատուիրեցաւ յանդիմանել զնա Թորոս, իմանալով թէ Թէպէտ ինք Թերևս առաջինը եղած էր այդ ալշաւանքը երկնելու ի վրէժ Ցունաց, բայց շատ գէշ յայտնի էր եղածնելը լսելով և տեսնելով թէ երբէք չ՚էր կրցեր երևակայել թէ երկու քրիստոնեայ իշխանք այդ աստիճանի անգթութիւն գործէին խաբեալ, անօգուտ ոճիրներով իրենց և Ռուբինեան անունը աղտեղելով։

Այս յանդիմական խօսակցութիւնէն վերջը Մլեհ դարձեցաւ եղբօրը հետ տեսնութիւնը, և առջինէն աւելի սիրաւ գանգատներ և սպառնալիք, և երբ գինին կը զեղանէր և գլուխը կ՚ելնէր, այն ատեն հանդիսակ կը զգուշէր թէ «Հայրենի իշխանութիւնը պէտք էր երկքի բաժնել և թէ Լեւոն երկու զօկները չ՚էին

սահմանած դերի լինելու համար մեծին, և թէ հին և պատամեալ աշխարհի սովորութիւնքը ներկայ ժառանգին օրէնք չէին կրնար լինիլ՝ որ մեծը բռնաբար իրեւ հետին սորուկ յանդիմանէր իր եղբարքը՝ որ ամենևին իրմէ պակաս չէին ի քաջութենէ։ Ա.յս կերպ դուրս տալէն վերջ, ալ կ՚սկսէր Կիպրոսի արշաւանաց անդրմուխեանց վրայ խօսիլ «թէ Յոյնք արժանի էին ամեն պատուհասի՝ որովք պատժուեցան ի Փռանգաց և ի Հայոց, և թէ նոքա որ խաղաղութեան առեն Հայու վանք մը մտեր ամեն չարագործութիւն և մինչև սպանութիւն ըրեր էին խեղճ միանձանց վրայ, արժանի էր որ իրենց եկեղեցականք ալ ականջք և քիթք տուժէին փոխարէն։

Ա.յս յորդաբանութիւնք թէպէտ Թորոսի ականջը կը հասնէին, ինք բաւական կը համարէր արթուն միշտ հսկել և խօսքերու համար միշտ սուտ խուլ կը լինէր, վասն զի գիտէր զանազանել ճոռոմաբանութիւնն ի գործադրութենէ։ Ա.յս վիճակին մէջ էին երկուց եղբարց յարաբերութիւնքը՝ երբ յունական դրդռութեամբ և ոսկւով Մաղսուտ Սուլդանի հետ պատերազմը տեղի ունեցաւ և երկու տարի ամբողջ մնատանջեց ու զբաղեցուց զԹորոս։ Բայց այս պատերազմին յաջող ելքը և Թորոսի փառքը՝ որ Հայն ու օտարը զարմացուցին՝ Մլէհի մեծ յուսահատութիւն պատճառեց և ամենքը զարմանքով տեսան որ օրին մէկը յանկարծ ամեն բան թողլով իշխանութիւն՝ կին և երկիր ձգեց ելաւ գնաց Տաճարական կրօնաւոր ասպետ եղաւ։

Բայց Թորոսի պատերազմներէ հանգիստ չի կար, պէտք եղաւ Հալապու Նուրէտտին Սուլդանին դէմ յարձակիլ երբ իմացաւ թէ նա իրեն դէմ կը պատրաստուի, ուստի փութաց անոր դէմ յարձակելու վասն զի իմացեր էր թէ Յոյնք ալ իրեն դէմ կը պատրաստուէին։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու մնաւ բոցի պէս Հալապու սահմանները, քանդեց՝ կործանեց ամրութիւններ, և մեծ յաղթութեամբ դարձաւ իր երկիրը, և իմանալով թէ Յունաց նաւատորմը բանակ կը բերէր իրեն դէմ ի Կիպրոսէ, իջաւ Ծովեզրը իր յաղթական զօրօք, հոն Միքայէլ Պրանաս Յունաց զօրավարին հետ պատնուեցաւ, խորտակեց նորա բանակը, և հազիւ նա Մեացորդովը մնաւ նաւերը և փախաւ։

Յոյնք հանդարտ չի կեցան։ Նոր բանակաւ մը նոր զօրավար մը՝ Անդրոնիկոս Եւփորպէն՝ Թորոսի վրայ հասաւ, և Տարսոնի մօտ հայոց զօրաց հետ զարնուեցաւ. Թորոսի նիզակակից էին այս պատերազմին մէջ Փռանգաց դուքդ մ՚ալ, երեք հազար յունականք պատերազմի դաշտը ծածկեցին մեռելներով և իրենց զօրավարն չի կրնալով հաստիլ իր զօրայ հետ նաւերով փախչելու՝ բռնուեցաւ Թորոսէ և Երուսաղէմի Լատին թագաւորին միջնորդութեամբ ազատեցաւ և գնաց Կոստանդնուպոլիս իր պարտութեան լուրերն անձամբ տանելու։

Իսկ Ստեփանէ այն միջոցին իր գովելի վարմունքին համար ի մեծ պատուոյ էր եղբօրը աչքին, և Մարգրիտի առնացի պաշտպանութիւնը՝ Անարղաբայ պաշարման ժամանակ իր անունը փառաւոր ըրեր էր նաև յաչս այլազգաց։ Վերագոյն տարիներ էին անոնք, որ Եւփիմէ և Մարգրիտ իրեւ քոյր սիրալիր այցելութիւններ կուտային իրարու, միշտ միաբան խնամելով թշուառութիւնը իւր ամեն տեսակին մէջ։ Ո՞վ որ իրենց դիմէր ապահով էր պաշտպանութիւն գտնելու և այս երկու Տիկնայք իրենց դիմած ձեռքով շատ ցաւեր սփոփեցին, շատ խաղութիւններ մեղմացուցին։ Իրենց տուներն չէն էին յաջողութեանց պայծառ շուքին տակ. Եւփիմէ իր գեղեցիկ Գոհարն ունէր, զարմանալի պատուաստ փափկութեան և արիութեան։ Մարգրիտ երկու կորիւններ ունէր Ռուբէն և Լևոն՝ և պատերազմաց որոտմունքներու և պինդ շահիւններու մէջ ծնած՝ անոնց մէջ պիտի մեծնային Ռուբինեանց ախոռը նսեմելու համար. վերջինը մանաւանդ՝ առիւծ բարձրացնելու համար զայն։ Ի՜նչպիսի խնամքներով այդ իմաստուն մայրը մեծցուց այդ երկու տղաքը. այդ հրաշունչ բնաւորութիւնքը չափաւորելու համար՝ անոնց աչքը խոյժը սանձահարելու համար՝ ի՜նչչափ իր մայրենի սիրտը խըթատցաւ, նա՝ որ վերջը ապագային մէջ Ռուբէնի իրեւ փրկանք իր անձը կուտար և պատանդ երթալ յանձն կ՚առնուր օտար իշխանաց արքունիքը։

Եւփիմէի Գոհարին քով ուրիշ տղայ մը կար Հեթում անուն, ինչպէս գիտենք պատանդ Թորոսի արքունեաց մէջ՝ որ Լամբրոնի իշխանին. իրեւ տան պատակ, հոն մեծցաւ, հոն սնաւ, հոն դաստիարակեցաւ, և քանի որ Եւփիմէի մայրենի ձեռքը զինքը խնա-

մեց, ազան որբութիւն չ'լմացաւ, վասն զի այս կնկան բնաւորութեան մէջ կար զրաւել յինքն մեծի և պզտիկի սիրտ, իր յանդիմանութիւնն նաև իր խաստութեան մէջ այնպիսի քաղցրութեան երակ մ'ունէր, որ զիմացինին սիրտը կը շարժէր և ոչ երբէք կը վերաւորէր: Զարմանալի բնութիւն մ'էր, փառք՝ մեծութիւն՝ զարդարանք՝ ուրախութիւն կը սիրէր Եւփիմ, բայց ասոնք ամենքը միայն իր անձին համար չ'էր սիրեր, այլ ուրիշներուն հաղորդելու համար այնչափ գոհութիւն կ'զգար որ եսութիւնը իրեն համար չ'էր: Երբ Թորոս իր իշխանութիւնը մէկ կողմէն մինչև Խաւրէա և Փռիւգիա և միւսէն մինչև Եփրատ գրեթէ կը տարածէր, և ամեն տեղ իբրև հսկող վերատեսուչ քան թէ իշխան կ'արշաւէր արագ և սրընթաց՝ շատ պարզ էր վարմունքը. ընդհակառակն Եւփիմ երբ Վահկայ բերդէն Տարսոն կ'իջնէր, կամ Յանարզաբա այցելութեան կ'երթար, կը սիրէր դեղեցկութիւնն զարդարել՝ ականակուռ և մարգարտայեռ իշխանական պսակն ի գլուխ ոսկեթել բհեզներու և ծիրանիներու պերճանօք փայլել և նոյնպես զարգարուն տիկնանց և արծաթաղէն զօրաց խումբերէ շրջապատեալ իր ուղեգնացութիւնքն ընել և որ քաղաք որ իջնէր ժողովուրդք կը խռնէին տեսնելու և ողջունելու իր գեղեցիկ կերպարանքը ուր զուարթութիւն կը փայլէր, և ուրախ կը լինէին վասն զի իրենց ալ զուարթութիւն և հանդիսաներ կը բերէր:

Ինը տարին կատարուեցաւ, բաղդը ամեն կողմէ Թորոսի կը խնդար, ամեն բան յաջող եղեր էր իրեն. շրջակայ իշխանք մեծ և փոքր կը յարգէին և կ'ակնածէին այս իշխանութենէն որ հաղիւ թէ ձանչցուած՝ միշտ յաղթող և երջանիկ կ'երևեր ամեն վտանգէ: Երջանկութիւնը իր տան մէջ գրած էր իր բոյնը. ով որ իր ծանր զբաղմանց վերջը տեսներ զինքը հոն իր կնոջ՝ իր զաւկին՝ իր բարեկամաց և ի պարագային շրջապատեալ այդ լուրջ և առիւծասիրտ մարդը քաղցր և հանդարտ խօսելով և կատակելով, չափաւոր միշտ իր բաղձից կբքերուն մէջ, երանի կուտար իրեն:

Բայց ամենքը գիտեն, և հին առակ է թէ բաղդը յոդոզդ է, թէ երջանկութիւնը անցաւոր է. այս օրուան ծիծաղին վազը արցունք կը յաջորդէ, այս օրուան ուրախութեան վազը տխրութիւն, այս օրուան փայլուն պերճանաց վազը սև սուգ:

Գարունն հասեր էր, բնութիւնը կը ծիծաղէր, ծաղկները կը բանային, թռչունները կ'աւետէին, Եւփիմ որ Տորոսի լեռները կը սիրէր, ջուրերուն ժայռերն ի վար կարկաչը և ձերմակ ղօզ փրփուրը կ'ախորժէր, Վահկա երթալու միտք կը ցուցներ և պատրաստութիւն կը տեսնէր: Ուղևորութեան նախընթաց գիշերն էր՝ երբ քիչ մը տակաւ լինելն յայտնեց և իր սենեակները քաշուեցաւ: Հաղիւ թէ քիչ մը ժամանակ անցաւ, և երբ Թորոս քովը գնաց ձայնը և երեսին գոյնը այնչափ փոխուած գտաւ որ սաստիկ այլայլեցաւ և Դիոնիսին իսկոյն տաղ հրամայեց: Իսկ ծեր բժիշկը երբ եկաւ և հիւանդը տեսաւ պաղեցաւ՝ արձան կարեցաւ: Այս տեսարանը աւելի շփոթեց զԹորոս, մէկ կողմը առաւ քաշեց քովը սենեակը,

—Դիոնիս, ըսաւ, ինչո՞ւ շփոթեցար, մե՞ծ է վտանգը:

—Վա՜տ նե, պատասխանեց ծերը դառնութեամբ ձեռքերը երկինք տարածելով, երանի՜ թէ վտանգ լինէր... մա՜հ... ծնկոյրները ձգեցան, և հաղիւ թէ ժամանակ ունեցաւ Թորոս զինքը բռնելու և նստեցնելու, քանի մը շունչ առաւ, մեծ հառաչանք մը հանեց և ոգին էր որ տուաւ:

Այս տեսարանէն ահաբեկ, ներս վազեց Թորոս, Եւփիմի ձեռքը բռնեց, պաղ էր սառի պէս:

—Շատ հիւանդ եմ, սիրելի Իշխանս, վախնամ այս հիւանդութիւնը զիս պիտի սպաննէ, ըսաւ խեղճ կինը. ո՞ւր է Դոհարս... ես ձեռաքս կ'ուզեի Հեթումին հետ տեսնուիլ...

—Հիմա կուգայ, կ'ըսէր Թորոս և կը ջանար զինք քաջալերել. բայց նա հաղիւ թէ մէկ երկու խօսք կրցաւ զրուցել և թմրութեան մը մէջ ինկաւ որուն սոսկալի քրտինք մը յաջորդեց. հրաման ըրաւ Իշխանը, որ բժիշկ մը գտնեն, բայց երբ եկաւ բժիշկը, դուրսը ծերու մը դիակ գտաւ և ներսը երիտասարդ կին մը որ վերջի շունչը կուտար:

Մենք չենք կրնար նկարագրել այդ մարդուն ցաւը, որուն երեսը դրսուանց տխրութիւն մը միայն կար, միայն թէ այդ տխրութիւնը մինչև վերջին օրը նոյն կնիքն անխախտ պահեց նոյն չափով: Արևը միշտ արև էր, բայց շամանդալի թեթև քող մը պատած էր նորա երկինքը, չ'ունէր պայծառութիւնը որ ամենուն

կը ծիծաղէ։ Մխիթարութիւն մը կար ապգին բաղդին հետ իրեն համար, տղայ մը՝ Դոհար մը որ շատ անգամ երբ հայրը տաժանելի ընթացքը կատարած իւր վահկայ պառաւամը կոլովի մարմնին եւ բազմաշխատ գլխուն հանգիստ կուտար, այն տաճն կուգար ցակաւելով ծնկոսքներուն վրայ կը նստէր, իր գանգրահեր գլուխը կը դնէր կուրծքին, իր փափուկ ձեռքերով նորա մօրուքը կը փայփայէր, լուսալեր քաղցր աչքերը նորա խորունկ աչքերուն կը յառնէր, իր դողդրիկ ձայնը՝ սրտին եւ տարիքին պարզութենէն բխած անոր ականջին անուշ խօսքեր կը մրմնջէր, ահա այն տաճն վայրկեան մը՝ վայրկեան մը զուարթութեան պայծառութիւնը կուգար, բայց տակը հոն էր։ Մտածութիւնը միայն՝ թէ ուրիշ սիրելի անձ մը հետ երբեմն կը բաժնէր այդ երջանկութիւնը՝ ուրիշ մը որ չի կար՝ ուրիշ մը որ իր սրտին կէսն էր՝ ուրիշ մը որու ոչ միայն զինքն եւ իր յաջողութիւնը այլ նաեւ իր ապգը մասամբ պարտաւոր էր, տխուր տակը այն զուարթութիւնը կը հալածէր, աչքերը ակամայ կը դառնային դէպ ի Վրաստան ուր Եւփիմի իր եղբօրը քով կը ննջէր, եւ այն լայն կուրծքէն մեծ շունչեր կ՚ելնէին փոխանակ հառաչանաց, եւ Դոհար այն ալ կ՚ծրուշէր եւ կը հարցնէր։

—Ինչո՞ւ, հայրիկ, այսպէս մեծ շունչեր կ՚առնես։

Դժուար էր այդ հարցմունքին պատասխանել այլ պէտք էր խոյս տալ բայց ճե՛ր. ամեն օր՝ ամեն վայրկեան երբ զբաղմունք զինք կը թողուին, այսպիսի տեսարաններ կը նորոգուէին, մինչեւ որ ժամանակը՝ որ յիշատակ չի մոռցներ այն մտքերուն՝ որ յիշողութիւն ունին, այլ կը տկարացնէ, բթացուց այդ ցաւերը, մանաւանդ որ Եւփիմայ մահը ուրիշ դժբաղդութեանց նախաշաւիղն էր, ինչպէս պիտի տեսնենք։

ԳԼՈՒԽ ԻԴ։

ԿԻՈՒ ՄԱՆՈՒԻԷԼ, ԿԱՑՍՐԸ

Թորոս լաւ խելամուտ էր թէ խաղաղութիւն միայն եւ նկատեւ խաղաղութիւն մը կրնար Ռուբինեանց տիրոջը ամրացնել եւ

Կիլիկիա ապաստանարան ընել Հայ ազգութեան. ուստի երբ ամեն բան կարգադրեց, ջանաց նաեւ ուսմունքը տարածել իր երկրին մէջ. ուստի վանքերը շատցուց, վասն զի նոքա միայն էին այն ժամանակը՝ միջոց գիտութեանց ծաւալման. ով կ՚ուզէր ուսանիլ վանք մը կը դիմէր, վասն զի ուսուցիչներն եւ վանք այն առեն մի եւ նոյն նշանակութիւնն ունէին, ոչ միայն յարեւելս այլ եւ յարեւմուտս։

Թէպէտ սիրտը դառնութեամբ լեցուն կնոջը մահուան՝ Մլեհ եղբօրը յիմար ձեռնարկութեանց համար, բայց դարձեալ Թորոս անյողդողդ բնաւորութեան տէր՝ բարեկարգութեանց կ՚աշխատէր, ամեն իր այցելութիւնը կ՚ընէր երկիրը բարւոք վիճակի մէջ պահելու համար։ Եւ երբ յոգնած՝ փախստեան տեղ մը փնտռէր կ՚երթար կը քաշուէր Տարսոն, իր սեւ մաղձին քաղաքը, այն սենեկին մէջ՝ այն անկողնին քով ժամեր օրեր կ՚անցնէր, անցեալին վրայ տխուր խորհրդածելով։ Ահա ճիշտ նոյն օրերուն մէկն էր, երբ յանկարծ լսուին ուխտաւոր մը իրեն ներկայացաւ գոյժ տալով թէ Մանուէլ կայսրը ընտիր զօրաց խմբով մը իր վրայ կուգար։

Թորոս՝ թէպէտ անվեհեր քաջ մարդ էր եւ բոլոր իր պատմութիւնն ալ կը վկայէ, բայց անխախտ սկզբունքներ ալ ունէր. պատերազմի բաղդը վատնգի չէ դնել՝ երբ կարելի էր առանց իր զօրաց կորուստին թշնամին վտանգել՝ մաշել՝ տկարացընել եւ սովամահ ընել կրնար նախապատրաստէր, եւ ասոր համար ալ տաք գլուխ երիտասարդ զօրավարներ՝ որոնց առաջինն էին Մլեհ եւ Սեւբիանէ՝ զինքը կը բանաբանէին. դարձեալ երբ կարելի էր բանագնացութեամբ եւ քիչ շնաորհով եւ ի հարկին խոնարհական ցոյցերով խաղաղութիւնը ծախու առնուլ եւ վտանգը հեռացնել աւելի կ՚ընտրէր, քան թէ իր ազգին եւ իր անձին բաղդը կորստեան վիհը դահավիժելու վիճակի մէջ ձգել։

Իսկ այս անգամ առանց շփոթելու՝ այլայլեցաւ, նախ՝ ինք որ միշտ իր թշնամեաց ամեն շարժմունքը կ՚իմանար, այս անգամ թշնամոյն ձեռք իմնալու վտանգին մէջ էր, պատճառը չէր կրնար մեկնել, վասն զի իր Կոստանդնուպօլսոյ լրտեսը՝ որ Կայսեր լուրը իրեն կը հասցնէր՝ դիպուածով մը ալգիլուած էր իմացնելէն։ Երկրորդ՝ Կայսրը շատ ղգուշութեամբ վարուեցաւ իր արշաւանաց մէջ եւ փոքր գնդով մը իր վրայ կուգար, եւ Թորոս այն չէր կրնար երեւակայել Ուստի այն դրութիւնը գործածել մտածեց որ Մաղսուտ Սուլթանին

դէմ ալ գործածելը էր քանի մը տարի առաջ յաջողութեամբ։

Բայց դժբաղդաբար չ'էր պատրաստեր ժողովուրդը, ժամանակ չի կար ամէն բան աւրշաելու և լեռները քաշուելու. բայց պէտք էր շարժիլ ուստի Թոզուց Տարսոն և ամէն տեղ հրամանները ղրկեց որ լեռները ամրանան. Մարգրիտ իր զաւկներով հրաման ընդունեց քաշուիլ լերանց ամրութիւնքը. Թոռնիկ միայն խնդրեց Թորոսէն ձնալ և պաշտպանել զՄամեստիա։ Իսկ ինք զօրօք կը հասնէր՝ կը քաջալերէր ժողովուրդը՝ կը հասկցնէր թէ փոթորիկը կ'անցնի և երկար չի կրնար տեւել։ Ամուսան մը ժամանակի մէջ մարդ և կենդանի Տորոսի լեռները կը ծածկէին՝ երբ Յունաց բանակն ալ դաշտավայրը կը ծածկէր։ Տարսոն՝ Ադանա՝ Անարզաբա՝ քիչ ժամանակի մէջ թշնամւոյն ձեռք անցան. իսկ Մամեստիա Կայսրն ինք անձամբ պաշարեց, ձմեռ մը ու ամառ մը աշխատեցաւ մինչև կրցաւ առնել Թոռնկայ ձեռքէն, որ գիմադրութիւնն երբ անկարելի գտաւ, չուաւնով պարխաններէն իջաւ գիշերանց և գետին մէջէն երկար տեղ լողալով ապատեցաւ թշնամւոյ ձեռքէն և հասաւ գաւառ Թորոսի խումբերը Սև լեռներուն մէջ։ Երբ զԹոռնիկ տեսաւ Իշխանը, «Հա՛հ, ըսաւ, իրենց վերջն ընելէն ալ ըրին Յոյնք և իրենց դաշնակիցքը. ա՛լ թէ որ կ'ուզեն Թոզ գան զմեզ հոս դտնելու»։ Եւ իրօք Կայսեր դաշնակիցքը կը շատնային. Լատինք՝ Երուսաղէմի Թագաւորէն սկսեալ, որ նոր փեսայ ալ եղած էր Կայսեր, Տաճարականաց մեծաւորէն սկսեալ իրենց բոլոր պարծանքներով, բրնձներով և կոմսերով կը լսուէին՝ կը խռնէին Յունաց կայսեր բանակը որ Մամեստիա արքունիք ըրած էր իրեն. հոն ահա նոր տեսարան մը վատութեան՝ սիրտ ունեցող ամէն մարդ քաամենեցուց. վասն զի ի տես ամենեցուն «Ներկայացաւ Անարզաբայ իշխանն Ռբնալը վասն և խըղճալի կերպարանօք. վասն զի ոչ միայն Յունաց առջև յանգատը էր, այլ և իր քաղաքացւոց և անոնց պատրիարքին զոր անարգանօք չարչարեր էր, եկեղեցւոյ սպասները կողոպտելու համար, ուստի հիմա անձամբ և անոյշ ձգնաւորի դգեստ հագած, գլխիբաց և բոպիկ, վիզը չուան ձգած, ինքզինք մահապարտ վճռած բոլոր Մամեստիոյ մէջ պարտէզէն եաև, եկաւ ընկաւ Կայսեր ոտքը՝ մերկ սուր մը մատուցանելով անոր, իբր թէ թոյլ կուտար որ ըստ արժանւոյն գլուխը կտրուի. գունդ մը կրնաւորաց ալ նոյնպէս գլխիբաց և

բոպիկ ի ծունկ ընկած Կայսեր գթութեան կ'ապաւինէին։ Բաւական սեպեց նա այսքան խայտառակութիւնը, և թողութիւն տուաւ, պահանջելով որ Անտիոքայիք ընդունին յոյն պատրիարք մ'ալ և երբ Կայսրն ուզէ՝ խաչերն գունդ մը օգնական զօրաց»։

Իսկ Կայսրը ժողով կ'ընէր զօրականաց և իշխանաց որ զԹորոս նուաճեն և շուտով՝ վասն զի բանակն արդէն նեղն էր ի կերակրոյ, կենդանիք ի սովոյ և ի հիւանդութեանց կը հատնէին, ուստի ժամ մը առաջ պէտք էր այս աներևոյթ ապստամբը նուաճել։ Հոն՝ որոնք որ փորձը առած էին Տորոսի և անոր բնակչաց դժուարութեանց հասկցուցին Կայսեր թէ շատ դժուար և վտանգաւոր էր այդ լեռներուն մէջ պատերազմիլ. արքունի թշնամւոյ մը հետ՝ որ իրենց կ'ապաստէր, և թէ ընդհակառակն շատ դիւրին էր ի հնազանդութիւն բերել զԹորոս, երբ բանաւոր և պատուաւոր դաշինքներ իրեն առաջարկէին, և Երուսաղէմի Թագաւորն (Պալտուին Գ.) յանձնառու եղաւ բանագնացութեան մտնել Հայոց իշխանին հետ։

Ուստի Թագաւորն ինք անձամբ ի խնդիր եղաւ Թորոսի, և Կայսեր պայմանները կ'առաջարկէր, որոնց ամենէն ծանրը անձամբ ներկայանալն էր ի Մամեստիա ի հնազանդութիւն Կայսեր, և անոր փոխարէն Կայսրը զինք կ'ընդունէր իբրև Իշխան կուսակալ Կիլիկիոյ, միմիայն Անարզաբա պահելով իրեն։ Յանձն առաւ Թորոս և եկաւ Մամեստիա իշխանաբար՝ ոչ իբրև Ռբնալ, և այնպէս ներկայացաւ Կայսեր որ ցուրտ ընդունելութիւն մ'ըրաւ իրեն, անշուշտ յիշելով Կոստանդնուպոլսոյ կալանաւորը։ Բայց կէս ձմեռան միացող մարդ չ'էր Թորոս, յանկարծ իմացան օր մը բանակը թէ Հայը Թոզիր գնացեր է, և երբ այս գործողութիւնը ոմանք չարաչուշակ կը մեկնէին՝ տեսան թէ Հայը ցօրեւնօք արջառօք և ոչխարօք լեցուց բանակը, և զրաստի ու ձիան նուազութեան առաստութիւն յաջորդեց։ Արդէն Կայսրը իր իմաստուն և կորովի կերպին հաւնած էր, իսկ այս վերջին գործողութեամբ բոլորովին իրեն յաղեցաւ և անուանեց զնա Պանհեփաստոս և ոսկեկնիք հրովարտակաւ իշխանութեան մէջ հաստատեց։

Անկից վերջը Մանուէլ կայսրը եղաւ բանակաւը ի Կիլիկիա և մտաւ յԱնտիոք և անկից Հալէպու վրայ արշաւելու եղաւ ընդդէմ Նուրէտտինի, բոլոր այն կողմի Քրիստոնէից յոյս տալով զերենք

աղաւեալ ի Մահմետականաց։ Բայց գանդաղութիւնք՝ գեղերմունք՝ բանաձնայութիւնք՝ թոյլ պատերազմունք յայտնի կ՚ընէին թէ Բիւզանդական կայսրութիւնը ուրիշ դիտաւորութիւն չ՚ունէր այլ եթէ «Բաժանել զամենքը տիրելու համար»։ Երբ բանակը Հալէպու մօտեցաւ, սուրհանդակ մը հասաւ Կայսեր ի Կոստանդնուպօլսոյ՝ որ զինք արտօրնօք յետս կը կոչէր, ուստի առանց միտ դնելու Նրուսաղէմի Թագաւորին և քրիստոնեայ իշխանաց աղաչանաց՝ որ երեք օր գոնէ ուշացնել կը խնդրէին յետադարձը՝ խաղաղութեան գաշինք կնքեց Սուլտանին հետ և ետ դառնալու հրաման տուաւ բանակին։ Ամենքը մեծ ախրութեամբ պաշարուեցան, բայց անոնք միայն որ Բիւզանդական կայսրութեան քաղաքագիտութեան տեղեակ չէին համ անոր դաւաճանութիւնը յիշելու չափ խելք չ՚ունէին։ Ուստի երբ Կայսեր բանակը Կիլիկիա հասաւ և Անարզաբայ մօտեցաւ, Թորոս որ յիշողութիւն ունէր և գիտէր թէ մինչև ուր կրնայ հասնիլ յունական հաւատարմութիւնը, յանկարծ իր զօրքերը առաւ և Վահկայ քաշուեցաւ, Կայսրն ալ իր ճամբան շարունակեց և գնաց, զօրաց մէկ մասը ճամբաները ցանելով։

Ինչպէս գլուցեր էր Թորոս իր ժողովրդեան և իր զօրաց, փոթորիկն անցաւ անհետացաւ Կայսեր հետ, Թէպէտ երկու տարուց ժամանակ ծանրացաւ Կիլիկիոյ վրայ. խաղաղութիւն եկաւ ժողովրդեան և դաշտավայրն բոլոր ծածկեցաւ հասկերօք, որոնց ծանրացաւ ողկուզք, ուրախութեան ձայներ սկսան գարձեալ լսուիլ և Հայոց իշխանը որ խաղաղութիւնը կը սիրէր՝ վասն զի դիտէր ժողովրդեան օգտակարը դաշինքները կը յարգէր, վասն զի անոնցմով միայն կարելի է տէրութեանց սահմանները ապահովել. շարունակ իր Սաեփանէ եղբօր հետ վէճ ի ռաթի կ՚ունենար, և այս իրեն սրտին ցաւ էր։

Այս քաջ բայց անխոհեմ եղբայրը՝ շարունակ միտքը գրած առանձին իրեն իշխանութիւն մը հաստատել Փեռնոյ և Մարաշու կողմերը յարձակմունքներ կ՚ընէր. և միշտ գանգատներու առիթներ կուտար, իրեն պէս թեթեւամիտ եկեղեցականաց խորհրդոյ լսելով ոչ միայն գաշնից՝ այլ և երդմանց կը դրժէր։ Եւ այսպէս առիթ եղաւ անգամ մը պատերազմի ի մէջ Թորոսի և Նուրէտտինի՝ և երբ Թորոս հաշտութիւն խօսեցաւ Նուրէտտինի հետ Սաեփանէի կամայ ղէմ, ակաւ եղբօրը դէմ մեքենայել, որով Իշխանը պարտաւորեցաւ բանտել զնա առ ժամանակ մի և վերջը արձակել և դարձեալ իրրև եղբօր հետը վարուիլ։ Համոզելով զինքը թէ այդ ձանբով չէր որ իշխանութիւն մը կը կազմուէր։ Եւ իր օրինակը ցոյց կուտար թէ ինչպէս իրեն գիւրին էր զՅոյնները հալածել ի Կիլիկիայ, բայց ինքն կ՚ուզէր յարգել դաշինքները և առժամանակեայ իշխանութեան հետք մը թողուլ Յունաց ի գոյութիւն, քանի որ ատիթ չ՚էին տար իրեն զժգոհութեան և դաշինքներն լուծելու։

Բայց անխոհեմ բնաւորութիւնք ոչ բարեկամութեան և ոչ թշնամութեան մէջ չափ չ՚ունին և կշիռ։ Սաեփանէ Յունաց հետ ընտանութիւնը շատցուց, և մանրամասն սկսաւ կապուիլ Անդրոնիկոս Կոմնենեանի հետ, որ Կայսեր աղգական և տեղակալն էր ի Կիլիկիա, և որ ճաշի հրաւիրելով զՍտեփանէ, համուս բերդը եռայարկեալ ջրոյ կաթսայի մը մէջ զինքն սպաննել տուաւ։ Այս անդութ մահուան լուրը երբ տարածուեցաւ Կիլիկիա, բարկութեան և վրէժխնդրութեան կրակը բորբոքեցաւ և Թորոս որ իւր զօրաց Յունաց վրայ կը քայլէր, յանկարծ իր քովը տեսաւ քինատորեալ Մլեհն որ խուռմ մը կատաղի զօրաց մէջատեղ ելել էր եղբօրը մահուան վրէժը լուծելու։ Յունաց կոտորածը սաստիկ եղաւ, տասն հազար հոգի կոտորուեցաւ կ՚ըսեն պատմիչք Անարզաբան և գեռ ինչ բերդ և ամրոց որ մնացած էին Կիլիկիա ամենն ալ առնուեցան իրենցմէ, և զարդը գեռ պիտի շարունակէր թէ որ Երուսաղէմի թագաւորը միջնորդ չ՚լինէր դադրեցնելու համար այս անգութ կոտորածը։

Իսկ Սաեփանէի մարմինը տարին եղբարքը և թաղեցին Յաքայպնի վանքը, և անմխիթար տիկինն Մարգրիա՝ գնաց քաշուեցաւ ի Պապերոն իր եղբօր բերդը իր զաւակօք։

Գլուխ իե.

Լամբրոնի հարսը

Թորոս Եւփիմէի վերջին կամքը կատարելու մտագիր էր միշտ, Հեթում որ իր աչքին առջև կը մեծնար՝ յարմար վիճակ մը կերևէր. հայ գիտնական վարպետ մը և յոյն ուսումնական մարդ մը կ՚աշ-

լատէին գլուխը հարստացնելու գիտութեամբ, և զինավարժութեան համար բարձրբերդի կոնգաստիին էր կարգեալ յիշեանէն զինք ժողովելու։ Իսկ ինք Թորոս կը խօսէր երբեմն հետը, զանազան նիւթերու համար հարցմունքներ կ՚ընէր, և առանց իր սեամ կարծիքները ուղղելու՝ իմաստուն հարցմունքներով տղուն իրեն ուղղել կուտար նոյն սկզբունքները։ Բայց դժբաղդաբար կը տեսնէր թէ ընտանեկան հոգին որ յունական էր՝ խոր արմատ ձգած էր դարձեալ նորա սրտին մէջ, դատիարակութիւն և ուղղահաւատութեան գործութիւն հաղիւ կրնային հակակշիռ մը կազմել այն կռիւին հետ զոր բնական գաղափարաց հետ որք Լամբրոնի իշխանքը ազգային շրջանէն դուրս կը հանէին և յունական համակրութեանց կողմն կը ձգէին։

Միւս կողմէն Գոհար թէպէտ փոքր բայց ինչպէս դիտուած է որ աղջկունք կանխահաս են մտաց կարողութիւններով, ամենևին ետ չէր մնար հեթուհէն, և բնական բերմունքով հետաքրքիր բնաւորութիւնը շարունակ հարցմունքներով գոհ ընել կ՚ուզէր, և որ զարմանալին է, հօրը պատասխանները զինք աւելի գոհ կ՚ընէին երբ իր վարժապետուց պատասխաններն մոռցէին։ Ուստի տղաք երկուքն ալ օր աւուր մեծնալով թէպէտ թարմ հասակնուն մէջ յարմար սեպեց Թորոս իրենց հարսնիքը կատարել ի Մամեստիա որ իր առաջին յաղթութեանց և նափիմէի ուրախ զուարթ յիշատակներով ընծան էր։ և որովհետև Օշին իր փրկեսնաց գինն չէր կրցած վճարել, այն ալ իր մէկ հատիկ զաւկին օժիտն համարեց արքայապաշտ, և հոնկից հարան ու փեսան ուղևորեցան ի Լամբրոն։

Լամբրոնի տեսարք միշտ Կայսեր հաւատարմութեան դրօշակակիրը լինելով աւանդաբար յորդւոց յորդի, այս Ռուբէնի փափուկ շառաւիղը, յանկարծ բոլորովին օտար երկրի օտար կլիմայի տակ փոխադրուած բոյս մը դարձաւ, ամեն բան, ամեն գաղափար՝ ամեն խօսակցութիւն նոր էին իրեն համար։ Ինչ որ յարգել սովրեր էր իր հայրենի տունը՝ հոս արհամարհական կը տեսնէր, ինչ որ հոն սուրբ էր՝ հոս ծաղրելի էր։ Բայց որ իւր սրտին ամեն բանէ առաջ ծանր կը թուէր՝ այն էր որ պարզ համարձակութիւնը՝ որ հայրենի տան մէջ սովորական էր, հոս բոլորովին ընդհակառակն ամբաստանելի կը տեսնէր։ Հոս անմեղ ծիծաղը նաև գաղտնի պէտք էր

լինիլ, վասն զի խոժոռ երեսներ կային որ տխրութիւնը իրենց շուրջ օրինք ըրած էին։ Այս բերդիս մէջ նոր հարսին ամեն շարժմունք ամեն խօսք քննութեան և յանդիմանութեան առիթ մ՚էր։ Փեսան պէտք էր լինէր իր մի միայն ապաստանականն ու սրտակիցը, բայց նա ալ ինքզինքն հոս աւելի ճնշեալ կը գտնէր քան թէ վահ- կայ բերդը ուր աւելի համարձակ և ընտանի էր Թորոսի քան իւր հօրը Օշնի հետ։ կը հանդիպէր նաև երբեմն որ Լամբրոնի դղեկին մէջ ձանր և նախատական անկարկութիւններ կը լինէին Թորոսի և Ռուբինեանց յիշատակին, որ հարսին սիրտը ծանր կը վերաւորէին, բայց նա թէպետ թարմ հասակի մէջ՝ իրեն անդգայ չհամանալու կը զարնէր, և յաճախ տխուր ի անցնէին իրեն համար ամիսներըք երբ մեծ պատասխանութիւնք իրեն խնդացուցին թէ ի Լամբրոն Թորոսի այցելութիւնը կը սպասուի։ Հօրը տեսութիւնը ձմեռուան տխուր օրերու ճառագայթ մը եղաւ խնդձ աղջկան համար, թէպէտ արագրողութիւնք կ՚արգիլէին զաւկին նոյն հատկրութիւնը ունենալ հօրն հետ ինչ որ առաջ, բայց Թորոս՝ որ Բիւզանդական կայսրութեան արտրողութիւնքն աւրշտկեր էր բոլոր Կիլիկիա տակն ու վրայ ընելով, այդպիսի պատուական կապերու առջև չէր կրնար անձնահարիլ։ ուստի աղջիկը առաւ քովը, խօսեցաւ ամենուն հետ անտարբեր և երեսնալու տեղն առանձին սենեակի մը դրան մէջ կենալով օրպէս զի ամենքը զինքը տեսնեն բայց ձայնը չլսեն, զաւակս, ուրախ եղիր, գուարթ եղիր, հայրդ զքեզ չէ մոռցեր, և չի կրնար մոռնալ ըսաւ և գնաց։ Որովհետև աղջկ նայուածքը ըսեր էր Թորոսի թէ իր աղջիկը երջանիկ չէր։

Թորոս Լամբրոնի իշխանաց յունամոլութենէն գոհ չէր, բայց իր մեծ սիրան մոլզկային տխրութեանց բաժինն հանել և ներել գիտեր։ գիտէր թէ անոնք ամեն բան ի կայսերէն ստացեալ, բնական էր իրենց հաւատարմութիւնն, բայց չէր կրնար ներել ամեն օր իր անձին և իր պետութեան դէմ նիւթուած որոգայթներուն որ ազգին դէմ մատնութիւն կը համարէր։ դիտէր թէ Մաղաւտ Սուլթանին և Կայսեր բանագնացութեանց գործիք շատ անգամ եղած էին թէպէտ առանց կրևալու. գիտէր թէ Ընտալտի իրեն դէմ դրդռութեան գաղտնի գործիք եղած էին, թէպէտ Ընտալտի խոստքերուն հաւատարմութիւն չունէր։ Իսկ Կայսեր իր վերայ յարձակ-

մեն ժամանակ յայտնի իրենց գունդերով հոն էին Լամբրոնացիք, թէպէտ բոլոր այս գործողութեանց առեն իրենց Հեթումեան պատանդ էր իր քով։ Իսկ հիմա նոր ի ձեռին ունէր առ Նուբէտաին գրուած թղթեր գրգռելու համար զանի իրեն դէմ, և այս՝ իր մէկ հատիկ աղջիկը իրենց զաւկին հետ հարսնացնելէն վերջ։ Ուստի այս անդամ ալ արհամարհելու պատրաստ էր այս փոքրիկ և անարգ բանսարկութիւնները, բայց իր զաւկին տխուր տեսութիւնը, այն զաւկին որ մօրը սիրելի յիշատակին գրաւականն էր, իր սիրտը դառնութեամբ լցուց և երդուաւ որ այդ Լամբրոնի ամբարտաւան դաւաճանութիւնը խորտակէ և չ՚ուշացնէ։

Բայց իրեւ շրջահայեաց մարդ պէտք էր նախ զաւակը անոնց ձիրաններէն ազատել, ապա դէ իւր կամքը և միտումնութեամբ անոնց պատանդը ազատեր և իրենը պատանդ տուեր էր, որ միայն իր Նափլիէին վերջին նուիրական կամքը կատարելու՝ այլ նաև ընդհանուր եղած քաղաքականութեան կանոնով որ խնամութեամբ պինդ թափ ընել կը կարծէ թշնամին և բարեկամական կապով կը միացնէ։ Ուստի իր պատերազմական մտքերը չի յայտնած աղջիկը ազատելու հնարք մը մտածեց։

Հօրը այցելութենէն վերջը, գոհար իրը յանցաւոր մը ծնաց և ամեն աչք թէպէտ զգուշաւոր բայց երկդիմի ակնարկ մը իրեն կը ձգէին. Շահանդուխտ՝ իր կեսուրը՝ թէպէտ լաւ սիրտ ունէր, բայց կռուելու չափ այն բնական զարձած տեսլութեան դէմ որ ունին կեսուրք իրենց հարսերուն, բարձր սիրտ չ՚ունէր, ուստի կամ նայուածքով մը՝ կամ բառով մը խեղճին սիրտը կը թուռնաուորէր։ Իր Հեթումը՝ ինչպէս ըսինք որ միակ մխիթարութիւն պիտի լինէր՝ շատ հեռու էր այն սիրտը ունենալէն որ հասակէն աւելի վեր գտնուելով, այսպիսի պիրքի մէջ պաշտպանութեան վահան կը լինի։

Երբ այսպէս գիշեր մը՝ ընթրիքէն վերջը՝ ուր խիստ ակնարկութիւններ կը լինէին իր հօրը դէմ և հօրեղբօրը Ստեփանէի անունը արտեցաւ անարժան կերպով, գոհար երբ ինքզինքը՝ մանանալ թէ արցունքները կը զսպէր, կեսուրը հարսին դառնալով և չափաւորեալ խստութեամբ,

—Քաւակս, ըսաւ, դու դեռ տղայ ես, այն օրէն որ աղջիկ մը

հարս կը լինի, ալ իր տունը և անոր պարագայքը ոչ միայն պէտք է ուրանայ. այս այլայլութիւնդ ալ մեծ ամօթ է։

Գոհար պատասխան չի տալով, թաշկինակը երեսին և աչքերուն վրայ սեղմելով հազիւ իր սենեակները ինքզինքը ձգեց, և հոն քիչ մը հեկեկալէն վերջը իր պատուհաններուն վրայ բացուած փոկրիկ ծաղիկներու պարտէզը ելաւ. նոր լուսնին աղօտ լուսաւորութեամբ շարժմունք մը և ստուեր մը տեսաւ, և երբ սոսկումով ետ պիտի փախչէր,

—Ո՞վ իշխանուհի, ըսաւ ստուերը, հօրդ՝ Թորոս իշխանին կողմէն կուգամ քեզի։

Հօրը անունը լսելուն պէս, խեղճ աղջկան սոսկումին տեղ յոյս մը երեսին ծագեցաւ։

—Հօրս կողմէն։

—Այո՛, հօրդ հրամանն է, որ վաղը կէս օրին ճիշտ երբ կեսրակուրի իջնեն ամենքը՝ դու նոյն միջոցին բերդին վերի դուռը ելնես, և նշան այս թուղթը տուաւ, զրուցեց և զարմանալի արագութեամբ վանդակին եղերքը բռնելով այն պատին ահագին բարձրութենէն սկսաւ վար իջնել, իրը թէ սանդուխ մը դրուած լինէր։ Գոհար շփոթած այս գործողութենէն թուղթը ձեռքը ծռեցաւ և կը նայէր պատանուոյն որ կ՚իջնէր անխռով, մինչև որ վար հասնելը տեսաւ։ Այն առեն սիրտը հանգստանալով թուղթը ձեռքը ներս մտաւ և կանթեղին մօտենալով այս բառերը կարդաց. «Մտիկ ըրէ, և լսէ.—Թորոս.»—«Հօրս ստորագրութիւնն է. ուրեմն «վաղը կէս օրին՝ ճիշտ կերակուրի ժամանակ՝ բերդին վերի դուռը» պէտք է ելնել... ո՜հ, իմ սիրելի հայրիկս ղէս չ՚է մտացեր. իմացեր է որ ես հոս մարտիրոս կը լինիմ... Եւ ինք ինձի ըսաւ «Հայրդ ղբիզ չ՚է մտացեր և չի կրնար մտնալ...» բայց Հեթո՜ւմ... ղէս կը սիրէ, այո՛ կը սիրէ, բայց իմ հօրս պէս հայր մը պէտք էր ունենալ... իմ խեղճ մայրս թէ որ ողջ լինէր հիմա, և իմանար իմ հոս քաշածս... ի՜նչ պիտի ընէր, իմ հօրս պիտի ըսուցեր և թերևս այդ պատանին որ այս պատէն վար իջաւ մղէսի պէս՝ ամիս մը առաջ պիտի բերէր հօրս հրամանը... բայց ի՜նչ պիտի ընեմ ես... անշուշտ մարդիկ պիտի գան և ղես պիտի ազատեն... բայց Հեթո՜ւմ... Հօրս հրամանն է, պէտք է լռեմ և մտիկ ընեմ...

նա ամեն բան գիտէ՝ ամեն բան կը տեսնէ՝ ամեն բան կը մտածէ. միթէ Բաբկէն հայրիկ ինձ այնպէս չ'էր ըսեր միշտ... ոհ պատուա-
կան ծերունին... ես երբ հոս հարս կուգայի ինչչափ լացաւ. ես անոր լալը մօրս մեռած օրը տեսայ անգամ մ'ալ, և երբ հարսնու-
թեանս քովը գնացի զարդարուած և ուրախութենէս կը թռչտէի... տեսայ որ աչքերը կը սրբէր. մօրուքը ձեռքովը կը շոյէր, հոս կը դարձներ աչքերը, հոն կը դարձներ, շփոթած էր խեղճ ծերուկը: Դա ուրախ չ'ես, Բաբկէն հայրիկ, ինչ ունիս, ըսի, իմ հարս ըլլալը չ'էիր ուզեր. ՈՀ, ինչպէս կրնայի չ'ուզել Գոհարիկս, ըսաւ, միայն զըուցէ, ազաչէ հօրդ, Լամբրոն մ'երթայր, մեր քովը կեցիր իշխանուհիս: Ու այս խօսքերը ըսելով՝ ալ որոշ տեսայ որ արցունքը ջուրի պէս աչքերէն կը վազէր. ես ալ կը զգուշանայի որ արցունքը իմ հագուստներուս վրայ բիծ չի ձգէ... երանի՜ թէ իմանայի այն արցունքներուն զօրութիւնը, և հիմա սիրոս վէրքերով չ'էր բծաւորեր...: Բաբկէն միայն իմ վրաս լացաւ... հայրս չի լացաւ... բայց հայրս չ'էր գիտեր թէ ես խեղճ պիտի լինիմ ատոնց ձեռքը, նա որ ամեն բան գիտէ... Ա՜յո՛ ամեն բան գիտէ... ո՜վ իրեն զըուցեց թէ ես թշուառ եմ... ես իրեն բան մը չի զըուցեցի, չ'էի կրնար ալ զըուցել, ամեն աչք վրաս կը նայէին... թուղթ մը չի գրեցի, ուրիշներու ձեռք կրնար անցնել... բայց ատոնք ինչո՞ւ մեզ չ'են սիրեր... իմ խեղճ հօրեղբայրս ի՜նչ ըրեր է ատոնց... ամենքը լացին անոր մահուան վրայ՝ բաց ի հօրմէս... բայց նա չի լար... աչքերը գոց կը նստի երբ տխուր է... երբ որ հօրս երթայ ամեն բան պիտի ըսեմ... բայց Հեթում տխուր էր, անոնց կամակից չ'էր,... այն ալ կը զըուցեմ, ալ հարիք եղաւ... նայեցէք կուգա՛յ... այսչափ ժամանակ եղաւ, գիտէ որ տխուր եմ... ես սա թուղթը պատռեմ... ահա մարդու ձեռք ընկնելու վտանգն ալ չի կայ...»

Երբ դուռը բացուեցաւ՝ Հեթումին տխուր դէմքը տեսնուե-
ցաւ, որ իր հարսին քովը եկաւ որ նոյնպէս կախ երես քինաւո-
րեալ գլուխը վեր չ'էր վերցներ. իսկ Հեթում տեսնելով նորա կեր-
պարանքը սկսաւ զանգատիլ թէ բնական էր Լամբրոնի մէջ մեծ սէր մը պէտք չ'էր յուսալ Ռուբինեանց վրայ, թէ երկու թշնամի ըն-
տանիք պէտք էր սպասել որ կամաց կամաց մոռնան բոլորովին իրենց

ատելութիւնը, ուսկի մինչև այն ժամանակ պէտք էր սպասել և
համաւոր առաջ խաղալ սկսիլ ու չ'իմանալ...:

—Լա՛ւ, ըսաւ Գոհար դառնութեամբ, դո՛ւ ալ ուրեմն իրա-
ւունք կուտաս այն անգութ նախատանաց, միայն պէտք է յիշես թէ երբ դու Վահկայ էիր, իմ հայրս և իմ խեղճ մայրս քեզի հետ այսպէս չի վարուեցան, և մէկ ծանր բառ մը քու ծնողացդ և թէ քու կինիներուդ համար չ'էի լսած ոչ իրենցմէ և ոչ ծառայից մէկուն բերնէն. ես գիտեմ երկար ժամանակ եղբայրս գիտէի, և կը կարծէի թէ մեր տունը քեզի հետ ինչպէս վարուեցան, հոս ալ ինձի նոյն վարմունքը կըսպասէր... ափսո՜ս, ափսո՜ս, հազա՜ր ափսոս:

Եւ այս խօսքերէն վերջը, ալ արցունք չի կար, այլ անկիւն մը քաշուեցաւ լի դառնութեամբ և քուն ձևացաւ: Իսկ Հեթում շըփո-
թած այս յանդիմանութեան վրայ, և ժամանակէն սպասելով (ինչ-
պէս իր սկզբունքն էր) փոթորկին անցնիլը, մտաւ յանկողնին և քիչ մը առենէն հանդիստ քուն եղաւ: Ա՜յս քունը ալ աւելի զայրա-
ցուց տղայ կինը՝ որ ինքնիրեն կ'ըսէր. եթէ գիս սրտանց սիրէր անշուշտ գիս կ'առնէր. ի՜նչ կենամ, հիւ համար կենամ այս դժեակը, ուր միայն խոժոռ երես և տխուր խօսքեր կան... Բաբ-
կէն հայրիկ իրաւունք ունէր... բայց երիտասարդ տարիքի մէջ տխրութիւնն ալ քուն կը բերէ. քիչ քիչ քունը ձնծմարիտ քունը իր աչքերն ալ գոցեց, և երբ արթնցաւ առաւօտ էր:

Գոհար անհամբերութիւն մ'ունէր նոյն օրը, և ոչ ոք բան պատճառը չ'էր կրնար երևակայել արդէն Հեթում իր հարսին խո-
ժոռ կերպարանքը չի տեսնելու համար որսի երթալ և հեռանալ միմիայն դարման համարեցաւ վհատին: Ուստի նա ալ բանի մը հետ չի կրնալով զբաղիլ, կէս օրին սպասելով ծագկոցը կը պարտէր, և առանց իմանալու շատ մը ծաղիկներ կը փեթթէր, և յանկարծ աչքը հորիզոնին վրայ բան մը կը փնտռէր, իրօք ալ կէսօրը մօտ էր երբ լերան կողմը երկու երիք ձիաւոր տեսաւ ձերմակ վերարկուներով փաթթուած որ դէպի բերդին ճանապարհ կ'իջնէին. սիրտը սկսաւ արագիլ նոյն միջոցին ձայնի համար ձայն արուեցաւ, թէպէտ սանձ փափաք կ'զգար սանդուխներն ի վար վազելու՝ բայց ինքզինքը սանձեց, և ան հոգ ու տխուր ձևով մը աջ կողմը սեղանատան դրան առջև կեցաւ, աչք մը նետեց, դեռ մէկը չ'էր իջեր, դարձաւ դէպ ի

ձախը որ գլեկին վերի դուռն էր և ուր նարնջի և նուռի ծառերը շուքերնին ձգած էին, ծերը դռնապան մը գաւազան ի ձեռին նստած էր, երբ Տիրուհին տեսաւ ոտք եկաւ, իսկ նա առանց խօսելու դրանը մօտեցաւ՝ գլուխը դուրս հանեց, և տեսաւ, որ իր նշմարած երկք հեծելոց ձիերուն գլուխները դրան առջև երկնցան։

—Բարկէն հայրիկ, դո՞ւ ես, ըսաւ Գոհար։

—Ես եմ Իշխանուհիս, պատասխանեց ծերը։

Եւ այս միջոցիս երկու կոտովէ բազուկներ գինք բարձրացուցին Բարկէնին ձիուն վրէն վայր դրին, և Բարկէն թէպէտ եօթանասունը անցած՝ աջ թեւով աղջիկը գրկած և ձին մտրակելով կը սլանար դէպ ի Տարսոն առանց գլուխը ետին դարձնելու, իսկ ծերը դռնապանը՝ որ այս տեսարանը տեսաւ և ջանաց ձայն հանելու՝ այնպիսի բռնցի հարուած մը ընդունեցաւ կուրծքին, որ կոնակն ի վար գլորեցաւ. և երիտասարդը որ յաւէտ քթթել իշեր ձիէն՝ գԳոհար Բարկէնի գիրկը և հարուածը խեղճ դռնապանին տուեր էր, քլքիշ ծիծաղով գարձեալ յաթկէց ձիուն վրայ և սկսաւ քշել. ամէն արագութեամբ հասնելու համար Բարկէնի ձիուն՝ որուն փոշին միայն կ՝երեւէր, և իրօք անկարելի էր այդ նժոյգին հասնիլ թէ որ ծերը իր ընկերներուն հասնելու ժամանակ տալու համար չի թուլացնէր իր ընթացքը։

—Հանգիստ ես, զաւակս, հարցուց ծերը։

—Փառք Աստուծոյ, հանգիստ եմ և շատ ուրախ եմ, Բարկէն հայրիկ, կ՝ըսէր Գոհար ձախ ձեռքով որ ազատ էր Բարկէնի մօրուքին թելերը մկկի ընելով, որ աչքերը կը մտնէին. բայց գլուխ՛ինձի, ազատեցանք Լամբրոնէն։

—Անհոգ մի՛ ըներ. այս ձիուս հասնող ձի չի կայ Կիլիկիոյ մէջ, Թոռնիկ այս ձին գողնալու համար մինչև Սղերդ գնաց։

—Բայց կուգան, Բարկէն հայրիկ։

—Մեր ազաքն են, Տիրուհիս, դու հոգ մ՛ըներ, հիմա Իշխանն ալ՛ուր որ է՝ կը հասնի։

Հազիւ թէ քառորդ մը ժամ ձիավարեցին, ամպի պէս փոշի մը երեւցաւ առջևնէն, և գունդ մը ձիաւոր փոթորկի պէս կուգար Բարկէնի ձին սկսաւ խլանջել և գոփեր հատանել։

—Ահա Իշխանն է, ըսաւ Բարկէն, կրակ մեղի տեսիս կուտայ։

Կրակն ի՞նչ է, ըսաւ Գոհար։

—Կրակն այս մեր կարմիր ձին է. որ բոցի պէս կ՝երթայ՝ որ ամէն բան կ՝իմանայ՝ որ կը խօսի՝ կ՝իմացնէ, անխելք մարդիկներէն շատ խելօք է, քեզ բերելու համար այս օր ինձ տուաւ Հայրդ։

Եւ իրօք Թորոս էր որ անձամբ կուգար դիմաւորելու աղջիկը, և երբ մօտեցան իջաւ ձիէն՝ առաւ նստեցուց զնա պատրաստ ձիուն վրայ, կոնակը լըրիկ մը և գլխուն բեհեզեայ քօղը տուաւ, և ծանր ծանր հասան Տարսոն։

Թէպէտ շատ պարզ և դիւրին եղաւ Գոհարի Լամբրոնէ ազատութիւնը, բայց գարձեալ բաւական ջնջուած էր խեղճ աղջիկը, որ մէկ երկու օր մը փոքրիկ ջղային անհանգստութիւն մ՝ունեցաւ, և որ շատ մտատանջեց զԹորոս որ չ՝էր կրնար մտքէն հեռացնել այդ քաղքին մէջ նորա մօրը դժբաղդ վախճանը. ուստի երբ գաւակը քիչ մը աղեկ գտաւ ինքզինք, մէկէն խուժ մը պահապան զօրօք յանձնեց Բարկէնի տանիլ Վահկայ։

Իսկ Լամբրոնի բերդէն հանուած խնդրակները հապա թէ երեկոյին կոր գլուխ կը գառնային իմացնելու թէ իրենց հարսը Տարսոն մտած էր իր հօր հետ և բազմութեամբ ձիաւորաց։

ԳԼՈՒԽ ԻԶ.

ԹԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀՐՇԵՏԱԿԸ

Լամբրոն անառիկ անուն ունէր, ուստի Թորոս գիտէր թէ անոր տեարքը կրնային իրեն դէմ խրտչակոծ բայց այն ալ լաւ գիտէր թէ դուրսէ օգնութիւն մը չի կար իրենց տեղացի մը, քանի որ յունական զօրութիւնը այն ատենները խոնարհեցաւ իրեն առջև որ Երուսաղէմի Թագաւորին միջնորդութեան դիմեցին յոյն կուսակալը գադրեցնելու հայ սուրին հարուածը իրենց ժողովրդոց վրայէն. ուստի երբ ամէն կողմը տեսաւ թէ Օշինի օգնութիւն չի կայ ուստիք, իր բոլոր զօրութեամբ յարձակեցաւ Լամբրոնի վրայ։

Մեզ այս եղբայրասպան պատերազմին վրայ խօսիլ ծանր է.

պատերազմ՝ ուր հայ արիւն հայ ձեռքերէ թափուեցաւ, և ուր վերջապէս Լամբրոնի տէրը պարտաւորեցաւ իր պարխապներուն ապաւինիլ և երբ բանագնացութեանց ուղեց սկսիլ յաղթողին բարկութիւնն լլկեցնելու, Թորոս ձիու վրայ ընդունեց պատգամաւորը, որ եկեր էր խաղաղութիւն խնդրելու, և շրջապատեալ այն իր զօրավարաց և ասպետաց խումբէն որ գրեթէ քսան երկայն պատերազմաց տարիներու տակ ծերացեր էին, ծանր ուշադրութիւն մը տալէն վերջը պատգամաւորին ըսաւ խստութեամբ։

—Քու տէրդ ինձմէ խաղաղութիւն կը խնդրէ և չ՚ամչնար, իսկ ես որ հիմա որոշած եմ որ ուխտադրուժ՝ խարդախ մարդկանց հետ դաշնագրութեան չմտնեմ, երբ գիտեմ թէ վաղը պարագայն որ ներէ դաշինքնին պիտի սանի՝ երդմունքնին ոտնակոխ պիտի ընեն։ Ուստի գնա՝ ըսուցէ քու տիրոջդ, եթէ ազատութեան կը փափաքի՝ դռները բանալէ և Լամբրոն ինձի յանձնելէ ուրիշ ձար չի կայ, այն առեն ղինքը թող կուգամ կ՚ուղէ երթայ Կոստանդնուպոլիս՝ կ՚ուղէ Իկոնիա՝ կ՚ուղէ Հալէպ, այն ամեն մայրաքաղաքները ուր գրեթէ քսան տարի է ինձի դէմ թշնամի կը փնտռէ, ամեն թշնամիներուս լըսեսութիւն կ՚ընէ, ամենքը ինձի դէմ կը գրգռէ։ Քու տէրդ Թորոսը կը տեսնէ, շատ կը սխալի. ես իրեն առջև օրէն երբ այս ճամբաներէն կ՚անցնէի փախստական երիտասարդ՝ իմ շղթաներէս հագիս ազատած՝ ազգին շղթաները կուգայի խորտակել և առաջին խոչընդոտն ղինք կը գտնէի. այն օրէն ես իրեն ազդ ըրի՝ ղըսուցեցի թէ փառք փնտռելու չէի եկած, այլ իմ ազգիս խեղճութեան ձար ձարակ ընելու. ինք չի հասկցաւ, վասն զի ինք ազգութիւն ինչ է, հայութիւն ինչ է չ՚գիտեր. պէտք էր տեսնել և հասկնալ թէ Թորոս բան մը չէ, այլ իր ետին Հայութիւնը՝ այս ամենքը որ կը տեսնես և այն ամենքը որ Մասիսի ստորոտէն բոլոր աշխարհքիս վրայ ցան և ցիր կը տարածուին, օտարին բռնութեանց՝ հարստահարութեանց տակ կը հեծեն, որոնց կրծքը՝ անուանը՝ կեանքը և ստացուածքը վտանգի մէջ են, այն ամենքը այսօր իմ կռնակս կեցած են, և պէտք է ըսուցեմ թէ հիմա այս վայրկենիս այս Հայութիւնը որ քու տէրդ չի ճանչեր և որուն համար ես կեանքս՝ արիւնս և ամեն ունեցածս կը զոհեմ, յիս՝ այս խեղճ Թորոսին վրայ կը կայանայ։ Եւ քու տէրդ չ՚ամչնար. ինչ

ամչնալ ինչ է ամէն. . . Աստուծմէ չի՞ վախեր այս ծորոսի ապստամբանարանը կործանելու, որ այնչափ հալածեալ՝ միմիայն ապաւէն գտաւ Ռուբէն իմ նախահայրս, և որ ես նոյն Աստուծոյն կարողութեամբ նորէն ի հիմանց և աւելի ընդարձակ կը կառուցանեմ։ Նա ինքն Աստուած վկայ, որ ես անպարտ եմ հայու արիւն թափելէն, և քու տէրդ լաւ գիտէ որ այդ արիւնը խնայելու համար իր զաւակը ինձի զաւակ ընել ուզեցի, որպէս զի թշնամութիւն վերնայ մեր մէջէն, բայց ինք չ՚ուզեց. ուրեմն թող պատիժը քաշէ, ես չեմ կրնար իմ ազգիս անունը՝ պատիւը լամբրոնական վատութեան զոհել. նայէ, տես այս թուղթերը որ նոր ձեռքս կը հասնին, որ իր մատնութեանց անժխտելի վկայք են, և որ Կոռիկոսի առջևէն ձերբակալ սուրհանդակի մը վրայէն ձեռք են ինկած. այս թուղթերը թէ իր մատնութեան վկայք են և թէ ինձ ինչ որ արդէն գիտէի թէ ինք յունական օգնութենէն յոյս պէտք չէ ունենայ երկայն առեն, ուստի թող դիտնայ թէ ահա վրանս կը գարնեմ այս Լամբրոնի դռներուն առաջը, և այն առեն պիտի վերնայ երբ այդ մատնուս բերդին քարերը հիմն ի վեր տապալին։ Ահա իմ պատասխանս, և վերջին պատասխանս։

Եւ ձին մտրակեց իր հրամանները տալու որ սաստկացնեն պաշարումնքը, և իրօք վրանը հոն բերդին դիմացն էր. հոն կը տեսնէին ամեն գործքեր, հոնկից Կիլիկիոյ կառավարութեան ամեն հրամաններ կը մեկնէին, և անտուխ բերդը որ առաջ սպառնալեքը արհամարհել ձեւացուց սկսաւ իր բաղդին վրայ տարակուսիլ, վասն զի ամեն անգամ մը կը տեսնէր որ պաշարող զօրքերը կը փոխուէին՝ նորերը կուգային և հիները իրենց տուները կ՚երթային։ Իսկ յարձակմամբ դըլխա եղնել թշնամին վանել անկարելի էր, ուստի երբ ամիսները անցան, տարին սկսաւ մտանոգ խեղճութիւնը բերդին մէջ սկսաւ տիրել, բերդապահ զօրականք սկսան գաղտնի գանգատիլ, Օշին ալ սկսաւ մտածել երկբորդ պատգամաւորութիւն մը յուղարկեց որուն գլուխը իր տղան Հեթումը դրաւ։ Բայց այս առջևինէն դժբաղդ եղաւ, վասն զի յաւուրապահ զօրաց պատուէր կար ամեն պատգամաւորութիւն ետ դարձնել և Իշխանին առջև չի հանել։

Ուստի Օշին երբ կը մտածէր ոխուր այս վիճակին վրայ և

յանգուգն գործողութեամբ մը վերջ տալ որոշած էր, Շահանդուխտ իրեն մօտենալով ըսաւ.

—Ցուսահատ տխուր մտածելն օգուտ չ'ունի, ինձի յանձնէ և ես ձայրը կը տեսնեմ այս վիճակին։

Ո՛վ քեզ կ'արգիլէ, ըսաւ Օշինն, ըրէ ինչ որ կրնաս, բայց միտքդ դիր թէ երկրորդ անգամ մ'ալ այն անպզտին ձեռքը ոչ չ'ևմ կրնար ընկնիլ։

—Ո՞վ քեզ անոր ձեռք կը ձգէ։

—Գնա, ըրէ ինչ որ կրնաս։

Շահանդուխտ գնաց և իրաց տալ սուտ մտերմանպատ վարդապետին որ քաշուած առաքինի ծեր մ'էր թէ կ'ուզէ իրեն հետ տեսնուիլ։

—Հայր սուրբ, ըսաւ Տիկինը, պէտք է որ դու վճռէ ապատես։

—Թէ որ ձեռքէս գայ, պատրաստ եմ Տիկին, ըսաւ խեղճ ծերը շփոթած երեսը նայելով և վախնալով որ դիմայինին խելքին վատնգ մը հանդիպած չը լինի։

—Այո՛ Հայր սուրբ, դու միայն այս վիճակին դարման մ'ընել կարող ես։

—Գիտես, Իշխանուհիս, թէ ես ոչար ծերուկն մ'եմ, եթէ իմ աղօթքս լսելի լինէր Աստուծոյ, այս նեղութիւնները մեր վրայ չէին հասներ, պատասխանեց ծերը և վախնալով թէ Տիկինը հրաշքի մը կ'սպասէ իրմէ, աւելցուց. Դիտես Տիկին, թէ հրաշքներն ալ հիմա քիչ կը պատահին, և ես մեղաւոր անձ մ'եմ։

—Ո՛չ, ըսաւ Շահանդուխտ Ժպտելով՝ ես հրաշքի չ'եմ սպասեր, միայն կուզեմ որ յանձն առնուս երթալ Թորոսի խօսիլ դու քահանայ Աստուծոյ ես, և երբ դու դրկիչ չ'ուզէ ընդունիլ և թերևս մօրիկ ալ ընել, խնդրես որ մէկ մ'ալ հոս չի դառնան այլ Սև լեռը վանք մը քաշուիս, և ջանաս զինքն համոզել սկսիլ թիւնդ պատճառ բռնելով նա երբ քիչ մը յոյս ինչպէս որ հաւանական է, շուտ մը երթայ՝ հաւանիլ մօրեղբարցդ Սրբատանեանց խնայելու մեր վիճակը, և խնդրես որ մեկին մեկը գայ հանի այս պատանին խօսք հասկցնէ, պիտ երեք ամսուան պարտ ունինք, ժամանակ կայ, թէ որ շուտ չարժիս կրնաս վճռել ապահով։

Լաւ, բայց գիտես Տիկին հինչ ձանրապատ է, ըսաւ ծերը վարդապետը մտածելով և հաշուելով։

—Գիտեմ, ըսաւ Տիկինը խստութեամբ, երկայն ճանրապատ է, բայց պէտք է մտածես թէ Հայր սուրբ, քու աղօթքներովդ հինչ չափ հոգի որ չ'ես փրկած այսչափ տարիներու մէջ հիմդ պիտի փրկես այս ճանրապատութեամբդ։

—Բայց ես յիրաւի ծեր եմ, բայց հրանդութիւն մը չ'ունիմ, սուտ ալ պզտցեմ։

—Հայր սուրբ, խնդրեմ այսպիսի բարակ խղճմտանքի ժամանակ չ'է, մեր բոլոր ազատութիւնը քեղի է մնացեր։

Վարդապետը կրծնատրը յանձն առաւ կամայ ակամայ այս ծանր պաշտօնը կատարել և խեղճ մարդը իրօք ճգնաւոր լինելուն Օշինի երեսը կիրակիկ կիրակի և եկեղեցին միայն կը տեսնէր, այն ալ երբ բեմը կ'ելնէր այն պահն միայն. հիմա երթալ դեսպանութեամբ այնպիսի Իշխանի մը հետ խօսիլ որ իրրև արիւնարբու գազան իրեն կը նկատրգրէին, իր գործը չ'էր, բայց ճար չկար, ուստի յանձն առաւ. և Շահանդուխտ ղինքը լաւ մը կարգադրելէ վերջ հրաման ըրաւ Հայր սուրբին ջորի մը տալ և դուները բանալ որ երթայ։

Թորոսի երբ իմացուցին թէ ծեր վարդապետ մը եկեր կ'ուզէր իրեն հետ խօսիլ, առանց գլուխը վեր վերցնելու «Թող երթայ Օշնի քարոզչ Բիւրատոսի Աստուածաբնը, ըսաւ, որ չի ճանչնար, ես հոս նոյն Աստուածաբնին պաշտպանութեան համար կեցեր եմ։»

Այս պատասխանին վրայ, խեղճ ծերը բոլորովին տարակուսած, բայց դարձեալ աղաչեց ծեր զօրավարին որ այս պատասխանը իրեն կը բերէր, ղինք պարտադ չի հանել Իսկ ծեր զօրավարը, որ մեր քաջածանօթ Բարկենն էր, գիտալով տարեկից կղերականին վրայ որ իր կոմսին ալ չ'ուներ, ակնարկ ըրաւ և վրանին դուրը ցուցուց որ մտնէ, և ինք հետ ացաւ։

Վարդապետը որ կարծէր թէ դահիճ'ներէ չըշապատեալ մեկը պիտի տեսնէր, զարմացաւ երբ տեսաւ գԹորոս երկաթ չղթաներէ շղթապատեալ որպէս չորս կողմը նռատած գորգերու վրայ շարունակ կը գլորէին հինչ ոտ Իշխանը տուն կուտար, և որ մերթ ընդ մերթ տեսնելով գլուխը վեր վերցուց և թէպէտ նեղացաւ, բայց

նայելով թէ ձեր կրօտպլուխ եկեղեցական մ՚է, ոտք ելաւ, և ատանց խօսելու ձեռքէն բռնեց քովը նստեցուց և իր մեծ և խոր աչքերը վրան սեւեռեալ ապասեց որ խօսի։ այս ընդունելութիւնը խեղճը բոլորովին չվհատեցոյց։

—Կը տեսնես, Հայր սուրբ, թէ ես ինչափ զբաղեալ եմ, զրուցէ, ինչ պիտի զրուցես, միայն առաջուց կ՚իմացնեմ թէ բերդը անպայման ինձի յանձնելէ զատ ուրիշ դաշինք չեմ ընդունիր։

—Եթէ այդ այդպէս անդառնալի վճռուած է, ըսաւ ծերը, գոնէ ինձի հրաման տուր, մեծ Իշխան, որ երթամ վանք մը քաշուիմ, վասն զի հիւանդ և տկար անձ մ՚եմ։

—Բայց ներսէս քեզմէ աւտ քահանայ կայ։

—Երկու քահանայք ալ կան։

—Լաւ, ապատ ես, ըսաւ Թորոս և իր թուղթերը ձեռք առաւ։

Պաշարմունքը կը շարունակէր և Թորոս այս բանակի կեանքը յամառութեամբ կ՚անցընէր, կ՚ելնէր երբեմն իւր շրջանը կ՚ընէր, և դարձեալ կը դառնար, միտքը որոշ դիտած հիմնայատակ ընել Լամբրոն։ Ան երբ իւր դիտաւորութիւնքը անխախտ այս վիճակին մէջն էր, ահա լսայուցին իրեն թէ Նպիսկոպոս մը Կաթողիկոսին կողմէն օրհնութեան թուղթ բերելով հասեր էր բանակը։ Հրամայեց բերել և վրանին դրանը առջև ելաւ դիմաւորելու և առջի աչք ձգելուն կշռեց թէ սովորական մարդ մը չէր դիմացինը։ Պարզ և պարկեշտ թէ հագուստին՝ թէ ձևին մէջ, միջահասակ՝ դեղնցիկ և քաղցր աչքերով սլուռ մ՚էր, և որ բնաւ չէ բոյցած թուղթ մը հանեց և տուաւ Իշխանին յարգութեամբ։ Իսկ նա, հրաւիրելով նիւրը նստելու, կարդաց թուղթը ամենայն ուշադրութեամբ, և քովը դնելէն վերջը.

—Մեր պարտքն է, Սրբազան, եկեղեցւոյն և մեր կրօնական գլխոյն հրամանաց հնազանդիլ երբ խնդիրը կրօնական է։ Ինձմէ աւելի մեկը կարելի է չի գտնուի Հայ ազգին մէջ նոյն հրամանները յարգելու համար բայց ամեն բան սահման մը ունի։ Երբ խնդիրը եկեղեցւոյ իրաւասութենէն դուրս է, և ազգին ալ վնասակար, ես չեմ կարծեր թէ Հայոց ազգին վերհաշտարհ կրօնական գլուխը այսպիսի բան մը աւազակի որ անկրնար լինի։ Իսկ որովհետև դուք հեռաւոր ճանբէ կը հասնիք, և յոգնած էք, այս նիւթին վրայ հիմա խօսիլ անտեղի է, հանգչեցէք, վերջը ինձ ալ մտիկ կ՚ընէք, ձեր ազգականներն ալ մտիկ կ՚ընէք, և թէ որ արդարութեան հետք մը միայն անոնց քով գտնէք, ես ձեղի խօսք կուտամ ձեր երկու եղբարց արրազնութեան փափաքը լիովին կատարել։

—Այս կերպով լսուած խօսքի, ես ի՞նչ պատասխան կրնամ տալ, Իշխանդ մեծ, ըսաւ քաղցրութեամբ Նպիսկոպոսը որ նոյն ինք Ներսէսն էր Շնորհալին, եղբայր Գրիգորիս Կաթողիկոսի։ Ես ուրախ եմ որ այնպիսի վկհատնի մը հետ գործ ունիմ որ ազգին օգուտը նախատեսել և կրօնքի պատուիրանները յարգել կանոն ընծն կը նամատասել։ ասկից աւելի ի՞նչ շնորհք կրնայի խնդրել Աստուծմէ։

—Հիմա, Սրբազան Հայր, ըսաւ Իշխանը ոտք ելնելով, ներեցէք որ հրաման ընեմ, ձեզի լաւ վրան մը պատրաստեն։

—Թէ որ հրաման և թոյլտուութիւն ընէք երթալու Լամբրոն . . .

Ձեզի համար արգելք չի կայ, երբ որ ուզէք կարող էք մըտնել, ամեն դուռ ձեզի բաց է։

Ներսէս ոտք ելաւ հրաժարական ողջոյն տալու և մտաւ Լամբրոն։ Ցիշ մը վերջը իր փոքրաւորներէն մեկը որ պահեր էր Թորոս, կերակրելիներց հանդերձանօք կը մտներ սովրել բերդին մէջ ուր քանի մը ամիս ի վեր հայր պաշարէ զատ բան չէր մտայեր։

Կրնանք երևակայել թէ լեզուանի կին մը, եղբօրդուստր բարձրատիճան եկեղեցականին, շատ դժուարութիւն չի քաշեց զանի համոզելու և պատուեթեամբ լեցնելու ընդդէմ Թորոսի, մանաւանդ երբ ակն յանդիման կը յուցներ իրեն տալուց մօտ պաշարման վիճակը, իրենց անպրանիկը տալին չի կատարուած այրիութեան դատապարտելու վտանգական հարսէն, և ամեն պատգամաւորի անգութ և անփոփոխ պատասխանը հիմնայատակ կործանելու վնասբրոն։

Ներսէսի ազատանկերպ սիրտը չէր համակնար այսպիսի խըստութիւն և անգթութիւն, բայց Թորոսի վսեմ կերպարանաց և խօսքերուն ազդեցութիւնը իրեն կը զգուցեր թէ կար նաև ուրիշ պատճառ մը որ անշուշտ յայտնի պիտի լինէր։

Ուստի երկրորդ օրը երբ բանակը եկաւ, և սկսաւ խօսք բանալ, Թորոս բացայայտ իրեն իմացուց թէ գինք իբրև դատաւոր ընդունելու պատրաստ էր, միայն թէ օշին պէտք էր որ գար ներ-

կայ լինէր և պատասխաններ ամեն ամբաստանութեանց։ Թէպէտ Օշին այս պայմանը ընդունելու շատ դէմ կեցաւ, բայց կնոջն ու բոլոր ընտանեաց յորդորանաց չի կրնալով դէմ կենալ, մանաւանդ թէ փրկութեան ուրիշ յոյս մ՚ալ չ՚ունենալով, պարտաւորեցաւ յանձն առնուլ։

Եւ ահա խաղաղութեան հրեշտակը յակամայս եղաւ դատաւոր։ Թորոս Հոն մի առ մի կը ցուցնէր բոլոր անցկոյն մէջ թէ ինչչափ ատելի և ձիաստակար դառած էր միշտ պատերազմը և թէ անոր համար իր երկու եղբարց հետ քանի քանի անգամ աւրուած էր, և թէ ի՞նչպէս պարտաւորած իր տղին պատուոյն և ազատութեան համար պատերազմելու ընդդէմ Յունաց և այլազգեաց և թէ միշտ այս ամեն պատերազմներու մէջ թէ որ Օշնի անձը իրեն դէմ գտնուած չէր, իր զգացութիւնքը միշտ գանուած էին. թէ որ իր եղբօրը Սահականէի անգութ սպանութեան գործակից չէր, կամակից լինելուն ապացոյցները ի ձեռին ունէր։ Թէ որ նորա մահուանէն վերջը Թորոս և բոլոր Հայք՝ Յոյները խորտակեցին և անկարող ըրին, Օշին առնլի Յոյն քան զբոլոր Յոյները՝ Թուղթ Թուղթի վրայ կը գրէր հրաւիրելով զարձնել զԱյոյսն ի պատերազմ և իմացնելով թէ՝ «Քանի որ Ռուբինեան ապստամբ զարմը ճար աչխարհիս վրայ և բնաջինջ չ՚լինէր, Կիլիկիա խաղաղութիւն պիտի չ՚գտնէր յաւիտեան»։ Եւ այս թուտուղ խօսքերը այն միջոցին կը գրուէին երբ ինք Թորոս իր մէկ հատիկ զաւակը անոր տղուն հարսնութեան կուտար, ընտրհելով փրկանաց գինը և պատանդը իրեն փեսայացնելով։ Եւ խօսքերը բաւական չի համարելով կ՚առներ կը դնէր մէջտեղ Օշնի ատորագրութեամբ գրուած գրերը որ անուանական վկայ կ՚էին իր ըսածներուն։ Եւ երբ նա և Ներսէս ինքն ապշած՝ ընդդիմացած բերան չ՚էին բանար, այն ատեն գառնալով առ գատաւորն՝

—Հայր Սրբազան, ըսաւ, թէ որ Մերուժան, թէ որ Վեստ Սարգիս հոս սա մարդուն հետ նստած լինէին, կարծեմ թէ իմ մի միայն պարոնս այս մարդը անունդ տարբերել չ՚էր, այլ հաւատաւորապէս պատժել պէտք էր լինել շատ եղաւ այսչափ տարիներու համբերութիւնս, և ես հիմա իմ անձիս միայն պարտաւոր չ՚եմ այլ զգեակը հինգնայատակ կոտծանելու, այլ սուրբ պարտաւորութիւն մ՚է ինձ իմ տզիս համար ասմանութեան՝ գաւաճանու-

թեան բոյնը անհետ ընել, վասն զի հոն՝ դորա հանդիպակաց պարիսպներուն մէջ գրուեցան պատրաստուեցան այդ գրութիւնքը, հոնկից եկան Հայ զինեալ ձեռքեր իրենց եղբարց արիւններուն մէջ թաթխուելու համար. անոր համար ահա տարի մը ժամանակ կը լինի որ ես հոս այս վրանին տակ կ՚սպասեմ. Ափսո՜ ձեզի, Սըրբազան, որ այսպիսի փեսի մը վիճակեր էք, այնչափ և աւելի թերևս ափսո՜ ինձի որ այդպիսի հօր մը զաւակը ինձի փեսայացուցեր եմ։

Այս խօսքերը թէպէտ առանց կրքի և հանդարտ ձևով զրուցած՝ այնչափ արհամարհանաց ծանրութիւն բեռնաւորեցին Օշնի վրայ, որ գլուխը կուրծքին վրայ խոնարհեցաւ, արձանի պէս մնաց, և Ներսէս տխուր հարցուց իրեն թէ՝ այն թուղթերը իրեն լինելը կ՚ընդունէ՞ր։ Իսկ երբ նա աչքով միայն «Այո» մը զրուցեց, այն ատեն հրաւիրեց զինքը Լամբրոն գառնալ և մնաց Թորոսի և անոր զօրականաց հետ։ Սկսաւ իր շնորհալի լեզուաւ ճառել համզիչ խօսքերով թէ քրիստոնէական պարտաւորութեանց առաջիններէն մէկն է ներողամիտ լինիլ և թէ վրէժխնդրութիւնը ինչչափ որ քրիստոնէական սկզբանց դէմ էր, նոյնչափ և աւելի մեծ և վեհ սրտերու չ՚էր վայլեր։

—Լաւ, Հայր սրբազան, դուք Քրիստոսի և Հայոց մեծ հայրապետին անունով զիս կը յորդորէք սիրոյ և խաղաղութեան, ես ալ որ առջևնէն կը հաւատամ, և երկրորդը կը յարդեմ, յանձն կ՚առնեմ վերցնել պաշարմունքը և թողուլ Լամբրոն քար գայթակղութեան Ռուբինեանց. միայն թէ դուք ալ որ Լուսաւորչայ ցեղէն կ՚իջնէք և նորա սուրբ աթոռին վրայ նստած էք զինուորի մը աստուածաբանական յորդորը չի մոռնաք, Հայ եկեղեցւոյն փոքր դրօշակը անկախ պահեցէք, ինչպէս ես ազգային անկախութեան դրօշակը անկախ պահելու կը ջանամ։ Հռոմկլայի և Լաբրոնի գաղափարաց մէջ նաև ազգակցութիւն մը ցաւօք կը նշմարեմ, վասն զի ինձ այնպէս կ՚երևայ թէ սխալ ճանրու մը կը հետևիք թէ միացնել կ՚ուզէք ձեր եկեղեցին յունականին հետ։

—Քրիստոսի եկեղեցին մի է, ըսաւ Ներսէս, և մեր պարտքն է ջանալ ի սէր և ի խաղաղութիւն բերել զամենքը։

—Ես աստուածաբանական խնդիրներու չեմ մտներ, բայց

կընկճէք նախ և այնպէս գործեցէք, այս է իմ ըսելիքս։ Խաղաղութեան դաշինքները դրուեցան, Ենովհալին ինք եղաւ երիշխաւոր Օշնի, և Թորոս խոստացաւ որ Գոհար տարւոյն մէկ մասը Լամբրոն անցնէ։ Լաւ յարաբերութիւնք հաստատուեցան ընտանեաց մէջ որ մինչև Թորոսի մահը տեւեցին։

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԳԱՒԱՌԱՆՈՒԹԻՒՆ

Հոգևորական իշխանութեան շարժումնքը այն միջոցին, Թորոսի ախորժելի չէր։ Գրիգորիս կաթողիկոսը բանագնացութեան վրայ էր Յունաց Կիւ Մանուէլ կայսեր հետ, որ ժամանակին կրօնասիրական գաղափարաց և իր քաղաքագիտական օգտին հետևելով կը փափաքէր միութեան Հայ եկեղեցւոյն հետ։ Իսկ Թորոս միութեան մէջ նախ սուզման վտանգ կը տեսնէր, երկրորդ Հայ եկեղեցւոյն մէջ՝ եթէ ոչ բաժանմունք՝ գոնէ տարաձայնութեան վտանգ կը նշմարէր։ Անոր հայեցողութիւնքը միանգամայն ազգասիրական բանագնացութիւնքը միանգամայն ազգասիրական բանագնացութիւնքը միանգամայն ազգասիրական բանագնաց

սիրելի եղած էր Թորոսի իր հայրենական և անձնական քաջութեանց և ուղղութեան համար) անցեալին վրայ խօսելով ժամանակ կ'անցընէին վահկայ բերդը, Սարգիս ներս մտաւ և նստաւ, բայց իր ղուարթ բնաւորութիւնը իբրև թէ կորուսած էր այն օրը, նա որ միշտ ուրախ էր և միշտ զաւեշտը կը սիրէր։

—Չէ տղայ, ըսաւ Բաբկէն, այսօր սգաւոր են որ բերանդ չի բացուիր, մամուդ մեռնելուն տարեդարձն է։

—Այն օրը չեմ դիտեր, Խաչի մեռելոց օրն երեկ էր, բայց ես ոչ մեռնիլն կը սիրեմ և ոչ մեռնիլը։ Իմ սիրտս նեղութիւն կայ այսօր, բայց դուք ալ ուրախ մարդիկ չէք, որսի երթալու փափաք մը ունիմ այս սրտիս նեղութիւնը վանելու համար, ով ընկեր կայ, և երթ, այն անանունք։

—Դու ալ Իշխանին պէս յոգնութիւնդ որսի աշխատութեամբ կ'առնուս։ Նա քանի և չորս ժամ կ'աշխատի՝ կը վազէ կը պրծ դրիլ կուտայ, ետքը որսի կը հետևնէ, յոգնութիւնը յոգնութեամբ կ'առնու։ դու ալ այն խելքին ես—Նա ծերացայ, տղայ հիմա հազիւ թէ կ'ուզեմ շարժիլ։

Պատերազմի համար ի՞նչպէս ես, Բաբկէն հայրիկ։

—Պատերազմին ուրիշ կ, հոն մարդու երիտասարդութիւնը քիչ մը ետ կը դառնայ. փողին ձայնին արիւնը կը դառնայ, սիրտը կ'եփի։

—Թէ որ դու այդպէս կ'ըսես, Մլհ Իշխանը ի՞նչ կ'ըսէ որ երեք օր մարդու թաղը լսկիլ իր տունին կամ նիզակին հարուածին տակ չի տեսնէ դիշերն ի բուն չի քնանար, ըսաւ Թոռնիկ խընդալով։

—Մլհ Իշխանը . . . ըսաւ և կեցաւ Սարգիս։

—Մի կտրեր, լմնցուր խօսքդ, ղրուցեց Բաբկէն։

—Չեմ լմնցներ, վասն զի թէ որ ես լմնցնեմ դու առաջինը կը լինես բարկանալու։

Լռութիւն մը տիրեց, Բաբկէնի խոր աչքերը քիչ մը պզտիկցան և շուրջ չորս կողմը պտնելէն վերջը՝

—Սարգիս, ըսաւ, դու այս օր ծանր մտածմունք ունես, ղուդիդ տակն ալ դաղտնիք մ'ունես, այս դռնէն ներս մտնելէդ ի վեր կը փնտռուիս որ յայտնես և չես ուզեր. Առուած վկայ, թէ

որ Թոռնիկ հոս չ'լինէր, ես մինակ որ լինէի պիտի բանայիր, այլապէս չ'կ, շիտակ խօսէ։

—Եղբայր, թէ որ այդպէս է, ահա ես կ'երթամ, ըսաւ Թոռնիկ եղնելով,

—Ո՞ւր, կեցի՛, ըսաւ Բաբկէն թևէն բռնելով և նստեցնելով. որդեակ Սարգիս, ինչ որ ծանր բան ունիս ինձ զըուցելու, մի վախեր, Թոռնիկին ալ կրնաս ըսել. ես զինքն լաւ ճանչցեր եմ։

—Ես անկից կասկած չունիմ, մեծ վստահութիւն ալ ունիմ, բայց պատերու առակ է «Դաղտնիք երեք հոգիի մէջ գաղտնիք չէն, յայտնիք են» . . . Թոռնիկ, հոգիդ սիրես, մ'առնուիր, նստէ, ես, Բաբկէն հայրիկ թէ չ'լինէր, քեզ պիտի զրուցէի. շփոթեր մնացեր եմ, խնդիրը ծանր է. Իշխանին սիրտս չի տանիր որ համարձակիմ բանալ։

Բաբկէն ուժով մը ձեռքէն քաշելով առաւ Սարգիս բազմոցին ծայրը նստեցուց և կամաց ձայնով ըսաւ.

—Ի՞նչ է, ղրուցէ, որդեակ Սարգիս, մենք երեքս մէկ հոգի ենք, ես մարդիկ լաւ կը ճանչնամ, տէ զրուցէ։

Այս դիրքին մէջ երեք դլուխ իրարու մօտեցան, Թոռնիկին լայն և պարզ ճակատը՝ անկեղծ և մաքուր նայուածքը, Սարգսին սուր և կասկածոտ աչքերը, Բաբկէնի երկայն և ձերմակ յօնքերը, որ աչքերը դրեթէ կը ծածկէին, իրարու հակառակ դէմքերով զարմանալի միութիւն մը կը կազմէին այս երեք անձանց մէջ. Սարգիս սկսաւ իր դաղտնիքը պատմել։

«Քու տալիք էր, Բաբկէն, երբ Իշխանը ինձի հրամայեց որ Հալէպ երթամ, անծանօթ՝ քաղաքը մտնեմ, իրև վաճառական քիչ մը տպրանք առնուիմ, աչքէ անցունեմ, իմանամ թէ ի՞նչ կ'ընէ Նուրէտտին, ի՞նչ կը խօսի ժողովուրդը, ի՞նչ շարժմունք կայ հոն, շաբաթ մը հազիւ կնստամ ու դառնամ. կեցայ նայեցայ, ապրանքներն ալ իշու մը վրայ բարձած, ես ալ դուրէն մեր տղոյմէ մէկը մինակ հետս առած կը դառնայի։ Արեգի վանքը հասայ, տղուն ըսի որ կենդանին առնու բերդը տանի. ժամուան մը ճանբայ կար դղեակն հասնելու, և արևն ալ իջնելու մօտ էր. մտայ անտառը որ գետակին մէջ լուացուիմ, ձայներ կային, կամաց կամաց մօտեցայ. հինդ վեց Թուրքմէն նստած էին, ես Թուրքմէն կ'ըսեմ դուք աւազակ իմացէք, իրենց լեզուաւ կը խօսէին. ի՞նչ եղաւ զարմանքս

երբ մեր Մլեհ իշխանը ասոնց գլուխը տեսայ. «Չ'է, կ'ըսէր ցուլն պէս մարդ մը, հազար ոսկի ալ տաս ես այդ մարդուն վրայ չ'եմ քաշեր. ով նորա վրայ կը քաշէ մահուան բերանը կը քաշէ, այս յաւանակաները կ'ուզես համոզէ, տասն և ութը տարու էի՝ Ռապանի ձանբան՝ երբ հինգ վեց հազար հոգի մենք անոր փոքրիկ խումբին վրայ ինկանք, ողջ բռնել կը կարծէինք, այն պըղտի խումբը կարծես մեծցաւ շատցաւ, մեր արիւնը ջուրի պէս կը վաղէր. այդ քու եղբայրդ վիշապ դարձաւ, ամեն մէկ շրջանին յաջն ու ձախ սուրը կայծակի պէս կ'իջնէր, ինկնողը ալ չէր երևեր: Ես ծառի մը կտնակ կծկուած պահուած կը դողայի ու կը նայէի, մինչև որ կամաց մը ծառն իվեր ելայ, անկից կը տեսնէի, աերևի պէս կը թափէին ամենքը անոր սուրին տակ. այն օրէն մինչև այսօր շատ պատերազմ տեսայ, շատ տեղ գնուեցայ, ես այդ մարդուն պէս մարդ չի տեսայ. ով կ'ուզէ քեզ հետ թռոզ երթայ, ես այդ դործին մէջ մատ չունիմ:» Եւ ահա սկսաւ Մլեհ բարձրաձայն խնդալ մարդուն վատութեան վրայ և ծաղրել. «Անդրկեցէք այս մօրուքները՝ կնիկ եղէք» ըսելն լսեցի ու տեսայ որ ոտք ելաւ. անոնք ալ ոտք ելան. ես կամաց մը քաշուեցայ մտայ Թուփերուն եաին, դարձայ և կը տեսնէի Մլեհ որ կ'անցնէր դիւական ծիծաղ մը ձգելով այդ առտղակ Թիւրքմէններուն վրայ: Իրաւ, առտուտըն աւրուեցաւ, բայց այդ մարդը եղբօրը հորը կը փորէ, գինովութեանը դուրս կուտայ, օր մ'ալ կ'երևի այնպէս բան մը կ'ընէ որ մեր բոլորին ու ապդին գլուխը ձիւն կը բերէ: Ես այս տեսածս ու լսածս Իշխանին պատմելու չ'եմ համարձակիր, չ'ամանչեմ, անոր համար քեզ ըսելու եկայ. դու մեր ծերն ու խելօքն ես, ի՞նչ ընեմ. . . մանաւանդ թէ ի՞նչ ընենք. ահա Թոռնիկին ալ երեսին դոյնը դարձաւ:

Եւ իրօք աղնուական երիտասարդին երեսը ձեպ ձևրանակ կարեւցաւ. ձակատը մարգրտի պէս քրտնեցաւ և սրտին գարնուածքը քովինները կրնային լսել թէ ուշագիր լինէին, և չի կրնալով դիմանալ՝ առանց բերանը բանալու ելաւ և սկսաւ սենեկին մէջ վեր վար պտըտիլ:

Բարկէն անշարժ անխռով մարկ ընելէ վերջը, աչքերը դոյած իրրև թէ քուն կը լիներ, և ձայն չէր հաներ, յայտնի է թէ կը մտածէր:

Իսկ Սարգիս երբ բաւական սպասեց, ալ համբերութիւնն հատնելով՝

—Եղբարք, ըսաւ, ես ձեզի բան խօսեցայ, մկկերնիդ արձան եղաք անշարժութեան, միանդ նատիլը մոռցաք. տէ խօսեցէք, այս անդգամը ո՞ գիտէ ի՞նչ կը նկատէ հիմա եղբօրը դէմ:

—Հիմա նա նստած հովանոցը, իր օղլին շէշը կը պարպէ, ես որ գալուս հոնկից կ'անցնէի տեսայ. մէղք որ Իշխանին եղբայրն է, ես ալ քեզի պէս չ'եմ համարձակիր մարդու գլուխ ել այդ վատ դաւը՝ ո՞ր մնաց եղբօրը. ըսաւ Թոռնիկ:

—Ուրեմն ի՞նչ ընելու է, կ'ըսէր Սարգիս, Բարկէնի դառնալով:

—Ի՞նչ ընելու է . . . ըսաւ Բարկէն, ի՞նչ պիտի ընեմ կենամ որ անկարծելի ժամանակ այդ անպգամ խենթը ապդին տուները վրդնէ. հիմա Իշխանը ուր որ է կուգայ, առջև խօսքս իրեն այս պատմութիւնը լինի, դուք ալ մի հեռանաք որ եղելութիւնը տեղն ի տեղ յայտնէք:

Սենեկին մէջ երկար լռութիւնն որ տեւեց՝ միայն ձիոց սըմբակաց ձայնէն ընդհատեցաւ, Իշխանն էր որ կը դառնար: Բարկէն որ նորա երեսը գիտէր կարդալ մէկ աչք նետելուն, սանդուխին դլխէն երկու աստիճան որ քոնէ էին՝ «Ափսոս, կ'ըսէր, այս երեկոյ որ Իշխանը զուարթ է, պիտի դառնայինք գինքը, տեսէք Կրակին պատանոցը կը շոյէ, ձիաապասին հետ կը խօսի . . , » բայց Բարկէն կ'ուշացնէր իր խօսքը. «Կերակուրը հանդիստ ուտէ Իշխանիկս, կ'ըսէր ինքնիրեն, քիչ մը ժամանակ ալ անցնի»: Երբ կերակուրէն ելան, և տեսաւ որ Թորոս իր սենեակները պիտի քաշուէր, ալ Բարկէն ելաւ դիմացը կանդնեցաւ: Երբ այն կեցուածքը տեսաւ Իշխանը, որ նոյնպէս իր ծերուկին ամեն շարժմանց նշանակութիւնը գիտէր, շուտ մը իմացաւ թէ ծանր բան մը կայ:

—Խօսէ, Բարկէն հայրիկ, շուտ ըրէ, դու կարևոր բան մը ունիս ինձ իմացնելու. ի՞նչ է:

—Մլեհ իշխանն է դարձեալ, ՏԷր:

—Նոր չիմարութիւն մը:

—Ցիմարութեանց վատթարագոյնը:

—Ի՞նչ, ըսաւ Թորոս ընդունները իրարու կպցնելով:

—Փեղ կ'ուզէ ապաննել:

—Ողջ տեղեկացիր, ըսաւ քննող աչք մը նետելով Սարգսի և Թոռնիկի վրայ, որք մեկ կողմ կայներ էին առաջնին նայելով իբրև յանցաւոր։

—Արդիս տղայ, պատմէ ամեն բան, ըսաւ Բարկէն։

Երբ Թորոս անշշունչ մնիկ ըրաւ ամեն բան.

—Գիտես, Բարկէն հայրիկ, զրուցեց, Սեփանէ կասկածով մը տպան տամիս բանտարկեցի, սրտիս վերք է այդ գործս, իւաւ Մըհ Սեփանէ չէ, բայց դարձեալ խելքին փշածը դուս կուտայ, աւելի կը խօսի քան թէ կ'ընէ. ասոնք ամենքը պէտք է մնածել, ետքը շարժիլ։

—Տէր իմ, ըսաւ Բարկէն բարկութեամբ, գոնէ ինձ հրաման տուր պէտք եղած զգուշութիւնները ընեմ։

—Լաւ, ըսաւ Թորոս ծիծաղելով, քեզի հրաման առանց դուրսը ձայն տուրացնելու և առանց ղիս անհանգիստ ընելու գիտցածդ ընել։

—Միայն Թոռնիկ քեզ անձնապահպան լինի, գոնէ զայն կ'ընդունիս։

—Լաւ։

—Ես Սարգսի հետ մնացած զգուշութիւնները կը հոգանք։

—Լաւ, լաւ, լաւ, Բարկէն հայրիկ, դիտցածդ ըրէ, բաւական է թէ ինձի դանգատ չի հասնի։

—Հոգ մ'ըներ Իշխանիկ։

Եւ երբ Թորոս գնաց քաշուելու, մեր երկք բարեկամները իրարու երես կը նայէին.

—Ա՛լ Իշխանին կեանքը ուղղակի քեզի յանձնուած է, Թոռնիկ։

—Առաջ Աստուած, ըսաւ քաջ երիտասարդը, որու պայծառ կերպարանքին վրայ սրտին մանրութիւնը կը փայլէր, ես ոտքս հետքէն չեմ զատեր, ինչ ուր է՝ տունն ալ Թոլ հոն լինի։

—Ամրիս ոտքեակ։—Իսկ մենք, Սարգիս, ալ Մըհ ուր երթայ, ինչ ընէ՝ մեզի բան գործ ընենք։

—Լաւ, ըսաւ Սարգիս, և երեքն ալ գնացին իրենց սենեակները պառկելու։

—Ա՛լ Թոռնիկ անթաժանելին եղաւ Թորոսի, իր յատկութիւնքը անոր քով աւելի կատարելագործուեցան։ Բայց շատ անգամ կը տեսնուէին Թորոսի քով երկու դեռահաս երիտասարդք,

Ռուբէն և Լևոն, որոնց սգաւոր մայրը Գապեռոնէ զերծնք կը բերէր իրենց հօրեղբօրը Վահկայ բերդը. Թշուառ Սեփանէի երկու զաւկներուն կերպարանքը կը վկայէին արդէն թէ Ռուբինեան պարմին շառաւիղք էին հօր գութ և սէր թէպէտ ունէր Թորոս երկուքին վրայ հաւասարապէս, բայց Բարկէն որ գուշակութեան ձիրքն ունէր, «Սա պղտիկը հօրեղբօրը տեղ բռնելու յոյս կուտայ, Ռուբէն հօրը զաւակն է, Լևոն հօրեղբօրը ելած է»։ Եւ իրօք տղան դիտող բնաւորութիւն և մեծ համակրութիւն ունէր հօրեղբօրը, ամեն բերնէն ելած խօսքերուն ուշադրութիւն կուտար՝ երբ Ռուբէն զուարճութիւնը ամեն բանէ աւելի կը սիրէր։

Քանի մը ամիս անցած էր Սարգսի այն դիպուածէն վերջը, երբ Թորոս օր մը որսի պիտի երթար Գեռամայ ակունք ըսուած տեղը, յանկարծ երկինք մթնցաւ և սոսկալի փոթորիկ մը արգիլեց. «Վաղը մեր որսը» ըսաւ Թոռնիկին, և երկրորդ առաւօտուն հեծաւ որսի, ինչպէս իր սովորութիւնն էր կանուխ, չորս հինգ հոգի միայն կային հետը։ Իրեն ընկերացած էր նաև Լևոն եղբօրորդին։ Հազիւ թէ ձիերը ձդեցին և իրենք ական ցրուիլ այծեամներու խումբ մը պաշարելու համար, ահա Թոռնիկ որ Լևոնի քովն էր նոյն միջոցին կանչ ուաւ «Նուէն եկու» ըսաւ և ձանբան փոխելով շիտակ դէպ ի այն կողմը սրացաւ ուր սլշտուկ էր Թորոս, վասն զի պինուց փայլ մը կարծեց նշմարել այն կողմը, և իրօք երբ քիչ մը յառաջացաւ տեսաւ որ չորս հինգ սպառազէն Թորոսը շրջապատեր էին. իսկ նա այս յանկարծական յարձակումը տեսնելով մեծ ծառի մը բունին կռնակը տուած պաշտպանողական դիրքի մը մէջ անիրաւով կը դիտէր պինք պաշարողները, և դեռ Թոռնիկ չի հասած իր ահագին Լևոնեան ստը շողաց և երկու թշնամի սուրեր օդի մէջ թռան. ձիշդ այն միջոցին Թոռնիկ հասնելն ու սուրի հարուածով անզգամներուն մէկը գետինը ձգելն մէկ ըրաւ. Լևոն այն միջոցին իր եռանդուն տարիքին ձայնին միշտ լսելով՝ առանց սպասելու՝ քիչ մը հեռուն կեցած բարձրահասակ մարդ մը տեսնելով՝ որ ասպատակին դիմակովը ծածկուած՝ ստը ձեռքը աւելի հանդիսատես կ'երևէր և հրամանատար, յարձակեցաւ անոր վրայ, որ ձանձ մը վռնտելու պէս երիտասարդին ստը կանգուններով հեռու նետեց և առանց քայլ մը ուռնելու իր պատերազմողներուն վրայ կը

նայէր անշարժ արձանի մը պէս, որոնք Թորոսի և Թոռնկի հարուածներուն տակ կը կործանէին իրարու վրայ, և երբ տեսաւ թէ չորս հինգ հոգի արդէն ընկած էին և երկու երեքն ալ ծանր վիրաւորեալ մէջ, եաին դարձաւ՝ ցաթկեց ահագին խրամ մը, և սկսաւ ժայռոտ ու մացառուտ լեռն իվար ցաթկել, բայց հազիւ թէ ուժը տասը քայլ վազած՝ երեք հոգի դիմացը արձանացան. Սարգիս իր երկու եղբայրներով. «Մէկդի՛» ըսաւ զրահաւորը հատ՝ կամաց և անխռով ձայնով մը։

—Մէկդի՛... ըսաւ Սարգիս, ես դաւաճաններու առջևէն, ով որ ալ լինին սովորութիւն չունիմ փախչելու, թող գէնքդ և անձնատուր եղիր։

Այս խօսքերուն պատասխան՝ սոսկալի սուրի երկու հարուած ընդունեցաւ իրարու վրայ Սարգիս, ոչ միայն սուրը ձեռքէն թռաւ, այլ նաև ձախ ուսին վրայ վիրաւորեցաւ. իր երկու եղբարք նոյն միջոցին վրէժխնդրութեան ոգւով յարձակեցան զրահաւորին վրայ, բայց իրենց հարուածները ոչինչ էին այն մարդուն և իր զրահներուն դէմ, որ իրրև թէ կը ծիծաղէր. երբ Սարգիս առանց սուրի մնացած և թէպէտ վիրաւոր՝ բայց իր զարմանալի արագութեամբ և իրր թէ գիտնէն սողալով մտաւ նորա սրունգներուն մէջ և քաջը յերկիր կործանեց. կռիւը որ լմնցած կը կարծուէր նորա ինկնալով՝ վայրկենին նորոգուեցաւ, վասն զի նա ժամանակ չէ տուաւ և ի քթթել ական ոտքի վրայ էր դարձեալ և պատրաստ իր երեք թշնամիները կործանելու, որոնք սաստանալի մը քան թէ մարդու հետ գործ ունենալ սկսան կարծել և ետ ետ երթալ։ Այս միջոցիս Թորոս՝ Թոռնիկ և Լևոն վրայ հասան և երբ նա վեց սուր իր վրան տեսնելով, անխռով ձիշտ նոյն դիրքին մէջ՝ որու մէջ քիչ առաջ Թորոս կը գտնուէր, կռնակը ապահովցուցած՝ չի կրնալով համբերել «Չա, յարձակեցէք տեսնեմ, թէ որ քաջ էք» պոռաց մեծ ձայնով, և ամեն գինք շրջապատողք իրարու երես նայեցան. Թորոս սուրը գետինը յեցած՝ ծանր ձայնով՝

—Մէկ՛, կանչեց, թող գէնքդ, մեծ եղբայրդ և Իշխանդ է որ քեզ կը հրամայէ։

Մեծ եղաւ ամենուն զարմանքը. այս խօսքերը հազիւ թէ լսուեցան՝ կարծես թէ աներևոյթ զօրութիւն մը անձահալուց

զրահաւորը, սուրը խոնարհեցաւ և ձեռքէն ինկաւ, և երկու ձեռքն ամփոփելով կուրծքին վրայ կեցաւ։

—Ա՛ռ սա սուրը, ըսաւ Թորոս Թոռնիկին... Հեծէ՛ք տղաք, ետ դառնանք։

Լռութիւն տիրեց ամենուն վրայ. շուտ մը Սարգսի վէրքը պատեցին եղբարքը, և երբ այն գործողութիւնն ալ լմնցաւ, հեծաւ Թորոս առջևէն, Մլեհ և ամենը ետևէն։ Ոչ ձայն՝ ոչ խօսք՝ ոչ քրթմնջիւն չէր լսուեր, այլ խիստ լռութիւն միայն ձիերու սմբակները կ՚ընդհատէին, մինչև հասան Վահկայ։ Երբ ձիէն իջաւ Թորոս, դարձաւ եղբօրը «Գնա, նստէ հովանոցդ, ապասէ հրամանիս ըսաւ, Մլեհ առանց պատասխանելու հնազանդեցաւ և գնաց։

Հազիւ թէ մտաւ Թորոս իր դիւանը, սուրհանդակները գնացին բոլոր շրջակայ բերդերը և նոյն իրիկունը մեծ ժողովի մը մէջ բոլոր իշխանաց և զօրավարաց ներկայութեան՝ Մլեհ բերուեցաւ և Իշխանը բոլոր նորա ըրած անգթութիւնները՝ յիմար և անխելք վարմունքը՝ եղբօրն անձին դէմ բիւր սպառնալիքները և վերջի նոյն դաւաճանութիւնն համրելէն ետքը՝ աւելցուց և հարցուց.

—Հիմա, Մլեհ, թէ որ ես ասոնք ըրած լինէի, դու որ շիտակ կը խօսիս, զրուցէ, ի՞նչ կ՚ընէիր։

—Այժմ չէի սպասեր. շատոնց գլխիդ սպանած կը լինէի, պատասխանեց նա խիստ ձայնով։

—Բայց ես, չեմ ուզեր որ Ռուբինեանց մէջ ոք զրուցուի պատմութեան մէջ թէ եղբօր արիւն ձեռք մխեց. ուստի գնա այս երկրէն դուրս, հեռացիր, շատ է որ ես երկու եղբայր բուռն մահուամբ կորուսի յունական ձեռքերէ։ Ես կարծէի թէ Ստեփանէի թշուառ մահը բաւական էր գլխիդ գթաստացնելու համար. կարծեցի թէ այս աթոռոյն օրինաւոր ժառանգ դու միայն մնալով գթաստացեր ես, բայց անօգուտ, դու մահապարտ ես, ես գլխիդ կը ներեմ, բայց չեմ ներեր որ իմ մահուընէս վերջը այս աթոռին վրայ նըստիս, վասն զի դու ոչ միայն նախասինք՝ այլ մահաբեր կրնաս լինել այս իշխանութեան և ազգիդ։

Այս խօսքերէն վերջը եղբայրաբար և իշխանաբար վարուելով դարձեալ՝ «շատ ոսկի, արծաթ, և ձի և ջորի» տուաւ և հանեց գնաց երկրէն։ Իսկ նա գնաց դարձեալ առ Սուլթան Նուրէտտին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՅՈՒՆԱՑ ՎԵՐՋԻ ՃԻԳԸ

Այս տխուր դիպուածէն վերջը Թորոս զզուանք մը իմացաւ եղբօրմէն, ինչպէս իմացեր էր իր վեհէն։ Մտքին մէջ շարունակ Դիոնիսին խօսքերը կը զաւնային, որ երբեմն իշխանութեան ժառանգութեան վրայ ըսած էր. եթէ իրեն նման քանի մը յաջորդներու աթոռը ձգելու բարեբաղդութիւնը ունենար, կրնար յուսալ թէ Ռուբինեանց հարստութիւնը աւելորդութիւն պիտի ունենար. ուստի նայելով շուրջը՝ Ստեփանէի մեծ որդին ալ՝ Ռուբէն նաև իր աղեյամուռթեամբ յուսահատութիւն կը բերէր իւրին. Լևոն միայն՝ նորա պզտի եղբայրը յոյս մ'էր, բայց Մլեհ և Ռուբէն արգելք մ'էին։ Այս խորհրդածութեամբ, տխուր՝ շատ անգամ կը մտածէր, և միտքը կը վազէր, այն հին Ելլադայ և Հռոմի հասարակութեանց՝ ուր ազգի մը բաղդը մարդու մը կարողութենէն չ'էր կախուեր, այլ ազգին բարոյական զօրութենէն. բայց ո՛ւր էր այդ բարոյական զօրութիւնը, ո՛ւր էր այդ բարոյական զօրութիւնն ստեղծելու դաստիարակութիւնը։ Այս մտածութիւններն ահա՝ իր ներփակին սուգին յիշատակը առանց իր սրտէն վերցնելու՝ զինք յուզոնքին ժառանգ մը տալու հնարք աթոռին, ամուսնութիւն մը ընելու Թովմաս անուն իշխանի մը աղջկան հետ, որ քսան իւր փափաքանաց՝ մանչ զաւակ մը իրեն տուաւ և զոր ի յիշատակ ցեղապետին և իր սիրելի եղբօր՝ Ռուբէն անուանեց։

Բայց բաղդը չ'էր ներեր որ Թորոս հանգիստ առնուր պատերազմներէ, կռիւ մը հալիւ կը վերջանար, նոր մը կը ծնէր. երբ իր երկիրն հիւսիս, հարաւ և արևելքի կողմերէն կ'ապահովէր, պէտք էր արևմուտք իրեն դէմ թշնամի յարուցաներ։ Հիմա ալ նոյնպէս ահա հին օձը գլուխը կը վերցներ. իր բանակէն, իր գերութենէն ձողպրած, Անդրոնիկոս Կոմնին Մանուէլ կայսեր հետ հաշտուած՝ մեծագանձ պարգևներով ձոխացուցած իմացաւ թէ իր վրայ կուգայ, ուստի իր պատրաստութիւնները տեսաւ և արշաւն կ'սպասէր արժանաւոր ընդունելութիւն ընելու համար։ Եւ իրաք երբ Մանուէլ

նեռած էր Թորոս իր բանակաւ՝ լուր առաւ թէ Ծովնաց նահատոմը Ալեքսանդրիոյ ծոցը կը մտնէր և Անդրոնիկոս ցամաք կ'ելնէր. գիտնալով թշնամւոյն յանդգնութիւնը թոյլ տուաւ որ նա իր բանակին վրայ արշաւէ և նոյն միջոցին, ինք քանի մը ընտիր գունդեր հանած՝ Ամանոսի բարձանց վրայէն կը դիտէր յոնեական բանակին խլրտմունքը և աւարառուաց մեծ և պլտի խումբերու անդունդը թիւնքը յանկարծահաս յարձակմամբ մեծ բանակին բաժնելով բնաջինջ կը կոտորէր։

Իսկ Անդրոնիկոս թէպէտ հաւատար իր չարութեան քաջութիւն ալ ունէր, և ինչպէս անառակութենէն նոյնպէս պատերազմներու մէջ ալ կը ծերանար, գիտնալով նաև իր թշնամւոյն արիութեան քաջութիւնը որու փորձն առած էր, բայց ծերութեան կատաղութենէն կուրցած՝ արհամարհել կը ձևացնէր իւր թշնամին, և ամբարտաւան պատգամաւորներ կ'ուղարկէր առ Թորոս, ի հնազանդութիւն զինք կոչելով։ Իսկ Թորոս դեսպաններուն, փոխն ընդունելութեան՝ լուր կը հանդարտ մինչև մտքը մարիկ ընելէն վերջը, նոյն ինքն Մանուէլ կայսեր ոսկի հրովարտակը առջևնին դնեցաւ արհամարհանօք. «Գնացեք, ըսէք, ձեր զօրավարին, ըսա, թէ ես վենքը ոչ օրինաւոր պատրաստ՝ այլ աւազակապետ մը կը համարիմ, թէ որ իր աչքը՝ որ մեծագոյն ինքնակալաց յարգոյդ է՝ չ'գիտեր իր տյս հրովարտակը յարդել թէ որ իր տեղակալքը անգութ և անզգամ դաւաճանութեամբ ամեն դաշինք ոտնակոխ ըրին և վնիզ բռնապատ տեղին արդար վրէժխնդրութեամբ Ծոյն իշխանութեան հետքն ու անունը այս երկրէն ջնջելու, հիմա նոյն կայսրը չ'ամչնար՝ չի կարմրիր առնուլ իմ վրաս ղրկել այդ ոչինչ մարդը՝ որու գոռոզ ամբարտաւանութեան հատասար է պատերազմական տգիտութիւնը։ Ցիրաւի ուրեմն՝ արդար է որ կ'իմանամ թէ ձեր Կայսրը աստուածաբանական գիտութեանց ինքզինքը տալով բոլորովին յիշողութիւնն ալ կորսուսեր է, մոռցեր է թէ այդ իր ընտրած զօրավարը նոյն այդ մարդն է որ ասկից տասնևհինգ տարի առաջ իմ վրաս գալով և այսպէս գարձեալ մեծ մեծ ջարդերով անարգաբար կիսամերկ փախաւ. թէպէտ նոյն ատենն ալ գարձեալ Հռոմէական կեսար անունը կ'աղտոտեր և Սպարտակետ անունը ծիծաղելի կ'ընէր. ահ գացէք, դուք խեղճ մարդիկ, նայեցէք որ իրմէ առաջ փախչելու

ձարը տեսնէք, վասն զի հիմայ իմ գօրքերս ձեր Անդրոնիկոսներուն՝ ձեր կեսարներուն՝ ձեր խեղճ զինուորներուն խնայութիւն ընել չեն գիտեր, այլ մինչև վերջինը սպաննել ուխտած են։ Գնացէք ձեր բանակը այսպէս պատմեցէք»։

Այս պատասխանը Անդրոնիկոսի կատաղութիւնը յիմարութեան վիճակի մը հասուց, և իր բանակին նոտահնար ձև մը տալ ուզելով, կենդանւոյ մը կերպարանք տուաւ և ըսէ պատմութիւնը, գլխով, ոտքերով և ագիով, և այսպիսի դաստուրութեամբ մը յարձակեցաւ Թորոսի բանակին վրայ։ Իսկ Թորոս որ այսպիսի պատկերահանութենէ չէր հասկնար, այլ միշտ իր լեռներուն և անտառներուն դիրքէն օգուտ քաղել կը հասկընար, նոյնպէս այս անգամն ալ իր բանակն այնպէս յարդարեց որ թշնամւոյն փախչելու ճանբայ չի ձգէ, ուստի ամէն կողմ թշնամին պատեց պահանամուտ գօրքով, և իր բանակին ճակատը հոդապատնէշներով ամրացնելէն վերջը, ընտիր հեծելազնդով մը անցաւ թշնամւոյն կռնակը, և երբ Անդրոնիկոս իր գլխովն ու ոտքերով՝ թևերովն ու ագիով կը պատերազմէր՝ իր դիմացի բանակին հետ աջէն ու ձախէն և կռնկէն հարուած հարուածի վրայ հասնելով բանակը քայքայեցաւ և խորտակեցաւ և անխուսափելի խայտառակութիւնը երկրորդ անգամ վերահաս նկատելով, երբ յուսահատ կը մնաձեր, տեսաւ զԹորոս զքաղած խորտակելու իր գօրաց վերջին ճիգն իր աջ թևին վրայ, գաղանի մը պէս իր բոլոր գօրութեամբ յարձակեցաւ նորա վրայ, որ հազիւ ժամանակ ունեցաւ վահանը ընդդէմ դնելու անակնկալ հարուածին և ձիէն վար ընկաւ։ Բայց Անդրոնիկոս երբ ինկած թշնամին վայրկենին ոտքի վրայ տեսաւ և որ դարձեալ յաղթ քաջութիւն նորէն ձիուն վրայ կը յաթկէր, իսկայօտ վառնդը և ձիուն գլուխը զարնուց և բռնեց նոյն վախճանաւ Անտիոքայ ձամբան, որ երբեմն իր կեանքը ազատեր էր։ Կեանք մը որ ամէն չարութեամբ լեցուն՝ չարաչար սկսած՝ Թէսպէս կայսերական գահոյից վրայ չարաչար ալ պիտի վերջանար։

Անդրոնիկոսի այս պարտութեան լուրը երբ Կոստանդնուպոլիս հասաւ, Մանուէլ կայսրը այնչափ նախատինք բաւական չհամարեցաւ, շատ մը նոր բանակ մը կազմեց և Կոստանդին Կալաման զօրքը սպասելով Թորոսի վրայ ղրկեց, վերջին փորձ մ՚ալ ընե-

լով Պատերազմին Տարսոնի քովերն տեղի ունեցաւ և հոն յունական բանակն սպառապուռ խորտակեալ և զօրավարը դերի բռնուեցաւ Թորոսէն, և Բիւզանդիոյ կայսրութիւնը իր բոլոր ամբարտաւանութեամբ՝ իր ապստամբ թշնամւոյն ձեռքէն ծախու առնել պիտի այս մեծ իշխանը ծանր փրկանք վճարելով։

Այ անկից վերջը խաղաղութեամբ տիրեց Թորոս բոլոր Կիլիկիոյ և մեծ մասին Ինաւրիոյ և Փռիւգիոյ հասատեց իր աթոռը ի Մամեստիա իբրև կեդրոն իւր իշխանութեան։ Անոնք որ իր քանի հինգ տարուան պատերազմներուն փառքին և յաղթներով էին զարդարուած՝ իշխանութեամբ և ասպետութեամբ բարձրացուց, վասն զի իր սկզբունքն էր առաքինութիւնը վարձատրել և անզգուշութիւնը պատուհասել։

Իր օրով Հայը որ ամեն տեղ հարստահարեալ, թշուառութեան էր դատապարտեալ, Թորոսի երկիրը հանգստութիւն և պաշտպանութիւն կը գտնէր։

Ջինուորը քաջ էր և աներկիւղ նոյնա օրով, և բոլոր շրջակայից ահաւոր եղաւ Ռուբինեան Իմաչը՝ որ Հայ դրօշակին վրայ կը ծածանէր։

Տօրոսի լեռներն ոչ միայն տրախտութեան և նուազանայց ձայներուն տրճագանգ կուտային՝ այլ նոցա երկիրը իր մեռալական հայեցուածքներուն աշխատող ժողովուրդը կը վարձատրէր։

Անքերը Սև լերան վրայ ոչ միայն Աստուծոյ փառաբանութիւնք յերկինս կը բարձրացնէին, այլ նաև ժողովրդեան գործոյնեն էին Կիլիկիոյ թեղմանաւոր դաշտերը մշակելով հակերով և պտղատու ծառերով կը զարդարէին, առն տեսակ ընտանի կենդանեաց հօտեր իր հարստութեան անբաւելիքն էին։

Քաջ պատերազմի մէջ արիւտ և աշխատհաշէն խաղաղութեան մէջ ոչ միայն մեծ իշխանի անուն ունեցաւ, այլ պատերնի և ազնիւ մարդու համարումնք ստացաւ իր բարեկամութիւնը փնտռեցին իր սահմանակից օտար իշխանք և թագաւորք և յարգեցին, վասն զի տեսան որ պաշտպան էր որոյն և տկարին։

Ո՛վ որ ապագային պատմութիւնն ունի ուշադրութեամբ, Հայ դիւցազանց առաջին կարգին մէջ կը նշմարէ այս մեծ հսկաձայրը՝ որ ոչ միայն իր ժամանակին այլ նաև իր թոռդին վրայ էր։ Իր քա-

ջութեան հաւատար էր իր խոհեմութիւնը, վասն զի գիտէր դէմ-
ժողարին և ապերախտ պարագաներէն օգուտ քաղել գիտէր ժա-
մանակին տեղի տալ և սպասել, որ իշխանաց առաջին կատարելու-
թիւնն է թէպէտ ռամկականն աչքեր չի շլացնէ։

Կրօնասէր առանց նախապաշարմունքի, այնպիսի ժամանակի
մէջ՝ և այնպիսի քաղաքի մը մէջ դաստիարակուած՝ ուր իշխանք
և ինքնակալք անբացատրելի աստուածաբանական վնդիրներով
կ'զբաղէին վրկրին պիտոյքը երեսի վրայ թողած, նա գիտցաւ իր
միտքը և իրենները անաղտ պահել այդ չիմարական հիւանդու-
թենէն, ինչպէս գիտցաւ կրօնքի ճշմարտութիւնները յարգել և
յարգել տալ իր ժողովրդեան։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԹՈՐՈՍ ԻՄԱՀԸ

Այսպէս ահագին խաղաղութիւն գոած երկրին բարեկար-
գութիւնն նկատելով՝ իր փոքրիկ Ռուբէնին զարգանալը ախորժ աչք
կը տեսնէր, և նորա դաստիարակութեան կերպը կը մտածէր. երկու
նպատակ մի էին իր մտաց մէջ, ազգն ու զաւակը, զորս չէր կրնար
զատել։

Բայց Նախախնամութիւնը ուրիշ կերպ որոշեր էր Թուռն հի-
ւանդութիւն մը վրայ հասաս, և այդ զօրաւոր կազմուածքը որ
այնչափ պատերազմաց՝ այնչափ մտատանջութեանց՝ այնչափ կըսկիծ-
ներու և այնչափ բարոյական նեղութեանց անընկճելի դիմացեր էր,
տեսաւ թէ մահը կը մօտենար, նորա առջևն ալ դարձեալ անընկ-
ճելի կեցաւ և հանդարտ սպասեց։ Իր հիւանդութեան լուրը բոլոր
Կիլիկիոյ իշխանքն ու բերդակալք, զօրավարք, և ասպետք և հոյ
ժողովուրդ ահագոռղի և տխրութեան մէջ ընկղմից։ Մամեստիոյ
ճանրաւորն ու եկեղեցիներն ժողովուրդը կը լեռնէր, հոն լրաւու
կը հարցնէին առողջութեան ձայն մը յոյս մը փնտռելու համար.
հոս ծերք և կանայք, փոքրիկ տղայքը տուր սեղաններու առջին

ձգած՝ անոնց անմեղութիւնը կ'ուզէին միջնորդ առնուլ առ Աս-
տուած։ Արքունի սրահներուն և գաւիթներուն մէջ կը վիճտային
ամեն հասակի՝ ամեն կարգի գինուորականք, և այդ խրոխտ արևէն
սեցած՝ ժանգոտած կերպարանքները՝ որ պատերազմական փողեն
ձայնին, նոյնն է մահուան ձայնին, քանի և հինգ տարիներ ան-
խռով ճնացեր էին, հիմա անձայն, անշշունչ իրարու կը մօտենային
առանց բարեւելու իրարու կը նայէին՝ չըթունքնին կ'ամփոփէին և
վերջը անսովոր արցունք մը ծածկելու համար առանձին տեղ ան կը փնտռէին։

Բոլոր հայ Կիլիկիոյ մէջ անխռով մարդ մը միայն մնաց Թորոս
Թերևս ճնացեր էր, որ մահուան անկողնին մէջ տարածուած, իր
վերջի կամքերը կը կտակէր. և ինչ էին իր վերջի կամքերը։

Փոքրիկ տղայ մը՝ Ռուբէն վեց եօթը տարու, շփոթած ամե-
նուն այդ ունքներէն և տխրութենէն կեցեր էր հօրը մահճաց քով.
տղուն պապը՝ Թորոս իշխանը՝ տխուր, բայց յուսահատ տխրու-
թեամբ այնձանի սէգ նորա քով կը կենար։ անկողնին միւս կողմը
Գոհար ծունկի վրայ ծածուկ արցունքներէ և անքուն գիշերներէ
աչքերուն փայլը կորուսած, մէյ մը հօրը երեսը, մէյ մը երկինք
կը նայէր յուսոյ նշոյլ փնտռելով. քիչ մը անդին կեցած էին Ռու-
բէն և Լևոն իր եղբօրորդիքը լուռ և տխուր։ Իսկ իշխանաց և զօ-
րավարաց երևելիքը սենեկին չորս կողմը կազմած էին. ընդհան-
թեան ձայն անգամ չէր լսուեր, լռութիւնն այնչափ սաստիկ էր։

Երբ ամենքը չորս կողմը շարուած տեսաւ Թորոս, աչքերը
փայլ մը ածին, հսկայ իրանը անգամ մը շարժեցաւ, և հանդարտ
ձայնով մը սկսաւ խօսիլ

«Որվ որդ՝ սիրելիք իմ, բարեկամք և նիզնկակիցք իմ որ հոս
զձեզ վտանգեցայ անգամ մ'ալ տեսնելու՝ հրաժարական ողջոյնս
տալու և վերջին յանձնարարութիւնք ընելու համար... դուք որ
միշտ ձեր քաջութիւնը ցոյց տուիք մինչև այս օր, պէտք է որ այս
հանդիսաւոր վայրկենիս նաև քաջ և անխռով կենաք, տկարութիւն
հեռի մնայ։ Մտիկ ըրէք ուրեմն այն մարդուն վերջի կամքերը՝
որուն երեսուն տարի բարեբաղդութիւն ընորհեց Աստուած ձեր Ի-
շխանը լինելու։ Այո, աստուածային մեծ շնորհք էր և ես կը խոս-
տովանիմ և միշտ կը յիշեմ այն օրը՝ որ տարագիր, անճարօթ, պան-

զուխտ և մոռցուած այս ափունքը կ'ելնէի քանի մը ընկերներով և նաև չէի հաւատար թէ իմ նախահարցս գործերէն աւելի մեծերը, անոնց իշխանութենէն աւելի ընդարձակը սահմաններ էր ինձի նախանամութեան ձեռքը՝ իմ ազգիս զէս առաջնորդ և պատսպարան ընելու համար, և այս գործիս մէջ ձեր քաջութեան ձեռնտուութիւնը ինձ տուաւ . . . : Հիմա որ ես կ'երթամ, առաջի Աստուծոյ՝ եղբայր եղբօր ձեզի աւանդ կը յանձնեմ այս տկար աղան. թէ որ Տիրոջ կամքն է, այս ալ կը մեծնայ կը զօրանայ՝ հօրը պէս իր ազգին նեցուկ և առաջնորդ լինելու մանաւանդ թէ ձեր կորովի բազուկները օգնական լինեն իրեն: Ուրեմն սիրով եղէք, միաբան եղէք իրարու հետ, ազգին համար, ձեզի համար, և այս անմեղ աղուն համար: Մի մոռնաք թէ Հայ խաչին դրօշակը այս լեռներուն վրայ եղբայրութեան սիրով հաստատուեցաւ, աստուածութիւն՝ նախանձ՝ ամբարտաւանութիւն առաջին օրը որ գայն կործանեն, դերութիւն և թշուառութիւն կը հասնին հաւասար ամեն մեր զաւկներուն վրայ, նաև ամեն այն Հայոց վրայ՝ որ աշխարհիս յեսին ծայրէն հոս կը գիմեն ազատութեան օդ շնչելու համար: Մնաք բարեաւ, սիրելի նիզակակիցք իմ, Աստուած ձեզի օգնական լինի միշտ՝ ինչպէս երբեմն որ մեզի եղիք»:

Երջանը աւրուեցաւ, հեկեկանաց ձայներ ումանք ափերնուն մէջ՝ ումանք թաշկինակներու մէջ կը խղդեին, ամենէն քաջերը աչքերնին արցունքով լեցուն կուգային լռիկ առնելու և համբուրելու այն աջը՝ որ այնչափ տարիներ առաջնորդեր էր իրենց պատերազմի և խաղաղութեան մէջ, և փառաք ու մեծութեամբ լցուցեր էր զիրենք: Բայց Թորոս դեռ դրան կը նայէր և առանց հարցնելու մարդ կը փնտռէր, Բարկէն չէր երևար, խնդճ ծերը թէպէտ ուժասունը անցած՝ իմանալուն պէս ելեր էր Ամուտայ բերդէն գալու համար, բայց դեռ չէր հասեր. Թոռնիկ հաղիւ կրցաւ երևալ և իր այլայլութիւնը ծածկելու համար փախուստ կուտար:

Ամենէն թշուառը ամենէն երջանիկն էր նոյն միջոցին. Ուրբէն որդին՝ որ իր ապագայ թշուառութեան չափն ալ չէր կրնար իմանալ, և չէր կրնար հասկնալ խեղճ որբ՝ թէ այնպիսի հայր մը կորսնցնելով իշխանութեան ժառանգութիւնը սպառնալիք մ'էր իր անմեղ կեանց:

Ոչինչ պակաս թշուառ չէր նաև Գոհարի ապագան, որ չէր գիտեր թէ ի՛նչ ընդունելութիւն պատրաստած էին իր Լամբրոնացիքը՝ որ հօրը վախէն մինչև այն օրը լաւ կը վարուէին իրեն հետ: Բայց խեղճ կինը զինք մոռցեր էր այն միջոցին, միայն այնպիսի հօրմէ բաժնուիլը կը նկատէր:

Իսկ Թորոս այն վայրկենին որ մահը դէմ առ դէմ տեսաւ, հանդերձեալ անմահութիւնն ալ տեսաւ. յանձնեց Նախախնամութեան իր ազգն ալ՝ իր երկու զաւկներն ալ՝ իր հոգին ալ:

Կրօնական ամեն պարտաւորութիւնները կատարեց, և երկրորդ օրը Նկեղեցին իր ախուր երգերը կ'երգէր, իսկ ազգը կուլար այնպիսի Իշխանի մը վրայ՝ որ հայր եղեր էր ժողովրդեան, և նորա ողբը տարիներ քշեց մինչև որ Լևոնի իր հօրեղբօրը յաջորդելով ազգին արցունքները սրբեց:

Թաղեցաւ Թորոս Համանուն հօրեղբօր քով ի Դրազարկ, ուր Եփիմի ամբիոնը տարիներով յառաջ իրեն կ'սպասէր:

Վ Ե Ր Ջ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ Ա. Կոստանդնուպոլիս 1145-ին 3
ԳԼՈՒԽ Բ. Ընակարանն Լիւ դպրան 11
ԳԼՈՒԽ Գ. Խնամակալ Հերքը 21
ԳԼՈՒԽ Դ. Կիլիկիոյ վիճակը 29
ԳԼՈՒԽ Ե. Դիմանիս 34
ԳԼՈՒԽ Զ. Առիւծին կորիւնը առիւծ է 44
ԳԼՈՒԽ Է. Սրճարուհեաց շառաւիղ մը 55
ԳԼՈՒԽ Ը. Հայը սուրբը 60
ԳԼՈՒԽ Թ. Կիպրոսի Ս. Մակար 68
ԳԼՈՒԽ Ժ. Բարայեն Կիլիկիա 77
ԳԼՈՒԽ ԺԱ. Տօրմա 87
ԳԼՈՒԽ ԺԲ. Սեւ լեռ 93
ԳԼՈՒԽ ԺԳ. Խալի դծօղը 102
ԳԼՈՒԽ ԺԴ. Թէ ինչպէս կ'սկսի կազմուիլ Թորոսի երկիրը 109
ԳԼՈՒԽ ԺԵ. Անարզաբոյծ եշխանը 117
ԳԼՈՒԽ ԺԶ. Մարգրիտ 128
ԳԼՈՒԽ ԺԷ. Ստեփանէ եւ Մլեհ 137
ԳԼՈՒԽ ԺԸ. Առաքինութեան չաղիմանակը 145
ԳԼՈՒԽ ԺԹ. Բարեկարգութեանց արգելքները 159
ԳԼՈՒԽ Ի. Անդրոնիկոս Կեւսը 166
ԳԼՈՒԽ ԻԱ. «Սահմանք քաջաց պէտն լուբեանց» 174
ԳԼՈՒԽ ԻԲ. Անտիոքայ բռնձը 185
ԳԼՈՒԽ ԻԳ. Մահ եւ սուգ 193
ԳԼՈՒԽ ԻԴ. Կիւր Մանուէլ հայսրը 198
ԳԼՈՒԽ ԻԵ. Լամբրոնի Հարսը 203
ԳԼՈՒԽ ԻԶ. Խաղաղութեան հրեշտակը 211
ԳԼՈՒԽ ԻԷ. Դաւաճանութիւն 220
ԳԼՈՒԽ ԻԸ. Ծուռնաց վերջին Ճիգը 230
ԳԼՈՒԽ ԻԹ. Մահ Թորոսի 234

ՀՀ Ազգային գրադարան
NL1111893

ՀՀ Ազգային գրադարան
NL0793677